

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՅՈՒԼԻՍ 1999

ԾԵ ՏԱՐԻ

# Է.ՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. Է.ՋՄԻԱԾՆԻ

Յ»–Լի»
1999

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանգիստ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ........ 3
Կաթողիկոսական Տեղապահ ընտրվեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը ........ 4

Հաղորդագրություն ........ 6
Հաղորդագրություն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հուղարկավորության վերաբերյալ ........ 7
Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի հուղարկավորության պետական միջոցառումների մասին ........ 8
Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումը Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի հուղարկավորության պետական միջոցառումների մասին ........ 10
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքը և գործունեությունը ........ 11
Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի դամբանական խոսքը՝ ասված Մայր Տաճարում Գարեգին Ա Ամենայն Հայոց հանգուցյալ Հայրապետի հիշատակին ........ 16
Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի դամբանական խոսքը՝ ասված Մայր Տաճարում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց հանգուցյալ Հայրապետի հիշատակին ........ 21
Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի դամբանական խոսքը՝ ասված Մայր Տաճարում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց հանգուցյալ Հայրապետի հիշատակին ........ 24
Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի դամբանական խոսքը՝ ասված Մայր Տաճարում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց հանգուցյալ Հայրապետի հիշատակին ........ 27

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳՐԵՐԸ

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի ցավակցական գիրը ........ 29
Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի ցավակցական գիրը ........ 29
Հաղորդագրություն Կ. Պոլսո Հայոց Պատրիարքության Դիվանից ........ 29

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀՀ նախագահի ցավակցական գիրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան կապակցությամբ ........ 31
ՀՀ Ազգային ժողովի նախագահի ցավակցական գիրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան կապակցությամբ ........ 32
ՀՀ վարչապետի ցավակցական գիրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան կապակցությամբ ........ 33
ԼՂՀ նախագահի ցավակցական գիրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան կապակցությամբ ........ 34
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի վախճանման առիթով հոգևոր պետերից և եկեղեցական առաջնորդներից ստացված ցավակցական գրեր ........ 35
Պետական ղեկավարներից, պաշտոնատար անձանցից, հայկական և միջազգային տարբեր կազմակերպությունների ղեկավարներից ստացված ցավակցական գրեր ........ 47
ԱՐԹՈՒՐ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - Ի Տեր հանգյավ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Ա Արքազնագույն Կաթողիկոսն Ամենայն Հայոց ........ 57

## ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔԵՐ ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ Ա Կ. ՊՈԼՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ – Խոսք հիշատակի ........ 78
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ – Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի յիշատակին ........ 80
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՃՅԱՆ – Ի հուշ Գարեգին Վեհափառին ........ 84
ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆ – Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց ........ 96
ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ – Սրտի խօսք երջանկայիշատակ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սուրբ յիշատակին ........ 102
ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ – Հայրը ........ 104
ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ –«Տուր զօրութիւն ծառայի քոյ» ........ 109
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ – Խոսք ցավի ու ափսոսանքի ........ 113
ՊՐՈՖ. ՊԻՈՆ ՅԱԿՈԲՅԱՆ – Համազգային վիշտ ու ողբերգություն ........ 115
ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ – Ափսո՜ս ........ 117

ՍԱՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ – «Հայ գիրքը՝ ճանապարհ հայոց, Հայ գիրքը՝ բալասան հայոց» ........ 119
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ – Վեհափառ Հայրապետի լեզվական աշխարհում ........ 122
ՀԵՐՄԱՆ ԳՈԼՑ – Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մահվան կապակցությամբ ........ 128
ԿՈՐՏԻՍ ԳՈՐԴՅԱՆ – Ի նշան բարեկամության և հարգանքի ........ 134

ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԵՐԻՑ

Վերջին պատգամը ........ 137
Նշան Սարկավագ /Գարեգին Ա Կաթողիկոս/ – Հայրը ........ 140
Քաղվածքներ Գարեգին Ա Վեհափառի գործերից ........ 144
Մտածումներ՝ ծնված հայրենիքում ........ 152

ՊԱՏՄԱԿԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆ – Կաթողիկոսական յուղարկաւորութիւն և թաղում ........ 161

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Քաղվածքներ Գարեգին Ա Վեհափառի վախճանման առիթով ստացված ցավակցություններից և մամուլում տպագրված հիշատակի խոսքերից ........ 165
Անվանացանկ Վեհափառ Հայրապետի հուղարկավորության առիթով զետեղված ծաղկեպսակների ........ 174
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата ........ 177
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin ........ 180
"Etchmiadzine" organe officiel du Saint-Siège d'Etchmiadzine ........ 183

***ԽՄԲԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝*** **ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ**

**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

**ԴԱՍԻՉ՝ 77764**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ**

ՀՐԱՄԱՆԱՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՋԱՊԱԼԵԱՆԻ

[library stamp]

# ՀԱՆԳԻՍՏ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Խոր վշտով հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի վեհարանում հունիսի 29-ին, երեքշաբթի, ժամը 17.50-ին, անժամանակ, կյանքի 67-րդ տարում ի Տեր հանգյավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ երկարատև և ծանր հիվանդությունից հետո:

Ամենայն Հայոց 131-րդ Հայրապետը Լուսավորչի Աթոռին բազմեց 1995 թ. ապրիլի 4-ի ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի ընտրությամբ՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության 18-ամյա գահակալի հարուստ փորձառությամբ: Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում քառամյա հովվապետության տարիներին իմաստությամբ ու անսակարկ նվիրումով հովվեց Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցին: Նորին Սրբությունը Մայր Հայրենիքի, Արցախի և աշխարհասփյուռ մեր ժողովրդի հոգևոր վերազարթոնքի, հզորության ու միասնության սրբազան առաքելությանը ծառայեցրեց իր եռանդն ու անխոնջ ջանքերը, խոսքն ու գործը:

«Հարկ է վերայ մեր կայ» պարտքի զգացումով իր հայացքը հառած քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյա դարակազմիկ հոբելյանին, Հայոց Հայրապետն արդյունավորեց հովվապետության կարճատև իր շրջանի յուրաքանչյուր օրն ու ժամը: Վերակազմվեցին Հայ Եկեղեցու թեմերը Հայաստանում և ԱՊՀ երկրներում: Ընդարձակվեց եկեղեցաշինությունը՝ վերանորոգվեցին և բարեզարդվեցին խոնարհված եկեղեցիներ ու վանքեր, կառուցվեցին նորերը: Գևորգյան Ճեմարանի նորոգյալ հարկից ներս հասունացավ հոգևոր սպասավորների նոր սերունդ: Աշխուժացավ և ընդարձակվեց Քրիստոնեական Դաստիարակության ու

Քարոզչության Կենտրոնի գործունեությունը: Գործել սկսեց Օշականի «Սբ. Մեսրոպ Մաշտոց» նորաբաց դպրատունը: Արգասաբեր եղավ Մայր Աթոռի հրատարակչական գործունեությունը՝ հրատարակությամբ աստվածաբանական և հայագիտական աշխատությունների, որոնց շարքում՝ Վեհափառ Հայրապետի մեծաթիվ գրքեր ու գրվածքներ:

1700-ամյակի շրջագծում Մոսկվայի Կրեմլում, Վատիկանում և աշխարհի այլ քաղաքներում բացվեցին եկեղեցական արվեստի ցուցահանդեսներ, կազմակերպվեցին գիտաժողովներ և ուխտագնացություններ՝ դեպի հայրենի սրբավայրեր: Կյանքի կոչվեցին սոցիալական զարգացման ծրագրեր՝ ուղղված տնտեսական դժվարությունների հաղթահարմանը Հայաստանում և Արցախում: Իր բարձր հեղինակությամբ Վեհափառ Հայրապետն առավել ամրապնդեց էկումենիկ կապերը քույր Եկեղեցիների հետ, հովվապետական հաճախակի այցելություններով մխիթարեց և օրհնություն բաշխեց հավատավոր մեր ժողովրդին ի հայրենիս և Սփյուռս: Նորին Սրբությունը ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ է: Վեհափառ Հայրապետը, որպես խոշոր մտավորական, արժանացել է աշխարհի մի շարք ակադեմիաների և համալսարանների պատվավոր դոկտորի կոչմանը:

Մայր Աթոռի սգավոր միաբանությունը՝ խորազգաց հավատավոր մեր ժողովրդի և Հայրենի պետության՝ առ Վեհափառ Հայրապետը ցուցաբերած որդիական սիրո և սրտակցության դրսևորումից, Սուրբ Հոգու մխիթարությունն է հայցում համայն հայությանը: Մայր Աթոռի միաբանությունը և Գերագույն Հոգևոր Խորհուրդը հայտարարում են քառասնօրյա սուգ:

Աղոթք, խունկ և բյուր օրհնություն Վեհափառ Հայրապետի անմեռ հիշատակին: Թող Բարին Աստված Իր Փառաց Պսակին արժանացնի և երկնային երանավետ խաղաղության մեջ ընդունի սիրեցյալ Հայրապետի լույս հոգին՝ ընդ դասս աստվածազգյաց Հայոց Երանելի Հայրապետաց:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

***ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ***

Ս. Էջմիածին
29 հունիսի 1999 թ.

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԸՆՏՐՎԵՑ
## Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԸ

Հուլիսի 4-ին, երեկոյան ժամը 8-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ ընտրելու նպատակով գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի և եպիսկոպոսաց համատեղ ժողով՝ ատենապետությամբ Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող 53 իրավիրյալներից ժողովին ներկա էին 36 հոգի:

Փակ գաղտնի քվեարկությամբ Կաթողիկոսական Տեղապահ ընտրվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Տ. Ներսես արքեպս. Պոզապալյան - 24 ձայն
Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյան - 10 ձայն
Տ. Վիգեն եպս. Այքազյան - 1 ձայն
Ձեռնպահ - մեկ հոգի

***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

5 հուլիսի 1999 թ.

*Խմբագրության կողմից - Ի սրտե շնորհավորում ենք Ամենապատիվ Սրբազան Հորը Կաթողիկոսական Տեղապահ ընտրվելու առիթով: Քանի որ այս համարը բացառապես նվիրված է ի Տեր ննջեցյալ Գարեգին Ա Վեհափառի խնկելի հիշատակին, Տեղապահ Սրբազանի կենսագրությանը եւ ընտրությանը, հուլիսին տեղի ունեցած Գերագույն Հոգեւոր Խորհրդի նիստերին, ինչպես նաեւ Մայր Աթոռին ու Հայոց Եկեղեցուն վերաբերող այս ամսվա նյութերին կանդրադառնանք հաջորդ համարում:*

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ առողջապահության նախարարի 30.06.99 թ. հրամանով ստեղծված մասնագիտական հանձնաժողովը, հետևյալ կազմով՝ ՀՀ առողջապահության փոխնախարար Ա. Աթաբեկյան (նախագահ), ՀՀ ԱՆ մասնագիտացված բուժօգնության վարչության պետ Ա. Սարգսյան, ՀՀ ԱՆ «Նաիրի» բուժական առողջարարական միավորում ՊՓԲԸ գլխավոր տնօրեն Ս. Դիլանյան, ՀՀ ԱՆ ուռուցքաբանության գիտական կենտրոնի փոխտնօրեն, պրոֆեսոր Հ. Գալստյան, ՀՀ ԱՆ գլխավոր անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, դոցենտ Գ. Անժելով, ՀՀ ԱՆ գլխավոր ախտաբան-անատոմ, պրոֆեսոր Ն. Վարդազարյան, ՀՀ ԱՆ «Նաիրի» բուժական առողջարարական միավորում ՊՓԲԸ անհետաձգելի օգնության բաժնի վարիչ Ս. Ղալումյան, Երևանի կայազորային հոսպիտալի անեսթեզիոլոգիայի և ռեանիմատոլոգիայի բաժանմունքի պետ Մ. Հարությունյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի անձնական բժիշկ, դոկտոր Ռ. Հովհաննիսյան, տվել է հետևյալ մասնագիտական եզրակացությունը Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի մահվան վերաբերյալ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինը 1998 թվականից տառապում էր լեզվի չարորակ նորագոյացությամբ: Ախտորոշումից հետո համապատասխան բուժում (վիրահատություններ և ճառագայթային) է ստացել Նյու Յորքի ուռուցքաբանական հեղինակավոր կլինիկաներից մեկում: Բուժումից հետո մշտապես եղել է բժիշկների հսկողության ներքո:

Վեհափառը միաժամանակ տառապում էր սրտի իշեմիկ հիվանդությամբ և շաքարախտով:

Վերջին 3 ամիսների ընթացքում, չնայած ձեռնարկված միջոցներին, Վեհափառի վիճակը աստիճանաբար վատանում էր: 1999 թ. հունիսի 29-ին, ժամը 17 անց 50 րոպեին, կյանքի 67-րդ տարում Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինը վախճանվեց՝ լեզվի չարորակ նորագոյացության հետևանքով առաջացած ինտոքսիկացիայի և սիրտ-անոթային համակարգի անբավարարության պատճառով:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ (նախագահ)
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Ս. ԴԻԼԱՆՅԱՆ
Հ. ԳԱԼՍՏՅԱՆ
Գ. ԱՆԺԵԼՈՎ
Ն. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ
Ս. ՂԱԼՈՒՄՅԱՆ
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (բուժող բժիշկ)

30.06.1999 թ.

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Յանուն Գերագույն Յոգևոր Խորհրդի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Դիվանը հայտնում է.

Երկուշաբթի, 5 հուլիսի, ժ. 10-ին, Վեհափառ Յայրապետի մարմինը կդրվի Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում, ուր և կկատարվի հոգեհանգիստ ժ. 18-ին:

Երեքշաբթի, 6 հուլիսի, ժ. 10.30-ին, Յայոց Յայրապետի մարմինը Ս. Սարգիս եկեղեցուց հանդիսավոր թափորով կփոխադրվի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Յավատացյալ ժողովուրդը կարող է հրաժեշտ տալ Յայոց Յայրապետին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում երկուշաբթի, ժ. 10-20-ին, Ս. Էջմիածնի Մայր տաճարում երեքշաբթի, ժ. 12-20-ը, չորեքշաբթի, ժ. 8-20-ը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Յայրապետի հուղարկավորության արարողությունը տեղի կունենա հինգշաբթի, 8 հուլիսի, ժ. 10-ին, Ս. Պատարագի մատուցմամբ, վերջին օծման և թաղման արարողություններով:

Պաշտոնական ցավակցությունները ընդունվում են Վեհարանում ամեն օր, ժ. 11-15-ը:

***ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

# ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի հուղարկավորությունը կազմակերպելու համար որոշում եմ.

1. Ստեղծել հուղարկավորության կազմակերպման պետական հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության նախագահ /հանձնաժողովի նախագահ/*

ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ*

ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության վարչապետ*

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ*

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարար*

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար*

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար*

ԽՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար*

ՇԱՀԵՆ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար*

ՀԱՅԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար*

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ*

ԼԱԶԱՐ ՍՈՒՋՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ*

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ*

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ*

ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ*

ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆ

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ*

2. Հուլիսի 6-ից մինչև Վեհափառ Հայրապետի հուղարկավորության օրը՝ հուլիսի 8-ը, հայտարարել համազգային սուգ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ընդունել սույն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ:

Հայաստանի Հանրապետության նախագահ՝

***Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ***

***29 հունիսի 1999 թվականի, Երևան***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ

# ՈՐՈՇՈՒՄԸ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության նախագահի 1999 թվականի հունիսի 29-ի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի հուղարկավորության պետական միջոցառումների մասին» ՆՀ-326 հրամանագրի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի հուղարկավորության կազմակերպման կապակցությամբ՝

1. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ծառայությանը՝

ա/ ապահովել հուղարկավորությանը մասնակցելու համար այլ պետություններից ժամանող անձանց փաստաթղթերի սահմանված կարգով ձևակերպումը, ընդունումը, տեղաբաշխումը և անվտանգությունը.

բ/ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի մահվան կապակցությամբ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կազմակերպել սգո արարողություններ:

2. Հայաստանի Հանրապետության նախարարություններին, գերատեսչություններին, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, արտասահմանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի մահվան կապակցությամբ 1999 թվականի հուլիսի 6-8-ը խոնարհել Հայաստանի Հանրապետության պետական դրոշը, հասարակական և ժամանցի վայրերում արգելել խրախճանքների և զվարճալի հանդիսությունների անցկացումը:

3. Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի հուղարկավորության հետ կապված կազմակերպական աշխատանքների համակարգման պարտականությունները դնել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Շ. Կարամանուկյանի վրա:

Հայաստանի Հանրապետության վարչապետ՝

***Վ. ՍԱՐԳՍՅԱՆ***

*30 հունիսի 1999 թվականի, թիվ 389, քաղ. Երևան*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

## (ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ)

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը /ավազանի անվամբ՝ Նշան Սարգսյան/ ծնվել է 1932 թ. օգոստոսի 27-ին Քեսապում /Սիրիա/: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի Ուսումնասիրաց միացյալ վարժարանում, որից հետո ուսումնառությունը շարունակել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում /1946 թ./: Այստեղ էլ, 1949 թ. մայիսի 29-ին, ձեռնադրվել է սարկավագ: 1952 թ. ավարտել է ուսումնառությունը Դպրեվանքի Ընծայարանի բաժնում:

1952 թ. սեպտեմբերի 28-ին, ձեռնադրվելով կուսակրոն քահանա, ի հիշատակ նորոգ վախճանյալ Գարեգին Ա Հովսեփյանց Կաթողիկոսի /Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն/, վերակոչվում է Գարեգին աբեղա և դառնում Կիլիկիո Միաբանության ուխտի անդամ: Պաշտպանելով վարդապետական ավարտաճառը՝ «Հայաստանեայց Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ Հայ Շարականներուն» թեմայով, 1955 թ. հունիսի 5-ին ստանում է վարդապետական աստիճան: Նույն թվականին պաշտոնավարում է Դպրեվանքում՝ որպես ուսուցիչ և վերակացու: Որոշ ժամանակ անց /1956 թ./ ստանձնում է Դպրեվանքի տեսչի պաշտոնը:

1957-1959 թթ. Գարեգին վարդապետն ուսումնառությունը շարունակում է Օքսֆորդի համալսարանում, որտեղ հետևում է աստվածաբանական բարձրագույն ուսման և ստանում գրականության բակալավրի աստիճան՝ որպես ավարտաճառ ներկայացնելով «Քաղկեդոնի ժողովը և Հայ Եկեղեցին» խորագիրը կրող աշխատասիրությունը /1965 թ. հրատարակվել է Լոնդոնի S.P.C.K. հրատարակչատան կողմից, վերահրատարակվել է Նյու Յորքում, 1976 թ./:

1960 թ. Օքսֆորդն ավարտելուց հետո, Գարեգին վարդապետը կրկին ստանձնում է Դպրեվանքի տեսչի պաշտոնը:

Նույն շրջանում Գարեգին վարդապետը գործուն մասնակցություն է ունենում միջեկեղեցական մի շարք համագումարների ու ժողովների՝ որպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ: Խորեն Ա Կաթողիկոսի ընտրությունից հետո /1963 թ. մայիսի 5/ Գարեգին վարդապետը կարևոր դեր է կատարում նորընտիր Կաթողիկոսի պաշտոնական այցելությունների կազմակերպման գործում: Միաժամանակ մասնակցում է ԵՀԽ միջեկեղեցական կարևոր համաժողովների:

Դիտորդի կարգավիճակով մասնակցում է Վատիկանի երկրորդ ժողովի երեք հաջորդական նիստերին /1963-1965 թթ./ և Անգլիկան Եկեղեցու Լամբեթի

համաժողովին /1968 թ./: Նշանակալից է նրա դերը Ադիս Աբեբայում արևելյան ուղղափառ դավանակից քույր եկեղեցիների հոգևոր առաջնորդների համաժողովի կազմակերպման գործում:

Այս շրջանում աստվածաբանության, գրականության, պատմության և մշակույթի թեմաներով դասախոսել է ՀԲԸՄ Դարուհի Հակոբյան երկրորդական վարժարանում, Բեյրութի «Համազգայինի» Նշան Փալանջյան ճեմարանում, Beirut College for Women-ում /ներկայումս՝ Beirut University College/ և Բեյրութի Ամերիկյան համալսարանում /A.U.B./, դասախոսություններով հանդես է եկել մի շարք եկեղեցիներում:

1963 թ. հունիսի 16-ին, ի գնահատություն նվիրյալ ծառայության, Խորեն Ա Կաթողիկոսի օրհնությամբ նրան շնորհվում է Ծայրագույն վարդապետի աստիճան:

1964 թ. հունվարի 19-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1973 թ. ապրիլի 26-ին արժանացել արքության տիտղոսի:

1971-1973 թթ. Գարեգին եպիսկոպոսը հոգևոր պատասխանատու ծառայության է անցնում Իրանում /Նոր Ջուղա/:

1973-1977 թթ. Գարեգին արքեպիսկոպոսը հոգևոր ծառայության է մեկնում ԱՄՆ /Նյու Յորք/:

1976-1977 թթ. Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմի տարիներին վճռորոշ դեր է ունենում լիբանանահայության օժանդակության կենսական գործում:

1977 թ. մայիսի 22-ին, Խորեն Ա Կաթողիկոսի Հայրապետության շրջանում, ընտրվում է Մեծի Տանն Կիլիկիո Աթոռակից Կաթողիկոս: 1983-ին, Խորեն Ա Կաթողիկոսի վախճանվելուց հետո, հռչակվում է որպես Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոս:

Անթիլիասի Աթոռում 18 տարիների գահակալության ընթացքում Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը զարկ է տալիս ազգային-կրոնական, մշակութային և շինարարական աշխատանքներին: Գարեգին Բ Կաթողիկոսը հաստատում է քրիստոնեական դաստիարակության բաժանմունքը: Նորին Սրբության հատուկ ուշադրության առարկան է դառնում Դպրեվանքը /1977 թ. Անթիլիասից այն փոխադրվում է Բիքֆայա/, որն ընդարձակվելով ու արդիականացվելով՝ նպաստում է աստվածաբանական ուսուցման բարելավմանը: Գարեգին Բ Կաթողիկոսն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հրատարակչական գործին, հիմք է դրվում թանգարան-մատենադարանի շենքի շինությանը:

Կաթողիկոսության շրջանում ձեռնարկում է հովվապետական այցելություններ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության թեմեր: Միջեկեղեցական շրջանակներում այցելություններ է տալիս Հովհաննես-Պողոս Բ Պապին /Վատիկան/, Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրբերիի արքեպիսկոպոս Դր. Ռոբերտ Ռանսիին /Լոնդոն/, Շվեյցարիայի Ավետարանական Եկեղեցիների Միությանը, Դանիայի և Գերմանիայի Լյութերական եկեղեցիներին, Ավստրալիայի Եկեղեցիների Խորհրդին և Ղպտի Եկեղեցու պետ Նորին Սրբություն Շենուդա Գ Պատրիարքին /Եգիպտոս/:

Կիլիկիո Կաթողիկոսության տարիներին բազմաթիվ անգամներ այցելել է

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին՝ թե՛ խորհրդային և թե՛ նորանկախ շրջանում: 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո Գարեգին Բ Կաթողիկոսը կանգնեց երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին՝ բերելով իր եղբայրական սերն ու զորակցությունը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է:

Վազգեն Ա Կաթողիկոսի վախճանումից հետո, 1995 թ. ապրիլի 4-ին, Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովը Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսին ընտրում է Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս /գահակալության հանդիսությունը տեղի ունեցավ ապրիլի 9-ին՝ Ծաղկազարդի տոնին, Մայր Տաճարում/:

Ընտրությունից ի վեր Նորին Սրբությունն իր ողջ եռանդը և ջանքերն ուղղեց եկեղեցական կյանքի ներքին կարգավորմանն ու կազմակերպմանը, մասնավորապես Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի գործունեության վերաշխուժացմանը, Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի զորացմանն ու բարգավաճմանը, քրիստոնեական քարոզչության հանրամատչելի ծրագրերի մշակմանը, եկեղեցիների ու վանքերի վերանորոգմանը, սոցիալական բնույթի կառույցների ստեղծմանը, աստվածաբանական, հոգևոր և հայագիտական հրատարակությունների թվի մեծացմանը:

Եկեղեցու աշխատանքն առավել նպատակաուղղված դարձնելու և ժողովրդի կյանքում քրիստոնեական ավանդույթներն ամրացնելու նախանձախնդրությամբ Վեհափառ Հայրապետը վերատեսության ենթարկեց Հայաստանի թեմական կառուցվածքը. 1996 թ. հայաստանյան նախկին 4 թեմերի կողքին ստեղծվեցին ևս 4 նոր թեմեր: Ստեղծվեցին նաև Ուկրաինայի և Հարավային Ռուսաստանի թեմերը:

Վերաշխուժացավ Հոգևոր ճեմարանի կյանքը: 1997 թ. սեպտեմբերին, 80-ամյա ընդմիջումից հետո, վերաբացվեց Գևորգյան Հոգևոր ճեմարանի հիմնովին նորոգված շենքը: Հիմք դրվեց նաև ուսանողների համար նոր կացարանային համալիրի շինարարությանը: Այս շրջանում բազմապատկվեց նաև ճեմարանի սաների թիվը՝ հասնելով շուրջ 120-ի:

Վեհափառ Հայրապետի հովանավորությամբ կյանքի կոչվեց երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի ծրագիրը. Օշականում, Սբ. Մեսրոպ Մաշտոցի նվիրական շիրիմի կողքին, վերակառուցված շենքում հաստատվեց Սբ. Մեսրոպ Մաշտոցի անվան Դպրատունը, որն այսօր դարձել է գիտական և մշակութային կարևոր կենտրոն:

Գահակալության համեմատաբար կարճ ժամանակահատվածում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը հովվապետական այցելություններ տվեց Հայ Առաքելական Եկեղեցու Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի /1995 թ./, Վրաստանի /1995 թ./, Ուկրաինայի, Ռումինիայի /1995 թ. /, Կանադայի /1995 թ./, Ամերիկայի Միացյալ Նահանգների /1996 թ./, Շվեյցարիայի /1996 թ./, Բրազիլիայի, Ուրուգվայի, Արգենտինայի, Իտալիայի /1996 թ./, Ֆրանսիայի /1997 թ./, Սինգապուրի, Թաիլանդի, Ավստրալիայի /1997 թ. /, Ավստրիայի /1997 թ./, Անգլիայի /1997 թ./, Եգիպտոսի /1998 թ./, Գերմանիայի /1998 թ./ թեմերին և Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանին: Մեծ ուրախությամբ և հայրական սիրով

Վեհափառ Հայրապետը նախագահեց Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի նորընտիր Կաթողիկոս Արամ Առաջինի գահակալության ու օծման արարողությանը 1995 թ. հուլիսի 11-ին:

Վեհափառ Հայրապետը նոր թափ հաղորդեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի էկումենիկ գործունեությանը և ծառայությանը: Գահակալության տարիներին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություններ է տվել Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիյ Երկրորդին /1995 թ./, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Թեոկտիստին /1995 թ./, Վրաց Ուղղափառ Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Իլիա Երկրորդին /1995 թ./, Հռոմի Սրբազան Քահանայապետ և Կաթոլիկ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Երկրորդ Պապին /1996 թ./, Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Բարթուղիմեոս Առաջինին /1996 թ./, Քենթրբերիի արքեպիսկոպոս Դր. Ջորջ Քերիին /1997 թ./, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Շենուդա Երկրորդին /1998 թ./: Այցելել է նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոն Ժնևում:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունել և հյուրընկալել է մի շարք եկեղեցական ու էկումենիկ պատվիրակությունների, մասնավորապես Նորին Սրբություն Բարթուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքին, Նորին Սրբություն Ալեքսիյ Բ Պատրիարքին, Նորին Սրբություն Թեոկտիստ Պատրիարքին, Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Դր. Կոնրադ Ռայզերին: Վեհափառ Հայրապետին այցելել են նաև պետական բազմաթիվ բարձրաստիճան այրեր, նշանավոր քաղաքական գործիչներ, գիտության և մշակույթի ականավոր դեմքեր:

Վեհափառ Հայրապետը հեղինակ է աստվածաբանական, հայագիտական, փիլիսոփայական, բարոյագիտական և գրական բազում ուսումնասիրությունների և հոդվածների, ինչպես նաև հայերեն, անգլերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով երկու տասնյակից ավելի գրքերի: Նորին Սրբությունը ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ է: Վեհափառ Հայրապետը, որպես խոշոր մտավորական, արժանացել է աշխարհի մի շարք կրոնական և գիտական հաստատությունների և համալսարանների պատվավոր դոկտորի կոչմանը:

1998 թ. ապրիլին Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Միացյալ Նահանգներ՝ Ամերիկայի հայոց թեմի 100-ամյա հոբելյանական հանդիսություններին նախագահելու նպատակով: Այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետը ենթարկվեց նաև բժշկական քննության, որին հետևեց տևական բուժման շրջանը:

1998 թ. հոկտեմբեր և 1999 թ. փետրվար ամիսներին Վեհափառ Հայրապետը երկու ծանր վիրահատություններ կրեց:

1999 թ. մարտին, Մայր Աթոռ վերադարձից առաջ, Վեհափառ Հայրապետը Վատիկանում Հռոմի Պապի հետ մեկտեղ կատարեց «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսի բացումը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին: Վեհափառ Հայրապետի Վատիկան

կատարած այցի ընթացքում Հովհաննես-Պողոս Բ Պապն ընդունեց Հայոց Հայրապետի հրավերը՝ հուլիսի 2-4-ը այցելել Մայր Աթոռ Սբ. Էջմիածին: Վեհափառ Հայրապետի առողջական վիճակի վատթարացման հետևանքով նախատեսված այցելությունը չկայացավ:

1999 թ. հունիսի 29-ին, ժամը 17.50-ին, Ամենայն Հայոց Հայրապետը, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, ի Տեր հանգյավ:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի գործունեության հիմնական ուղղությունը եղավ եկեղեցական կյանքի վերանորոգումը և վերաշխուժացումը: Վեհափառ Հայրապետը Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոնական հիմնադրման 1700-ամյակը համարելով որպես մի նոր Հոգեգալուստ հայ ժողովրդի կյանքում, այն դիտում էր իբրև Հայ Եկեղեցու քրիստոնեական ավանդույթի վերանորոգման եզակի հնարավորություն՝ հատկապես նորանկախ ու ազատ Հայաստանի Հանրապետությունում:

*ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ*

# ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

**(8 հուլիսի, 1999 թ.)**

*«Դարձ անձն իմ ի հանգիստ*
*քո, զի Տէր կոչեաց զքեզ»:*
*(Մաշտոց):*

Մեծարգո տիար Ռոբերտ Քոչարյան՝ նախագահ Հայաստանի Հանրապետության,
Մեծարգո տիար Կարեն Դեմիրճյան՝ նախագահ Ազգային ժողովի,
Մեծարգո տիար Վազգեն Սարգսյան՝ վարչապետ Հայաստանի Հանրապետության,
Ձերդ Սրբություն Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա,
Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան՝ Պատրիարք Հայոց Երուսաղեմի,
Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյան՝ Պատրիարք Հայոց Թուրքիո,
Պատվարժան ներկայացուցիչներ քույր եկեղեցիների եւ այլ դավանությունների,
Հարգարժան ներկայացուցիչներ բարեկամ երկրների,
Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիվ Հայրեր,
Վշտակիր ժողովուրդ Հայոց,

Տասն օր առաջ Հայաստանյայց Եկեղեցին եւ ողջ հայ ժողովուրդը մեծ եւ անժամանակ կորուստ կրեցին: Երկարատեւ ծանր հիվանդությունից հետո ի Տեր հանգյավ ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ

Ծայրագույն Պատրիարք Տ. Տ. Գարեգին Առաջինը, որի անշնչացյալ մարմինը շրջապատել ենք մենք այժմ խոր վշտով համակված սրտերով՝ աղոթելու նրա արդար հոգու համար, թաղման կարգ եւ Ս. Պատարագ մատուցելու, վերջին օծումը կատարելու,ապա՝ քիչ հետո, սրբազան Մայր Հողին հանձնելու համար:

Միա տասն օր է շարունակ, ինչ տխրության մեջ է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, եւ ավա՜ղ, որքան ժամանակ է պետք մխիթարություն գտնելու համար:

Սգում է հայ ժողովուրդը: Խոր վիշտն է պատել մեր սրտերը, որովհետեւ ահավասիկ եւս մեկ անգամ, արդեն հարյուր երեսուն եւ մեկերորդ անգամ սգո քողով է ծածկվել առաքելահիմն եւ լուսավորչահաստատ Ս. Էջմիածնի Մայր Աթոռը՝ Գահը Ամենայն Հայոց Հայրապետության:

Մեզ հետ միասին սգալու եւ արտահայտելու համար այդ վիշտը, այստեղ՝ Միածնաէջ սրբազան այս Տաճարի մեջ, համախավաք ներկայությունը կա՝ մեր ողջ ժողովրդի, պետական իշխանությունների, մեր Եկեղեցու նկատմամբ հարգանք ու համարում ունեցող քրիստոնեական քույր եկեղեցիների, նաեւ մյուս կրոնապետերի եւ նրանց բազմամիլիոն հավատացյալների:

Բուրվառներից տարածվող կնդրուկի ու խնկի հոտավետ քողը, կանթեղների եւ մոմերի առկայծումն ու նրանց բուրմունքի համատարած սփռումը կրկնապատկել են Տաճարի խորհրդավոր, աղոթքի հրավիրող մթնոլորտը, որի մեջ, կարծես, զգալի է նաեւ հրեշտակների եւ սրբերի ներկայությունը, որոնց բարեխոսություններն ու մաղթանաց ձայները, միախառնված հավատացյալների ու հարազատների մրմունջ հեծկլտանքներով ընկերակից աղոթքներին ու հոգեւոր երգեցողության գմայլիչ շեշտերին, իրենց զգվոտ թեւերին առած երանելի Հայրապետի արդար հոգին, Միածնի իջած նույն ճանապարհով հանդարտորեն առ Աստված են առաջնորդում նրան՝ վերին օթեւաններում բնակեցնելու եւ հավիտենական հանգստյան արժանացնելու համար:

Ահավասիկ եւ մեր հոգիների աղերսոտ հայացքը, որ զմայլված հետեւում է այդ հանդարտ վերափոխումին:

Օհ, կանգ առնենք սակայն մի պահ, չաճապարենք տակավին, մի փոքր էլ բաժանման այդ ծանր պահը հեռացնենք՝ առիթ տալու համար մեզ ե՛ւս մեկ անգամ անդրադառնալու մտոք, թե ով եղավ եւ ով էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որին բոլորի համար հավասարազոր աստվածադիր այդ օրենքը՝ մահը, անողոքաբար խլում է մեզնից:

Սակայն, որքան էլ որ այն լինի անողոք, պիտի չհաջողի Աստծո ընտրյալ եւ նվիրյալ ծառայի ու Հայաստանյայց Եկեղեցու քաջ հովվապետի հիշատակը պոկել մեր սրտերից, որովհետեւ նա իր կյանքով ու գործով արդեն իսկ հաղթել է մեռելությանը: «Այլ յորժամ մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, եւ ապականութիւնս՝ զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն որ գրեցաւ, եթէ ընկլաւ մահ ի յաղթութիւն: Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո. ո՞ւր է, դժոխք, խայթոց քո» (Ա Կորնթ. ԺԵ 54-55):

Այո՛, կյանքից հավիտենականությանը, զինվորյալ Եկեղեցուց հաղթական

եկեղեցուն անցնող Գարեգին Ա Կաթողիկոսը. աշխարհի տվայտանքների միջից ամուր ու հաստատուն քայլվածքով ընթանալով, պատերազմեց իր բարվոք պատերազմը եւ այն շահեց: Շահե՛ց իր հավատացյալ հոտի համար, Լուսո խորան աստվածակերտ Ս. Էջմիածնի՛ համար, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցո՛ւ համար, հա՛յ ժողովրդի համար եւ… իր հոգու փրկությա՛ն համար:

«Քաջալերեցարուք զի ես յաղթեցի աշխարհի»:

67 տարի առաջ, երբ սիրելի Վեհափառը առաջին ճիչի հետ իր աչքերը լույսին բացեց, Նախախնամությունը օրհնեց մեր Եկեղեցուն: Երկնքի իսկ նախասահմանմամբ նա ծրագ ու լույս դարձրեց Աստծո պարգեւ այդ կյանքը՝ վասն բարօրության Եկեղեցու եւ ազգի: Աստված օրհնեց նրան եւ առատորեն օժտեց բոլոր հնարավոր շնորհներով, որ մարդկային բնության սահմանները ունակ են կրելու:

Ու տակավ, աճելով ու զորանալով Ս. Հոգու շնորհների մեջ՝ ի սպասավորություն կոչվեց Տիրոջից՝ իր անձի շնորհաշատ անոթը բոլորանվեր ընծայելով Աստուծո եւ ազգի զոհաբերության Սուրբ Սեղանին:

Հանգամանքների բերումով՝ եկեղեցում իր ծառայական գործունեությունը Նորին Սրբությունն սկսեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության սահմանների մեջ՝ արագաթռիչ վերելքով բարձրանալով Աթոռի ամենաբարձր պաշտոնի աստիճանին: Եղավ գերազանց մակարդակի եւ որակի ուսուցիչ, դաստիարակ, քարոզիչ, հովիվ, առաջնորդ: Այդ հանգամանքներից յուրաքանչյուրին փայլ հաղորդեց իր անձով: Ճանաչվեց եւ հեղինակություն դարձավ որպես եկեղեցակա՛ն, ազգայի՛ն եւ միջեկեղեցակա՛ն գործիչ: Ամենուր ճանաչեցրեց Հայ Եկեղեցին ու ժողովուրդը: Ի մասնավորի եղավ մշակույթի՛, գիտությա՛ն եւ դպրությա՛ն նվիրյալ: Դարձա՛վ եւ հռչակվե՛ց աստվածաբանական գիտությունների հմուտ հեղինակություն:

Անմնացորդ նվիրումն ու գործունեությունը, միացած բացառիկ անձնավորության հետ, իր մեջ կերտեցին այն գերազանց վիճակը, որն իր մարմինը կազմող նյութի ընդմիջից ճանաչել տվեց մարդու էության նաեւ աստվածային սկիզբը՝ հոգին, որն այդ էության մեջ ներթափանցված, իրենով համակած այն, պատռելով նյութի ամեն տեսակ կաշկանդումները, իր ազնիվ արտահայտությունն էր գտնում՝ ի գործ մղելով նրան: Նա երբեք չիմացավ, թե ինչ են անգործությունն ու կրավորականությունը:

Իր հանրային եւ եկեղեցական ողջ գործունեության ընթացքում աշխույժ ու ստեղծագործող այդ էությունը Վեհափառին բարձրացրեց, եւ չէր կարող չբարձրացնել, այն սրբազան բեմահարթակը, որ ինքը ընկերությունն է: Ու նա, շնորհներով պայմանավորված գործունեության ներազդմամբ, իր կնիքը տպավորեց նույն այդ ընկերության վրա: Սթափ ու զգոն պահելով նրան՝ խթանեց ու թույլ չտվեց ընդարմանալու: Հարատեւ շարժման մեջ դնելով՝ առաջդիմությա՛ն մղեց նրան: Նմանություն բերելով իր ներշնչարան Արարչին՝ մասնակից ու դերակատար դարձավ այդ ընկերության մտավոր ու հոգեկան վերելքին ու թռիչքին:

Ու երբ հասել էր ուժերի ու շնորհների բացահայտման գագաթնակետին, դարձյալ ի վերուստ տնօրինմամբ եւ կամոքն ազգի, բարձրացավ Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետության բարձրագույն աստիճանին եւ պատվին՝ արժանավոր կերպով, որպես առաջին սպասավոր, բազմելով Ս. Գրիգոր Լուսավորչի գահին՝ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Էջմիածին: Նվիրական անուն: Այդ ոգեղեն տեսլականը Հայոց Հայրապետը ի տղա տիոց էր կրում իր հոգու մեջ արդեն: Ս. Էջմիածնի ու Հայ Եկեղեցու հանդեպ սերը, շաղախված ու միախառնված ժողովրդի ու հայրենիքի սիրո հետ, նա՝ որպես ծեռքը մաճին ամրորեն դրած մշակ ու գիտակից՝ Ավետարանի քարոզության իր առաքելությանն ու կարողությանը, Արքայության պատկերը հոգիների մեջ դրոշմելու ամբողջական վճռականությամբ, այլեւս ետ չնայեց: Մարգարեաշունչ հայացքը հորիզոնին հառած՝ առաջացա՛վ, առաջացա՛վ՝ հայրենի անդաստանի մեջ լայնահուն ու բերրի ակոսներ բաց անելով:

Դարձյալ իր գործունեության ուղղությունները եղան, այս անգամ ավելի մեծ չափերով, մանավանդ անկախ պետականություն կերտած հայրենիքի լայն հնարավորություններով եւ հարազատ իշխանությունների անվերապահ գործակցության ու իր հանդեպ ժողովրդի տածած անսահմանափակ սիրո պայմաններում, կրթությունը, դաստիարակությունը, գիրն ու գրականությունը, շինարարությունը, որոնք նպատակադրեցին ու արդյունավորեցին մեր Եկեղեցու վերելքը:

Մանավանդ Բանին Կենաց քարոզությունը դարձավ իր զենքերից հզորագույնը, որով նա ուսուցանեց, հորդորեց ու խրատեց իր բանավոր հոտը: Շիկացյալ կրակը, որ Աստված նրա շուրթերին էր դրել որպես նրա էությունը մշտապես բորբոքող հուր, մագնիսական հաղորդականություն էր փոխանցում ու յուրաքանչյուր ունկնդրի հոգում արծարծում ու բորբոքում էր կյանքի ու ճշմարտության այդ կրակը՝ հզոր թափով:

Այո՛, նա կարողացավ հզոր խոսքով հուզել, համոզել ու դարձի բերել դեպի ճշմարտության ճանապարհ Հայաստանյայց Եկեղեցու գավթում համախմբված իր մեծ լսարանն ու հոտը, որը միանգամայն հանդիսանում էին Հայրենիքն ու Սփյուռքը: Նա ընդելուզվեց եւ միաձուլվեց Ս. Էջմիածնի Աթոռի կյանքին, աշխատանքին ու երազներին:

Ու երբ բազում էին այդ երազներն ու իրագործման վճռականությունը՝ մեծ, ահա անսպասելի պատահականությամբ ընդհատվում է այս մեծ կյանքի թելը՝ անավարտ թողնելով բազմաթիվ նպատակադրումներ:

«Եւ դադարեաց Յակոբ ի պատուիրելոյ որդւոցն իւրոց, եւ առեալ զոտս իւր անդրէն ի մահիճսն՝ պակասեաց, եւ յաւելաւ առ ժողովուրդ իւր» (Ծննդ. ԽԹ 32):

Այո՛, կորուստը ծանր է եւ մեծ: Անչափելի են վիշտը, ցավն ու ափսոսանքը, սակայն խոնարհելով մեր գլուխը Աստուծո կամքի եւ Վեհափառի մեծության առաջ՝ հույսի մեր հայացքն ենք ուղղում առ բարին Աստված՝ ակնկալելով Նրա մեծ ողորմությունը: Եվ չենք սխալվում: Այն Տերը, որն օծեց այժմ այլեւս հանգուցյալ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետին Ս. Հոգու բոլոր

շնորհներով, պիտի չզլանա նրան պարգեւելու հիմա՝ շնորհների ամենամեծը՝ Աստուծո ողորմության եւ փրկության շնորհը: Հրավիրում եմ միաձայն աղոթե-լու եւ ասելու. «Լուսաւորեա, Տէ՛ր, զհոգի Հայրապետի եւ Հօրն մերոյ, զՏէր. զՏէր Գարեգնի Առաջնոյ, եւ հանգո զնա ի լոյս երեսաց աստուածութեան քո»:

Շարունակելով աղոթել՝ ասենք նաեւ. «Ողորմիր եւ մեզ, Տե՛ր, պարգեւելով Քո մխիթարությունը եւ շարունակելով օրհնել եւ Քո Աջի զորության տակ պահ-պանել, պահել եւ առաջնորդել Հայ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը»:

Այդ մխիթարությունը եւ շարունակելու կամքը ստանալուն օգնում է մեզ նաեւ ինքը՝ Վեհափառ Հայրապետը: Հարատեւորեն ինքն իրեն հավատարիմ՝ շարունակում է տակավին այս բեմից, անգամ անշնչացյալ իր մարմնի միջոցով, պատգամել մեզ: Կարծես թե դարձյալ նրա ախորժալուր ձայնն է հոսում մեր ականջների մեջ՝ թելադրելով եւ պահանջելով հավատարիմ մնալ այդ պատգամներին: Եվ ինչպես միշտ, անձամբ օրինակ է դառնում բոլորիս:

«Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ որ առաքեացն զիս՝ մինչ աւուր կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել. մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի» (Հովհ. Թ 4-5):

Այո՛, Վեհափառ, ունկնդիր ենք այդ ձայնին ու պատգամին եւ խոստանում ենք ահա Ձերդ Սրբության առաջ, որ ակնկալելով երկնային բարձունքից Ձեր աղոթքները եւ Աստուծո օրհնությունը՝ պիտի շարունակենք Ձեր ուղենշած ճանապարհով առաջ ընթանալ:

Դուք այժմ կենդանի աղոթք դարձած Ս. Էջմիածնի բարձունքից հրավեր եք կարդում աշխարհի չորս ծագերին սփռված Հայաստանյայց Եկեղեցու Ձեր զավակներին՝ ասելով. հավատացե՛ք, գործեցե՛ք եւ համախմբվեք Հայրենիքի ու Մայր Աթոռի շուրջ եւ այնտեղ պիտի գտնեք ամեն ինչ, որ հնարավոր է ակնկալել՝ «զբարին, զպիտոյսն եւ զօգտակարն»:

Ձեր մեծությունը, Վեհափառ, արդեն կայանում էր նաեւ նրանում, որ Ձեր հիշատակն անգամ բոլորին պիտի մղի ի գործ:

Արդ, այս բոլորից հետո հանգիստ խղճով կարելի է ասել. «Վեհափառ, դուք երջանիկ եղաք կյանքում եւ այժմ երջանիկ եք մահվան մեջ, որովհետեւ այդ սիրո ու միաբանության վճռականությամբ Ձեզ են շրջապատել բոլոր Ձեր սիրելիները եւ խոստանում են կատարել Ձեր բոլոր պատգամները:

Հուսկ, հայտնում ենք ցավակցություններ ամբողջ մեր ազգին եւ Վեհափառի հարազատներին:

Երջանիկ Հայրապետ, խունկ եւ աղոթք հիշատակիդ:

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

**(8 նոյիսի, 1999 թ.)**

Պատմահայր Խորենացին դարերու խորքէն մեզի աւանդած է անհերքելի ճշմարտութիւն մը, ըսելով.«Թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս արժանի գրոց յիշատակին» («Պատմություն Հայոց»,... Գիրք Ա, գլ. 2): Հայրենիքները կը կերտուին արութեան գործերով միայն, ազգերը կ'անմահանան արութեան գործերով միայն ու արութեան գործը միայն վասն հաւատոյ ու վասն հայրենեաց արեան վկայութիւն մը չէ, այլ հոգեմտաւոր ստեղծագործութեան, հաւատքի առաքելութեան և ազգային հայրենական ծառայութեան ճամփով ինքընծայումն է բարձրագոյն աստիճանի՝ յանձնառութեամբ Աստուծոյ, Հայրենիքին, Եկեղեցւոյ ու Ազգին: Արութեան գործին ետոյն կեցող մարդը հաւատքի մարդն է, յանձնառու մարդն է, մարդն է զպանակը գործին, ինչպէս Աստուածաշունչը կ'ըսէ. «Մարդ է, որ գործէ զերկիր»:

Արութեան գործերով իր կեանքը արժեւորեց, արութեան գործերով մեր հաւաքական ազգին կեանքը հարստացուց, մեր բոլորին սիրելի Վեհափառ Հայրապետը՝ երջանկայիշատակ Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ու ինծի համար սա պահուն Գարեգին Վեհափառի մասին խօսիլ՝ սոսկ դամբանական մը խօսիլ չէ, այլ վկայութիւն մըն է, այն կենդանի վկայութեան մասին, որ ինքնին եղաւ Գարեգին Վեհափառինը, այն յանձնառու վկայութեան մասին, որուն ականատեսը, հիացողը և հետևողը եղայ ես և ինծի նման

ուրիշներ, ամբողջ քառասուն տարիներ: Ես Գարեգին Վեհափառին մէջ առաջին հերթին ճանչցայ ուսուցիչը, ուսուցիչ եղաւ Ան բառին վաւերական հասկացողութեամբ, ոչ գիտութիւն ջամբող, ոչ տեսութիւն փոխանցող, այլ ոգի ներարկող, հաւատք ջամբող՝ մարդուն մէջ մարդը, քրիստոնեան և հայը կերտող առաքելատիպ ուսուցիչ: Մարդու պատրաստութիւնը մեր սիրելի Վեհափառին համար եղաւ առանցքային մտահոգութիւն իր վարդապետութենէն մինչև իր կաթողիկոսութիւն, հաւատաց մարդու արժէքին, մարդ պատրաստեց և մարդու պատրաստութեան համար զոհեց ամէն ինչ, նոյնիսկ իր կեանքը, որովհետև հաւատաց, որ եկեղեցին եկեղեցի կը դառնայ հաւատքի մարդերով, ազգը ազգ կը դառնայ յանձնառու մարդերով, հայրենիքը հայրենիք կը դառնայ ծառայասէր, ազգանուէր պատասխանատուներով:

Երկրորդ՝ ես Գարեգին Վեհափառին մէջ ճանչցայ մտաւորականը, մտաւորական չեղաւ Ան միայն գիրք գրելով, դասախօսութիւն տալով, այլ իր իւրայատուկ աշխարհայացքով, մտածելու, իր միտքը դասաւորելու, ինք զինք արտայայտելու, ինք զինք ըլլալու իւրայատուկ կոչով: Գիրքը եղաւ իր ամենէն սիրելի և հաւատարիմ բարեկամը: Միայն գիրք չտպեց, այլ ապրեցաւ գրքի առաջ բերած զգացողութեան մէջ իր գրասեղանին մօտ: Իր ննջասենեակի մէջ, իր ճամփորդական պայուսակի մէջ գիրքը եղաւ իր հետ մնայուն ներկայութիւն, որովհետև գրքին մէջ թուղթէն, գիրէն անդին տեսաւ հոգին, հաւատքը ու տեսիլքը:

Երրորդ՝ ես Գարեգին Վեհափառին մէջ ճանչցայ միջեկեղեցական յարաբերութիանց ռահվիրան Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ: Հաւատաց էկիւմենիկ շարժումին կարևորութեան, հաւատաց, որ այս շարժումը կենսական պահանջք է նաև մեր եկեղեցւոյ, բացաւ մեր եկեղեցին ուրիշներուն, յարգեց օտարը, սակայն չդարձաւ օտարամոլ, եղաւ մեր հոգեմտաւոր արժէքներու լաւագոյն դեսպաններէն մէկը միջազգային գետնի վրայ:

Եւ չորրորդ՝ տիպար ուսուցչին, իրաւ մտաւորականին և հաւատաւոր էկիւմենիստին կողքին և անոնցմէ առաջ ու դեռ աւելին՝ Գարեգին Վեհափառ եղաւ Աստուծոյ հաւատարիմ ծառան: Իր կեանքը ըմբռնեց որպէս ամբողջական ծառայութիւն, իր կեանքը իրագործեց որպէս յանձնառու ծառայութիւն Աստուծոյ, եկեղեցւոյ, հայրենիքին ու ազգին: Տասնութ տարիներ շարունակ կաթողիկոսական գահին վրայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գործեց, ծառայեց, մեր Աթոռը շէնցուց իր ծառայութեամբ, իր հաւատքի առաքելութեամբ, իր ներքին թէ արտաքին երեսներով: Չորս տարիներ առաջ, երբ Աստուծոյ ձայնը կանչեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն, եկաւ հոս ու վերանորոգ հաւատքով ու տեսիլքով իր հաւատքը, իր քրտինքը խառնեց հայրենի հողին, ծառայեց այստեղ Մայր Աթոռի ճամփով մեր հայրենիքին, մեր ազգին ու մեր եկեղեցւոյ, և մենք բոլորս շատ լաւ գիտենք այն մեծ իրագործումներուն մասին, որ իր գահակալութեան կարճ ժամանակի ընթացքին մեր սիրելի Վեհափառը իրագործեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն ներս:

Աւասիկ, սիրելի ներկաներ, Ամենայն Հայոց մեր սիրելի Գարեգին Վեհափառը եղաւ Պատմահօր բառերով իր կեանքը արութեան գործերով

լեցուցած, իր ազգին կեանքը արութեան գործերով պտղաւորած ու հարստացուցած այս մեծ ուսուցիչը, Մեսրոպ Մաշտոցի այս բանիբուն աշակերտը, Քրիստոսի Աւետարանի այս վեհ քարոզիչը և մեր բոլորիս սիրելի Ամենայն Հայոց Հայրապետը:

Սիրելի Վեհափառ, վկայութիւն մըն է, զոր տուի քո մասին ամփոփ գծերով և գիտակ եմ, թէ ինչ որ ըսի, ոչինչ է այն մեծ անձին դիմաց, որ դուն եղար, այն մեծ ծառայութեան դիմաց, որ դուն կատարեցիր: Քառասուն տարիներ հետևեցայ քեզի, դուն առաջնորդեցիր իմ քայլերս աշակերտութենէն մինչև սարկաւագութիւն, սարկաւագութենէ մինչև կաթողիկոսութիւն: Ձեզ հետ միասին մտածեցինք, միասին ծրագրեցինք, միասին պայքարեցանք, միասին ծառայեցինք Հայ Եկեղեցւոյ, հայրենիքին ու հայութեան: Սա պահուն ես կյիշեմ այն ուխտը, զոր միասնաբար կատարեցինք Անթիլիասի մէջ, երբ միւռոնը իմ գագաթիս վրայ հեղիր, մենք հոն ըսինք՝ պիտի շարունակենք մեր ծառայութիւնը մէկ հայրենիքի, մէկ ազգի, մէկ Եկեղեցւոյ անխախտ սկզբունքով ու վառ տեսիլքով: Ես կը հաւատամ, որ այս է պատգամը Վեհափառ Հայրապետի:

Քիչ յետոյ, սիրելի Վեհափառ, երբ հողին յանձնենք քեզ, մենք հողին պիտի յանձնենք այն, որ հողին կը պատկանի, սակայն քու արութեան գործերով վեր պիտի մնաս գերեզմանի փոսէն, պիտի մեծնաս, պիտի անմահանաս, դառնալով հայոց պատմութեան մտքի ու հոգիի գագաթներէն մէկը: Վսեմդ Վեհափառ, տուր մեզի վերջին օրհնութիւնդ, որպեսզի մենք քու ծառայութեամբդ զօրացած, քու տեսիլքովը զօրացած քալենք նոյն ճամփէն, մէկ հայրենիքի, մէկ ազգի, մէկ Եկեղեցւոյ տեսիլքով, հաւատքով ու յանձնառութեամբ:

Թող Աստուած անսասան պահէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, իր Լուսաւորչահիմն ու առաքելատիպ առաքելութեամբ: Թող Աստուած առաւել զօրացնէ մեր բոլորիս սիրելի հայրենիքը մեր բոլորի գործուն ու անմիջական մասնակցութեամբ: Թող Աստուած անսասան պահէ մեր ժողովուրդը, առաջնորդելով մեր ժողովուրդի բոլոր զաւակները դէպի մեր պատմութեան և մեր ժողովուրդին պայծառ ապագան. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

**(8 հուլիսի, 1999 թ.)**

Իբրև Պատրիարք Երուսաղէմի, ես կը բերեմ ցաւի կսկիծը, անխառն հիացմունքը, և Քրիստոսի յոյսն ու ապաւէնը յուշող խոստումը, Սուրբ Երկրի Քրիստոսակոխ սրբավայրերու, և Հայ Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց զինուորեալ միաբանութեան, և Հայ ժողովուրդի զաւակներուն, որոնք ծուարած են, և ապաւէն գտած են, Իսրայէլի, Յորդանանի և Պաղեստինի պետական իշխանութեանց հովանիին ներքև:

Ես կը բերեմ նաև Երուսաղէմի բոլոր քրիստոնեայ համայնքներու և միաբանութեանց պետերու, ցաւակցական արտայայտութեանց կողքին, անոնց գնահատական հիացմունքի և անձնական յիշատակներու շարանը՝ Գարեգին Սարգիսեան հայ հոգևորականէն: Անոնք կը յիշեն Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ զաւակին, հոգևոր սպասաւորին, նուիրեալ ճարտարաբանին հետ, և Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցիին Քրիստոսակեդրոն առաքելութեան անվարան ջատագովին հետ իրենց ունեցած եղբայրական յարաբերութեանց, համատեղ ծրագրումներուն և գործակցութեանց աննոռանալի փորձառութիւնները:

Մեր բոլորին ցաւի կսկիծն այն էր, որ ֆիզիքական մարմինին տոկունութիւնը քայքայող «գաղտնի խլիրդը» յաջողեցաւ այնքան շուտ իր սպունգային ճիրաններուն մէջ խեղդել առատահունչ ձայնն ու խօսքը

պերճաբան Հայրապետին, հակառակ լաւագոյն բժիշկներու ճիգերուն, հակառակ մանաւանդ իրեն բարեկամ ու հոգատար երկու հայ բժիշկներու խնամքին և անմիջական հոգածութեան:

Ո՞վ կրնար մտածել, և ո՞վ կրնար «Կեանքի Գիրքը կարդալ», յայտնելու համար, որ կորովի Հայրապետը, միայն չորս տարի ունէր, իր ուխտի կեանքին, և իր ուխտաւորի ճանապարհորդութեան երկրային վախճանին հասնելու:

Ես կը հաւատամ որ միայն ինք ունէր այդ ինքնեկ ներհայեցողութիւնը և կանխազգացումը:

Այլապէս ինչպէ՞ս բացատրել, ժամանակի այդ կարճ տևողութեան և հասակի հակադրաբար, իր լեռնադէզ իրագործումները, (ինչպէս որ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանի պատասխանատու վարիչը կը յայտնէր), 310 փոքր ու մեծ ծաւալով հրատարակութիւններուն. և ինչպէս որ, իր կենսագրական էջերուն մէջ յիշատակուած կը կարդանք, հոգևոր դաստիարակութեան նուիրուած, ազգային, կրթական, գիտական, և մշակութային նախաձեռնութեանց սատարող իր անխոնջ պատրաստակամութիւնը:

Նախախնամական պէտք է նկատել նաև մի այլ երևոյթ:

Մինչ մեր մարդկային կարճատես նկատումներով, մենք կը փորձուէինք ստորագնահատել Ամենայն Հայոց Հայրապետին Մայր Աթոռէն դուրս հովուապետական այցելութիւնները (մենք զանք աւելի իմաստուն և նախանձախնդիր համարելով), այժմ կ'անդրադառնանք, որ նախախնամական ներհայեցողութեան և կանխազգացումի ներքին ձայն մը զինք կը մղէր, (բացի Հայաստանի մեր թեմերուն իր տուած այցելութիւններէն), «Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնի» անլռելի ղօղանջը հնչեցնելու, և անսպառելի օրհնութիւնը բաշխելու աշխարհացրիւ մեր գաւակներուն:

Ինչպէ՞ս նախախնամական չնկատել ներքին այդ մղումը, որ զինքը տարաւ վեց աշխարհամասերու մէջ հաստատուած, քսանէ աւելի թեմերու այցելութեան, և առաւել՝ Կոստանդնուպոլսոյ Հայ Պատրիարքութեան, և Անթիլիասի մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոսին՝ Նորին Սրբութիւն Արամ Առաջին Հայրապետին օծման արարողութեան, ամէն տեղ և անձանձրոյթ պատգամելով, թէ՝ անքաժանելի է Հայոց Հայրենիքը իր ներկայ անկախացեալ պետականութեամբ, թէ՝ անքաժանելի է Հայոց Առաքելահաստատ Մայր Եկեղեցին իր ժողովուրդով, թէ՝ պատմական և հայրենական իր հողերուն կառչած, և թէ՝ սփիւռքեան անդաստաններուն մէջ իր ինքնութիւնը անխորտակ պահելու մարտահրաւէրով զինուած:

Եւ իրեն համաքրիստոնէական գործակցութեան հաւատարիմ բերանախօս, Հայոց Հայրապետը իր եղբայրական յարաբերութիւնը շարունակեց պահել բոլոր Եկեղեցիներու Կեդրոններուն և Սրբազան պետերուն հետ:

Եւ ի՜նչ խանդավառութեամբ կը սպասէինք, Քրիստոսի Ծննդեան 2000-ամեակին առիթով, Բեթղեհէմի և Երուսաղէմի Հայկական և Համաքրիստոնէական Սրբավայրերու մէջ, տօնախմբելու նաև Հայ ժողովուրդի անմրցելի դափնեպսակը, 301 թուականին Քրիստոնէութիւնը Հայաստան Աշխարհի

«պետական-կրօնը» յայտարարելու աստուածապարգև շնորհին, Նուիրապետական մեր Աթոռներուն Գահակալներուն, և Անկախացեալ մեր Հայրենիքի Հանրապետութեան Նախագահին մասնակցութեամբ:

Կը հաւատանք որ 1700-ամեակի բոլոր ծրագիրներուն խանդավառօրէն նուիրեալ մեր Հայրապետին հոգին մեզի հետ պիտի խնդակցի:

Եւ այժմ, ո՞վ անձնուէր և Վեհափառ Հայրապետ, կ'աղօթենք, որ Տէրը ընդունի Քու ընծայաբերած ցորեանի դէզերը և շտեմարանները, և զանոնք նաշիհի և հաղորդութեան հացի փոխակերպէ, հոգեպէս զինելու և զօրացնելու համար մեր ժողովուրդն համայն, մեր օրերու Վարդանանց պատերազմը պատերազմելու, «վասն հայրենեաց եւ վասն հաւատոյ», իբրև քաջամարտիկ զինուորները Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ Քրիստոսահաստատ հաւատքի վէմին, Հայաստան աշխարհի և պետութեան, և Ղարապաղեան Արցախի հայրենական հողերու նուիրական պաշտպանութեան, և իբրև ռահվիրաներ Սփիւռքի և Հայրենիքի անսասան միասնութեան:

Ուխտացնաց և Վեհափառ Հայրապետ, հոգիիդ ուխտը ընդունական, և դէպի յաւէրժութիւն ճանապարհդ լուսառատ Քո ուղին մնայ միշտ, լսելի դարձնելով կոչը Քրիստոսի. «Եկայք, օրհնեալք Հօր իմոյ. ժառանգեցէք զպատրաստեալն ձեզ զարքայութիւնն» / Մատթ. Իե 34/ :

## Կ. ՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

**(8 հուլիսի, 1999 թ.)**

*«Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս, հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց Արեամբ իւրով»:*

*ՙԳործք. Ի. 28՚*

Սիրելի հաւատացեալ քոյրեր և եղբայրներ,

Ահաւասիկ Սուրբ Պօղոս Առաքեալի սոյն խօսքերը կը յիշենք այս պահուն, երբ կը պատրաստուինք Վեհափառ Տիրոջ անկենդան մարմինը հողին յանձնել Միածնաէջ սրբավայրի կողքին:

Պօղոս երեք լման տարիներ Եփեսոսի մէջ և շրջակայքը Քրիստոսի Աւետարանը քարոզելէ ետք, Միլիտոսի մէջ հաւաքեց շրջանի եպիսկոպոսները և ըսաւ անոնց. «Դուք անձամբ գիտէք, թէ առաջին օրէն ի վեր ինչպէս վարուեցայ ձեզի հետ: Ամենայն խոնարհութեամբ և յաճախ արցունքով ծառայեցի Տիրոջ, փորձութիւններ կրելով: Գիտէք, թէ բնաւ չքաշուեցայ ձեզմէ, օգտակար բաներու մասին խօսեցայ և սորուեցուցի ձեզի, հրապարակաւ ըլլայ, թէ տուներու մէջ: Բոլորին տուի միևնոյն վկայութիւնը և պատգամը՝ ապաշխարութեամբ Աստուծոյ դառնալու մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հաւատալու:

Հիմա, ահաւասիկ ... կ՚երթամ: Այսուհետև պիտի չտեսնէք զիս: Եկայ ձեզի բոլորիդ, շրջեցայ և Աստուծոյ Արքայութիւնը քարոզեցի, և ահաւասիկ կը յայտարարեմ այսօր՝ թէ խիղճս հանդարտ է, որովհետև առանց քաշուելու յայտնեցի ձեզի Աստուծոյ կամքը:

Յսկեցէ՛ք ձեր անձերուն և ձեր ամբողջ հօտին, որուն տեսուչ կարգեց ձեզ Սուրբ Հոգին:

Յովուեցէ՛ք Տիրոջ եկեղեցին, որ Ան Իր Արեամբ գնեց:

...Արթուն եղէք. յիշեցէք թէ ինչպես... անդադար, գիշեր ու ցերեկ, արցունքով խրատեցի իւրաքանչիւրդ: Եւ հիմա ձեզ կը յանձնեմ Աստուծոյ և իր շնորհքի Աւետարանին, որ կրնայ ձեզ հոգևորապէս աճեցնել և Իր բոլոր սուրբերուն ժառանգակից դարձնել» /Գործք. Ի. 18-32/:

Կիլիկեցի Առաքեալի հրաժեշտի խօսքերը կարծես այսօր արձագանգ կը գտնեն Գարեգին Ա Կիլիկեցի Հայրապետէն, երբ բոլորս կը մորմոքենք անոր համար, որ այլևս զինք պիտի չտեսնենք, պիտի չկրնանք ունկնդրել իր մեղրածորան պատգամները, տեսնել իր քաղցր ժպիտը և վայելել իր հայրական մտերմութիւնը:

Պոլսահայութիւնը երբեք պիտի չմոռնայ Ամենայն Հայոց Գարեգին Ա. Հայրապետին շնորհաբեր այցելութիւնը 1996-ի գարնան, երբ Սուրբ Լուսաւորչի 131-րդ յաջորդը, առինքնեց աւանդապահ ժողովուրդը որպէս ոսկեբերան քարոզիչ և հայրախնամ հոգևոր պետ, որ եկած էր իրենինները գտնելու:

Համազգային սուգի այս պահուն, յանուն Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռոյն, միաբան հայրերուն, հոգևոր դասուն, վարչական մարմիններուն ու մերազն հաւատացեալ ժողովուրդին, կը հայտնենք մեր խորազգաց վշտակցութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեր միաբանակից հայրերուն և եղբայրներուն, հանգուցեալ Հայրապետի սիրեցեալ հարազատներուն և հայրենի մեր ժողովուրդին:

Անայլայլօրէն կը կիսենք մեր սուրբ հայրերուն հաւատքը, քանի որ «Քրիստոսի միանալով մկրտուեցանք» և «մկրտութեամբ Անոր մահուան հաղորդակից դարձանք», այնպէս նաև «ինչպէս Քրիստոս Յօրը փառքով յարութիւն առաւ մեռելներէն, նոյնպէս ալ մենք պիտի ապրինք նորոգուած կեանքով» /Հռոմ. Զ. 3-4/:

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Հայրապետը թէև մեռած է այժմ ըստ մարմնի, սակայն Ան կենդանի է՛ Աստուծոյ համար, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Հանգի՜ստ իր տառապեալ հոգիին, որ իբրև անուշաբոյր խունկ կը միանայ մեր լուսահոգի հայրերու փաղանգին:

Խունկ և օրհնութիւն իր անմար յիշատակին:

# ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳՐԵՐԸ

## *ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ*

Վեհափառի վախճանման առթիվ կվերահաստատենք Մեր և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության համաձայնությունը՝ որպես լծակից ու գործակից ամբողջականորեն զորավիգ կանգնելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին իր եկեղեցանվեր ու հայրենանվեր առաքելության մեջ:

Կաղոթենք առ Ամենաբարին Աստված, որ ամուր և անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Թող Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին հիշատակը միշտ պայծառ մնա մեր հայրենիքին և ողջ հայության կյանքին մեջ:

## *ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ*

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ամբողջ Միաբանությունը և հայ հասարակությունը խորապես կողբա անդարմանելի կորուստը մեր Հոգևոր Հոր՝ Նորին Ս. Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետին և Կաթողիկոսին: Կաղոթենք, որ Տերն անսասան պահե Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին իր հոգևոր պաշտոնյաներով և ժողովուրդով:

## *ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Կ.ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԻՑ*

Այսօր, երեկոյան ժամը 18.10-ին, սրտի խոր ցավով լսեցինք Ամենայն Հայոց Հայրապետին և Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի վախճանումի գույժը: Այդ պահին Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Ամենա-

պատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը գտնվում էր Անտիոքում, ուր «Ս. Պետրոսի քարայր» կոչված սրբավայրին մեջ կմասնակցեր Կաթոլիկ և Պետրոսի Ուղղափառ տոնացույցին համաձայն կատարվող Ս. Պողոս-Պետրոսի տոնախմբությանը:

Գույժը ստանալուն պես Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ն, Անտիոքի Իգնատիոս Դ Պատրիարքը, Հռոմի Պապի փոխանորդ կարդինալ Գամիլիո Ռուինին և Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը միասնաբար հոգե-հանգստյան աղոթք մատուցեցին առ Աստված՝ վասն հանգստության հոգվո Վեհափառ Հայրապետի:

Այնուհետև ժամը 19:00-ին Պատրիարք Հայրը Վեհափառ Հայրապետի ծննդավայր Մուսա Լեռան Ս. Աստվածածին եկեղեցվո մեջ անձամբ պատարագ մատույց՝ ի հանգիստ Նորին Սրբության: Ս. Պատարագին մասնակցեցան Մուսա Լեռան երեք գյուղերից մեծաթիվ հավատացյալներ:

Թուրքահայ համայնքը կաղոթե առ Աստված՝ վասն մխիթարության ազգիս Հայոց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի մահվան կապակցությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ԳՀԽ-ին և միաբանությանն ուղղված ցավակցական գիր է ուղարկել Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ նշելով.

«Խոր վշտով տեղեկացանք Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի վախճանի մասին: Վեհափառ Հայրապետը Ամենայն Հայոց հովվապետության, ինչպես նաև իր ամբողջ կյանքի ընթացքում մեծ իմաստնությամբ ու բացառիկ նվիրումով ծառայեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և իր ժողովրդին Մայր Հայրենիքում և Սփյուռքում:

Մեր անկեղծ ցավակցությունն ենք հայտնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին, միաբանությանը և համայն հայությանը:

Թող Աստված խաղաղության մեջ ընդունի սիրելի Հայրապետի լույս հոգին»:

**ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության նախագահ*

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ազգային ժողովի և անձամբ իմ անունից խորապես ցավակցում եմ համայն հայության անդառնալի կորստյան՝ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի անժամանակ մահվան կապակցությամբ:

Անուրանալի է Վեհափառ Հայրապետի ավանդը եկեղեցական կյանքի վերանորոգման, քրիստոնեական ավանդույթների ամրապնդման, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ազգանպաստ գործունեության աշխուժացման, աշխարհասփյուռ հայության միավորման գործում:

Որպես թանկ ու մնայուն արժեքներ մեծագույն հեղինակություն են վայելում Հայոց հոգևոր Հովվապետի աստվածաբանական, հայագիտական ու փիլիսոփայական աշխատությունները:

Եվ այսօր, երբ ողջ հայ ժողովուրդը սգում է Հայոց Հայրապետի վախճանը, միակ մխիթարական խոսքերը կարող են լինել՝ հույս, հավատ, միաբանություն:

**ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ**

ՀՀ Ազգային ժողովի նախագահ

# ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Վշտի խորին զգացումով մեր ցավակցությունն ենք հայտնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տարաժամ մահվան կապակցությամբ:

Նորին Սրբությունը աստվածաբանական իր իմացությամբ դարձավ մեր սուրբ գրերի և 1700-ամյա վաստակի նորօրյա թարգմանը, պահպանեց ու հարստացրեց հայ հոգևոր մշակույթի ձեռքբերումները: Վեհափառ Հայրապետը եղավ ազգային միասնության ամրապնդման, հայկական պետականության հզորացման, իր հոտի հոգևոր վերածննդի մեծագույն ջատագովը:

Մեծ էր Նրա վաստակը նաև աշխարհասփյուռ հայ գաղթօջախները և եկեղեցիները Մայր Հայրենիքի շուրջը համախմբելու գործում: Քույր Եկեղեցիների հետ նորովի համագործակցությամբ նա նոր էջ բացեց միջեկեղեցական հարաբերություններում:

Վեհափառ Հայրապետի ձեռամբ և օրհնությամբ էր, որ կյանքի կոչվեցին բազում ընկերային, կրթական-հոգևոր ծրագրեր, հրատարակվեցին աստվածաբանական և հայագիտական բազմաթիվ աշխատություններ, որոնք հոգեպես կկրթեն և կդաստիարակեն ապագա սերունդներին:

Ցավի և վշտի այս օրերին մենք մեր որդիական խոնարհումն ենք հայտնում Վեհափառ Հոր լուսավոր հիշատակի առջև:

**ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՀՀ Վարչապետ**

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԼՂՀ իշխանությունները և ժողովուրդը դառը կսկիծով ընդունեցին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան լուրը:

Արցախցիներիս համար Ազգի Գերագույն Հովվապետի անժամանակ վախճանը մեծ ու ցավալի հարված է հայոց հոգևոր վերակերտման և պետականության ամրապնդման այս պատասխանատու պահին:

Համայն հայության հետ մեկտեղ ի խորոց սրտի սգում ենք Հոգևոր Հայրապետի անդառնալի կորուստը:

Հայտնում ենք մեր վշտակցությունը Հայ Առաքելական Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդին, երջանկահիշատակ Վեհափառի հարազատներին ու մերձավորներին:

**ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ԼՂՀ նախագահ**

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻՑ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳՐԵՐ

## ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԼԵՔՍԻՑ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Ընդունեք մեր խորը և անկեղծ ցավակցությունները Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի վախճանման առիթով:

Այս դժվարին պահին կիսում ենք ցավը եղբայրական հայ ժողովրդի և մեր աղոթքն ենք առաքում առ Աստված՝ երանաշնորհ Գարեգին Ա Կաթողիկոսի հոգին արդարոց դասում հանգիստ գտնելու խնդրանքով:

Թող Աստված մշտապես վառ պահի նրա հիշատակը:

## ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Խորը ցավով ընդունեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մահվան լուրը: Մեծ է նրա ծառայությունը Հայ Առաքելական եկեղեցու հանդեպ: Մենք բարձր ենք գնահատում նրա մեծ ավանդը մեր ժողովուրդների և մեր Եկեղեցիների միջև եղբայրական հարաբերությունների ամրապնդման գործում: Ողջ քրիստոնյա աշխարհը նրան ճանաչում էր որպես իմաստուն առաջնորդի և արդարության ու խաղաղության պաշտպանի:

Ընդունեք մեր և Վրաց Ուղղափառ Եկեղեցու սինոդի, վրաց ժողովրդի անկեղծ ցավակցությունները:

Թող Աստված հանգիստ պարգևի նրա հոգուն, Հայոց արդար Հայրապետաց դասում:

## ԱՆՏԻՈՔԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

### *ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ*

Սիրելի Եղբայրներ ի Քրիստոս,

Խորապես վշտացանք՝ լսելով մեր սիրելի եղբոր՝ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի մահվան տխուր լուրը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախանձախնդիր էր Հայ Առաքելական Եկեղեցու ավանդությունների պահպանման մեջ: Իր կաթողիկոսության ընթացքում Գարեգին Առաջինը մեծապես նպաստեց Եկեղեցու առաջընթացին: Մեր աղոթքներում մշտապես հիշում էինք նրան՝ խնդրելով Աստծուց, որպեսզի կարողություն շնորհի նրան՝ համբերությամբ կրելու հիվանդության պատճառած ցավերն ու չարչարանքները:

Գարեգին Առաջինը բարի հովիվ և քրիստոնյա մեծագույն առաջնորդներից մեկն էր՝ օժտված բազում շնորհներով, ում ավանդը էկումենիկ շարժման մեջ մշտապես կհիշվի: Նրա մահը մեծագույն կորուստ է քրիստոնյա աշխարհի համար, հատկապես մեր՝ Արևելյան Օրթոդոքս Եկեղեցիների: Թող Աստված օրհնի նրա հոգին և ընտրյալների հետ մեկտեղ Իր երկնային օթևաններում պահի: Մենք՝ մետրոպոլիտությունը, հոգևորականությունը, Սիրիական Օրթոդոքս Եկեղեցու հավատացյալ ժողովուրդը Հայ Եկեղեցու նվիրապետության և հավատացյալ ժողովրդի հետ մեկտեղ կիսում ենք Սրբազնության մահվան վիշտը: Թող ամենակարող Աստված մխիթարի մեզ բոլորիս և որբացած իր ընտանիքին: Աղոթում ենք, որպեսզի Սուրբ Հոգին ընտրի ճշմարիտ անձը՝ լրացնելու համար Հայ Առաքելական մեր քույր Եկեղեցու Ծայրագույն Պատրիարքի մահվամբ ստեղծված բացը:

***ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍ***
*Անտիոքի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք*

## ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

### *ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻՆ*

Ձերդ Սրբազնություն,

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անճուն սիրով Ձեզ ենք ուղարկում մեր ներփակ պատգամը, որով մենք ճարմար գտանք Հայ Առաքելական Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդին և Հայ Եկեղեցու բոլոր անդամներին արտահայտել մեր ցավակցությունը՝ Նորին Սրբություն Գարեգին Առաջինի մահվան կապակցությամբ:

Մենք Ձերդ Սրբազնության և Հայ Ուղղափառ Եկեղեցու զավակների հետ ենք, ովքեր այս օրերին սգում են իրենց սիրեցյալ Հովվապետի ժամանակավոր բաժանումը:

Ցավում ենք, որ վշտի այս պահին չենք կարող ներկա գտնվել Ձեր և ձեր ժողովրդի կողքին, և վստահեցնում ենք Ձեզ, Ձերդ Սրբազնություն, որ մեր խոնարհ աղոթքներն ենք վերառաքում առ Աստված՝ Իր սիրեցյալ ծառայի և մեր հավատակից եղբոր՝ Գարեգին Առաջինի հոգու հանգստության համար:

Եղբայրական սիրով՝

**_ԹԵՈԿՏԻՍՏ_**
*Պատրիարք Ռումին Օրթոդոքս Եկեղեցու*

### *ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ*

Խորը վշտով ականջալուր եղանք մեր սիրելի եղբոր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Առաջինի մահվան բոթին:

Նորին Սրբությունը մշտապես կար և կմնա բոլոր նրանց հիշողության մեջ, ովքեր գիտեին նրան իբրև մտերիմ ընկերոջ: Իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր կարճ ծառայության ընթացքում նա եղավ նվիրվածության և իմաստության օրինակ յուրաքանչյուրի համար:

Մենք առիթ ենք ունեցել Վեհափառի հետ հանդիպման ուրախությունը կիսելու 1995 թվականին Ռումին Օրթոդոքս Եկեղեցու շրջանակում տեղի ունեցող տոնակատարությունների ընթացքում, երբ նա այցելեց մեր Եկեղեցի և մեր երկիր:

Մենք չենք կարող մոռանալ նաև այն բացառիկ ջերմ ընդունելությունը և աստվածաբանական օգտաշատ քննարկումները, որոնք տեղի ունեցան 1996 թվականին Ս. Էջմիածին այցելության ժամանակ: Այդ զրույցների ընթացքում Է՛լ ավելի մտերիմ հարաբերություններ ստեղծվեցին մեր երկու եկեղեցական ընտանիքների միջև: Հայ Եկեղեցում Գարեգին Առաջինի հովվապետության շրջանում շարունակվեցին այն ջերմ հարաբերությունները, որոնք գալիս էին Նորին Սրբության երջանկահիշատակ նախորդի՝ Վազգեն Առաջինի հայրապետության շրջանից:

Նորին Սրբության կորուստը մեզ համար սիրելի եղբոր կորուստ է, թեև մենք մխիթարվում ենք այն հույսով, որ Աստված իր խաղաղությունը կշնորհի իր ծառայի հոգուն սրբերի հետ միասին, որոնք կժառանգեն երկնային արքայությունը համեմատ այն խոստման, որ Քրիստոս տվեց իր առաքյալներին ու աշակերտներին և նրանց միջոցով՝ մեզ բոլորիս՝ «Ես եմ հարությունը և կյանքը, նա, ով հավատում է ինձ, կապրի, եթե նույնիսկ մահանա, և ով ապրում ու հավատում է ինձ, երբեք չի մահանա» /Հովհ. ԺԱ 25/:

Այս հույսով լեցուն ցավակցություն ենք հայտնում Ռումին Եկեղեցու Ս. Սինոդի անունից Հայ Եկեղեցու առաջնորդներին, հոգևորականությանն ու ժողովրդին:

Աղոթում ենք, որ ամենակարող Տերը առաջնորդի իր ծառաներին Ս. Էջմիածնում, որպեսզի ընտրեն Հովվապետ, որը և կշարունակի առաջնորդել իրենց դեպի փրկության ուղին:

***ԹԵՈԿՏԻՍՏ՝ ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆ***
***ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ***

## ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Ցավով տեղեկացանք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանի մասին: Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու Սինոդի և մեր անունից արտահայտում ենք մեր խորին ցավակցությունը և աղոթում, որ Աստված Իր ծառայի հոգին հանգչեցնի արդարոց երկնային հանգրվաններում:

Թող նա հանգչի խաղաղությամբ և թող հավետ ապրի նրա հիշատակը:

## ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՐՋ ՔԵՐԻԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Տիրության այս պահին Ձեզ եմ դիմում ողջ աշխարհի Անգլիկան Եկեղեցու անունից՝ հայտնելու իմ ցավակցությունը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Մայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան կապակցությամբ: Նորին Սրբությունը լայն մտահորիզոնի տեր և եռանդուն անձնավորություն էր: Նրա կապերն Անգլիկան համայնքի հետ ստեղծվել էին դեռևս իր երիտասարդության տարիներից, երբ նա ուսանում էր Օքսֆորդի համալսարանում: Իր ողջ կյանքի ընթացքում նա գործուն հետաքրքրություն դրսևորեց համայն աշխարհում Աստծո Եկեղեցու միասնականությանը նպաստելու գործում:

Թե՛ որպես Կիլիկիո Կաթողիկոս և թե՛ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբությունն իրեն դրսևորեց որպես աշխարհի ամենաականավոր եկեղեցապետերից մեկը: Նրա բացակայությունն աշխարհը խիստ կզգա: Խնդրում եմ հաղորդել իմ անձնական ցավակցությունները Նորին Սրբության հարազատներին:

Կամենում եմ հավաստիացնել, որ մենք աղոթում ենք թե՛ Նորին Սրբության և թե՛ Հայ Առաքելական Եկեղեցու համար:

## ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՍՏՈԴՈՒԼՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Խոր վշտով ստացանք և մեծ ցավով ընդունեցինք Ձեր առաքած գույժը Նորին Սուրբ Օծություն Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մահվան մասին: Կիսելով Ձեր վիշտը և հղելով մեր Եկեղեցու և ժողովրդի ցավակցությունները՝ աղոթում ենք, որ մեր Տերը հանգիստ պարգևի իր հոգուն ի դասս արդարոց և արժանի հաջորդ շնորհի Ձեր պատվական Եկեղեցուն:

## ԿԻՊՐՈՍԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Սգացինք հույժ տեղեկանալով անժամանակ վախճանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ի՝ Կիպրոսի և նրա ժողովրդի սիրելի բարեկամի:

Երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսն իր կյանքը նվիրել է բազմաչարչար հայ ժողովրդի առաջընթացին ու իրավունքների պաշտպանությանը, համաքրիստոնեական միության ձեռք բերմանը:

Անկեղծորեն ցավակցում ենք քույր Հայ Եկեղեցուն իր հարգարժան Գահակալի կորստյան առթիվ և մաղթում, որ կյանքի և մահվան իշխան Տերը հանգչեցնի նրա երանելի հոգին արդարների անդաստանում և շուտով մատնանշի նրա արժանավոր հաջորդին:

## ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԱԼԱՆԿԱՐԱ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՑԱՆ ՔՈԹԱՅԱՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԱՍԵԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Բ-Ի ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Հնդկաստանի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու Եպիսկոպոսական Սուրբ Խորհրդի նախագահի, անդամների և մեր Եկեղեցու հավատացյալների անունից հայտնում ենք մեր խոր ցավը վշտակիր հայերին և աղոթք ենք մատուցում Նորին Սրբության հոգու հանգստության համար:

Խնդրում եմ հաղորդեցեք մեր վշտակցությունը բոլոր եպիսկոպոսներին և Ձեր Եկեղեցու հավատացյալ ժողովրդին:

## ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԱՐՈՆԻՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆԱՍՐԱԼԼԱՀ-ԲՈՒՏՐՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ ՍՖԵՅՐԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Խորագույն ցավով ստացանք Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայրագույն Պատրիարք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի մահվան տխուր լուրը: Մենք ճանաչել ենք Նրան որպես հավատքի և աղոթքի մարդ և որպես ազնվագույն ձգտումներով հոգևոր առաջնորդ: Մենք միասին համագործակցել ենք ի բարօրություն Լիբանանի և ամբողջ աշխարհի հավատացյալների:

Ներկայացնելով մեր սրտագին ցավակցությունները մեր եղբայր բոլոր եպիսկոպոսներին, հոգևորականությանը, աշխարհականներին և աշխարհասփյուռ հայությանը, խնդրում ենք ամենակալ Աստծուն մեծագործ ննջեցյալին արժանացնել երկնքի արքայությանը:

## ԲԱԲԵԼՈՆԻ ՔԱՂԴԵԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՌԱՖԱՅԵԼ ԻՍԹ ԲԻԴԱՈՒԻԴԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Մենք վշտով տեղեկացանք մեր պատվարժան եղբոր՝ Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Սարգսյանի վախճանման մասին:

Նրա մահը մեծ կորուստ է հանուր Քրիստոնեական Եկեղեցու համար:

Ընդունեք մեր ցավակցությունների հավաստիքը հանուն Նրա երանաշնորհ հոգու հանգստյան և լավագույն ցանկությունները Հայաստանյայց Առաքելական մեր Քույր Եկեղեցու բարգավաճման համար:

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ԿՈՆՐԱԴ ՌԱՅՁԵՐԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Տեղյակ լինելով Նորին Սրբության ծանր հիվանդության մասին, անցյալ ամիսների ընթացքում համայն էկումենիկ ընտանիքն աղոթում էր, որպեսզի Նորին Սրբությունը վերագտնի իր առողջությունը և կարողանա ստանձնել իր հովվապետական ծառայությունները Հայաստանում: Այժմ մենք կարող ենք միայն աղոթել, որպեսզի նա արժանանա հավերժական խաղաղության:

Ինչպես դուք թերևս գիտեք, ես անձնական կապեր եմ ունեցել Նորին Սրբության հետ՝ սկսած այն տարիներից, երբ նա ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեի փոխատենապետն էր: Իր էկումենիկ գործակիցներից շատերի համար Նորին Սրբությունը կարծես հոգևոր հայր էր: ԵՀԽ-ում իր անմիջական ղեկավարությունը թողնելուց հետո էլ նա ոգեշնչել ու խրախուսել է մեզ իր լայն մտահորիզոնով և մարդկությանը ծառայող միասնական Եկեղեցու իր անսասան մտապատկերով: Նրա խոսքը, ուղղված Հարարեում գումարված ԵՀԽ 8-րդ ասամբլեային, այժմ դարձել է նրա էկումենիկ վերջին կամքը, իսկ իր էկումենիկ գրվածքների հրատարակությունը կդառնա մեծարժեք ժառանգություն:

## ԵՎՐՈՊԱՑԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՔԵՅԹ ՔԼԵՄԵՆՑԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

ԵԵԿ-ը կամենում է առաջին հերթին իր անկեղծ սրտակցությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր սգում են: Հանձին Գարեգին Ա Կաթողիկոսի մենք ճանաչեցինք Աստծո անզուգական շնորհով օժտված մի անձնավորության, որն առաջնորդեց Հայ Առաքելական Եկեղեցին բռնապետական ռեժիմին հաջորդած վերակառուցման դժվարին և մարտահրավերներ նետող ժամանակաշրջանում: Ելնելով իր ժողովրդի, իր Եկեղեցու և Տիրոջ հանդեպ տածած սիրուց, Նորին Սրբությունը բարձրագույն մակարդակով իրականացրեց ակնառու և միավորիչ հովվապետական ծառայություն:

Գարեգին Ա Կաթողիկոսի կորուստը սգում է նաև էկումենիկ ընտանիքը, որտեղ, Վեհափառ Հայրապետը համաշխարհային նշանակության առաջնորդ էր, ինչպես որ նշանակալից դեմք էր նաև ԵԵԿ-ում: Մենք գնահատում ենք նաև նրա հանձնառությունը Եվրոպայում խաղաղության ու հաշտության և քրիստոնեական միասնության խնդիրներին: Էկումենիկ շարժմանն իր մասնակցությանը նա հաղորդեց ոչ միայն իր մտահորիզոնի լայնությունը և գիտնականի կերտվածքի խորությունը, այլև անձնական բարեկամական կապեր հաստատելու իր ձիրքը:

## ՎԱՏԻԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԴԻՆԱԼ ԷԴՎԱՐԴ ԻԴՐԻՍ ԿԱՍԻԴԻԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Կիսում ենք Ձեր մեծ կորուստը և հավաստիացնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և ամբողջ Հայ Առաքելական Եկեղեցուն, որ աղոթում ենք սիրեցյալ հոգևոր առաջնորդի, նախանձախնդիր հովվի և քրիստոնեական միության որոնման ցկյանս եռանդուն պաշտպանի հավիտենական հանգստյան համար:

Այս առավոտ Սբ. Պետրոսի հրապարակում իր «ընդհանուր լսարան»-ից Հովհաննես- Պողոս Բ Պապը խոսեց այն «մտերմության խորը հանգույց»-ի մասին, որ ինքը կիսել էր Կաթողիկոս Գարեգին Ա-ի հետ: Հովհաննես-Պողոս Պապը, անդրադառնալով իր Քահանայության օրոք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ի Հռոմ կատարած զույգ այցերին, ասաց. «Ես առիթն ունեցա հիանալու իր հոգևոր կերտվածքի, Եկեղեցու հանդեպ իր ուժգին սիրո և իր նախանձախնդրության՝ բոլոր քրիստոնյաների միության և Քրիստոսի մեկ հոտի համար: Ես անկեղծորեն փափագում էի եղբայրական բարեկամության ոգով այցելել նրան, բայց հանգամանքները թույլ չտվեցին ինձ իրականացնելու իմ ցանկությունը»:

Երեկ Ս. Պետրոսի եկեղեցում, Ս. Պետրոս-Պողոս առաքյալներին նվիրված տոնի հանդիսավոր Պատարագի ընթացքում, աղոթք մատուցվեց Նորին Սրբություն Գարեգին Առաջինի հիշատակին: Հովհաննես-Պողոս Բ Պապը այս առավոտ խնդրեց «ընդհանուր լսարան»-ում բոլոր ներկաներին միանալ իրեն աղոթքով «այս ականավոր Հովվի ազնիվ հոգու համար»՝ հայցելով Աստծուց «ընդունել նրան Իր մոտ Երկնային արքայության մեջ բնակվող սրբերի հետ հաղորդվելու համար»:

Եզրափակելով, Նորին Սրբություն Պապն արտահայտեց «իր ամենաանկեղծ ցավակցությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, Հայ Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդին՝ նման նշանավոր Հայրապետ կորցնելու համար»:

## ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՈԴՈՍԻՈՍ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Հանուն Ամերիկայում Ուղղափառ Եկեղեցու նվիրապետության, հոգևորականության, վանականության և հավատացյալ ժողովրդի, խնդրում եմ ընդունել մեր վշտալի ցավակցությունները և սրտազգաց աղոթքը Նորին Սուրբ Օծություն Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մահվան և ի Տեր ննջելու առիթով: Թող Տեր Աստված հավիտենական հանգիստ պարգևի նրան երանական օթևաններում՝ հավերժացնելով իր հիշատակը:

## ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Սրտի խոր վշտով, անկեղծորեն ցավակցում եմ Մոսկվայի Պատրիարքության Բելոռուս Ինքնավար Ուղղափառ Եկեղեցու իշխանության, հոգևորականության և հավատացյալ ժողովրդի անունից Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի մահվան առիթով:

Մեր Եկեղեցիների՝ ի Քրիստոս եղբայրական սերտ հարաբերությունների անսասան շարունակողը՝ Նորին Սրբություն Գարեգին Առաջինը, իմաստությամբ առաջնորդեց Հայ Եկեղեցին դժվարին ժամանակներում լի փորձություններով ու զայթակղություններով:

Հուսացած Աստծո բարեգթությանը, Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդը անտրտունջ անցավ իր խաչի ճանապարհը՝ ծառայելով Եկեղեցուն, Հայրենիքին ու ողջ հայ ժողովրդին: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր աղոթքներում և գործերում, առաջնորդվելով Ավետարանական պատվիրաններով ու առաքելական վարդապետությամբ, ճշմարտապես կատարեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խոսքը, որն էլ հանգստություն թող պարգևի Իր նորոգ հանգուցյալ ծառային սրբերի հետ մեկտեղ երկնային օթևաններում:

Աղոթելով ննջեցյալի հոգու հանգստության համար, Ռուս Ուղղափառ Պատրիարքության Բելոռուս Ինքնավար Եկեղեցին ապավինում է Աստծու ամենազոր օգնությանը եղբայրական հայ ժողովրդին և վստահություն հայտնում, որ «Երկրի իշխանությունը Տիրոջ ձեռքին է. Նա է ժամանակին արժանի մարդուն բարձրացնում իշխանության» (Սիրաք ժ 4):

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

*Մինսկի և Սլուցկի մետրոպոլիտ,*

*Պատրիարքական նվիրակ համայն Բելոռուսիայի*

## ՑԱՎԱԿՑՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀԸ

Ցավակցական հեռագիր է ստացվել նաև Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Յոհաննեսից, որտեղ մասնավորապես ասվում է. «Աղոթելով Ամենայն Հայոց Կաթողիկոս հանգուցյալ Գարեգին Ա-ի հոգու հանգստության համար և բարեխոսելով Ձեզ և Ձեր Ս. Եկեղեցու համար՝ ես Ձեզ հետ եմ հոգով և աղոթքով»:

Ցավակցական հեռագրեր են ստացվել նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ, Սմոլենսկի և Կալինինգրադի միտրոպոլիտ Կիրիլից, Լեհաստանի Ուղղափառ Եկեղեցու պետ միտրոպոլիտ Սավվայից, Մեթոդիստ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Ջո Հեյլից, Ֆրանսիայի եպիսկոպոսների կոնֆերանսի նախագահ մոնսինյոր Լուիս-Մարի Բիլից, Ֆրանսիայի բողոքական Եկեղեցիների ֆեդերացիայի նախագահ Ժին Թարթիեից, Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Խորհրդի գործադիր տնօրեն Դր. Հարրի Հակոբյանից, Ռեգենսբուրգի Արևելյան Եկեղեցիների խորհրդի տնօրեն Դր. Ալբերտ Ռաուխից և Տիեզերական Պատրիարքության Ամերիկայի Հույն Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ Սպիրիդոնից:

Իրենց ցավակցությունն են արտահայտել նաև Գերմանիայի եպիսկոպոսական ժողովի նախագահ Կարլ Լեհման եպիսկոպոսը, Արևելյան կաթոլիկե Եկեղեցիների նախագահ կարդինալ Ակիլլե Սիլվեստրինին, Հռոմի Պապական Արևելյան ինստիտուտի ընդհանուր տեսուչ Հեկտոր Վալը:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ցավակցական գրեր են ստացվել նաև Մայկոպի և Արմավիրի եպիսկոպոս Ֆիլարետից, Բեսինգսթոքի եպիսկոպոս դոկտոր Ջեֆրի Ռոուելից, ԱՄՆ Եպիսկոպոսական Եկեղեցու նախագահող եպիսկոպոս Էդմոնդ Լ. Բրաունինգից, Միլանի Կարդինալ Կարլո Մարիա Մարտինիից, «Պրո Օրիենթե» կազմակերպության նախագահ Ալֆրեդ Շթիրնեմանից, Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու ժողովի նախագահ Մանֆրեդ Քոքից, ԱՄՆ-ի Քրիստոսի Եկեղեցիների Ազգային ժողովի գլխավոր քարտուղար Ռոդնի Ի. Փեյջից:

## ԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄ ԱԼԼԱՀՇՈՒՔՅՈՒՐ ՓԱՇԱԶԱԴԵԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Ընդունեք մեր խոր ցավակցությունները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պետ Նորին Սրբություն Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մահվան կապակցությամբ: Անկեղծորեն ցանկանում ենք խաղաղություն և բարգավաճում իր ժողովրդին՝ գիտակցելով, որ դրան կարելի է միայն հասնել տարածաշրջանում բարիդրացիական հարաբերությունների և փոխադարձ վստահության պայմաններում:

Ցավոք, Նորին Սրբության հիվանդությունը թույլ չտվեց իրականացնել բարոյական պարտքը՝ շարունակել մեր սկսած երկխոսությունը: Հավատում ենք, որ Ամենաբարձրյալ Արարչի օգնությամբ և մեր երկուստեք ջանքերով խաղաղությունն ու համաձայնությունը, որի մասին երազում էր Գարեգին Ա Սրբազան Կաթողիկոսը, կդառնա մեր ժողովուրդների սեփականությունը:

# ՊԵՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ, ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑԻՑ, ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳՐԵՐ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՐԻՍ ԵԼՑԻՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ՝ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանին ցավակցական հեռագիր է հղել Գարեգին Առաջինի մահվան կապակցությամբ: Այս մասին ԻՏԱՌ - ՏԱՍՍ-ին հաղորդել է Ռուսաստանի պետության ղեկավարի մամլո ծառայությունը:

«Նորին Սրբությունը մեծ ուժ և եռանդ է ներդրել ի շահ Հայ Առաքելական Եկեղեցու և Հայաստանի ժողովրդի, ինչպես նաև կրոնական միավորումների համագործակցության ամրապնդման և տարբեր դավանանքների հետևորդների միջև փոխըմբռնման»,- մասնավորապես նշվում է ՌԴ նախագահի հեռագրում:

Բորիս Ելցինը ռուսաստանցիների անկեղծ ցավակցությունն է հաղորդել Հայաստանի հավատացյալներին, ողջ հայ ժողովրդին:

## ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ՈՒԻԼՅԱՄ Ջ. ՔԼԻՆԹՈՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Սիրելի Ներսիսյան արքեպիսկոպոս,

Ես անակնկալ կերպով տեղեկացա Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի մահվան մասին: Նորին Սուրբ Օծությունը հարգված էր իր խորը գիտելիքների, միջեկեղեցական հնարավոր լայնախոհ երկխոսության հանդեպ իր անկեղծ նվիրումի և իր զորավոր համոզմունքների համար:

Հանուն ամերիկյան ժողովրդի խնդրում եմ Ձեզ հայ ժողովրդին փոխանցել իմ ցավակցությունները և համակրանքը: Դուք և Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր անդամները մեր խոհերում և աղոթքներում եք:

Անկեղծորեն՝

***ՈՒԻԼՅԱՄ Ջ. ՔԼԻՆԹՈՆ***

## ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԺԱԿ ՇԻՐԱԿԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Խորին հուզմունքով և մեծ տխրությամբ ընդունեցի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան լուրը:

Իր բարձր առաքինությամբ, արիությամբ և հսկայական գիտելիքներով նա իր ավանդը ներդրեց Հայ Առաքելական Եկեղեցու գործունեության մեջ:

Ներկայիս անկախ Հայաստանում նա ամեն ջանք գործադրեց, որպեսզի Հայ Եկեղեցին ավելի քան երբևէ բաց լինի ի դեմս աշխարհի և դառնա աշխարհի հետ երկխոսություն ապահովող օղակ:

Մեր հանդիպումների ընթացքում ես անձամբ կարողացա գնահատել նրա նվիրվածությունը Ֆրանսիայի և Հայաստանի բազմադարյա կապերի ամրապնդման գործին:

Հենց այդ ուղին է, որ մենք պարտավոր ենք այսօր շարունակել:

Ես կկամենայի, Ձեր միջոցով, իմ խորին ցավակցությունները հայտնել ողջ հայությանը: Ընդունեք, խնդրում եմ, Սրբազան Արքեպիսկոպոս, իմ խորին հարգանքի և բարեկամության հավաստիքը:

## ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Մեծապես ինձ տխրեցրեց հնամյա Հայոց Եկեղեցու իմաստուն և վեհանձն Առաջնորդ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մահվան լուրը, որին պատիվ ունեցա ճանաչելու վերջերս Հայաստան կատարած այցի ժամանակ: Հույն ժողովրդի և անձամբ իմ կողմից հղում եմ իմ անկեղծ ցավակցությունները Եկեղեցուն և ամբողջ հայ ժողովրդին մեծ կորստի կապակցությամբ:

## ԱՆԳԼԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԱԳՈՒՀԻ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ԵՂԻՍԱԲԵԹ ԵՐԿՐՈՐԴԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան կապակցությամբ ՀՀ նախագահին իր ցավակցական գիրն է հղել Անգլիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության թագուհի և Անգլիայի Եկեղեցու պետ Եղիսաբեթ Երկրորդը՝ նշելով.

«Անսպասելիորեն տեղեկացա Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Առաջինի վախճանի մասին: Ես հիշում եմ մեր հանդիպումը Միացյալ Թագավորություն կատարած իր այցի ընթացքում՝ 1997 թ. նոյեմբերին: Իմ ցավակցությունները եմ հղում Ձեզ և հայ ժողովրդին»:

## ՍԻՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՖԵԶ ԱԼ-ԱՍԱԴԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Խոր վշտով լսեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ի վախճանման գույժը:

Լուսահոգին երբ դեռ Լիբանանի Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդն էր, սիրո և եղբայրության ջատագովն էր և Հայաստանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնը ստանձնելուց հետո էլ շարունակեց աշխատել հանուն եղբայրության: Ես ճանաչել եմ նրան որպես Սիրիայի հետ ամենասամուր կապերի կողմնակից:

Սիրիայի արաբ ժողովրդի և իմ անունից հղում եմ ամենաանկեղծ ցավակցությունները՝ հայցելով Աստծուց նրան ընդունել երկնային արքայության մեջ, սրբերի դասում:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Վրաստանում բարձր են գնահատում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծառայությունները՝ որպես քրիստոնեության ականավոր գործչի, որ մեծ ավանդ է մուծել երկու ժողովուրդների և Վրաստանի ու Հայաստանի Եկեղեցիների միջև եղբայրական կապերի ամրապնդման գործում

## ՌԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՆԱԴԻ ՍԵԼԵԶՆՅՈՎԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Խորը ցավով ընդունեցինք հայ ժողովրդի մեծ զավակի և հոգևոր առաջնորդի՝ Գարեգին Ա Մայրագույն Պատրիարքի և Կաթողիկոսի վախճանման լուրը:

Վերջին տարիների ընթացքում պահպանելով ջերմ և գործնական հարաբերություններ Գարեգին Ա Կաթողիկոսի հետ, ես շատ լավ տեսնում էի, թե որքան ուժ և եռանդ էր ներդնում այդ մեծ անհատականությունը հանուն բոլոր հայ օջախների խաղաղության, սիրո և ուրախության:

Կաթողիկոսը մեծ դեր ունեցավ ռուս և հայ ժողովուրդների, Ռուսաստանի և Հայաստանի միջև կապերի ամրապնդման գործում:

Նրա հիշատակը երկար կապրի մեր և բոլոր նրանց սրտերում, ովքեր ճանաչում էին նրան:

Այս դժվարին պահին ձեզ և ողջ հայ ժողովրդին ցանկանում եմ հոգով արիանալ և ամրապնդվել:

## ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՎԼԱԴԻՄԻՐ ՅԱԿՈՎԼԵՎԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Խոր վշտով իմացանք Հայ Առաքելական Եկեղեցու պետ Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գարեգին Ա-ի անժամանակ վախճանման մասին:

Իմ և Ս. Պետերբուրգի բնակիչների անունից ընդունեք մեր անկեղծ ցավակցությունները այդ անդառնալի կորստյան կապակցությամբ:

Ս. Պետերբուրգը, քաղաք, ուր խաղաղ և համերաշխ գոյակցում են տարբեր դավանանքների ներկայացուցիչներ, սգում է ողջ հայ ժողովրդի հետ միասին:

## ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Հայ Առաքելական Եկեղեցու հավատացյալ հոտի և Հայաստանի ողջ ազգաբնակչության հետ միասին այս վշտալի պահին սգում և կիսում ենք ծանր կորստի դառնությունն ու խոր ցավը:

Հայ Առաքելական Եկեղեցու հովվապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մայրագույն Պատրիարքի վախճանման առիթով ընդունեք մեր անկեղծ ցավակցությունները:

## ՑԱՎԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՍՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին ցավակցական գրեր են հղել նաև Հունաստանի Արտաքին գործերի նախարար Գրիգորիս Նիոտիսը, Վրաստանի Արտաքին գործերի նախարար Իրակլի Մենաղարաշվիլին, Ավստրալիայի Նյու Սաութ Ուելսի նահանգապետ Բոբ Քարը, ԱՄՆ-ի ներկայացուցչական պալատի անունից՝ կոնգրեսական Ջեյմս Ռոգանը:

Ցավակցություններ հայտնելու համար Մայր Աթոռ են այցելել նաև Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ: Ցավակցություններ են հայտնել Սիրիայի դեսպան Համեդ Հասանը, Գերմանիայի դեսպան Կարոլա Մյուլլեր-Հոլթքեմփերը, Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան, Ուկրաինայի դեսպան Օլեքսանդր Բոժկոն, Ռուսաստանի Դաշնության դեսպան Անատոլի Դրյուկովը, Լիբանանի դեսպան Սաադ Ջախիան, Չինաստանի դեսպան Չժաոլ Ցուենը, Կանադայի դեսպան Էնն Լիճին և Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական այլ անձինք:

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի մահվան կապակցությամբ հուլիսի 2-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեցին Հայաստանի երրորդ հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ու ՀՀ Ազգային Ժողովի նախկին նախագահ Բաբկեն Արարքցյանը և գրառումներ կատարեցին ցավակցությունների հուշամատյանում:

***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը խորապես վշտացած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Առաջինի մահվան կապակցությամբ:

Հայ ժողովուրդը և ողջ մարդկությունը կորցրեց մեծագույն ու անփոխարինելի արժեք:

Մեր վշտակցությունն ենք հայտնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր դասին, մեր հավատացյալ ժողովրդին և համայն հայությանը:

## ՀՀ ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԱԶԱՐ ՍՈՒՋՅԱՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Վեհափառ Հայրապետի կարճատև գահակալությունը, ցավոք, հնարավորություն չտվեց իր լրումին հասցնել բոլոր այն պայծառ ծրագրերը, որ Նորին Սրբության հովվապետությամբ կոչված էին փառավորել մեր Մայր Եկեղեցին, հավատացյալ մեր ժողովրդին պարգևել հոգևոր մխիթարություն ու անսասան պահել իր քրիստոնեական հավատքի մեջ: Բայց Վեհափառ Հայրապետի անձնուրաց նվիրումը, բեղմնավոր գործունեությունը խոր և անջնջելի ակոս են իր մեծ ու խնկելի նախորդների թողած բարեբեր հողում, որ պիտի ծիլեր տան և դառնան հայության վերածննդի առհավատչյան:

## ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼՈՒԻԶ-ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Սիրելի կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյան,

Մենք խորապես վշտացանք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան լուրը լսելով: Հանուն ՀԲԸՄ-ի Տնօրենների կենտրոնական հանձնախմբի և մեր աշխարհասփյուռ անդամների ես հղում եմ մեր խորագույն ցավակցությունները Նորին Սուրբ Օծության ընտանիքին և Ս. Էջմիածնի միաբանությանը: Նրա նվիրումն ու ներդրումը երկար կհիշվի Եկեղեցու և աշխարհասփյուռ հայության կյանքում:

*Ցավակցական գիր է ստացվել նաև «Գալուստ Կյուլպենկյան» /Պորտուգալիա/ հիմնարկությունից:*

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՀՐԱՅՐ ՀՈՎՆԱՆՅԱՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Խորը վշտով մենք փոխանցում ենք Ձեզ մեր ցավակցությունները Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Գարեգին Ա-ի մահվան կապակցությամբ:

Գարեգին Վեհափառը մեծագույն մարդ էր և բացառիկ տաղանդ ուներ իրականացնելու հոգևոր վերազարթոնքը, որի կարիքն այսօր հայ ժողովուրդը մեծապես ունի: Գրեթե կես հարյուրամյակ, Գարեգին Վեհափառը որպես Հայ Առաքելական Եկեղեցու սպասավոր ծառայեց Աստծուն և իր ժողովրդին: Նա իր ծառայությունն էր բերում աշխարհասփյուռ հայության հոգևոր կյանքի շարունակմանը, տարբեր տարիքի մարդկանց հայկական կրթությանն ու ուսուցմանը: Նա հավատում էր միջեկեղեցական շարժմանը և ձգտում կյանքի կոչել համատարած փոխըմբռնումը զանազան դավանանքների միջև: Աստվածաբանական և գրական ասպարեզներում ունեցած իր հանձնառությունը և հրատարակությունները նրան դարձրեցին ակնառու կրոնական գործիչ: Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի և Ամերիկայի Հայկական Համագումարի փոխհարաբերությունները միշտ եղել են նպատակային և բարեկամական: Խորապես անակնկալի գալով

Նրա մահվան կապակցությամբ, մենք խոնարհվում ենք Նրա հիշատակի առջև Ամենակալին ու աշխարհասփյուռ հայությանը մատուցած Նրա տարիների տևական փառավոր ծառայության համար: Համայն հայությունը սգում է Նորին Սուրբ Օծության մահը և աղոթում, որ Նա հանգչի ի խաղաղություն:

Հանուն Հոգաբարձուների և Տնօրենների Խորհուրդների անդամների և ղեկավարության խնդրում եմ մեր խորը ցավակցությունները հայտնել Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Գարեգին Ա-ի համայն հոտին:

## ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Չափազանց ազդված եմ մեր Կաթողիկոս Գարեգին Առաջինի մահվան լուրից: Միանում եմ Ձեր անսահման տխրությանը, որ նաև իմն է և մեր ամբողջ համայնքինը:

Նորին Սրբություն Կաթողիկոսի պատկերը երկար ժամանակ դրոշմված կմնա մեր բոլորի հուշերում որպես Սուրբ Մարդ:

Թող Աստված ողորմածաբար մեզ տա մի նոր առաջնորդ, որը մեզ կհիշեցնի նրան:

# ԵՐԵՎԱՆԻ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությունը, գիտական խորհուրդը և ողջ անձնակազմը խորապես սգում են և վշտակցում Վեհափառ Հայրապետ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի անժամանակ մահվան առթիվ:

Մատենադարանի վաղեմի բարեկամը, հայ հոգևոր մշակույթի մեծ գիտակը, ձեռագրերի աշխարհի հմուտ նվիրյալը, մեր սիրելի Վեհափառը ոգևորում էր մեզ այս ծանր տարիներին՝ գնահատելով և հորդորելով անդուլ շարունակել ձեռագրերի, մեր հոգևոր արժեքների պահպանման, հարստացման և հրատարակման գործը: Դիտելով Մատենադարանը որպես Էջմիածնի հոգևոր ժառանգորդը, Նորին Սրբությունը բերում էր իր մասնակցությունը՝ անձամբ համալրելով ձեռագրերի հավաքածուն և օգնելով Մատենադարանի աշխատակիցներին վերապրելու դժվար ժամանակները, անկորուստ պահելու մեր հոգևոր գանձերը:

Նորին Սրբության վերաբերմունքը Մատենադարանի հանդեպ վառ ապացույցն է այն ավանդույթի, որ ստեղծել էր իր անմիջական մեծ նախորդը՝ երջանկահիշատակ Վազգեն Կաթողիկոսը:

Գարեգին Վեհափառի պայծառ հիշատակը Մատենադարանի աշխատակիցները միշտ սրբությամբ և երախտագիտությամբ կպահպանեն իրենց սրտերում:

Մաշտոցյան Մատենադարանի գիտական խորհրդի և բոլոր աշխատակիցների անունից՝

***ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ***



ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԸ

# Ի ՏԵՐ ՀԱՆԳՅԱՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ Ա ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*«Ահա մեկնիմ ի ձէնջ սիրելի եղբարք ի կոչումն վերանորոգողին Քրիստոսի Աստուծոյ մերոյ...»:*

...Տակավին չորս տարիներ են բաժանում այն բերկրալից օրվանից, երբ առաքելահաստատ Լուսավորչի Աթոռից վերցվեց սգո քողը և Հայոց Հայրապետական գահին բազմեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն Ամենայն Հայոց:

Չորս տարիներ՝ լի բազում անկորնչելի հիշողություններով, լի անուրանալի մեծագործություններով...

Բովանդակ Հայաստանյայց Ս. Եկեղեցին լիահույս էր, որ Աստվածառաք Հայրապետն իր իմաստությամբ ու հոգևորությամբ պիտի վերացներ այն մեծ անջրպետը, որը ստեղծվել էր դեռևս լուսահոգի Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի գահակալության առաջին տարիներին: ... Սակայն՝ «խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ...», իր գահակալության 4-րդ և կյանքի 67-րդ տարում ի Տեր հանգյավ Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը:

Սգում է Հայոց Եկեղեցին: Սգում է հայրենի պետությունը: Սգում է հայ ժողովուրդը: Թեև վիշտն այս հույժ ծանր է ու սրտամորմոք, բայց հոգվո այն

վկայությունը, որ Հայոց Հայրապետը գնաց այլևս միանալու մեր լուսաբնակ հայրերի աստվածամերձ դասին, և Ամենասուրբ Երրորդությանն իր փոքր ածուի համար բարեխոսելու, ինքնին այդ ցավը բալասանվում է և մղում է միանալու Հայոց երանաշնորհ Հայրապետների աղոթքներին «վասն պայծառութեան և անսասանութեան Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց»...

## ԼՎԱՑՄԱՆ ԿԱՐԳ

*«...Առաքեա՛ ի մեզ և ի ջուրս յայս զնոյն մաքրարար շնորհս Քո՛ և օրհնեա՛ եւ սրբեա՛ զսա, որով լուացեալ զմարմին սորա սրբեսցի յամենայն արատոյ մեղաց եւ ի խաբէութեանց աշխարհիս»:*

*(ՄԱՇՏՈՑ)*

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հնավանդ կանոնների համաձայն, նախքան բուն Տան կարգի կատարումը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների մասնակցությամբ կատարվեց Տ. Տ. Գարեգին Ա-ի մարմնի լվացման կարգը. «Եւ ապա լուասցեն քահանայք ի ծածուկ տեղւոջ»: Սույն կարգը Վերնատանը Հիսուս Քրիստոսի կատարած անճառելի տնօրինության՝ անիմանալի խոնարհության խորհրդի հիշատակությունն ու վերակոչումն էր, որպեսզի հանգուցյալ Հայրապետը ոչ միայն մարմնով, այլև, խորհրդաբար, հոգով, սրտով ու մտքով մաքրագործված՝ մուտք գործի Հաղթական եկեղեցու աստվածամերձ հարկից ներս. «Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որ ի ժամանակի փրկագործ տնօրէնութեան Քոյ ի սուրբ վերնատանն անճառելի խոնարհութեամբ՝ առեալ զջուր Քոյով ամենասուրբ ձեռօքդ արկեր ի կոնք և լուացեր զոտս աշակերտացդ՝ մաքրելով զնոսա յամենայն աղտից եւ յարատոյ մեղաց...: Արդ՝ և մեք ծառայքս Քո ժողովեալք առ հանգուցեալ ծառայս Քո՛ կատարեմք զնոյն մաքրաբար խորհուրդն Քո: ...Առաքեա՛ ի մեզ եւ ի ջուրս յայս զնոյն մաքրարար շնորհս Քո՛ եւ օրհնեա՛ եւ սրբեա՛ զսա, որով լուացեալ զմարմին սորա սրբեսցի յամենայն արատոյ մեղաց եւ ի խաբէութեանց աշխարհիս...» («Կարգ թաղման կարգաւորաց»):

## ՀՈՒԼԻՍԻ 5
## ՏԱՆ ԿԱՐԳ

*«...զՀոգի սորա խաղաղութեամբ ընկա՛լ յերկնից արքայութիւնդ ի խորանս արդարոց»:*

*(ՄԱՇՏՈՑ)*

Վաղ առավոտից սգացող Մայր Աթոռ էին եկել բազմաթիվ հավատավոր հայորդիներ, որոնք, սրտի տրոփյունով ու արցունքակալ աչքերով, սպասում



ՏԱՆ ԿԱՐԳ ՎԵՀԱՐԱՆԻ ՆԱԽԱՍՐԱՀՈՒՄ

էին, թե երբ պիտի ավարտվի այն հոգեթով արարողությունը, որպեսզի իրենք ևս հնարավորություն ունենային գեթ այսպես մեկ անգամ ևս իրենց Հովվապետին տեսնել:

...Իսկ այդ ընթացքում Վեհարանում Մայր Աթոռի միաբանությունը, Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի գլխավորությամբ, կատարում էր ՏԱՆ ԿԱՐԳ: Սույն կարգին մասնակցում էին նաև հանգուցյալ Հայրապետի սգակիր հարազատները: Ամենքը, կարծես մի բերան դարձած, խոնարհաբար աղերսում էին Երկնավոր Թագավորին. «...Դասաւորեա՛ զհոգի հանգուցելոյս Հայրապետի ի քեզ ճշմարիտ հաւատով ընդ ամենայն սուրբս Քո՛ յառաջագահ դասուն ի միւսանգամ Քո գալստեանդ. զի եւ սա արժանաւոր եղիցի գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ»:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*«Սիա մեկնիմ ի ձէնջ սիրելի եղբարք»:*
*(ՄԱՇՏՈՑ)*

Սրբաշունչ Տան կարգից հետո, սգաթափորը հանդիսավոր կերպով Վեհափառի դին տանում է քաղաքամայր Երևան՝ Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի: Կաթողիկոսական Տեղապահի նախագահությամբ կատարվում է Հոգեհանգստյան պաշտոն, որին ներկա էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հուղարկավորության կազմակերպման պետական հանձնաժողովի անդամները, Վեհափառի հարազատները, սփյուռքահայ գործիչներ, մտավորականներ, հասարակական ու քաղաքական տարբեր կազմակերպությունների ու կուսակցությունների ներկայացուցիչներ և հավաքված ժողովուրդը:

Հոգեհանգստյան ժամանակ, «վասն հանգուցեալ Հայրապետի հոգւոյ փրկութեան», իրենց լռելյայն աղոթքն էին առ Աստված վերառաքում այն հայորդիները, որոնք վաղ առավոտից շրջապատել էին Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցին և անհամբեր սպասում էին իրենց սիրեցյալ Հովվապետին հրաժեշտ տալուն:

Հոգեհանգստից հետո, աստիճանաբար, սկսվում է հավատացյալների հոսքը Ս. Եկեղեցի: Գեթ մի քանի րոպեներ՝ կենցաղային հոգսերն ու անձնական խնդիրները մոռանալով, հավատացյալ հայորդիներն իրենց որդիական ակնածանքն ու վշտակցությունն էին եկել հայտնելու Վեհափառին ու իրենց Մայր Եկեղեցուն...

Նույն օրը, երեկոյան ժամը 18.00-ին, նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի և աղոթական մասնակցությամբ Երուսաղեմի ու Կ. Պոլսո Հայոց Ամենապատիվ Պատրիարք Հայրեր Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի, ինչպես

նաև Հայոց Եկեղեցու գրեթե բոլոր բարձրաստիճան հոգևորականների, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն: Հընթացս արարողության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությանն է միանում նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակությունը՝ Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսի գլխավորությամբ: Հոգեհանգստի վերջավորությանը, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, մխիթարական խոսքով հանդես է գալիս Կենտրոնական Եվրոպայում, Ավստրիայում ու Շվեդիայում հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

*«Հանձին Նորին Սրբության հայ ժողովուրդը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին, պետությունը կկորսնցնե բարձրագույն հոգևորականը այսօրվան: Հայ Եկեղեցվո բոլոր նվիրապետական աստիճաններով բարձրանալով Ան հասավ գագաթնակետին, բայց ճակատագիրը դժբախտաբար տարբեր տնօրինեց, փոխան քառասուն տարիներու միայն չորս տարիներ իրեն տրվեցավ իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց: Այսօր իր անձին մեջ մեր ժողովուրդը, մեր եկեղեցին և մեզի կմնա աղոթել, որ Տերը արժանավորը որպես հաջորդ Լուսավորչի Սուրբ Աթոռին վրա գահակալել տա:*

*Երկրորդ՝ մեր ժողովուրդը այսօր կկորսնցնե Հայր մը, իսկական Հայր մը: Հանգուցյալ Վեհափառ, մենք բոլորս կողքանք Ձեր մեկնումը իբր հոգևորական, իբր ժողովուրդ, իբր կառավարություն, իբր սարկավագ, իբր պաշտոնյաներ Մայր Աթոռ, Սփյուռքի հայություն, մտավորականություն, Հայր մը կկորսնցնենք իր անձին մեջ: Անդառնալի կորուստ մը, բարձրագույն հոգևորականը, հայրը, խնամատարը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, Աթոռո պաշտոնյաներու, Հայ Եկեղեցվո և մեր եկեղեցու Հայրը, խնամատարը Արցախի եկեղեցիներու, խնամատարը մատենադարանի, հոգատարը այսօր կմեկնի: Նաև կարելի է մեջբերել ավետարանի խոսքը, որ գործածվեցավ. «Ասպա եթե մեռանի, բազում արդյունս առնե»: Մեռավ, զոհվեցավ և բազում արդյունք տվավ:*

*Կարելի է արդարորեն առանց ոևէ տատամսումի ըսել, որ Նորին Սրբությունը իր կյանքը, ամբողջ կյանքը լիությամբ ապրեցավ, ոևէ վարկյան մը, ոևէ րոպէ մը չվատնեց իզուր, այլ միշտ գործ կատարեց, խոսեցավ և գործեց: Եվ այդ առիթով կարելի է նաև հիշել, որ մեր եկեղեցին Անոր մեջ մեծ հռետոր մը կը կորսնցնե: Բազում արդյունս տվավ իբր եպիսկոպոս, իբր առաջնորդ, իբր Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, նաև այս երեք-չորս կարճ տարիներուն, կխորհիմ, որ ինքն այնքան ըրավ, որքան մեկը տասը-տասնհինգ տարիներու պիտի կատարեր: Իր գրական, մտավորական, աստվածաբանական արդյունքը մեծ ցավ էր: Ինքն ալ պիտի փափագեր, որ ավելի ապրեր, ավելի ծառայեր մեր ժողովուրդին, ավելի՝ իր կարևոր քարոզներով մեզ բարձրացներ, բայց ճակատագիրը տարբեր տնօրինեց: Բարձրագույն հոգևորականը, Հայրը հայ ժողովուրդին և Հայ Եկեղեցվո բազմարդյուն անձնավորություն, հայ մը և Հայր մը կբաժնվի այս օրերուն մեզանից:*

*Ի՞նչ է Նորին Սրբության կտակը մեզի. 1947 թ. ի վեր ինքը ճանչցած եմ փոքրիկ դադարներով, բայց ինքը հանգուցյալը 1946 թվին մտավ Անթիլիասի դպրեվանքը և ես հաջորդ տարի՝ 1947-ին: Այսքան տարիներե ի վեր որ*



«ՏԷՐ ՈՒՂՂԵԱ ԶԳՆԱՑՍ ՄԵՐ Ի ՃԱՆԱՊԱՐՀՍ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ»



ՍԳԱԹԱՓՈՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՑ

*հետևած եմ Նորին Սրբության խոսքերում, գրություններում և գործերում, կխորհիմ որ հրամայականը և առաջին պատգամը, որ նա մեզի տվավ և ինք կուզեր տալ, միության և միասնության պատգամը, հրամայականը պիտի ըլլա կամ ըլլար: Չգիտեմ գուցե գրած է իր կտակը, գուցե ուէ տեսակի պատգամ մը ձգած է, եթե անիկա բանաք, վստահ եմ, որ անպայման կգտնեք պատգամը միության ու միասնության: Այդ միությունը և միասնությունը, Սրբազան եղբայրներ, հոգևորականներ և մեր ժողովուրդ, այդ միություն և միասնությունն է բոլոր աստիճաններու վրա, նախ մեր՝ Մայր Աթոռի միաբանության մեջ, միություն և միասնությունը մեր ժողովուրդի մեջ՝ Արցախ, Հայաստան և ամբողջ սփյուռքին մեջ միություն և միասնականություն, մեր եկեղեցիի, նվիրապետական Աթոռներու մեջ միություն և միասնություն, արտասահմանի մեջ կուսակցություններու միություն և միասնություն կխորհիմ, որ Հանգուցյալ Հայրապետին առաջին և կարևորագույն պատգամը պիտի ըլլար:*

*Երկրորդ՝ կխորհիմ, որ մեզի՝ հոգևորականներուս, ինչպես վերջին տարիներուն Հայաստան հաճախ իմացանք և լսեցինք, իր պատգամը պիտի ըլլա, պիտի ըլլար Ավետարանի խոսքը ավելի վեր հնչեցնել, ավելի համոզումով, ավելի սիրով, ավելի աշխուժությամբ Ավետարանի խոսքը քարոզել մեր ժողովուրդին և տարածել մեր ժողովուրդի մեջ:*

*Եվ երրորդ՝ շատ պարզ իր կտակը պիտի ըլլա, պիտի ըլլար, որ մենք՝ հոգևորականներս, տարբեր աստիճաններու վրա, տարբեր երկիրներու մեջ, տարբեր նվիրապետական Աթոռներու վրա աշխատենք, այն ինչ որ ինքը կուզեր և կկատարեր՝ զորացնել մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Մեր Եկեղեցու զորացումը ամեն կերպով վստահորեն Հանգուցյալ Նորին Սրբության կարևորագույն ցանկություններեն, նպատակներեն, գործունեության նպատակներեն մեկն էր:*

*Վեհափառ Տեր, մեր ժողովուրդը, մեր եկեղեցին, նվիրապետական Աթոռները, մենք բոլորս կողքանք, կսգանք Ձեր անժամանակ մեկնումը, կարող էիք դեռ ապրիլ, գործել և ներշնչել: Տերը թող լուսավորե Ձեր բարի հոգին»:*

## ՀՈՒԼԻՍ 6-7
## ՀՐԱԺԵՇՏ ԵՐԵՎԱՆԻՆ

*«...Սայլիկն ի գիլ գայր ի գիլ. եւ*
*ճռնչալով գայր մտանէր յերուսաղէմ»:*
*(ՄԵՂԵԴԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ)*

Հուլիսի 6-ին, առավոտյան ժամը 10.00-ին, քաղաքամայր Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, Նախագահությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Տ. Արամ Ա-ի և աղոթական մասնակցությամբ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Երուսաղեմի և Կ. Պոլսո Հայոց Սրբազան Պատրիարքներ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի ու Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի և Հայաստանյայց Ս. Եկեղեցու թեմակալ եպիսկոպոսաց, ինչպես նաև ներկայությամբ ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի, ՀՀ ԱԺ Նախագահ Կ. Դե-

միոճյանի, ՀՀ վարչապետ Վ. Սարգսյանի, ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանի և պետական ավագանու այլ ներկայացուցիչների ու ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետների, Վեհափառ Հայրապետի ազգականների ու սգակիր հայորդիների, տեղի ունեցավ Հոգեհանգստյան պաշտոն, որով բովանդակ Հայաստանյայց Ս. Եկեղեցին հայցում էր Աստծու գութն ու ողորմությունը՝ Իր հանգուցյալ ծառայի համար. «Վասնորոյ մեք ժողովուրդք Քո եւ գինք արեան Միածնի Քոյ աղաչեմք զՔեզ՝ զի հանգուցեես զհոգի սորա առ ամենայն սրբոց եւ սիրողաց Քոյ» («Կարգ թաղման կարգաւորաց»):

Հոգեհանգստյան պաշտոնից հետո, ներկաներին դիմեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը.

*«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:*

*Սուգ է Հայոց: Մեզ հետ չէ այլեւս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Սգավոր է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, սգավոր է Հայոց պետությունը: Խոր վշտով եւ գլխահակ՝ վերջին հրաժեշտն ենք տալիս եւ հայրենյաց սուրբ հողին հանձնում սիրելի Վեհափառ Հայրապետին: Վերջին հրաժեշտն ու խոնարհումն ենք մատուցում մեր իրականության ինքնօրինակ եւ բացառիկ անհատականություններից մեկին, որն իր անձով ու գործով դյուրին, խանդավառորեն սիրելի դարձրեց դժվարին առաքելությունը հայ հոգեւորականի, որ իր արյունը չի խնայել «վասն հաւատոյ», ըմբռնելով այն որպես «վասն Հայրենեաց»:*

*Հանգամանքների բերմամբ Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը կյանքի մեծ մասն ապրեց Հայաստանից դուրս, Հայրենիքից հեռու: Հեռավոր Քեսաբում ծնվել էր «Սուրբ հողով եւ հայութեամբ ինքնանալու» ու ողջ կյանքը անսակարկ սպասավորությամբ մատուցելու Տիրոջ զոհաբերության Սուրբ Սեղանին եւ սիրեցյալ հարազատ իր ժողովրդին:*

*Լույս դառնա հոգիդ, Հայոց Հայրապետ, որ սիրով ու իմաստությամբ հայրապետական՝ անսայթաք դեպի Քրիստոսի կենաց ճանապարհ եւ ինքնության ճանաչողություն առաջնորդեցիր հայոց քո հոտը՝ որպես հովիվ քաջ եւ հովիվ բարի, որ «զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»:*

*Էջմիածնի սուրբ խորհրդի ներքո, Ազատն Մասյաց հայացքի դիմաց, երբ դեպի վերջին հանգրվան ենք ուղեկցում Հայոց Վեհափառ Հայրապետին, ամենախորն ապրումով վերհիշում եմ Նորին Սրբության խոսքերը. «Ահա այսօր եկած եմ Հայրենիք, որպէս հարազատ տուն, ուր կը զգամ այնպէս, որ կարծես երբեք անկէ բաժնուած չէի...»: Հայրենիքից երբեք բաժանված չլինելը Վեհափառի էությունն ու ապրված կյանքն է: Հայրենիքից երբեք բաժանված չլինելը՝ նրա ի լուր աշխարհի խոստովանությունը, թողած դասը, հանձնարարականը, սրբազան ավանդը՝ մեզ եւ սերունդներին:*

*Հայ հոգեւորականի բեղուն ուղի է անցել Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Կյանքը նրա սեր էր, գործը՝ անձնվիրում: Նա ապրեց Աստծո եւ հայրենյաց սերը սրտում, գործը՝ Հայրենիքին ու ժողովրդին եւ իր ազգի միջոցով՝ մարդկությանը ծառայեցնելով: «Հարդը գնաց, ցորենը մնաց» գաղափարականը ոգի դարձրած՝ շուրջ կես դար բարդ ու դժվարին*

հոլովույթում հոգեւորականի իր կյանքի երկնատուր իմաստնության շնորհով բաժանեց ցորենը հարդից եւ ցորենաբույր իր խոսքը կենսահաղորդ նշխարի պես բաշխեց իր ժողովրդին՝ նոր կյանքով նորոգելով հայ հոգիները: Շուրջ կես դար որպես բոցավառ քարոզիչ ուսուցանեց ողջ աշխարհում սփռված հայությանը հավատարիմ մնալ նախնյաց սուրբ հավատին, առաջնորդեց ստեղծագործ, ազգաշահ կյանքի, համազգային միության եւ Հայոց Անկախության արժեւորման:

Անուրանալի ավանդ ունի Նորին Սրբությունը որպես լայնածիր մտավորական, որի գիտական - աստվածաբանական, մանկավարժական, գրական - հրապարակախոսական վաստակը համամարդկային բովանդակությամբ մնայուն արժեք է հայ հոգեւոր մշակույթի հարուստ անդաստանում: Հանգուցյալի լուսավոր կերպարը՝ իր նպատակների եւ ձեռաց գործերի մեծությամբ առավել հստակ է գծագրվում մեր առջեւ անժամանակ բաժանման այս տխուր պահին: Նվիրյալ հոգեւորական, ջանադիր հովվապետ, մեծամասշտաբ մտավորական, հայաշունչ արարող հոգի. այս կերպարով է հավերժանալու Հայոց 131-րդ Հայրապետը հայ հավատացյալի հոգու ու մտքի, պատմության հավաքական հիշողության մեջ:

Նորին Սրբությունը, երջանկահիշատակ Հայրապետը կյանքի վերջին չորսնամյան իր կոչման ու առաքելության մեջ ապրեց ու գործեց իր նախնյաց աստվածպարգեւ Երկրում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Երջանիկ էր Հայոց Հայրապետը, տեսավ ազատ, անկախ Հայաստանը, եղավ անկախ Հայաստանի առաջին ընտրյալ Հայրապետը եւ մարտնչեց ու ծառայեց նրա զորացման սուրբ գործին:

Վեհափառի նվիրական իղձն էր նոր զարթոնքի մեջ տեսնել 2000-ամյա Հայոց Եկեղեցին, որպեսզի ուրախությամբ ու հպարտությամբ հռչակեր դարերի մեջ վաստակած իրավունքը իր ժողովրդի, ասելով՝ «Մենք հաւատարմօրէն պահեցինք ժամադրութիւնը Յիսուսին հետ»: Վեհափառի անկասելի ձգտումն էր հայության մեջ վերարթնացած տեսնել ոսկեդարյան ստեղծարար շունչը եւ ազատատենչ հաղթական ոգին «Հայակերտումի»՝ արդյունավորված հավատի գործերով, կոչված զորացնելու հայրենին եւ բարօրություն բերելու մեր ժողովրդին, հավատարմորեն պահելու «ժամադրութիւնը Յիսուսին հետ», 2001 թ.՝ Հայ Եկեղեցու դարակազմիկ հոբելյանին: Հիրավի, հայոց դարձին համարժեք նպատակ այդ դարձից 1700 տարիներ հետո:

Վեհափառը նաեւ Հայ Եկեղեցու միության Տաճարի հիմքերը դնելու նվիրական առաքելությամբ եկավ Հայաստան, Մայր Աթոռ եւ բազմեց Լուսավորչի գահին: Եկավ, որպեսզի ամբողջական միության մեջ լիարյուն կյանքով ապրի Հայ Առաքելական Եկեղեցին:

Երկրային Ձեր կյանքում, Վեհափառ, ականատեսը չեղաք նվիրական այդ տեսիլքի ամբողջական մարմնավորմանը: Սակայն Ձեր օծյալ, ծրաջան Աջով սերմանված են պտղաբեր հունդերը, որոնք անտարակույս պիտի ծիլ տան եւ արգասավորվեն մեկ Եկեղեցի, մեկ Հայրենիք ազգային գերակա գիտակցության մեջ: Դուք, Հայրապետ հայոց, արդյունավորեցիք Հայրապետության Ձեր ամեն օրն ու ժամը: Հայրենյաց եւ Ձեր հավատքի հիմքերի վրա բարձրացվել

*են պատերը բազում խոնարհված եկեղեցիների, հոյակերտ սլացքով վեր են հառնում նորերը Հայաստանում ու Արցախում. լայնահուն ընթացքով կենսավորվում է քրիստոնեական կրթությունն ու հոգեւոր դաստիարակությունը, Հայ Եկեղեցու եւ ազգային արժեքների քուրայում կերտվում է հոգեւոր սպասավորների վերածննդի սերունդը, որը Ձեր բնորոշմամբ՝ «ազգի մարմնին մէջ սիրտէն արիւն առնող եւ սիրտին արիւն ղրկող» զարկերակը պիտի լինի: Այսօր Հայ Եկեղեցին ճանաչելի եւ գնահատված է միջեկեղեցական եւ քրիստոնեական համադաշնության մեջ՝ նաեւ Ձեր անձով, Ձեր աշխատություններով: Լույս հագնի հոգիդ, Վեհափառ Հայրապետ:*

*Հրաժեշտի այս պահը Ձեր պատգամն է մեզ անձնվիրության եւ սիրո առ Հայրենիքը, առ Հայոց սուրբ եկեղեցին, մեր ժողովուրդը եւ համայն մարդկությունը:*

*Հանուն Արարատյան Հայրապետական Թեմի հոգեւոր դասի եւ Թեմական խորհրդի խորապես ցավակցում ենք Վեհամորը, Վեհափառ Հայրապետի բոլոր հարազատներին:*

*Մեր սերն ու գնահատանքը՝ միաբանակից մեր եղբայրներին՝ կյանքի վերջին օրերին Նորին Սրբության սնարի կողքին գտնվելու եւ նրան ջերմ հոգածությամբ ու սիրով շրջապատելու համար: Նաեւ՝ հավատավոր եւ եկեղեցասեր մեր ժողովրդի զավակաց, որոնց մշտառաջ աղոթքը եւ առ Վեհափառ Հայրապետը սիրով լեցուն բարեմաղթանքի ուղերձները հոգու մխիթարություն պարգեւեցին Նորին Սրբությանը վերջին օրերին:*

*Մեր շնորհակալությունը Վեհափառ Հայրապետի հուղարկավորությունը պատշաճորեն կազմակերպած բոլոր հանձնառուներին, պատասխանատուներին, հոգեւոր իմ եղբայրներին, Հայրենի մեր պետությանը՝ հանձին այստեղ ներկա Նախագահի, Ազգային ժողովի Նախագահի եւ Վարչապետի, պետական այրերի:*

*Խորազգաց շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր սրտակցում են մեզ ու կիսում մեր մեծ կորստի ցավը:*

*Անժամանա՛կ եկավ ցավալի բաժանումը: Հավերժի ճամփորդ ես, Վեհափառ Հայրապետ: Ճանապարհդ ունի մեկ անուն՝ անմահություն: Խաղաղ հանգչիր, Վեհափառ, Ամենայն Հայոց Մայր Աթոռում, որին «կապեալ կայ ամենայն ազգն հայոց»: Խաղաղ հանգչիր Հայրենի հողում, մենք հավատարմորեն պիտի պահենք ժամադրությունը Հիսուսի հետ:*

*Բյուր օրհնություն նվիրական շիրիմիդ: Արժան է եւ իրավ հիշատակելի. «Մահկանացու ծնեալ՝ անմահ՛զիւր յիշատակ եթող»:*

*«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: Ամեն»:*

Սրբազան Հոր խոսքից անմիջապես հետո Վեհափառի մարմինը դուրս է բերվում Ս. Սարգիս եկեղեցուց և «Աշխարհ ամենայն»-ի երգեցողությամբ, սգաքափորով, տարվում մինչև ավտոմեքենաների շարասյունը: Այնուհետև ավտոմեքենաների շարասյունը դանդաղընթաց ուղևորվում է Միածնաէջ Մայր Աթոռ:



ԹԱՂՄԱՆ ԹԱՓՈՐԸ ՀԱՆԴԻՍԱՔԱՅԼ ԱՌԱՋԱՆՈՒՄ Է ԴԵՊԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

## ՎԵՐՋԻՆ ՎԵՐԱԴԱՐՁ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*«Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց ճեմել ի յերկինս»:*

*(Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ)*

Տակավին մի քանի օրեր առաջ սգավոր Ս. Էջմիածինը պատրաստվում էր արժանավորապես դիմավորելու իր երջանկահիշատակ գահակալին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կենտրոնական դարպասի մոտ վաղ առավոտից խռնվել էր ողջ Մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր դասը, Մայր Աթոռի հովանու ներքո գործող մյուս հաստատությունների աշխատակազմերի անդամներն ու հավատացյալների բազմությունը:

Կենտրոնական դարպասի մոտից, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաների «Այսօր գոլով ի Բեթանիայ» շարականի երգեցողությամբ, սգաթափորը Վեհափառի դին առաջնորդում է Մայր Տաճար:

Նշենք, որ նախքան եկեղեցի մուտք գործելը, Հայոց Եկեղեցու երանելի Հայրերի իմաստուն տնօրինությամբ, հանգուցյալ Հայրապետի մարմինը «ի չորս տեղւոջ հանգիստ» է առնում: Այդ դադար-հանգստյան պահերին ընթերցվում են Սուրբգրային հատվածներ, երգվում են շարականներ, քարոզ է ասվում, ապա կարդացվում է աղոթք. «Որ արարիչդ ես ազգի մարդկան եւ ստեղծիչ Քրիստոս Աստուած մեր, որ ի ձեռն սուրբ Յարութեան Քոյ ազատեցեր զմեզ ի ծառայութենէ մահու: Նոյն ինքն եւ այժմ Տէր՝ զառ ի յելս ճանապարհի յաշխարհէս զծառայիս Քոյ՝ խաղաղութեամբ յաջողեա՛. եւ առաջնորդեա՛ սմա ի ձեռն հրեշտակին խաղաղութեան ի յօթեւանս սրբոց Քոց առաքելոցն»:

Վերջին հանգրվանի ժամանակ՝ «Աստուած հոգւոց եւ ստեղծիչ մարմնոց» աղոթքով, ի մասնավորի Տիրոջը Ս. Եկեղեցին աղերսում է. «Հանգո՛ զհոգի ծառայիս Քո ի տեղւոջ լուսոյ եւ ի տեղւոջ հանգստեան՝ ուստի փախուցեալ են ամենայն ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք»:

Այնուհետև երբ Վեհափառի մարմինը բերվում է Մայր Տաճարի դռան մոտ, նախ և առաջ ընթերցվում են Սուրբգրային համապատասխան հատվածներ, երգվում են շարականներ, կարդացվում է հատուկ աղոթք, ապա՝ «Ողորմութեան Քո զդուռն բաց մեզ Տէր» շարականի երգեցողությամբ, թափորը մուտք է գործում Տաճար: Այստեղ վերստին ընթերցվում են Սուրբգրային հատվածներ, այնուհետև «Հոգւոցն հանգուցելոցն» մաղթանքով, «Եւ եւս խաղաղութեան...» քարոզով, «Քրիստոս Որդի Աստուծոյ» աղոթքով և «Հայր մեր»-ով ավարտվում է «Քահանայաթաղ առնելոյ»-ի Տաճար տանելու կարգը. «եւ ի վերայ դիոյն դիցեն զԱւետարան, եւ վառեսցեն զլոյս առընթեր: Եւ ապա արձակին խաղաղութեամբ, եւ երթիցեն ի տեղիս իւրեանց»:

Ինչպես Ս. Սարգիս եկեղեցում, Մայր Տաճարում ևս Վեհափառի դագաղի մոտ, հերթականությամբ, Մայր Աթոռի միաբանները շարունակում են Ս. Ավետարանի ընթերցումները:

Այս ամբողջ ընթացքում, վաղ առավոտից մինչև ուշ երեկո, չէր դադարում հավատացյալ հայորդիների հոսքը Մայր Տաճար՝ վերջին հրաժեշտը տալու և վերջին աջահամբույրն ստանալու հանգուցյալ Հովվապետից, որպես

Բարձրյալ Տիրոջից հանգուցյալ Հայրապետի հոգու հանգստության համար մատուցված անկեղծ ու անխառն խնդրանք, ինչպես, որ գրված է Մաշտոցի մեջ. «Եւ մեք ժողովուրդք Քո եւ ծառայքս Քո՛ ի տաճարի փառաց սրբութեան Քոյ աղաչեմք եւ խնդրեմք ի Քէն» (ՄԱՇՏՈՑ):

Ցավոք պետք է նկատենք, որ թեև շատ էին Մայր Տաճար եկողները, բայց, ավա՜ղ, նրանցից քչերն էին, որ գիտեին, թե հանգուցյալին ինչպես պետք է մոտենալ. մոտենալիս հարկավոր է մի պահ դեմքով դառնալ դեպի ննջեցյալը և դանդաղ խաչակնքվել, զի խաչի կնիքով ինքներս մեզ Տեառնագրելով՝ մեր լռելյայն աղոթքն ենք առ Աստված վերառաքում՝ «վասն հոգւոյ հանգուցելոյն»:

Հայոց եկեղեցու հայրավանդ կանոնների համաձայն, թե՛ առավոտյան և թե՛ երեկոյան ժամերգություններից հետո կատարվում էր Հոգեհանգստյան պաշտոն (և այսպես շարունակ՝ 40 օր, զի ողջերի անկեղծ ու սրտաբուխ աղոթքները մեծ օգնություն են ննջեցյալին՝ երկնքի ու երկրի միջև ծվարած չարի այսերի միջով խաղաղ ու անվրդով դեպի հավիտենական կայաններ ընթանալիս):

## ՀՈՒԼԻՍ 8
## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ

*«...Աղաչեմք զգթութիւն Քո Տէ՛ր, ընկա՛լ զսա յանդորրում ուրախութիւնդ. եւ զուարճացո՛ զհոգի սորա յանանց խոստմանց Քոց վայելս»:*

*(ՄԱՇՏՈՑ)*

Հինգշաբթի, ժամը 10.00-ին, սկսվում է Սուրբ և Անմահ Պատարագի սրբազան արարողությունը: Ս. Պատարագին ներկա էին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, ՀՀ ԱԺ նախագահ Կ. Դեմիրճյանը, ՀՀ վարչապետ Վ. Սարգսյանը, ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը, պետական պաշտոնյաներ այլ անձինք, Վրաստանի Հանրապետության ԱԺ նախագահ Զուրաբ Ժվանիան, Արցախի Հանրապետության վարչապետ Անուշավան Դանիելյանը և ուրիշներ, ինչպես նաև ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, սփյուռքահայ գործիչներ, հասարակական, քաղաքական տարբեր կազմակերպությունների ու կուսակցությունների ներկայացուցիչներ:

Հայոց Եկեղեցու սրբազան արարողությանը ներկա էին և Վեհափառ Հայրապետի հուղարկավորությանը մասնակցելու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին ժամանել Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ն, Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը՝ մետրոպոլիտ Պիտիրիմի գլխավորությամբ, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու մետրոպոլիտներ Յոհաննեսը և Ամբա Բիշոյը, Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքությունից՝ մետրոպոլիտ



ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ Ս. ԽՈՐԱՆ ԵԼՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ



Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՋԸ ՕԾՈՒՄ Է ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՏԵՂԱՊԱՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈԶԱՊԱԼԵԱՆԸ

Գենադիոս Լիմուրիոսը, Ասորի Ուղղափառ Եկեղեցուց՝ Հալեպի մետրոպոլիտ Իբրահիմը, Վատիկանից՝ կարդինալ Կասիդին, Քենթրբերիի արքեպիսկոպոսությունից՝ Բեսինքսթոքի եպիսկոպոս Ջեֆրի Ռոուելը, Հալեպի շեյխ Ալ Շամը և այլք:

*«Եւ այժմ Տէր բարերար՝ զսա առ Քեզ կոչեցեր. եւ խափանեցաւ պաշտօն սորա յեկեղեցւոյ Քումմէ՝ եւ ի ժողովրդենէ Քումմէ»:*

*(ՄԱՇՏՈՑ)*

Ս. Պատարագի ընթացքում կատարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի վերջին օծման կարգը. «Եւ մինչ մատչիցի Սուրբ Պատարագն, ի ժամ ողջունին առաջի բեմին ա՛յս կարգ կատարի», այսինքն՝ սարկավագի «Վասն քաւութեան...» քարոզից հետո, հանդիսապետը կարդում է «Օրհնեալ ես Տէր Աստուած Ամենակալ» աղոթքը, որն ընթերցվում է միմիայն Կաթողիկոսական թաղման պարագային: Աղոթքի ընթերցումից հետո Վեհափառի դին «բառնան քահանայքն, եւ հանեն ի բեմն առաջի Սրբոյ Սեղանոյն»: Այնուհետև, ձեռամբ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի, կատարվում է Գարեգին Ա-ի վերջին օծման կարգը. «Եւ առեալ զՍուրբ Մեռոնն, օծցէ՝ նախ զճակատն, եւ ապա զաջոյ ձեռն»:

Ս. Եկեղեցու վարդապետության համաձայն, վերջին օծման կարգը ննջեցյալին օժտում է այնպիսի զորությամբ, որը հանգուցյալին՝ երկնքի ու երկրի միջև եղող դռներին հաղթահարելու և աստվածային իմանալի շնորհով սպառազինված իր ընթացքը դեպի խաղաղության նավահանգիստ շարունակելու ուժ և կարողություն է տալիս. «Զի... ընկալցին սուրբ Նշխարքս ոսկերաց սորա զօրութիւն բժշկութեանց. եւ զհալածումն սևագունդ դիւաց. եւ մեծ պարծանս կենաց. եւ յոյս մեծապէս սուրբ խոստովանութեամբ, որ ի Հայր եւ յՈրդիդ եւ ի Հոգիդ Սուրբ...»:

Օծման կարգից հետո, խորհրդանշորեն, Վեհափառ Հայրապետն իր վերջին հրաժեշտ է տալիս Ս. Եկեղեցուն, Ս. Սեղանին, հոգևոր դասին. «Ողջոյն քեզ սուրբ եկեղեցի: Ողջոյն քեզ սեղան սրբութեան: Ողջոյն ձեզ դասք քահանայութեան»: Երջանկահիշատակ Հովվապետի վերջին ողջույն-հաղորդությունից անմասն չեն մնում նաև հավատավոր հայորդիները. «Ողջոյն ձեզ մանկունք եկեղեցւոյ: Ողջոյն ձեզ հաւատացեալ եղբարք իմ ի Քրիստոս: Ողջոյն ձեզ համօրէն ժողովրդականք»: Պահը հույժ հուզիչ էր ու հոգեպաշտ, որովհետև Վեհափառ Հայրապետը, հրաժեշտ տալով իր շատ սիրելի Հայոց Եկեղեցուն ու հոգևոր եղբայրներին, դեպի իր Արարիչն էր ճանապարհորդում. «Ահա հրաժարիմ ի քէն սուրբ եկեղեցի: Ահա մեկնիմ ի ձէնջ սիրելի եղբարք ի կոչումն վերանորոգողին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: ...Ես ճանապարհորդեցի առ Արարիչն իմ»:

Ողջույնի այս սրբազան արարողության ընթացքում, շարականների

ողբաձայն երգեցողությամբ, Վեհափառ Հայրապետի մարմինը երեք անգամ պտտեցվում է Ս. Սեղանի շուրջ, «որ նշանակէ՝ զհամբուրելն նորին զսեղանն եւ զբոլոր եկեղեցին եւ զսրբութիւնսն ամենայն, եւ զհրաժարական ողջոյնն տալն»:

Սրբազան այս արարողությունից հետո դամբանաճառերով հանդես են գալիս Հայոց եկեղեցու չորս նվիրապետական Աթոռների պետերը՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ը, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Կ. Պոլսո Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը:

Դամբանականներից հետո, երբ սարկավագը Ս. Խորանից Ս. Պատարագին մասնակցողներին հորդորում է միմյանց սուրբ համբույրով ողջույն տալ, «ամենայն ժողովուրդն համբուրեն զաջ հանգուցելոյն՝ որպէս եւ քահանայքն. եւ դնեն ի մէջ տաճարին եւ մատչի Պատարագն»:

Հավարտ Ս. Պատարագի, շարականների երգեցողությամբ, Տ. Տ. Գարեգին Ա-ի մարմինը Տաճարի արեմտյան դռնից դուրս է հանվում և թափորով, հյուսիսային կողմից պտտվելով, համապատասխան հանգրվաններով, սաղմոսների, աղոթքների ու Ավետարանական հատվածների ընթերցումներով տարվում է զանգակատան արևմտյան կողմը և դրվում «յափն գերեզմանին»:

Գերեզմանափոսի մոտ, Սուրբգրային ընթերցվածներից, քարոզներից, աղոթքներից ու շարականների երգեցողություններից հետո, «առեալ քահանային երիցս անգամ զհող ի յափն, խաչակնքէ ասելով՝ «օրհնեա՛ Տէր ողորմութեամբ Քով զհողս ծառայիս Քոյ. եւ յիշեա՛ զսա, զի հող էր՝ եւ ըստ հրամանի Քում ի հող դարձաւ»:

Եվ մինչև Վեհափառի մարմինը գերեզմանափոս իջեցնելը, հանուն ՀՀ իշխանությունների որդիական խոնարհության ու Մայր Աթոռին վշտակցության դամբանական խոսքով հանդես է գալիս ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը.

*«Սիրելի հայրենակիցներ,*

*Մեծարգո հյուրեր,*

*Այսօր սգում է հայ ժողովուրդը: Մենք մայր հողին ենք հանձնում Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու Հովվապետ, Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոս Գարեգին Առաջինի մարմինը, իսկ նրա լուսավոր հոգին երկնային խաղաղության և անմահության ճանապարհին է: Վեհափառ Հայրապետը մեր այն բացառիկ բախտավոր կաթողիկոսներից մեկն էր, որ երկարաձիգ դարերի ընդմիջումից հետո Գրիգոր Լուսավորչի գահին բազմեց հայկական անկախ պետականության պայմաններում: Այդ սրբազան առաքելությանը նա լծվեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության գահակալի 18 տարվա հարուստ փորձով, միջազգային լայն ճանաչմամբ և բարձր հեղինակությամբ:*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նրա հովվապետության տարիները թեև կարճատև եղան, բայց այդ կարճ ժամանակաշրջանի յուրաքանչյուր օրը եղավ արգասաբեր: Վեհափառ Հայրապետը մեծ իմաստությամբ և անմնացորդ նվիրումով հովվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին մեր երկրի համար պատմական ու պատասխանատու ժամանակահատվածում: Նա*



ՑԱՎԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ



ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐՈՎ



ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ
ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ ՀԵՏ

*համոզված էր, որ քաղաքական անկախությանը պետք է հաջորդի հայ ժողովրդի հոգևոր վերակերտումը:*

*Նա իր անսպառ եռանդը և ջանքերն ուղղեց հայ մարդու մեջ սիրո, հույսի և հավատի վերահաստատմանը և մեր երկրի զորացման համար մեծ նշանակություն ունեցող հոգևոր զարթոնքին: Հայրապետը ձեռնամուխ եղավ այդ նպատակների իրագործմանը իմաստունի համբերատարությամբ և հետևողականությամբ: Վերաշխուժացավ հոգևոր ճեմարանների գործունեությունը, վերանորոգվեցին բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, կառուցվեցին նորերը, վերաբացվեցին նոր թեմեր: Հովվապետական իր այցելությունների ժամանակ Վեհափառը մխիթարանք և օրհնություն բաշխեց սփյուռքահայ մեր հավատացյալ եղբայրներին աշխարհի ամենատարբեր անկյուններում գտնվող բոլոր թեմերում և մայր հայրենիքում:*

*Վեհափառ Հայրապետն իր մեծ հեղինակությամբ նոր թափ հաղորդեց Ս. Էջմիածնի էկումենիկ գործունեությանը և ամրապնդեց կապերը քույր եկեղեցիների, ինչպես նաև՝ եկեղեցիների Համաշխարհային խորհրդի հետ:*

*Վեհափառ Հայրապետի հայագիտական, աստվածաբանական, փիլիսոփայական, բարոյագիտական ուսումնասիրությունները, հայերեն և օտար լեզուներով հրատարակված բազմաթիվ գրքերը, գրական ստեղծագործությունները ժամանակակից հայ հոգևոր մշակույթի անքաժանելի մաս են կազմում և մեր հոգևոր հայրենիքի մնայուն արժեքներն են: Ի գնահատումն նրա հոգևոր և գիտական բացառիկ ծառայությունների, որպես միջազգային հեղինակություն վայելող խոշոր մտավորական, աշխարհի բազմաթիվ համալսարաններ, կրոնական ու գիտական հաստատություններ նրան շնորհել են պատվավոր դոկտորի կոչում:*

*Վեհափառն իր գործունեության ողջ ընթացքում միջազգային ամենա - հեղինակավոր ատյաններում պաշտպանեց իր ժողովրդի ազգային և մարդկային իրավունքները և ոչինչ չխնայեց նրա իղձերն ու նպատակները իրականացած տեսնելու ճանապարհին: Կրոնական և ազգային գործիչ, որ պատմական արդարության նժարին դրեց իր կյանքի խոսքը և գործը: Վեհափառ Հայրապետը Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոնական հիմնադրման 1700-ամյակը դիտում էր իբրև ողջ հայության մեջ և հատկապես՝ Հայաստանի Հանրապետությունում քրիստոնեական ավանդույթի վերանորոգման եզակի հնարավորություն:*

*Նորին Սրբություն Գարեգին Առաջին Կաթողիկոսի՝ մեծ գիտնականի, աստվածաբանի, հայրենասերի բարձր նկարագիրը հավերժ կմնա հայ ժողովրդի հիշողության մեջ»:*

ՀՀ նախագահի խոսքից հետո, Վրաց Եկեղեցու և ողջ ժողովրդի անունից հրաժեշտի ու մխիթարանքի խոսք է ասում նաև Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ն.

*«Ձերդ Գերազանցություն Հայաստանի նախագահ պարոն Ռոբերտ Քոչարյան,*

*Հայ Առաքելական Եկեղեցու Բարձրաշնորհ Սրբազան Հայրե՛ր, հոգեւորականներ, եղբայրներ եւ քույրեր:*

*Մենք ժամանել ենք Վրաստանից, որպեսզի կիսենք հայ ժողովրդի մեծ վիշտը՝ Նորին Սրբություն Ծայրագույն Պատրիարք, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մահվան կապակցությամբ: Դուք զրկվել եք իմաստուն Հայրապետից եւ հոգեւոր Հորից, իսկ Վրաստանը եւ անձամբ ես զրկվել ենք ընկերոջից եւ իմաստուն եղբորից:*

*Անքննելի ու անհասանելի է Աստծո կամքը: Ես ուրախալի առիթ եմ ունեցել բազմիցս հանդիպելու Նորին Սրբություն Գարեգին Ա-ին այն ժամանակ, երբ մեր երկրները դեռեւս գտնվում էին Խորհրդային Միության կազմում: Այն ժամանակ նա եռանդուն միաբանն էր եւ ապա նաեւ Կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո: Միջազգային տարբեր ժողովներին ու հավաքներին նա միշտ հանդես էր գալիս ի պաշտպանություն ողջ հայ ժողովրդի իրավունքների: Ավելի քան քսան տարի նա կրեց ծանր խաչը՝ սկզբում որպես Մեծի Տանն Կիլիկիո, ապա որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Նա լավ գիտեր Վրաստանի պատմությունը եւ մեր մշակույթը, միշտ աշխատում էր մեզ հետ բարեկամական հարաբերություններ պահպանել: Արժանահիշատակ է հետեւյալ օրինակը: Երբ Գարեգին Ա-ն ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր առաջին արտասահմանյան ուղեւորությունը կատարեց Վրաստան: Նրա այցը Վրաստան եւ իմ այցը Հայաստան շատ մերձեցրին մեզ ու մեր ժողովուրդներին: Մենք կրկին զգացինք, որ միմյանց ավելի մոտ ժողովուրդներ չկան, ինչպես հայ եւ վրաց ժողովուրդները: Մենք կրկին գիտակցեցինք, որ ե՛ւ փորձությունների, ե՛ւ ուրախությունների պահին մենք միշտ եղել ենք եւ կլինենք միմյանց կողքին: Բնավ պատահական չէ, որ մեր ժողովուրդների հնագույն ժամանակագրությունները ասում են, որ մեր նախնիները՝ Հայոսը եւ Քարթլոսը, եղբայրներ էին: Անմոռանալի կմնա մեր հանդիպումն անցյալ տարի Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Նա այնտեղ արդեն բուժվում էր եւ, իմանալով ԱՄՆ կատարած իմ այցի մասին, ցանկություն հայտնեց հանդիպելու ինձ: Մենք կլոր սեղան կազմակերպեցինք եւ ՄԱԿ-ի ներկայացուցիչների ներկայությամբ զրուցեցինք այն հարցերի շուրջ, որոնք հետաքրքրում էին ե՛ւ Հայաստանին, ե՛ւ Վրաստանին: Մեր հանդիպումը կրկին փաստեց մեր հայացքների միասնությունը:*

*Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն արժանավոր հաջորդն էր մեծ Կաթողիկոսներ Գեւորգ Զ-ի, Վազգեն Ա-ի եւ այլոց: Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի գործերն ու սխրանքներն արժանավորապես կգնահատվեն հայ ժողովրդի կողմից եւ բոլոր նրանց, ովքեր անձամբ ճանաչում էին նրան:*

*Մենք կրկին անգամ բերում ենք մեր անկեղծ ցավակցությունները ողջ հայ ժողովրդին:*

*Մենք առ Աստված ենք վերառաքում մեր աղոթքները, որպեսզի Տերը հանգստություն պարգեւի նրա հոգուն այնտեղ, որտեղ գտնվում են Հայ Առաքելական Եկեղեցու մեծ եւ փառապանծ Հայրապետները»:*

*Դամբանականներից հետո հանդիսապետը «արկանէ զհողն ի գերեզմանն խաչանման»: Այնուհետեւ «Տէր հովուեսցէ զիս» սաղմոսի ընթերցումով «իջուցանեն զննջեցեալն ի գերեզմանն»: Այնուհետեւ «դարձեալ հող օրհնէ քահանայն երեք անգամ, եւ արկանէ խաչաձեւ ի վերայ մարմնոյն՝ ասելով. «Օրհնութիւն Աստուածային իջցէ ի հող մահու սորին, եւ բուսուսցէ յօրն վերջին, անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:*



«ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԻՋՑԷ Ի ՀՈՂ ՄԱՀՈՒ ՍՈՐԻՆ»

Այս ամենից հետո, «Ողորմած Աստուած» սաղմոսասացությամբ, «ծածկեն լիապէս զգերեզմանն», և համաձայն ընդունված կարգի Վեհափառ Հայրապետի շիրիմին այցելող հավատացյալ ժողովուրդը յոթ օր շարունակ բուռ առ բուռ լցվող հողով ամբողջացնում է ի Տեր ննջեցյալ Հայրապետի հողաթումբը:

## ՀՈԳԵՃԱՇ «ԱՐՄԵՆԻԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան, «Արմենիա» հյուրանոցում տրվեց հոգեճաշ ի հիշատակ Գարեգին Վեհափառի:

Այստեղ հանուն Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Ամբա Շենուդա Գ Պատրիարքի խոսք ասաց Պատրիարքի պաշտոնական ներկայացուցիչ Ամբա Բիշոյը.

*«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:*

*Ձերդ Վսեմափայլություն Հայաստանի Նախագահ, Գերապատիվ Տեղապահ Սրբազան Հայր, Ձերդ Սրբություն Ամենապատիվ Պատրիարք Հայրեր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր, քույրեր և եղբայրներ:*

*Հանուն Նորին Սրբություն Շենուդա Գ Պապի և ողջ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու ցանկանում եմ արտահայտել մեր վիշտը Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի՝ մեր Եկեղեցու սիրեցյալ բարեկամի վախճանման կապակցությամբ:*

*Մեր Պատրիարք Նորին Սրբություն Շենուդա Գ Պապը 1995 թ. Սբ. Էջմիածնում մասնակցել է գահակալության արարողությանը: Գարեգին Ա Կաթողիկոսը, իր հերթին, այցելել է Եգիպտոս և Ղպտի Ուղղափառ Եկեղեցի ու 1998 թ. հունվարի 18-ին Շենուդա Գ Պապի հետ միասին ստորագրել համատեղ հայտարարություն, որտեղ ասվում է. «Որքան մխիթարական էր մեկ անգամ ևս հաստատել մեր քրիստոնեական հավատքի միությունը, որ հավատարմորեն պահպանվել է անցյալ բոլոր դարերի ընթացքում և որը հիմնված է Սուրբ Գրքի վրա, վաղ եկեղեցական ավանդության վրա, ինչպես որ բանաձևված է առաջին երեք Տիեզերական ժողովների կողմից, որ է՝ Նիկիա (325), Կոստանդնուպոլիս (381) և Եփեսոս (431): Մենք վերանորոգում ենք մեր հանձնառությունը՝ ավելի շոշափելի արտահայտություն հաղորդելու այդ միությանը մեր եկեղեցիների կյանքի և վկայության մեջ, հավատարիմ հնազանդությամբ մարմնացյալ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կամքին և ի շարունակություն մեր եկեղեցու հայրերի սրբազան ավանդության ուղղափառ ավանդին:*

*Մենք գոհություն և փառք ենք վերառաքում Սուրբ Երրորդությանը՝ մեր սրբերի և նահատակների սրբագործված կյանքի և խոսուն ուսմունքի անցյալ դարերում՝ մեր Ղպտի և Հայ Ուղղափառ եկեղեցիներն օրհնելու և հավատքի միության անսասանելի ու անխափան շարունակության համար, որը «մեկընդմիշտ տրվեց Սրբերին» (ՅՈՒԴԱ Ա 3), և մեր սիրեցյալ ժողովուրդների հոգևոր պայծառության համար: Մենք հանձն ենք առնում ավելի տեսանելի և*

*խոսուն ձևերով խթանել Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ընտանիքում մեր եկեղեցիների սերտ համագործակցությունը, տեղական, շրջանային և համաշխարհային մակարդակների վրա էկումենիկ շարժման մեր մասնակցության մեջ, ավելի ակտիվորեն առաջ տանել մեր ընդհանուր խնդիրը ժամանակակից աշխարհի նոր մարտահրավերներին ընդառաջ և դիմագրավելու մեջ, երբ իր ավարտին մոտեցող այս դարում կյանքի ծայրահեղ աշխարհիկական հակումները այնքան խորապես ազդում են մեր ժողովուրդների բարոյական և ընկերային կյանքի վրա: Քրիստոնեական հույսով մենք նայում ենք մեր քրիստոնեական պատմության երրորդ հազարամյակի արշալույսին և ջերմորեն աղոթում մեր Տիրոջը, որպեսզի այն վերածի ավելի մեծ հոգևոր վերանորոգության մի ժամանակաշրջանի»:*

*Հանգուցյալ Կաթողիկոսը մի քանի տարիների ընթացքում կարևորեց էջմիածնի ճեմարանի դերն ու նշանակությունը և վերակազմավորեց Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի աշխատանքները: Նա նաև կարևոր դեր է խաղացել 2001 թ. Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակմանը նվիրված հնգամյա տոնակատարությունների ծրագրի հաստատման գործում:*

*Նորին Սրբություն Շենուդա Գ Պապի, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի և էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի սերտ գործակցության նշաններից մեկը Նորին Սրբություն Շենուդա Գ Պապի՝ 1954 թ. վանական դառնալու նպատակով եգիպտական անապատ հեռանալուց անմիջապես առաջ գրված առաջին և հանրահայտ «Հոգու Ազատագրում» գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակությունն է: Նորին Սրբություն Շենուդա Գ Պապն առ այսօր հրատարակել է շուրջ 100 գիրք, որոնցից շատերը թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով:*

*Եգիպտոսում մենք պետք է միշտ հիշենք, որ Հայոց Եկեղեցին հետևել, պաշտպանել և պահպանել է Սբ. Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական ուսմունքը: Նմանապես Սբ. Գրիգոր Լուսավորիչը մեծապես պաշտվում է Ղպտի Ուղղափառ Եկեղեցու վարդապետության և պաշտամունքի մեջ:*

*Մաղթում եմ սիրեցյալ Հայաստան երկրին և Եկեղեցուն հզոր ապագա»:*

Այնուհետև հանուն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի հիշատակի խոսք ասաց Սասիմայի միտրոպոլիտ Գենադիոսը.

*«Ձերդ Սրբազնություն Ներսես արքեպս. Պոզապալյան, Կաթողիկոսական Տեղապահ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի,*

*Հարգարժան Սրբազան Հայրեր, պետական այրեր և ներկայացուցիչներ, սիրելի միաբաններ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, սիրեցյալ եղբայրներ և քույրեր,*

*Հայ Առաքելական Եկեղեցու Հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սբ. Էջմիածինն այսօր վերջին հրաժեշտն է տալիս իր հոգևոր առաջնորդին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարքին և Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ դեպի հավերժություն նրա ճանապարհից առաջ:*

*Ես պատիվն ունեմ ներկայացնել Նորին Սրբություն Բարդուղիմեոս Տիեզերական Պատրիարքին և Կ. Պոլսի Սուրբ Եկեղեցին, ինչպես նաև Անտիոքի Հույն Ուղղափառ Եկեղեցու Նորին Սրբություն Իգնատիոս*

*Պատրիարքին:*

*Իմ խոնարհ անձի միջոցով Բարդուղիմեոս Տիեզերական Պատրիարքը խոր ցավ և վիշտ է հայտնում իր սիրեցյալ եղբոր ի Քրիստոս և բարեկամի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան կապակցությամբ: Տիեզերական պատրիարքն իր սրտանց ցավակցությունն է հայտնում Կաթողիկոսական Տեղապահ Նորին Սրբազնություն Ներսես արքեպս. Պոզապալյանին, Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալներին, բարեպաշտ հոգևոր դասին և ողջ հայ ժողովրդին համայն աշխարհում, և իր աղոթքներում առ Աստված հայցում, որ երկու հինավուրց եկեղեցիների միջև սերտ և բարեկամական փոխհարաբերությունները և աստվածաբանական երկխոսությունները շարունակվեն՝ սրբազան նպատակ հետապնդելով օրերից մի օր միավորել Աստծո կամքն արտահայտող մեկ ընտանիքում:*

*Գարեգին Կաթողիկոսը, մեզանից հեռանալով՝ Աստծո հավիտենական արքայությանն արժանանալու համար, կդասվի երկնային սրբերի շարքը, իսկ նրա հոգին հանգիստ կգտնի Աբրահամի գրկում, որտեղ չկա ո՛չ ցավ, ո՛չ վիշտ, ո՛չ էլ տառապանք, այլ կա հավիտենական կյանք:*

*Այսօր համայն աշխարհի հայությունը, այստեղ ներկաները, հեռավոր ափերում գտնվողները, միասնական աղոթքի համար եկածները, առաջնորդները տարբեր Ուղղափառ Եկեղեցիների, Քրիստոնյա Եկեղեցիների, դավանական հարանվանությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները և բարեկամները հավաքվել են այս պատմական վայրում՝ սրբավայր Էջմիածնում աղոթելու ականավոր անհատի և հոգևոր առաջնորդի համար:*

*Տիեզերական Պատրիարքությունում մենք պահպանում ենք ջերմ հիշողություններ՝ կապված Գարեգին Կաթողիկոսի վերջին այցի հետ՝ Կ. Պոլսի Սուրբ Եկեղեցի, և Բարդուղիմեոս Տիեզերական Պատրիարքի պատասխան այցի հետ՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, Ամենայն Հայոց Կաթողիկոսություն: Բոլորս էլ հիշում ենք Գարեգին Կաթողիկոսի բարությունը, սերը և եղբայրական բարեկամությունը:*

*Իբրև աշխարհասփյուռ Հայ Առաքելական Եկեղեցու քահանայապետ, Գարեգին Ա-ի խոսքը հստակ և ազդեցիկ էր եկեղեցական շրջանակներում: Նրա ընտրությունն իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս գագաթնակետը եղավ նրա հոգևոր պաշտոնակալության, որի ընթացքում Գարեգին Կաթողիկոսը երկար տարիներ ծառայեց որպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, կարկառուն գիտնականի համբավ վաստակեց, առաջատար դեր ստանձնեց էկումենիկ ասպարեզում:*

*Շատերը կհիշեն նրա գործուն մասնակցությունը միջազգային համաժողովներին, հանդիպումներին և էկումենիկ հավաքներին, մշտապես խաղաղ ժպիտը դեմքին, կհիշեն նրա համեստությունը, նրա մեծ խանդավառությունը և լավատեսությունը: Բազում տարիներ Գարեգին Կաթողիկոսը ծառայեց միջեկեղեցական տարբեր մարմինների բարձր և ղեկավար պաշտոններում. նախ՝ Եկեղեցիների Միջինարևելյան Խորհրդում, ապա՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում, եղավ նաև մեկը նրա ատենապետներից:*

Հոգևոր հարստությամբ արմատավորված խոր քրիստոնեական հավատքով օժտված և Սուրբ Հոգով առաջնորդվող այս մեծ էկումենիկ ռահվիրան մեզ տվեց հոգևոր և էկումենիկ բնույթի բազմաթիվ աշխատություններ և հրապարակախոսական գործեր: Դրանցից մի քանիսն անմիջականորեն առնչվում են ուղղափառ դիլեմային, մյուսները՝ հարակից հարցերին, և բոլորն էլ մատնանշում այն ուղին, թե ինչպես հինավուրց քրիստոնեական մի ավանդություն՝ Հայ Առաքելական եկեղեցին, կարող է սերմանել խոհեմություն, իմաստություն և, ընդհանրապես, գլխավորել էկումենիկ շարժումը:

Գարեգին Կաթողիկոսը ստանձնեց իր՝ Հայ Առաքելական եկեղեցու հովվապետական ծառայությունը խոր պատասխանատվության զգացումով և հավատով՝ մատնանշելով մեր Տիրոջ վարդապետության հոգևոր ակունքներն իբրև ողջ մարդկության հույսի, սիրո, տոկունության, հաստատակամության և վերանորոգման աղբյուր: Նրա մղած խիզախ և համոզված պայքարի նպատակն էր հաղթահարել անցյալի բաժանումներն ու թշնամանքը և նպաստել եկեղեցու միասնականության հաստատմանը, ինչի համար մենք բոլորս աղոթում ենք: Նրա վերջին ժողովածուն՝ « ... Եվ օրորվում է նավը ալիքների վրա», անցյալ տարի լույս տեսավ Նյու Յորքում:

Շուրջ մեկ տարի տևած տառապանքներից հետո Գարեգին Կաթողիկոսը հեռացավ, ինչպես Բարդուղիմեոս Պատրիարքը նշեց, «իր սեփական նավով»՝ լի ապագայի, մոտեցող նոր հազարամյակի նկատմամբ հույսերով ու տեսիլքներով: Անցյալ տարի իր ելույթներից մեկի ժամանակ Գարեգին Կաթողիկոսն այն եզրափակեց հետևյալ մարգարեական խոսքերով՝ 2001 թ. Հայ Առաքելական եկեղեցու «ծննդյան» 1700-ամյակի տեսիլքի մասին. «Ես փառք և գոհություն եմ հայտնում առ Աստված, որ Հայաստանը՝ Բիբլիական Արարատ լեռան փոքրիկ երկիրը, Գեթսեմանիի և Գողգոթայի տառապանքները կրելուց հետո, Աստծո ողորմածությամբ հարություն առավ, ազատություն և անկախություն ձեռք բերեց: Եվ ես աղոթում եմ, որ քրիստոնյա աշխարհը ուղի փնտրի՝ հաղորդակցվելու Հայաստանի փոքրաթիվ հոտի հետ և ակտիվորեն մասնակցելու 1700-ամյա հոբելյանի տոնակատարությանը, տեսնելու մեր եկեղեցին վերանորոգման և վերածննդի նոր դարաշրջանի նախաշեմին: դա կլինի իմ ժողովրդի լավագույն ժամը: Եկեք դիմագրավենք այդ մարտահրավերը»:

Գարեգին Կաթողիկոսն այլևս մեզ հետ չի լինի իր եկեղեցու հանդիսավոր հոբելյանական տոնակատարությունների այդ տարում, սակայն միշտ ներկա կլինի մեր աղոթքներում:

Թող մեր ճշմարիտ Աստված՝ Հիսուս Քրիստոսը, որ հարություն առավ մեռելներից և որպես անմահ թագավոր իշխում է ողջերի և ննջեցյալների վրա, գթա մեզ և հավիտենական հանգստություն պարգևի Գարեգին Ա Կաթողիկոսի հոգուն արդարոց դասում:

Թող հավերժ լինի Ձեր հիշատակը, Ձերդ Սրբություն Գարեգին Կաթողիկոս, քանզի Դուք արժանի եք օրհնության և հավերժության՝ մեր հուշերում»:

## ՀՈՒԼԻՍ 14
## ՊԱՇՏՕՆ ՅՈԹՆՕՐԵՔԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

*«Երթան ի գերեզմանն... և հող լինին ի վերայ գերեզմանին»:*
*/ՄԱՇՏՈՑ/*

Յուլիսի 14-ին, ժամը 12.00-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Մայրավանքի միաբանների մասնակցությամբ, կատարվեց երջանկահիշատակ Տ.Տ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի մահվան յոթնօրեքի կարգը՝ նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի: Յոթնօրեքի հոգեհանգստյան պաշտոնին մասնակցում էին նաև Գևորգյան Հոգևոր ճեմարանի մի խումբ սաներ, պաշտոնատար անձինք, հյուրեր, հավատացյալներ և այլոք:

Վեհափառ Հայրապետի հողադամբարանի առջև, սահմանյալ հոգեթով երգերի կատարումից հետո, «հող լինին ի վերայ գերեզմանին /որպէս և յանցեալ աւուրսն/», որով յոթերորդ օրը՝ հողադամբարանի հողով ծածկվելու լրման օրն է:

Այնուհետև Սուրբգրային համապատասխան ընթերցվածքներից հետո, Կաթողիկոսական Տեղապահը կարդում է «Հայր Երկնաւոր փրկիչ և ողորմած» աղոթքը, որն ընթերցվում է միմիայն այն դեպքում, երբ «վախճանեալն Հայրապետ կամ առաջնորդ իցէ»: Սրբազան Հոր ընթերցած աղոթքի մեջ, կարծես, խտացել էին այն բոլոր խնդրանքներն ու աղերսները, որոնք ալեկոծում և փոթորկում էին «անբիծ ու անարատ Հայրապետ» կորցրած հավատավոր հայորդիների սրտերն ու հոգիները. «Շնորհեա՛ սմա լինիլ ընդ սուրբս Քո համապաց, և գժողովուրդս Քո յանձն արա՛ ուղղափառ Հովուի՛ գի հովուեսցէ յերկիւղդ Քո սուրբ: Եւ զտեղի բնակութեան սորա պահեա՛ անդրդուելի յերնելի և յաներևոյթ թշնամւոյն՝ մինչև յօր կրկնակի գալստեան Քոյ: Եւ գժողովուրդս Քո օրհնեա՛ և մխիթարեա՛...» /«Կանոն Եօթներորդ աւուրն»/:

Յոթնօրեքի կարգից հետո, Տեղապահ Սրբազան Հայրն իր մխիթարական խոսքն է հղում Վեհափառ Հայրապետի հողադամբարանի շուրջ հավաքված բազմությանը:

## ՀՈՒԼԻՍ 22
## ՊԱՇՏՕՆ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐՎԱ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

Հայոց Եկեղեցու «Կարգ Թաղման կարգաւորացս» կանոնի համաձայն, հանգուցյալ եկեղեցականի մահվան տասնհինգերորդ օրը ևս կատարվում է հատուկ պաշտոն:

Սիավասիկ հուլիսի 22-ին, ժամը 12.00-ին, մասնակցությամբ Մայրավանքի միաբանների, Գևորգյան Հոգևոր ճեմարանի մի խումբ սաների և

նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, կատարվեց հոգելույս Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի մահվան տասնհինգերորդ օրվա կարգը. «Երթան ի գերեզմանն, և ասեն զԱմբիծսն, և զճարական հանգստեան ի ձայնէն»: Այնուհետև Սուրբգրային համապատասխան ընթերցվածքներից հետո, սարկավագի կողմից ասվում է «Վասն ցտանելոյ» քարոզը: Քարոզից հետո, օրվա հանդիսապետը՝ Կաթողիկոսական Տեղապահին ընթերցում է «Հնգետասան աւուրն Կանոն»-ի հատուկ աղոթքը. «Դու Տէր և այժմ օրհնեա՝ զտեղի բնակութեան սորա, և զոսկերս սորա պահեսցես անապական և անվնաս ամենազօր աջով Քով սրբով, և հոգւոյ սորա առաջնորդեսցես յերկիր ուղիղ: Զի ընդ սուրբս Քո փառաւորեսցէ զՔեզ Քրիստոս, ընդ Հօր և Սուրբ Հոգւոյդ...: ...Տու՛ր մեզ Տէր և այժմ աղաչեմք զՔեզ, հոգի զգաստութեան, հոգի մխիթարութեան, և մխիթարեալ սփոփեա՝ զվշտագնեալս սրտիւք...»:

Հավարտ Տասնհինգերորդ օրվա կարգի, Տեղապահ Սրբազանն իր սրտի խոսքն ուղղեց սրբազան արարողությանը ներկա հավատավոր հայորդիներին:

*«Յիշեա՛ Տէր, զհոգի երանաշնորհ հանգուցեալ Հայրապետին մերոյ, եւ հանգո՛ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան Քոյ». ամեն, եղիցի, եղիցի:*

*ԱՐԹՈՒՐ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
*Գևորգյան Հոգևոր ճեմարանի*
*Ե լսարանի սան*

# ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔԵՐ

# ԳԱՐԵԳԻՆ Ա

# ՎԵՀԱՓԱՌԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ

# ԱՌԻԹՈՎ

***ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ Ա***

***Կ. Պոլսի Տիեզերական պատրիարք***

# ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ*

Ձերդ Ամենապատվություն,

Սիրեցյալ քույրեր և եղբայրներ ի Տեր,

Այսօր մենք հավաքվել ենք այստեղ՝ Հայոց Պատրիարքարանի պատմական այս Տաճարում, որպեսզի աղոթենք և հարգենք Աստծո Արքայություն փոխադրված հանգուցյալ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի հիշատակը: Գարեգին Կաթողիկոսը սիրեցյալ եղբայր և ընկեր էր ի Քրիստոս, և մենք բացառիկ հնարավորություն ենք ունեցել ճանաչելու և երկար տարիներ շարունակ տարբեր առիթներով անձնապես հանդիպելու իրեն՝ առաջին անգամ իբրև Կիլիկիո Կաթողիկոս, ապա՝ իբրև Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս: Մեր մեջ դեռևս թարմ են Ստամբուլի Մայր եկեղեցի իր վերջին այցելության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կատարած մեր փոխադարձ այցելության ջերմ հիշողությունները: Մենք հատկապես հիշում ենք իր սիրալիրությունը, իր սերն ու բարեկամությունը:

Իբրև աշխարհասփյուռ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Առաջնորդ, Գարեգին Կաթողիկոսը եկեղեցական շրջանակներում պարզության և եռանդի ծայնն էր, և իր ընտրությունը, որպես Ծայրագույն Պատրիարք, բարձրակետն էր փայլուն այն գործունեության, որի ընթացքում նա երկար ժամանակ ծառայեց իբրև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս՝ տարածելով իր գիտական համբավն ու էկումենիկ ասպարեզում բերելով իր ակնառու առաջնորդությունը:

Շատերը պիտի հիշեն նրան ժողովներին և միջազգային համագումարներին մասնակցելիս, իր ժպիտով, իր խոնարհությամբ և իր մեծ եռանդով: Տարիներ շարունակ Գարեգին Կաթողիկոսը զբաղեցրել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ղեկավար մարմինների բարձր և պատասխանատու պաշտոնները: Նա եղել է ԵՀԽ-ի համանախագահներից մեկը:

Էկումենիկ այս մեծ ռահվիրան, Տիրոջ հոգեկանության լիության մեջ արմատացած խորը քրիստոնեական հավատքով և Սուրբ Հոգու առաջնորդությամբ մեզ զգալի թվով էկումենիկ գրվածքներ և աշխատանքներ մատուցեց: Դրանցից ոմանք ուղղված են կոնկրետ Ուղղափառության դիլեմային, ուրիշներն առնչվում են ածանցյալ խնդիրներին, բայց բոլորն էլ ներկայացնում են այն ճանապարհը, որով հնագույն քրիստոնեական ավանդությունը, այս դեպքում՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, կարող է ընդհանուր էկումենիկ շարժմանը մատուցել իմաստություն և առաջնորդություն:

Գարեգին Կաթողիկոսը ծառայեց Քրիստոսի Եկեղեցուն իր առաքելության և հավատքի անմնացորդ նվիրվածությամբ, իբրև հույսի աղբյուր, սիրո և համբերության, հաստատակամության և համայն մարդկության վերանորոգության, մեր Տիրոջ վարդապետության ընտրյալ անոթ: Նա քաջությամբ և համոզումով պայքարեց այն նվիրական նպատակի համար, որ քրիստոնեու-

* Խոսված Գումգափուի (Ստամբուլ) հայոց Պատրիարքանիստ Սուրբ Աստվածածին եկեղեցում՝ հունիսի մեկին:

թյունը պետք է հաղթահարի անցյալի իր բաժանումներն ու թշնամությունները և փնտրի եկեղեցու միությունը, որի համար մենք բոլորս աղոթում ենք:

Էկումենիկ համայնքին ուղղված հոդվածների իր վերջին ժողովածուն, որը հրատարակվել է անցյալ տարի Նյու Յորքում, վերնագրված է «Եվ նավակը շարժվում էր ալիքների վրա»: Իր հիվանդության պատճառած անձնական տառապանքի շրջանից հետո, նա մեզանից դեպի խաղաղություն հեռացավ «իր սեփական նավակով» լի ապագայի հույսերով և տեսիլքներով նոր հազարամյակին մեր մոտենալու ընթացքին:

Տիեզերական Պատրիարքության և անձնապես մեր անունից արտահայտում ենք մեր խորը վիշտն ու անկեղծ ցավակցություններն իր եկեղեցուն, իր առաջնորդներին, իր հոգևորականներին և Աստծո ողջ հայ ժողովրդին ամբողջ աշխարհով մեկ:

Մենք ամենքս սրտանց աղոթում ենք մեր միակ Տիրոջն ու ճշմարիտ Աստծուն, Որը հարություն է առել մեռելներից և որպես Անմահ Թագավոր իշխանություն ունի ողջերի և մեռյալների վրա, որպեսզի Նա մեզանից հեռացած Գարեգին Կաթողիկոս Պատրիարքի հոգին հաստատի երկնաբնակների մեջ, որպեսզի Նա հանգիստ տա իրեն Աբրահամի գոգում և դասի արդարների թվում:

Թող Քո հիշատակը, սիրեցյալ եղբայր Գարեգին Կաթողիկոս-Պատրիարք, լինի հավերժ, քանզի Քեզ վայել է երանություն և անմահ հիշատակ: Ամեն:

*Այս Ի դարի մեր փորձառությամբ մեր էկումենիկ առաքելությունը իր բոլոր ամենաարժեքավոր նվաճումներով հանդերձ տառապել է մի տեսակ վախից, որը որպես մասնավոր Եկեղեցիներ ինքնությունը կորցնելու վախն է: Տիեզերականությունն ու անջատողականությունը ներքնապես ու լուռ պատերազմի մեջ են եղել իրար դեմ էկումենիկ շարժման մեջ ներգրավված մեզանից շատերի և շարժման մեջ ընդգրկված մեր շատ Եկեղեցիների մեջ: Մեր հիմնական խնդիրն այսօր կայանում է այդ ճեղքվածքը կամրջելու և այդ երկուսը փարատելու մեջ: Ես անձնապես զգում եմ, որ մենք պետք է մի ըմբռնողություն, մի աստվածաբանություն զարգացնենք, որտեղ մասնավորը տեսանելի ու կենդանի է միապես տիեզերականի մեջ: Մասնավորը միշտ լինելու է մեզ հետ մեր մարդկային վիճակի պատճառով: Ան Աստծո արարչագործության մասն է: Մարդկային էակները միմյանց հետ նույնական չեն: Մեր Տիրոջ աշակերտները նույն արժանիքի, նույն մտքի, նույն հոգու, նույն մարդկային ձևավորման տեր չէին: Զանազանությունը, անգամ տարաձայնությունները, անհամաձայնությունները, վեճերը վաղ քրիստոնյաների կյանքի մասն էին: Երբ մենք խոսում ենք առաջին չորս դարերի «Զբաժանված Եկեղեցու» մասին, մենք պատմականորեն միաձև Եկեղեցի չենք պատկերացնում: Ներքին վեճերը, անգամ հերձվածները մասն էին այդ մեկ «չբաժանված Եկեղեցու»: Սակայն տիրապետող գիտակցությունը, որ Եկեղեցին մեկ էր պահում, Մեկ Քրիստոսի, Մեկ Եկեղեցու պատկանելու գիտակցությունն էր:*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

*«Էջմիածին»*, 1997, Զ-Է, էջ 47:

*ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ*
*Հայրապետական Պատվիրակ Կենտրոնական*
*Եվրոպայի և Սկանդինավյան երկրների*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

4 Ապրիլ 1995 թ. ճակատագրական թուական մը Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ, յատկապէս Հայաստանի Հանրապետութեան նոր Անկախութեան շրջանին:

Ընտրութենէն կարճ ժամանակ ետք՝ Հանրապետութեան նախագահ Տիար Լեւոն Տէր-Պետրոսեան հասաւ Մայր Աթոռ՝ շնորհաւորելու նորընտիր Կաթողիկոսին Ամենայն Հայոց: Նախագահը իր շնորհաւորական խօսքին մէջ ըսաւ. «Վեհափառ Տէր, մենք մեր կեանքը միասնաբար մապաղ պիտի անենք հայ ժողովրդի համար»: Եւ յիրաւի 1998 թ. փետրուարի սկիզբը, Լ. Տէր-Պետրոսեան եօթը տարուան զոհաբերական եւ բազմարդիւն գործունէութենէ ետք՝ ի նպաստ նորանկախ եւ ազատ Հայրենիքին, պարագաներու ստիպմամբ հրաժարեցաւ նախագահական պաշտօնէն եւ միեւնոյն տարուան Ապրիլին՝ ի յայտ եկաւ Գարեգին Կաթողիկոսի սպառիչ եւ մաշեցնող հիւանդութեան սարսափազդու նախանշանը:

Իսկապէս զոհողութիւն էր հանգուցեալ Հայրապետին համար՝ թողուլ Անթիլիասի հանգստաւէտ պայմանները եւ գալ ստանձնել Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ծանրակշիռ պատասխանատուութիւնը: Անկասկած միաժամանակ մեծ եւ բացառիկ փառք է ռեւէ Հայու համար՝ բազմիլ Լուսաւորչի Նուիրական Գահին վրայ եւ ընդունիլ համայն հայ ժողովրդի եւ այլ եկեղեցիներու ներկայացուցիչներու խորին յարգանքը:

Յանձին վախճանեալ Գարեգին Ա. Կաթողիկոսի՝ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին կորսնցուց բարձրագոյն աստիճանի հոգեւորականը: Հայ Նուիրապետութեան գլուխն ու առաջնորդը վաղաժամ եւ անխնայ մահով զգետնուեցաւ, ինչպէս մարտնչող զօրավար մը, որ ճակատամարտի ընթացքին կ'իյնայ պատերազմի դաշտին վրայ: Չորս տարիներու կարճ միջոցին, նա եղաւ փայլուն ղեկավար մը, որ գիտակից էր իր դիրքին, պաշտօնին եւ պատասխանատուութեան եւ այդ պատճառաւ կը շարժէր եւ կը գործէր մեծ զգուշութեամբ եւ հեռանկայ տեսիլներով: Իր տեսիլներէն մին էր բնականօրէն՝ Հայ Եկեղեցւոյ միասնականութեան իրականացումը. եթէ այս մարզի մէջ յաջողութիւն չարձանագրեց, պատճառը անկամեցողութիւնը չէր, այլ կանխահաս մահը, որ անակնկալի բերաւ զինք եւ հայ ժողովուրդը:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահուամբ՝ Հայ Եկեղեցին եւ Հայ ժողովուրդը կորսնցուցին իսկական Հայրապետ մը, իրական հոգատար հայր



ՄԻ ԿԱՄՔ, ՄԻ ՀՈԳԻ

մը: Նա հայրն էր իր հօտին, Մայր Աթոռոյ Միաբանութեան, Հայ Եկեղեցւոյ հոգեւորականութեան, սարկաւագներէն մինչեւ արքեպիսկոպոսները: Նա խնամատար հայրն էր Հայ Ազգին՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի. իր հովուապետութեան կարճ ժամանակամիջոցին այցելեց Արտասահմանի համարեա բոլոր մեծ ու փոքր համայնքները եւ յօգուտ հայապահպանութեան՝ նոր աւիշ ներարկեց ժողովուրդին: 1997 թ. Յունիս ամսուն՝ Համաեւրոպական էքիւմենիկ Բ. համաժողովին առթիւ, պատիւ ընծայեց նաեւ Աւստրիոյ գաղութին եւ իր խօսքերով մեծ մխիթարութիւն եւ քաջալերութիւն պարգեւեց տեղւոյն հայութեան: Գրաց քաղաքի մէջ Համաժողովին իր արտասանած ճառը՝ արժանացաւ հանրութեան, յատկապէս բարձրաստիճան հոգեւորականներու եւ աստուածաբաններու բացառիկ գնահատութեան: 2 Յունիս 1999 Վիեննա Հայոց Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնի պահուն, Կարդինալ Դր. Քրիստոֆ Շէօնբոռն իր վշտակցական խօսքին եւ նախկին Կարդինալ Դր. Ֆրանց Քէօնիգ իր նամակին մէջ՝ կարեւորութեամբ յիշեցին Գարեգին Ա Վեհափառի Գրացի ճառը եւ առ այդ յայտնեցին իրենց երախտագիտութիւնը:

Վախճանեալ Հայրապետը հետեւելով Վազգէն Ա. Կաթողիկոսի օրինակին՝ հանդիսացաւ նաեւ ուշադիր եւ մտահոգ հայր մը Երեւանի Ձեռագրաց ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ-ին եւ Հայոց աշխարհին հինաւուրց վանքերուն եւ եկեղեցիներուն համար: Քրիստոնէութեան Հայաստանի մէջ պաշտօնական կրօնք հռչակման 1700-ամեակի տօնակատարութեան առնչութեամբ ապահովեց շուրջ 45 կիսաքանդ վանքերու նորոգութիւնը եւ խթանեց ու կազմակերպեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի կառուցումը: Մայր Աթոռոյ Դպրեվանքը այն գլխաւոր հաստատութիւնն էր՝ որու վրայ իր ուշադրութիւնը կեդրոնացուցած էր Գարեգին Ա. Կաթողիկոս: Այդ մեծ ուշադրութեան եւ հոգատարութեան արդիւնքն էին Գեւորգեան Ճեմարանի նորոգութիւնը եւ Դպրեվանուց բարոյական եւ կրթական-ուսումնական բարեփոխութիւնը, որովհետեւ նա համոզուած էր թէ եկեղեցւոյ բարեկարգութիւնը կը սկսի հոգեւորականութեան բարենորոգութեամբ:

Գարեգին Վեհափառ Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ պիտի յիշուի մանաւանդ որպէս բազմարդիւն մտաւորական: Արդէն որպէս երիտասարդ վարդապետ սկսած էր յօդուածներու եւ գիրքերու հրատարակութեան եւ այդպէս շարունակեց մինչեւ իր վախճանումը՝ հրապարակելով ուսումնասիրութիւններ՝ հայ շարականներու, աստուածաբանութեան եւ պատմութեան մասին: Մեծ է իր վաստակը՝ մասնաւորաբար քարոզի մարզին մէջ. որպէս ճարտասան եւ հռետոր՝ խօսած է եւ հրատարակած հարիւրաւոր քարոզներ եւ ճառեր՝ հմայելով ունկնդիրներն ու ընթերցողները:

Անուրանալի է նաեւ վախճանեալին արգասաւոր գործունէութիւնը՝ էքիւմենիկ շարժման մէջ: Մասնակցած է բազմաթիւ միջեկեղեցական ժողովներու, ղեկավարած համագումարներ եւ յանձնախումբեր եւ կարդացած ուշագրաւ դասախօսութիւններ: Որպէս Կաթողիկոս նախ Մեծի Տանն Կիլիկիոյ եւ ապա Ամենայն Հայոց Հայրապետութեան՝ հանդիպումներ եւ խորհրդակցութիւններ ունեցաւ քրիստոնեայ հոգեւոր պետերու հետ եւ բացատրեց ու

պանծացուց Հայ Եկեղեցւոյ դաւանական դիրքը եւ աւանդութիւնները: 1996 թ. Դեկտեմբեր 13-ին երբ նա Ն.Ս. Յոհաննէս-Պաւղոս Բ. Պապի հետ համատեղ յայտարարութիւն մը հրապարակեց, դժբախտաբար ոմանք, հոգեւորական թէ աշխարհական, եպիսկոպոս կամ քահանայ՝ որ անտեղեակ էին Քրիստոսաբանութեան մեկնաբանութեան նոր զարգացումներուն, սխալ հասկացան եւ քննադատեցին Քրիստոսի մարդեղութեան վերաբերեալ հատուածը: Այդ պարբերութիւնը կ'ըսէ. **«Անոնց (հոգեւոր պետերը) յատուկ գոհունակութեամբ նկատի կ'առնեն այն մեծ յառաջադիմութիւնը՝ զոր իրենց Եկեղեցիները կատարած են՝ ի Քրիստոս մարդացեալ Բանի միութեան փնտռտուքի համատեղ ջանքերուն մէջ: Քրիստոս կատարեալ Աստուած՝ իր աստուածութեան (աստուածային բնութիւն) մէջ, կատարեալ մարդ՝ իր մարդկութեան (մարդկային բնութիւն) մէջ. իր աստուածութիւնը միացած է իր մարդկութեան հետ՝ յանձին Աստուծոյ Միածին Որդւոյն, այնպիսի միութեան մը մէջ՝ որ իրական, կատարեալ, անփոփոխ եւ անբաժան է, առանց ոեւէ ձեւի շփոթութեան»:**

Թէրեւս «յանձին Աստուծոյ Որդւոյն» բանաձեւը անսովոր է հայ աստուածաբանութեան մէջ, սակայն ոեւէ կերպով չի հակասեր Հայ Եկեղեցւոյ Քրիստոսաբանութեան, որ կը շեշտէ ոչ միայն Քրիստոսի բնութեանց միութիւնը, այլեւ անձի մէկութիւնը: Մանաւանդ վերջին նախադասութիւնը, որ Քրիստոսի բնութեանց եւ անձի միութիւնը կը բնութագրէ իբր «իրական, կատարեալ, անփոփոխ (կամ անխառն) եւ անբաժան», ամէն կասկած կը փարատէ եւ կը հաստատէ ընդհանուր բանաձեւին ուղղափառութիւնը:

Գարեգին Կաթողիկոս իրաւամբ կարող էր Կոմիտաս Վարդապետի հետ երգել եւ ասել.

«Սիրտս նման է էն փլած տներ.
կոտրեր գերաններ, խախտեր են սներ...»:

Իր վաղաժամ վախճանման հետեւանքով, իր երազներէն եւ տեսիլքներէն շատեր կիսատ եւ փլատակ մնացին: Նա չտեսաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Տաճարի աւարտումը, նա չկրցաւ տեսնել, ապրիլ եւ վայելել 1700-ամեակի հանդիսութիւնները, չտեսաւ Արցախի վերջնական անկախացումը: Խախտած սիւներէն կարեւորագոյնը անկասկած Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան միասնութեան պարագան է, որ յիրաւի պիտի հանդիսանար իր իրագործումներէն մեծագոյնը: Ափսոս, հազար ափսոս որ գործունէութիւնը իբր Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ կարճատեւ եղաւ:

Ինչ էր ի վերջոյ կտակը հանգուցեալ Կաթողիկոսի՝ ուղղեալ հայ հոգեւորականութեան եւ Հայ Ազգին: Առաջինի առթիւ անշուշտ իրականացումը իր կիսատ թողած գործերուն, յատկապէս միասնականութեան խնդրին:

Իր երազներէն մէկ ուրիշն էր՝ պատրաստութիւնը նոր հոգեւորական դասու մը, որ գիտնար եւ կարենար հասնիլ իր հօտին թէ՛ հոգեւոր եւ թէ՛ ընկերային-ընտանեկան կարեաց խնամատարութեան, որ Սբ. Աւետարանը գիտնար եւ կարենար ժողովուրդին քարոզել նոր ոճով, նոր լեզուով եւ ուժգնութեամբ:

Նորին Սրբութեան համար շատ կարեւորութիւն ունէր նաեւ միջեկեղեցական շարժումը: Վստահօրէն նա իր կտակին մէջ պիտի յանձնարարէր՝ որպէսզի ամէն հոգեւորական, մեծ կամ փոքր աստիճանի վրայ, համոզումով,



ՎԵՑ ԱՄՍԱԿԱՆ ՆՇԱՆԸ ՔԵՍԱՊՈՒՄ
(ԱՊԱԳԱ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ)



ՎԵՀԱՓԱՌԸ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

նուիրումով եւ առանց վախի, լրջօրէն գործէ էքիւմենիկ կեանքի մէջ, օտարներուն բացատրէ եւ հիմնաւորէ Հայ եկեղեցւոյ դաւանական, ծիսական եւ կանոնագիտական աւանդութիւնները եւ նպաստէ եկեղեցիներու մերձեցման եւ միութեան՝ ի փառս քրիստոնէական եկեղեցւոյ եւ ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեան:

«Յաւիտենական յիշատակն արդարոց՝ օրհնութեամբ եղիցի»:

*Մենք որպէս հայ քրիստոնեաներ, Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներ, հրաւիրուած ենք երթալու դէպի Բեթղեհէմի մսուրը: Այդ մսուրը վերստեղծուած է մեր հողերում մէջ այն օրէն ասդին, երբ մեր ազգն ու պետութիւնը 301 թուականին քրիստոնէութիւնը ընդունեց որպէս մեր ազգին սեփական կրօնը: Մեր Հայաստան աշխարհը Վաղարշապատ անունով ճանչցուած վայրին մէջ դարձաւ Հայոց Բեթղեհէմը ԷՋՄԻԱԾԻՆ անունով: Այստեղ էր, ուր մեր Լուսաւոր Հայրը իր լուսաւորեալ տեսիլքին մէջ տեսաւ Քրիստոս, որ իջաւ ի Հայաստան, որ այսպէս, այդ իջումով իսկ, կերպարանափոխուեցաւ եւ դարձաւ Բեթղեհէմը հայ ժողովուրդի հաւատքին: Ս. Էջմիածնով ամէն մէկ հայու հոգին դարձաւ մսուր ծննդեան Քրիստոսի ի Հայաստան աշխարհի եւ փառս համայնութեանն ազգիս Հայոց:*

«Էջմիածին», 1996, Ա, էջ 23:

*Սուրբ Էջմիածին: Երեք տարի է արդէն, ինչ ապրում եմ Հայաստանում: Ամէն անգամ, երբ մտնում եմ Մայր Տաճար, ամէն առաւօտ, երբ անցնում եմ Տրդատ թագաւորի կամարակապ դռան միջով, ամէն անգամ, երբ ծնրադրում եմ այն քարին, ուր Քրիստոս, մուրճը ձեռքին, խփեց եւ այնտեղից ծնուեց Հայոց առաջին եկեղեցին, հարց եմ տալիս ինքս ինձ. ի՞նչ ուժ էր այն, որ պահեց այդ սուրբ հաստատութիւնը՝ որպես ներշնչումի, հոգեկան սնուցումի աղբյուր: Էջմիածինը քա՞ր է: Ափսոս նրանց, որոնք իբրեւ քար են դիտում Էջմիածինը: Էջմիածինը ճարտարապետութիւն է: Ոչ: Էջմիածինը հոգի է, քարերի միջից բխող հոգի: Սակայն հոգին լսելու համար հոգով պետք է մօտենալ, հոգի պետք է ունենալ, ճշմարիտ հաւատացյալ պետք է լինել՝ այդ քարերի միջից Սուրբ Հոգու շարժումը զգալու եւ մեր հոգու մէջ այն փոխադրելու համար:*

«Էջմիածին», 1998, Բ-Գ, էջ 67:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

*ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՃՅԱՆ*
*1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար*

# Ի ՀՈՒՇ ԳԱՐԵԳԻՆ ՎԵՀԱՓԱՌԻՆ

*Անկեալ դնիմ դի անկենդան, կարկեալ ի խաւսից,*
*Կաշկանդեալ ձեռաւք, լքեալ անդամաւք,*
*Խփեալ շրթամբք, կափուցեալ աչաւք...*
*Արտասուելի նմանութիւն, լռեցեալ լեզու:*

*(ՆԱՐԵԿ, Բան ՀԹ)*

Նստած եմ Վեհափառի սնարին մոտ ու Նարեկ կքաղեմ: Վերջին օրերուն այդպես էր, իր սենյակեն դուրս և ներս միշտ աղոթք կար, Ավետարանի ընթերցում: Նարեկը... նավահանգիստ, խաղաղության բույն, աղոթքի շտեմարան: Կկարդամ, կաղոթեմ և կանդրադառնամ, թե ինչքան մեծ էր Նարեկա Սուրբը, ինչքան խորունկ էր անոր թափանցելու կարողությունը մարդկային կացության մեջ: Եվ թե ինչպես ան կհաջողեր ամենասրատես աչքով տեսնել մարդու ցավը, տառապանքը, բողոքը, ընդվզումը, կարեկցանքը, դառնությունը, հույսը և այդ բոլորը վերածել բառերու, նախադասություններու, հրաշալի արտահայտություններու: Կկարդամ այս տողերը, հոգեվարքի պահուն կարդացվելիք այս աղոթքը, ու կմտածեմ, որ եթե Գարեգին Կաթողիկոսը իր ամբողջ պերճախոսությամբ, իր ձայնի ամենահիմնային շեշտերովը փորձեր ինքզինք արտահայտել, հազիվ թե հաջողեր հասնիլ Նարեկացիի տագնապին: Երբ ինքզինքին կնայեր, կդիտեր և կըսեր. «Հորժամ իբրև անկենդան դի ինկած եմ այստեղ, կարկված խոսքից, կաշկանդված ձեռքերով, լքված անդամներով, փակված շրթերով ու աչքերով, արտասվելի նմանություն, լռած լեզու»...

Լռած լեզու էր Վեհափառը, խփված շրթներ, վերջին օրերուն ալ կափուցյալ աչք, և նույնիսկ կաշկանդյալ ձեռք: Ինչո՞ւ տառապանքներուն ամենեն խորունկը, անհասկանալին վիճակվեցավ այս սքանչելի մարդուն, որ Կիլիկիո և այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն էր: Մեկը, որ քառասուն տարիներ բեմերեն, խորաններեն հմայեց մարդիկը իր պերճախոս լեզվով, ոսկեբերան արտահայտություններով, դեմքի և աչքի սքանչելի ճկունությամբ: Ընդվզեցուցիչ է. հիմա ալ կըսեն, որ վերջին ամիսներուն, երբ քաղցկեղը կխլուծեր զինք ու լափեց իր լեզուն, կաշկանդեց իր մտքի և սրտի, հոգիի ալ թռիչքը, ան երբեք չբողոքեց. մեկ անգամ դառնություն չհոսեցավ իր աչքերեն, մեկ անգամ իսկ չընդվզեցավ իր ճակատագրին դեմ, մեկ անգամ չբողոքեց, թե Աստված ինչո՞ւ ըրավ իրեն այս:

Միշտ ինքնազուսպ, միշտ հավասարակշիռ մարդ էր, և ոչ մեկ հառաչանք,

ոչ մեկ ափսոսանք լսվեցավ իրմե: Յունական ողբերգության մը հերոսն էր կարծեք, մեկը, որ վիրավորվեցավ իր ամենահզոր կարողության մեջ, իր ամենեն խորունկ էության մեջ, այն, որուն թերևս այնքան կարևորություն կուտար, այն, ինչը որ ուժ, հնարավորություն տվավ իրեն տասնամյակներ շարունակ ամբոխներու հետ խոսելու, զրուցելու և հմայելու զանոնք: Եվ արդարև, Վեհափառի լեզուն, իր շրթները հավետ լռած էին շատ ավելի առաջ, քան երբ ինք հավետ լռեց այս աշխարհին և հեռացավ միանալու իր հայրերու Աստծուն:

Գարեգին Վեհափառը 20-րդ դարու երկրորդ կեսի հայ կյանքի ամենեն շքեղ և փայլուն անձնավորություններեն մեկն էր, իմաստուն, խոհեմ, զգաստ, հեռատես, դիվանագետ անձնավորություն ըլլալե և մնալե հետո՝ հմուտ աստվածաբան, հոգևորական, եկեղեցական մեծ գործիչ, հավատավոր էկումենիստ, ուսուցիչ, գեղեցիկ ճառախոս, գրասեր և գրագետ Յայրապետ, բանասեր գիտնական, առաջնորդ, հայ լեզվի ոսկերիչ: Իր այս բոլոր շնորհներով իրեն համար Յայ Եկեղեցին փոքր էր: Ատոր համար ինք դարձավ ճառագայթուն անձնավորություն մը համաշխարհային մակարդակի մը վրա և դարձավ աշխարհի մեջ ամենեն շատ ճանչցված հայերեն մին: Ռահվիրա եղավ տարբեր-տարբեր ճակատներու վրա, որովհետև ինք ուր որ եղավ, ինչ որ ըրավ, ինչ որ իրագործեց՝ իրագործեց ամենեն փայլուն և գեղեցիկ կերպով: Ինք փայլուն աշակերտ էր եղած Անթիլիասի դպրեվանքին մեջ: Դարձավ Դպրեվանքի տեսուչ, դարձավ հմայիչ վարդապետ: Գնաց Օքսվորդ, ուր և երկուսուկես տարի ուսանեցավ և այնտեղ բոլորին համար դարձավ Արևելքեն եկած գեղեցիկ և իմաստուն վարդապետը: Վերադարձավ Անթիլիաս ու դարձավ Զարեհ Առաջին Կաթողիկոսի մտերիկ գործակիցներեն մին, եղավ տեսուչ դպրեվանքի, դասախոս՝ Ամերիկյան Յամալսարանի և ըստ ամենայնի արժևորեց ինքզինքը: Եղավ Լիբանանի բեմերուն զարդը, քարոզիչը, ուսուցիչը, դաստիարակը:

Վեհափառը կազմավորված էր հատկապես Գարեգին Յովսեփյանց Կաթողիկոսի և Շահան Պերպերյանի շունչով: Կարծեմ որ այս երկու անձնավորություններն էին, որ ամենեն խորը կերպով տպավորած էին զինք և կազմավորած իր անհատականությունը: Ժամանակակից հոգևորականութենեն իրեն համար օրինակներ եղած էին Երուսաղեմի Թորգոմ Գուշակյան Պատրիարքը և, հատկապես Զարեհ Վեհափառը: Այս տիպարներու շունչին տակ կազմավորված անձնավորությունը, Օքսֆորդի մեջ մշակված միտքը, Քեսաբի՝ իր ծննդավայրի ավանդությամբ հագեցած իր հոգին զինք դարձուցին յուրահատուկ անձնավորություն, և միշտ մեսիական ակնկալություններ կապվեցան իրեն:

Ամեն մարդ զինք կդիտեր բարձրագույն աստիճանին վրա, և ատոր համար, ուր որ գնաց, ինչ պաշտոնի ալ կոչվեցավ, այդ եղավ ամենեն բարձր մակարդակի վրա: Այնպիսի ակնկալություններ կկապվեին իր անձնավորության, որ երբ տեղ մը կերթար, առաջնորդ ըլլար, տեսուչ ըլլար կամ ուրիշ պաշտոնի մեջ կամ նույնիսկ Կիլիկիո Կաթողիկոս, միշտ ու միշտ ինք բարձունքի վրա էր, և ատկե հետո հնարավոր միայն մեկ ճամփա կար (քանի ավելի բարձր գագաթներ նվաճելը անհնար կըլլար)՝ այն վայրէջք պիտի ըլլար

կամ հուսախաբություն կամ ակնկալությանց մեջ քիչ մը զարմացում և պատրանաթափություն: Այսպես եղավ իր պարագային ամեն տեղ, և ատիկա եղավ իր դժբախտությունը, որովհետև միշտ չէ, որ կհաջողին անոնք, որոնք բարձունքներեն կճախրեն միայն. երբեմն մրջյունի քայլերով առաջացողն ալ կրնա տեղ հասնիլ:

1977 թվականի մայիսի 22-ին անիկա ընտրվեցավ Աթոռակից Կաթողիկոս Խորեն Կաթողիկոսի հետ միասին վարելու համար Կիլիկիո Կաթողիկոսության ընթացիկ գործերը: Անհավատալի օր մըն էր այդ. ի՜նչ խանդավառություն էր, ի՜նչ ուրախություն էր, լավ կը կիիշեմ, ինք դասախոսն էր Դպրեվանքի 50-ամյա տարեդարձին առիթով և երբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի սրահի բեմը բարձրացավ, կես ժամ անընդհատ ծափահարություն եղավ: Ժողովուրդն այդ առավոտ զինք կընտրեր արդեն, թեև նույն երեկո Անթիլիասին մեջ տեղի պիտի ունենար Աթոռակից Կաթողիկոսի ընտրությունը: Օծվեցավ 29-ը մայիսին և տասնութ տարի հմուտ և ձեռներեց կերպով վարեց Կիլիկիո Աթոռի ճակատագիրը՝ 1977-83 իբրև Աթոռակից Կաթողիկոս և 1983–ի փետրվարի 9-են հետո իբրև լիիրավ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո:

Դժբախտ օրեր շատ ունեցավ. Լիբանանի եղբայրասպան պատերազմը տակավին չէր վերջացած ու շարունակվեցավ մինչև 80-ական թվականներու կեսերը, բայց այս ամբողջ տարիներու ընթացքին Գարեգին Վեհափառը մնաց պատնեշի վրա, եղավ քաջարի Հայրապետ, կորովի Կաթողիկոս: Իսկապես հայր էր ժողովուրդին, և հասավ բոլորին, հասավ կազմակերպությանց, միություններուն, մշակութային, մարզական, բարեսիրական միությանց օժանդակեց, որպեսզի անոնք կարենան իրենց գործը կատարել առավելագույն արդյունավետությամբ: Խոսեցավ, գրեց, այցելեց և ամրորեն կառչեցավ Լիբանանին, Լիբանանի անկախության, Լիբանանի ամբողջականության:

Օրեր եղան, երբ ստիպված էր նկուղներուն մեջ մնալ, վերահաս ռումբերեն ազատվելու համար, և մի քանի անգամ իր կյանքը նախախնամության շնորհիվ միայն փրկվեցավ, որովհետև ռումբեր էին, որ կիյնային Անթիլիասին վրա, կդպնային Զարեհյան դամբարանին, կդպնային ուրիշ շենքերու, կկոտրտեին պատուհաններ, բայց հրաշքով տպարանին նկուղին ծվարած միաբաններն իրենց Վեհափառին հետ ապրեցան և ֆիզիկապես անվնաս անցուցին այդ դժխեմ տարիները՝ կոտրված սրտով, բեկված տրամադրությամբ, բայց անսասան հավատքով, և երբ 1988-ի երկրաշարժը եղավ Հայաստանի մեջ, նույն այդ ընկճված ժողովուրդն առաջիններեն եղավ, որ Գարեգին Վեհափառին հետ միասին հասավ Հայաստանին օգնության: Անոնք նույնպես օգնության հասան, երբ Արցախյան գոյամարտի պատճառով տեղի կունենար պայքար, արյուն կհոսեր, կյանքեր-կյանք կերթային հայոց զինվորները, բայց Կիլիկիո Կաթողիկոսը կանգնեցավ իր երեց եղբոր՝ Վազգեն Վեհափառի կողքին՝ ամենեն դժվարին օրերուն իսկ երկրաշարժեն, ընկերային հեղափոխութենեն մինչև անկախության պայքար: Այս տարիներուն է, արդեն որ առավելագույն մտերմությունն մը ստեղծվեցավ Վազգեն և Գարեգին Հայրապետներուն միջև:

Երկու Հայրապետներուն բարեկամությունը կսկսեր շատ ավելի առաջ անշուշտ: Անոնք առաջին անգամ հանդիպած էին՝ մեկը արդեն Հայոց

Կաթողիկոս, միւսը՝ վարդապետ, 1956-ին, Անթիլիասին մեջ: Հաջորդ տարիներուն, հակառակ Անթիլիաս-էջմիածին տարակարծության, վեճերուն, անհասկացողության, Վազգեն Հայրապետը հատուկ սեր մը կշարունակեր տածել այդ երիտասարդ վարդապետին հանդեպ: Տեսավ անոր գործը 1963-ին Երուսաղեմին մեջ, երբ Խորեն Կաթողիկոսի հետ հաշտություն կկնքվեր, տեսավ 65 թվականին Ադիս-Աբեբային մեջ, ավելի ուշ տեսավ 1967-ին էջմիածնի մեջ, երբ առիթ տվավ, որ արդեն Գարեգին եպիսկոպոսը քարոզե Մայր Տաճարին մեջ: Երբ դուրս եկան Վեհարան, Վազգեն Առաջինը այնտեղ պանակե մը նվիրեց Գարեգին եպիսկոպոսին և ըսավ. «Եկեղեցիին մեջ ուզեցի համբուրել քեզ, բայց անհարմար զգացի, եկուր, այստեղ ճակատդ համբուրեմ»: Սիա այսքան տպավորված էր Գարեգին եպիսկոպոսի քարոզով, որը տրված էր Գրիգոր Լուսավորչի «Մուտն ի Վիրապ»-ի կիրակի օրը: Նույն այս բարեկամությունը շարունակվեցավ հաջորդ տարիներուն և 1977 թվին, երբ աթոռակից պիտի ընտրվեր Գարեգին Սրբազանը, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնին տրված երաշխիքներու վրա Վազգեն Առաջինը Անթիլիաս ուղարկեց Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը և Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, որպեսզի մասնակցին Կիլիկիո Կաթողիկոսի ընտրությանը: Եվ այն, ինչ որ խոստացված էր 77-ին, իրագործվեցավ հաջորդ տարիներուն Անթիլիասի Ազգային Ընդհանուր ժողովին կողմե, երբ էջմիածնի համար ընդունելի բանաձևումներ կամ փոփոխություններ եղան Կիլիկիո Կաթողիկոսության կանոնադրության մեջ:

Հետագային հարցերը շարունակեցին մնալ հարցեր, վեճերը՝ վեճեր, բայց այս բոլորեն վեր կար անձնական սերը, բարեկամությունը, մտերմությունը, որ իր առաջին հուզիչ արտահայտությունը ունեցավ 1988-ի դեկտեմբերի 11-ին, երբ Գարեգին Կաթողիկոս փութաց և էջմիածին եկավ երբ երկրաշարժեն միայն երեք-չորս օր անցած էր, որպեսզի Վազգեն Վեհափառի կողքին ըլլար, և այդ օրը խորհրդանշական շարժումով մը Մայր Աթոռին նվիրեց իր կրծքի ոսկյա արծիվը, որպեսզի անով հոգացվին տառապյալ ընտանիքի մը կարիքները: Անկե հետո, 1989 թվականին, կհիշեմ, թե ինչպես Գարեգին Բ-ն որպես Կիլիկիո Կաթողիկոս, առաջին անգամ ըլլալով պատմության մեջ, պաշտոնական այցելություն մը տվավ Մայր Աթոռ Սուրբ էջմիածին: Արտակարգ օրեր էին. Վազգեն Վեհափառը միասին էր իր երիտասարդ եղբոր հետ, անոնք շրջեցան Հայաստանով մեկ. Նորավանք, Տաթև, Շաքիի ջրվեժ, Սիսիան, Գորիս, ամբողջ այդ շրջանին մեջ երկու Հայրապետները այցելեցին և իրենց ներկայությամբ երջանկություն, ուրախություն բերին երկրաշարժեն ընկճված, արցախյան շարժումեն խանդավառված և հոգիով զորեղ ժողովրդին:

Անցավ մեկ-երկու տարի, Հայաստանը անկախացավ, դժվարություններ եղան՝ ընկերային, զինվորական վտանգներ ստեղծվեցան. Գարեգին Կաթողիկոսը Լիբանանին մեջ իր շուրջը հավաքեց ավանդական երեք կուսակցությունները և խնդրեց, աղաչեց, պահանջեց, որպեսզի Սփյուռքի կուսակցությունները զորավիգ կանգնին Հայաստանի Հանրապետությանը, որպեսզի այդ օրերուն մտահոգություն պատճառող անխոհեմ շարժումները չվնասեն Հայաստանի իսկ գոյությանը: Հայաստանի անկախ իրադրության մեջ նույնպես

շարունակվեցավ երկու Վեհափառներուն բարեկամությունը մինչև 1994: Կհիշեմ, Վազգեն Վեհափառը միշտ կարոտով կարտահայտվեր Գարեգին Կաթողիկոսի մասին. և 1990-ի աշնան անգամ մը, երբ Ամերիկայեն հեռաձայնով կխոսեինք, ինծի պատմեց, թե ինչպես Երևանի պետական համալսարան գացած էր և, առաջին անգամը ըլլալով, համալսարանի ուսանողությանը խոսած էր Հայ եկեղեցվո առաքելության մասին. ուրախ էր, և ինծի ըսավ.«Չեմ գիտեր, ինչպես եղավ, բայց հանկարծ մտածեցի, որ կողքիս պետք էր ըլլար Գարեգին Կաթողիկոսը: Վստահ էի, որ ան ալ շատ աղվոր պիտի խոսեր երիտասարդության հետ»:

Այսքան մեծ Հայրապետ մըն էր Վազգեն Վեհափառը, որ գիտեր մարդոց արժեքը և առանց փոքրոգության, առանց ճղճիմության ճշմարտին ճշմարիտ կըսեր, գեղեցիկին՝ գեղեցիկ, վսեմին՝ վսեմ, և Գարեգին Կաթողիկոսին մեջ կգնահատեր ազգին, հայրենիքին նվիրված մարդը, երիտասարդության հետ լեզու ունեցող մարդը: Հավանաբար ալ իր գաղտնի երազն էր, որ իրականացավ, երբ 1995 թվականի ապրիլի Ազգային եկեղեցական ժողովը Վազգեն Կաթողիկոսի հաջորդ ընտրեց Գարեգին Բ Կիլիկիո Կաթողիկոսը: Քիչ մը պարագաները տարօրինակ էին, անշուշտ: Ո՛չ Վազգեն Վեհափառը, ո՛չ ալ Գարեգին Վեհափառը կուզեին, որ ընտրությունները ըլլային այնպես, ինչպես եղան:

Գարեգին Վեհափառը պատրաստ եղավ կերպով մը հրաժարելու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության իր տասնութ տարվա հայրապետութենեն և գալ Ս. Էջմիածին: Անակնկալներով հղի ընտրության մեջեն անիկա հռչակվեցավ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Հավանաբար, նախապես խոսակցություններ, նույնիսկ բանակցություններ տեղի ունեցած պիտի ըլլային Գարեգին Բ-ի և Հայաստանի հոգևոր և աշխարհիկ իշխանության միջև: Չեմ գիտեր, պատմությունը պիտի ըսե այդ մասին, օրինակի համար՝ թեմերու միացման հարցը, կամ թեմերու վերադարձի հարցը, Կիլիկիո Աթոռի նոր ստատուսի խնդիր, չեմ գիտեր, բայց մեկ բանի կհավատամ, որ Գարեգին Կաթողիկոսն այդ զոհողությունը ըրավ իբրև հայրենասեր հայ եկեղեցական:

Ոմանք կրնան ամբաստանել և մեղադրել զինք, որ իր շարժումներուն մեջ փառասիրության հետքեր կային, ոմանք կրնան ըսել, որ վեղարի խաչի մը համար եկավ, բայց ես կհավատամ գործին, ես կհավատամ այն ճշմարտության, որ Գարեգին Կաթողիկոս պատմության համար կապրեր, երբեմն պատմության համար կշնչեր և ինչ որ կըներ, պատմության հղացքովը կըներ: Գիտեր, որ ինք պատմության համար մեծ դեր պիտի կատարեր, եթե պատահեր, որ այդ քայլը առներ, և իբրև Կիլիկիո արծիվ, թռիչք առներ և սավառներ Հայոց պատմական հողերու վրայեն՝ գալ հանգչելու համար Լուսավորչի գահին վրա: Անշուշտ, այս բոլորին մեջ, ամեն բան դյուրին չեղավ: Թռիչքը, կրնամ ըսել, դարձավ վիրավոր էջք, որովհետև իր ընտրությունով արդեն իսկ տկարացավ Գարեգին Վեհափառը, իր ընտրության կերպը զինք վիրավոր դարձուց և չհարգվեցավ, չսիրվեցավ այնպես, ինչպես որ պետք էր:

Կիլիկիո ժողովուրդը դառնացավ, որ իր Հայրապետը բառին իսկական առումով զինք լքեց, անոնք չընդունեցին, որ իրենց սիրելի Կաթողիկոսը, այն, զոր կպաշտեին, պիտի «լքեր» զիրենք, իրենց տունը և երթար, այսպես ըսած,

«հայրություն» ըներ ուրիշ խումբի մը. անշուշտ սխալ էր այդ մոտեցումը, սակայն մարդկային հասկացողություն էր: Հայաստանի մեջ ալ Վեհափառը նույնպես պետք եղածին պես չգնահատվեցավ, անախորժ կացություններ ստեղծվեցան, չեմ կրնար ըսել, որ ոմանք դիտումնավոր կերպով դժվարություններ ստեղծեցին, բայց եղան, դժվարությունները ավելի բազմացան և իր գործը չդյուրացուցին: Եվ ինք երկար ստիպվեցավ պայքարիլ ինքնահաստատման համար: Բայց ան, որ թեմեր հիմնեց, այցելեց շատ թեմեր, լայնորեն բացավ Հոգևոր ճեմարանի դռները, սկսավ կառուցանել Հոգևոր ճեմարանի հանրակացարանի նոր շենքը, ձեռնարկեցավ կառուցումը Երևանի Մայր Տաճարին, բացավ Օշականի Սուրբ Մեսրոպ դպրատունը, կատարեց բազմաթիվ եկեղեցիներու օծումը և ասոնց կարգին ունեցավ նաև հրատարակչական բազմաբեղուն գործունեություն: Առանց երախտագիտության ակնկալության շատ գործեր ալ ըրավ, առանց որ անոնք ցարդ արժևորվին, և սակայն իր ամբողջության մեջ Վեհափառը չկրցավ տալ այն, ինչ որ էր, ինչ որ ուներ՝ իբրև զորություն, ուժ, հմայք, կարողություն:

Ան իր արժանիքին շքեղությամբ ո՛չ լիիրավ ապրեցավ, ո՛չ ալ գնահատվեցավ: Եղավ տարաբախտ Հայրապետ մը, եղավ դժբախտ Կաթողիկոս մը, դժբախտաբար կըսեմ այս, բայց խոսքին ամբողջական պատասխանատվությամբը, որովհետև զինք կճանչնայի շուրջ քառասունհինգ տարիներ ի վեր, իր շունչին տակ մեծցած էի, իր հմայքներու մեջ հափշտակված աճած էի, գիտեի, թե ինչ՛ կրնար տալ ինք հայ ազգին, մեր պետությանը, այս տարածաշրջանին, եթե կարենար ինքզինք ըլլալ և քիչ մըն ալ կյանք ունենար: Չորս տարի ապրեցավ իբրև Ամենայն Հայոց Հայրապետ, չորս տարվան երեքը հազիվ կրցավ աշխատիլ, վերջին մեկ տարին լման հիվանդությամբ անցուց, ուրիշ կես տարին Սփյուռքին մեջ՝ այցելելով թեմերը և կազմակերպելով զանոնք և կապելով զիրենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, այնպես որ իսկապես ժամանակ չունեցավ և չկրցավ ըլլալ այն, ինչ որ կուզեր որ ըլլար: Փշրված նշխար մըն էր ինք, կիսված նշխար մը լավագույն պարագային, որուն կեսը միայն բաշխվեցավ, իսկ մյուս կեսը իբրև ցավ, իբրև անլուր տառապանք, իբրև անխոս բերան իջավ գերեզման:

Այսօր տակավին շատ կանուխ է գնահատելու համար զինքը, իբրև մարդ, իբրև Կաթողիկոս, բայց կուզեմ վրձնի արագ հարվածներով ներկայացնել այն, ինչ որ ինք ինծի համար էր իբրև մարդ, հոգևորական, էկումենիստ, ճառախոս, ուսուցիչ գրագետ, գրասեր, բանասեր, առաջնորդ և հայ լեզվի ոսկե գրիչ, ոսկեգործ:

Մարդը իր մեջ զվարթ էր, աշխույժ, սրամիտ: Մակերեսային անմիջականություն մը ուներ, որ սակայն, որոշ տեղ մը կանգ կառներ և ինք թույլ չէր տար, որ մարդիկ կարենան ճանչնալ զինք իր էության մեջ: Միշտ խորհուրդ մը կպահեր իր անձին շուրջ: Երեխաներու հետ մտերիմ էր, զվարթ, աշխույժ: Ընկերային շրջանակի մեջ միշտ կաշխատեր ըլլար խոսակցություն ղեկավարողը, առանց որ երբեք ըլլար անձնակեդրոն մարդ: Հոգևորականը իր մեջ կներկայանար իբրև անկեղծ հավատավոր քրիստոնյա իր խոր էության մեջ: Ան եղավ Ավետարանին գեղեցիկ քարոզիչը, իրենն էր այն, ինչ որ Թորգոմ

Գուշակյան Պատրիարքը կըսեր և կքանձներ հետևյալ կերպով. «Կոչումի գիտակցությունն է, որ կկատարելագործե մարդը»: Այդ կոչումի գիտակցությունն է, որ զինք տարավ միշտ դեպի կատարելություն, դեպի ոգեկանություն և ինք հաջողեցավ մարդիկը Աստծո բերել, ամենեն գեղեցիկ ճամփաներեն առաջնորդելով զիրենք, ամենեն զուլալ աղբյուրներեն անոնց խմեցնելով Ավետարանի կենդանի ջուրը: Իբրև հոգևորական և ազգային գործիչ, եղավ նախաձեռնող, ազգասեր Հայրապետ: Ինքը ազգին համար պատրաստ էր շատ մեծ զոհողություններու, միայն թե այնպես չըլլար, որ իր հավատքը, իր հոգևորականի գիտակցությունը և արժանապատվությունը զոհվեր: Ամեն տեղ, ուր եղավ, Լիբանանին մեջ, Պարսկաստան, Ամերիկա, թե Եկեղեցիներու Համաշխարհային Խորհրդի շրջանակին մեջ, միշտ ու միշտ գործեց Հայ եկեղեցվո համար: Հայ դատի ջերմ ախոյաններեն եղավ. եղեռնի 50-ամյակեն մինչև 70-ամյակ, Լիբանանեն մինչև Ամերիկա, ԵՀԽ-ի բեմերեն, օտար երկիրներու մեջ ունեցած իր հանդիպումներուն, օտար պետերու, նախագահներու, թագավորներու, վարչապետներու, եկեղեցական ղեկավարներու հետ իր հանդիպումներու ընթացքին միշտ ու միշտ պայքարեցավ Հայ Դատի հաջողության համար: Ուղղակի և անուղղակի կերպով նպաստեց և օժանդակեց հայկական բոլոր կազմակերպությանց, որպեսզի տարբեր-տարբեր ատյաններու մեջ ալ անոնք հետապնդեն Հայ Դատը:

Գարեգին Վեհափառը եղավ մեծ աստվածաբան: Մեր վերջին հիսուն տարիներու ընացքին մատի վրա համրվող աստվածաբաններեն եղավ թերևս ամենեն ժողովրդականը: Այն, որ կրցավ Շնորհալիին նման, ամենեն խորունկ և բարդ ճշմարտությունները արտահայտել պարզագույն և գեղեցկագույն ձևով: Անշուշտ ունեինք և ունինք աստվածաբաններ, որոնք սակայն չոր են կամ ձևով մը իրենց բյուրեղյա դղյակին մեջ են պարփակված: Բայց Գարեգին Կաթողիկոսը երբ կխոսեր Հայ Եկեղեցվո մասին և կքարոզեր Հայ Եկեղեցվո ճշմարտությանց մասին, կբացատրեր Հայ եկեղեցվո աստվածաբանությունը՝ Աստվածածնի անձը, Քրիստոսի անձը, Աստծո բնությունը, այս բոլորի մեջ պարզություն մը կդներ և մատչելիություն մը կուտար, որով պարզ ընթերցողը կամ համեստ անձնավորություն մը կարենար լսել և հասկնալ զինք: Որպես աստվածաբան իր ամենեն մեծ գործերեն մեկը եղավ այն ավարտաճառը, որ գրեց **«Հայ Եկեղեցվո աստվածաբանությունը ըստ հայ շարականներու»** նյութին շուրջ, որը դժբախտաբար անտիպ կմնա: Անգլերենով ունեցավ կարևոր հրատարակություններ, որոնցմե մին՝ **«Հայոց Եկեղեցին և Քաղկեդոնի Ժողովը»**, դարձավ դասագիրք և է ու կմնա վերջին հարյուրամյակի հայկական աստվածաբանական ամենեն արժեքավոր գործերեն մին: Իբրև էկումենիստ՝ եկեղեցիներու միության հավատացող անձ, ինքը եղավ ռահվիրա մը: Ճիշտ է, էկումենիզմը իրմե առաջ սկսած էր Հայ եկեղեցվո մեջ, բայց ինք երբ 1955-ին առաջին անգամ հանդիպեցավ Անթիլիասի մեջ ԵՀԽ–ի ներկայացուցիչ եպիսկոպոս արքեպիսկոպոսին և ընդունեցավ կրթաթոշակ, որպեսզի երթա և ուսանի, Անգլիայի ուսանողության երկուսուկես տարիներե հետո, իր Անթիլիաս վերադարձին, իսկապես հավատացող մը դարձավ Եկեղեցիներու միության և գործեց, և ըստ այնմ ալ աշխատեցավ, գրեց, քարոզեց միշտ ու միշտ:



Ն.Ս. ՊՈՂՈՍ VI ՊԱՊԻ ՀԵՏ. ՎԱՏԻԿԱՆ 1967 Թ.



ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ԱԼԵՔՍԻՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ

Իբրև էկումենիստ, անիկա նաև աշխատեցավ կազմակերպելու 1965-ի Արևելյան Ուղղափառ Եկեղեցիներու համաժողովը Ադիս-Աբեբայի մեջ, ուր արևելյան հոգևոր պետեր, առաջին անգամ ըլլալով, հանդիպում ունեցան Ադիս-Աբեբայի մեջ հովանավորությամբ այն ատենվա Եթովպիո կայսր Հայլե Սելասիեին: Ինք եղավ այդ շարժման մեծերեն մին, դարձավ փոխատենապետը և վարիչներեն մեկը նաև The Theological education Fund-ին: Մեր մեջ ոմանք կկարծեին, որ էկումենիզմը առիթ է, որ Հայ Եկեղեցին ճանչցվի օտարներուն կողմե: Մեր մեջ ոմանք կկարծեին, որ Աթոռներու պայքարի բերումով պետք է որ երկու Աթոռները ներկա ըլլային, ոմանք կկարծեին, բայց ինք ավելի անդին կանցներ, և, Շնորհալիի նման,այդ հոգին է, որ կարտահայտեր և կուզեր, որ եկեղեցիները միանան, բայց ճշմարտության հիման վրա, ոչ թե մեկը զորավոր, մեկը տկար դիրքերուն վրա կանգնած, այլ Ավետարանը ըլլար դատավորը, և բոլոր Եկեղեցիները Ավետարանին համեմատաբար ճշտեին իրենց կեցվածքը և որտեղ որ էր ճշմարտությունը, այն հաղթանակեր և այդ եկեղեցին: Այդպես ալ ըրավ ինք, երբ աշխատեցավ տարբեր Եկեղեցիներու և Միություններու և տեղական համայնքներու և անոնց խորհուրդներու մեջ, ըլլա Եվրոպա, ըլլա Ամերիկա, ըլլա Միջին Արևելք:

Իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց, ինք կրցավ այդ հանգամանքը օգտագործել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հզորության համար, որովհետև հատկապես իր ընտրության առիթով երևան եկավ այն խոր հարգանքը, որ երկիրներ և եկեղեցիներ կտածեին իրեն հանդեպ, և վստահաբար, որ ատիկա պիտի ըլլար անստգյուտ դրամագլուխ մը, որով ինք պիտի կարենար օգտակար ըլլալ ոչ միայն Հայաստանյաց Եկեղեցիին, ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև ԱՊՀ-ի բոլոր երկիրներուն, հանդիսանալով նաև կերպով մը խոսնակը նախկին Սովետական Միության Եկեղեցիներուն և համայնքներուն: Այդ հանգամանքով ալ ինք ընդառաջեց Պապի հրավերին և 1996-ին գնաց Հռոմ, Վատիկան և հանդիպում ունեցավ Հռոմի Հովհաննես-Պողոս Երկրորդ Պապին հետ և ստորագրեցին հայտարարություն մը, որ, կրնամ ըսել, չարամտորեն օգտագործվեցավ ի հեճուկս իրեն, բայց ի վերջո երբ որ մարդիկ հանդարտորեն կարդացին, ընկալեցին, տեսան, որ ոչինչ չկար տարբեր, և այն, ինչ որ ըսած էր Գարեգին Վեհափառը, Շնորհալին ըսած էր դարեր առաջ, և արժանացած հայ ժողովուրդի և Հայ Եկեղեցվո հարգանքին և սիրույն:

Այդ ոգին էր, որ գնահատեց Հովհաննես-Պողոս Պապը և հաջորդ տարին զինք հրավիրեց, որպեսզի Ավագ Ուրբաթ օրը **Խաչի ճանապարհին** Չարչարանաց ճանապարհին աղոթքները ինք խմբագրե: Վեհափառը չգնաց, իր կողմեն Ներսես Սրբազանը գնաց և ներկայացուց Հայոց Եկեղեցին Հռոմի մեջ, այսինքն Կոլիզեումի մեջ կարդաց Հայոց Հայրապետին աղոթքը, աղոթք, որ եղավ նաև աղոթք տառապյալ Հայրապետին իր մահվան մահիճին մեջ: Նույն այդ գնահատությամբ էր, որ Հովհաննես-Պողոս Պապը շատ փափագեցավ այցելել Հայաստան, տեսնել Արարատ լեռը և աղոթել Իջման Սուրբ Սեղանին առջև, բայց, դժբախտաբար, այդ ալ չիրականացավ, Պապի միօրյա այցելության փափագն ալ չիրականացավ և այս երկրի վրա այս երկու հոգևոր պետերը այդպես այլևս չհանդիպեցան իրարու:

Գրագետ էր Գարեգին Վեհափառը, գրագետ այն իմաստով, որ իբրև հոգևորական, իբրև քարոզիչ, բնական է՝ գրող ըլլար, բայց ինք անդրանցավ այդ հանգամանքը և չեղավ միայն քարոզիչ մը կամ աստվածաբան մը, այլ դարձավ նաև հայ լեզվի ծառան, հայ մշակույթի ծառան, և իբրև գրագետ ալ ուզեց ճանչցվիլ, գնահատվիլ և սիրվիլ եթե կուզեք: Փորձեր ըրավ, գրեց, և ինչպես հաճույք էր իրեն, երբ իրեն ստորագրությունը կերևեր, ըսենք, «Բագին» ամսագրին մեջ: Ե՛վ իբրև մտավորական, և՛ հատկապես իբրև գրագետ կառներ դրվագներ, դեպքեր, հայոց պատմության էջեր, երբեմն ուրիշներու կողմե աննշմար անցած, փոքրիկ բան մը և՛ այդ կվերածեր գրական էջի մը: Երբ որ գերեզման մը կայցելեր Պարսկաստանի մեջ, կամ երբ որ Նոր-Զելանդիայի մեջ Վարդանանց կտոներ, կամ երբ որ Արաքսի մոտ էր կանդրադառնար, թե ինչպես Հին Ջուղայի բնակիչները երբ կթողնեին ու կանցնեին Արաքսը, իրենց եկեղեցիներուն, տուներուն բանալիները կնետեին Արաքսի մեջ... այսպես էր ինք, ... հանկարծ կկարդար Առաքել Դավրիժեցի մը, Առաքել Դավրիժեցիին մեջ կտեսներ այն որսորդին պատմությունը, որ Սյունյաց աշխարհի մեջ, ժայռերու մեջ կգտներ ոսկրացյալ հայ վանականի մը, վեղարավոր հայ վանականի մը կմախքը և կներշնչվեր ատկե:

Գարեգին Կաթողիկոսը այդ դրվագի մեջեն հայ վանականության վերածնունդին մասին կմտածեր, ատոր մեջեն կշոշափեր հայ վանքերու վերածնունդին գաղափարը, հայ գրչության աճումը, հայ հոգիին ճախրումը և ուրիշին կփոխանցեր այդ ներշնչումը: Այդպես կըներ գրքի ճամփով, իբրև տեսուչ Դպրեվանքի և նաև գրի ճամփով, և իր գրագիտությունը չէր բավականանար ատով, այլ նաև ան ծանոթ եղավ իբրև բանասեր և գրասեր: Իրեն կպարտինք **«Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ»** կոթողային հատորի երկրորդ անգամ հրատարակության պատրաստումը, որ Կյուլպենկյան հաստատության կողմե հովանավորվեցավ, և ուր Գարեգին եպիսկոպոսը խմբագրեց հոգելույս Գարեգին Ա Հովսեփյանց Կաթողիկոսի աննախադեպ գործերը այս երկու ընտանիքներու մասին, որոնք որոշ դարաշրջանի մը հայոց պատմությունը գրեցին և կամուրջ հանդիսացան Բագրատունյաց թագավորութենեն մինչև նոր ժամանակները:

Գրասեր էր Վեհափառը բառին բովանդակ առումով: Գեթ հայ իրականության մեջ չեմ ճանչնար ես որևէ աշխարհական կամ եկեղեցական անձ, որ այնքան կապված ըլլա գիրքին: Գիրքը իրեն համար պաշտամունքի առարկա էր, եթե կուզեք, կսիրեր գիրքը, ինչի մասին ալ որ ըլլար և ուր որ երթար, որ քաղաքը որ այցելեր, կարծեք աղոթքեն հետո իր առաջին գործը կըլլար գրատուն մը փնտրել: Կերթար, ժամերով կհամենար, դարակներուն մեջ կխորասուզվեր... տեսած եմ զինք Փարիզ, տեսած եմ Լոնդոն, տեսած եմ զինք Տորոնտո, Մոնրեալ, Լոս-Անջելոս կամ Նյու Յորքի մի քանի աստվածաբանական գրախանութները, ուր որ կմտներ, կպրպտեր, կկարդար և գիրքեր կհավաքեր, հոգ ալ չէր ըներ, թե որքան ծանր պիտի ըլլան, փոխադրումը ինչպես պիտի ըլլա. կհավաքեր, և հիանալին այն էր, որ կկարդար, կկարդար և

ամենահեռավոր շրջաններուն մեջ, ուր որ ապրած էր, ըսենք, Նոր Ջուղա կամ Անթիլիաս, պատերազմի տարիներուն, կամ Հայաստան, ուր որ եղավ, միշտ ամենեն նոր և այժմեական գիրքերը իր տրամադրության տակ էին. աստվածաբանական, պատմական, փիլիսոփայական, հայեցողական... գիրքերը կառներ, կգրեր, կնոթագրեր և իր պզտիկ կարմիր գիրքին մեջ կարձանագրեր կարևոր մտածումներ: Օրինակի համար, ըսենք, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար դոկտոր Համըրշոլթի «Մարքինգս» անունով գիրքը, կառներ և կհիանար այդ մարդուն մտածումներով, նոթեր կառներ ու օրը կուգար, ժամը կուգար, երբ որ դասախոսության մը ընթացքին, քարոզի ընթացքին ինք գեղեցկորեն կմեջբերեր այդ մտածումը և այդ մտածումին կուտար նոր կյանք, նոր թռիչք: Ատոր համար ալ իր քարոզները և իր բանախոսությունները, Ամերիկայի մեջ եղած ատեն ալ իր ճառախոսությունները, ճաշկերույթի մը ընթացքին խոսքերը միշտ համեմված էին օտար մեծ փիլիսոփաներու, քաղաքագետներու, դիվանագետներու, աստվածաբաններու մտածումներով, որով սովորական հայ ունկնդիրը կհաղորդվեր ժամանակակից մտածումով, ժամանակակից մարդոց բարձր մտածումներու արտահայտությամբ:

Ես իրեն կպարտիմ գրքի հանդեպ սերը, իրեն կպարտիմ գրքի հանդեպ պաշտամունքը, և նաև իրեն կպարտիմ գիրք հրատարակելու մոլուցքը, եթե կուզեք, և Վեհափառի այս գրքասիրությունը արտահայտվեցավ ամենակոնկրետ կերպով, երբ 1978-են սկսյալ և ամեն տարի Անթիլիասի մեջ հոկտեմբերին կազմակերպեց հայ գրքի ցուցահանդես: Հոկտեմբերի Թարգմանչաց շաբաթ օրը, կիրակին Անթիլիասի Մայրավանքը կլխտար աննախընթաց բազմությամբ: Երկար-երկար տարիներ (թերևս, Պոլիսի տասնինգեն առաջվա օրերը կհիշեցնեին այդ օրերը) հազարավոր գրասերներ կուգային և Անթիլիասի վանքին մեջ կպտտեին, կտեսնեին, կգնեին Լիբանանի հայ հրատարակիչներու գործերը, և ինքն ալ, ամեն անգամ, ժամերգությունեն հետո պիտի դասախոսություն մը տար **«Հայ գիրքը և հայ մարդը»** թեմայի վարիասիոններու շուրջ: Հիմա անոնք առանձին հատորին մեջ են և հիանալի խորագիրներ ունին և, այսպես, պրիսմակին տարբեր ճակատներ են, ուր կարտացոլա հայ մարդու վերաբերմունքը հայ գիրքի հանդեպ, հատկապես, Գարեգին Վեհափառի վերաբերմունքը հայ գիրքին հանդեպ:

Եվ, վերջապես, իբրև գրագետ, գրասեր, բանասեր անձ, ես կուզեմ մեկ բան ալ ավելցնել,որ Վեհափառը նաև հայ լեզվի ոսկերիչ էր. գեղեցիկ բառեր, գեղեցիկ արտահայտություններ իրեն հաճույք կպատճառեին, չէր գոհանար եղած բառամթերքով, չէր գոհանար մտածումի կոկված հուներեն ընթանալով, միշտ գեղեցիկին, բարձրին հետամուտ էր, և երբեմն զոհ կըլլար այս ճիգին, և ոլորապտույտ նախադասությանց մեջ կրնար կորսնցնել իր ընթերցողը, բայց միշտ կջանար գեղեցիկին սպասարկուն ըլլալ: Ատոր մեջ իրեն նպաստած էին հայ բանասիրության իր խոր ծանոթությունը, հայ մատենագրության իր խորամտությունը: Խորենացի կամ Եղիշե, Կորյուն, Հովհաննես Պատմաբան, Շնորհալի, Լամբրոնացի, Տաթևացի, այս բոլորեն ինք քաղած էր, ջանասեր

մեղվի նման ամենեն համեղ արտահայտությունները, բառերը, դարձվածքները և իր խոսքերը կհամեմեր մեր հայրերու խոսքով, մտածումներով: Իզուր չէ, որ ինք դասախոսություններու և հրատարակությանց շարք մը սկսավ Անթիլիասի մեջ **«Մեր հայրերը կխոսին մեզի»** բնաբանով, որովհետև մեր հայրերը իրմով կխոսեին մեզի և իրենց բառերուն ամենեն ընտիրներովը և ճոխագույններովը:

Ինք ծանոթ էր նաև միջնադարյան գրականության և մեր արդիական գրականության. իր պաշտած գրողներեն էր Վահան Թեքեյանը, իրեն անծանոթ չէին Սիամանթոն, Վարուժանը, իրեն անծանոթ չէին նորագույն բանաստեղծներեն Մուշեղ Իշխանը, Պարույր Սևակը, Համո Սահյանը, Կոստան Զարյանը, Աբրահամ Ալիքյանը, Վահե Օշականը: Երբեմն մեզի անծանոթ գրողներ կային, բայց ինք ճանչցած էր զանոնք, և առիթ որ ըլլար, կգնահատեր, կապրեցներ զանոնք: Հետո, իր լեզվի գործածությունը ուրիշ ճոխություն ուներ. վերջերս առիթ ունեցա ընթերցելու հոդված մը իր լեզվին իմացության մասին, և այդտեղ հաճույքով կարդացի վերլուծումը և ուսումնասիրությունը այդ հայաստանյան հեղինակին, որ կըսեր, թե շուրջ հազար նորաբարություններ ունի Գարեգին Վեհափառը հայերենի մեջ, նոր ածանցումներ, նոր բարդություններ, ըսելու նոր կերպեր, բառերու նոր շեշտավորումներ, բառաստեղծումներ:

Իսկապես, վաղը երբ ուսումնասիրվին ատոնք և քիչ մը ավելի տարածվին, պիտի ճոխացնեն հայ լեզվի.գանձարանը, հայ լեզվի բառարանը:

Բայց այս համապատկերը լման պիտի չըլլար, եթե չիիշեի Գարեգին Վեհափառը իբրև ուսուցիչ ու դաստիարակ, և հատկապես իբրև Հայր Գարեգին:

Հայր Գարեգին... մեր ամենասիրած անձնավորությունը մեր ուսուցիչ Հայր Գարեգինն էր: Վեհափառը ինծի ուսուցիչ եղավ Պեյրութին Ս. Նշան վարժարանին մեջ, ուր մեզի կը դասավանդեր հայոց պատմություն և քրիստոնեական բարոյագիտություն: Դպրեվանքի մեջ մեզի ուսույց Հայ Եկեղեցվո պատմություն, աստվածաբանություն, հովվական աստվածաբանություն: Շատ աշակերտ ունեցավ ան, Դպրեվանք, Պեյրութի Դարուհի-Հակոբյան վարժարան, Համազգայինի ճեմարան, Ամերիկյան Համալսարան: Աբեղայութենեն մինչև Կաթողիկոսություն ան եղավ ու մնաց ուսուցիչ բառին ամենեն ազնվական իմաստով: Թե մեզ միշտ աշակերտ նկատեց՝ տարբեր բան, մեզմե ոմանք կնեղվեին ատկե, ուրիշներ՝ հարգանքով կընդունեին այդ, բայց Գարեգին Վեհափառը բոլորիս համար մնաց ուսուցիչ,- և իբրև ուսուցիչ մեզի համար ինք միշտ Հայր Գարեգինի պատկերով ալ մնաց - մեծցավ ինք, մեծ դեմք հանդիսացավ, եպիսկոպոս, Կաթողիկոս դարձավ, Հայ Եկեղեցվո պատմության մեջ դարձավ առաջին այն անձը, որ Կիլիկիո Աթոռեն բարձրացավ Ս. Էջմիածնի գահը, բայց մեզի համար ամենեն գեղեցիկը, ամենեն վսեմը, ամենեն սիրելին՝ Հայր Գարեգինը մնաց: Անթիլիասի Դպրեվանքի մեր տեսուչը, մեր երազը, մեր ներշնչումի պատկերը: Երանի միշտ Հայր Գարեգին մնար և եկեղեցական քաղաքականության և տնտեսական հարցերու թնջուկներուն մեջ երբեք մտած չըլլար:

Ինչ ըսեմ, փորձեցի այս կարճ խոսքերու մեջեն ներկայացնել բազմարդյուն, բազմաշնորհ, բազմատաղանդ անձ մը՝ Մեծի Տանն Կիլիկիո

Գարեգին Վեհափառը, Ամենայն Հայոց Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոսը, հրաշք անձնավորություն մը, հիանալի մարդ մը, մեծ հոգևորական մը, խորհուն աստվածաբան մը, բայց որ հակառակ անոր, որ եղավ լեզվի ոսկերիչ, հռչակվեցավ Ոսկեբերան, Երրորդ Շնորհալի, մտածումի, քռիչքի լավագույն արտահայտիչ, Աստծո մեկ անքննելի կամքով դարձավ լուռ, լուռ տառապանքի մարդը, ինք, որ Գրիգոր Լուսավորչի մասին երբ կքարոզեր, կգործածեր շարականին բառերը՝ **«Քնար քաղցրախոս»** բառերը, ինքը դարձավ «խորտակված քնար»:

Օրհնյալ ըլլա իր հիշատակը, բարի հիշենք զինք մեր աղոթքներուն մեջ, մեր սիրելի և թանկագին Հայրապետը՝ Գարեգին Վեհափառը, Հայր Գարեգինը:

*Անհատը կմեռանի: Բոլորս էլ պիտի մեռանինք, բայց ոչ ազգը: Ազգը մեռնութիւն չի ճանաչում: Եթե ճանաչի՝ մահ կգայ: Ազգը վերանորոգվող ուժ մըն է: Սերունդէ-սերունդ նոր ավիշ ծծող կյանքէն, Աստուծո տված տաղանդէն, անցյալի փառքէն, ապագայի երազէն, տեսիլքէն ուժ ըմպող եւ կյանքին նայող հավաքական անհատականութիւն մըն է ազգը:*

«Էջմիածին», 1995, Ժ-ԺԲ, էջ 23:

*Մահուան դիմաց չկայ ոչ մի մարդկային ուժ, որ կարողանա արգելք լինել: Մահը բոլորինս է: Մարդ չկայ, որ մահուան չհանգի: Մահը գալիս է տարիների գումարի եւ ծերութեան պատճառով: Մեր ֆիզիկականը բնութեան օրէնքով քայքայւում է: Մահը գալիս է վթարով, անժամանակ, հիւանդութեամբ, նաեւ գալիս է երկրաշարժով եւ բնական ուրիշ աղէտներով: Մահը մահ է, ինչ էլ ուզենանք ասել նրա չարիք լինելու մասին: Դա մեր մարդկային գոյութեանը անքաժանելիօրէն շաղախուած է: Բայց մեզ համար կարեւորը մահը չէ, այլ* ***կեա՛նքը,*** *Աստծու տուած կեանքը, որ երբեմն մենք մեր ձեռքերով աղարտում ենք, փչացնում: Փոխանակ Աստծոյ տուած կեանքը երջանկութեան աղբիւրի վերածելու, չարիքի ենք վերածում այսպիսի վերաբերումներով, որոնք Աստծոյ կամքին, արժեքների ստեղծագործութեան նպատակին հետ չեն ներդաշնակւում: Մահը մի դաս է, մահը մի յուշարար է, որ մեզ սովորեցնում է կեանքի արժէքը: Ամէն անգամ, երբ գտնւում եմ մի դագաղի առաջ, մի գերեզմանատան մէջ, ես չեմ մտածում երբեք մահուան մասին: Այդ դագաղից, գերեզմաններից ես կեանքի դասն եմ քաղում: Հարց եմ տալիս՝ ինչպէ՞ս եմ ես կեանքն արժեւորելու, ինչպէ՞ս եմ կեանքն ապրելու, որ երբ մահը գայ, մահը ինքը յաղթուի, մեր գործերով յաղթուի եւ սուտի տեղ մահը դառնայ մեզ համար սնուցիչ մի աղբիւր կեանքի գեղեցկագոյն իմաստի իրագործման հանդէպ մեր պարտաւորութեան մասին:*

«Էջմիածին», 1996, ԺԲ, էջ 111-112:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

*ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆ*
*Առաջնորդ ԱՄՆ-ի հայոց Արեւելյան թեմի*

# ԳԱՐԵԳԻՆ Ա
# ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
## /Խօսք յիշատակի/

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, յանձին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, կորսնցուց ոչ միայն իր Ընդհանրական Հայրապետը, այլեւ գործունեայ, գիտակից, հաւատացեալ, տաղանդաւոր եւ զարգացած հայ հոգեւորական մը:

Գարեգին Կաթողիկոսի համբաւը, որպէս ապագայ խոստացող երիտասարդ, աշխոյժ եւ խանդավառ եկեղեցական, տարածուած էր ամէնուրեք յիսունական թուականներու կէսերէն, երբ դեռ աքեղայ էր ան: Այս վկայութիւնը անոր մասին լսած ենք մեր երէց սերունդի հոգեւորականներէն եւ մեր ուսուցիչներէն: Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի մեր աշակերտական օրերուն շատ կը խօսուէր իր մասին, որպէս սքանչելի ուսուցիչ եւ տեսուչ: Ժամանակի ընթացքին երբ առիթ ունեցանք կարդալու նաեւ իր ուսումնասիրութիւններն ու գրութիւնները այլեւայլ նիւթերու շուրջ, համոզուեցանք, որ սխալած չէին հիները իրենց դատումին եւ գնահատանքին մէջ:

Այդ օրերուն, երբ Էջմիածին-Անթիլիաս հակամարտութիւնը իր ամենասուր պայքարի հանգրուանին մէջ կը գտնուէր, Գարեգին եպիսկոպոս Սարգիսեան կը փայլէր որպէս աստղ Անթիլիասի երկնակամարին վրայ՝ գրաւելով ուշադրութիւնը եւ հիացումը բոլորին: Երկու կարծիք չկար իր կարողութեան, լրջութեան, ազգասիրութեան, նուիրումին, մշակութային եւ ուսումնական յակումներուն առնչութեամբ:

Անցնող երեք տասնամեակներու ընթացքին եղած էին մի քանի անցողակի առիթներ՝ անձամբ հանդիպելու եւ ծանօթանալու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Բ.-ին հետ: Հմայիչ եւ առինքնող նկարագիր մը ունէր ան: Կարելի չէր չտպաւորուիլ իրմէ, իր գիտութենէն, լայն ծանօթութիւններէն եւ մեր փոքր ածուի անմիջական նեղլիկ շրջանակէն դուրս վարած բարձր պաշտօններէն՝ միջազգային ժողովներու կազմակերպութեանց մէջ: Հակառակ այս բոլորին՝ Վեհափառը շատ հաղորդական էր եւ ընկերային: Ան մինչեւ վերջ երբեք չմոռցաւ իր գիւղական նախընթացը եւ պահեց իր պարզութիւնը եւ համեստութիւնը: Սովոր էր միշտ հպարտութեամբ յիշեցնելու Քեսապէն ծագած ըլլալու իրողութիւնը իր շուրջիններուն:

Երջանկայիշատակ Վեհափառ Հայրապետին հետ մենք մօտէն շփուելու առիթներ ունեցանք 1995 թուականի կաթողիկոսական ընտրութենէն եւ

գահակալութեան հանդիսաւոր արարողութեանց ետք: Իսկ հանգուցեալը շատ լաւ ճանչնալու առիթ ծառայեց իր առողջութեան վատթարացման դժբախտ պարագան, որովհետեւ ան երկար ամիսներ մնաց Նիւ Եորք, առաջնորդական մեր նստավայրը, ուր գրեթէ ամեն օր, երբեմն մեկէ աւելի անգամներ, իր քով ըլլալու բախտը վիճակուեցաւ մեզի:

Հայրապետական օծման արարողութեան երջանիկ օրերուն Գարեգին Ա. կ'ապրէր իր փառքի օրերը, որպէս անկախ Հայաստանի մէջ ընտրուած եւ ձեռնադրուած առաջին Կաթողիկոսը: Վերջին անգամ անկախ Հայաստանի մէջ հազար տարի առաջ՝ Բագրատունեաց թագաւորութեան օրերուն եղած էր նման ընտրութիւն մը: Խորհրդանշական էր նաեւ գահակալութեան հանդիսութեան օրը, որ կը զուգադիպէր Ծաղկազարդի տօնին: Ութ հարիւր տարի առաջ Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետը եւս Հռոմկլայի մէջ կը ստանար կաթողիկոսական ձեռնադրութիւն նոյն օրը: Դեռ կար աւելի բացառիկ հանգամանք մը եւս: Առաջին անգամ ըլլալով, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետական Աթոռի գահակալը կ'ընտրուէր Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ կը բարձրանար Ս. Լուսաւորչի գահուն վրայ: Հայց. Եկեղեցւոյ պատմութեան մէջ սակաւադէպ դարադարձիկ պարագայ մըն էր ասիկա: Իրեն նման պատմագէտ եւ հայրենասէր անձնաւորութեան մը ապրումները այդ օրերուն հազիւ կրնայ երեւակայել նորահաս սերունդը:

Գահակալութեան շրջանին եւ հետագայի մեր այցելութեանց առթիւ կայացած պաշտօնական եւ անպաշտօն հանդիսութեանց ընթացքին Գարեգին Կաթողիկոսի պատրաստաբանութիւնը, հռետորական շունչը եւ խանդավառ խօսքերն ու մտածումները մեր վրայ խորունկ ազդեցութիւն ձգած էին: Հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի մահուընէ ետք չէինք ունկնդրած ոեւէ մէկը, որ ունենար Գարեգին Կաթողիկոսի ճոխ լեզուն, յանկարծաբանութիւնը եւ մանաւանդ՝ եռանդը: Հայոց լեզուի գանձարանը բաց էր անոր առջեւ, ուրկէ կը քաղէր ընտիր ոճեր եւ բառեր եւ անոնցմով կը կերտէր նորահնար բարդ բառեր՝ արտայայտելու համար իր նոյնքան բարդ մտածումներն ու զգացումները:

Մարգարէական շունչ մը կար իր խօսքերուն մէջ, որոնց մէջէն կը լսէինք մեր ազգային Եկեղեցւոյ աւանդութեան ձայնը: Հին սերունդի մարդիկ համոզուած էին, որ Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսէն մնացած «ժառանգութիւն» մըն էր այդ դիւթական ձայնը, զոր իր պատանեկութեան իւրացուցած էր Գարեգին Սարգիսեան աբեղան եւ իր կարգին լսելի եւ մատչելի դարձուցած այսօրուան հաւատացեալ հայ քրիստոնեային:

Հանգուցեալ Հայրապետը մասնաւոր ճիգի կարիքը չունէր իր մտքի պաշարը բաժնելու իր ժողովուրդին հետ: Մենք քանիցս ականատես եղած ենք իր ունեցած բազմաթիւ ելոյթներուն՝ մէկ օրուան ընթացքին, եւ ականջալուր՝ իր ազգաշունչ եւ հոգեւոր խօսքերուն՝ համեմուած այլեւայլ հայ եւ օտար հեղինակներու գործերէն արտաբերուած վկայութիւններով: Եւ այս ամէնը՝ առանց գրաւոր քնագրի, առանց նոթերու եւ յաճախ առանց պատրաստութեան:

Յանպատրաստի խօսքեր կրնային թուիլ ճառերէն շատեր, բայց իրականութիւնը այն է, որ Վեհափառը յաւէտ պատրաստութեան մէջ էր իր բոլոր պարապոյ ժամերուն, որոնք միշտ տրամադրուած կ'ըլլային ընթերցանութեան, հետազօտութեան եւ ուսումնասիրութեանց: Այցելութեանց եւ հիւանդութեան առթիւ Նիւ Եորք գտնուած շրջաններուն ան մնայուն յաճախորդը դարձած էր քաղաքի ընտրագոյն գրախանութներուն, ուր կ'այցելէր առանց զգալի դարձնելու իր ինքնութիւնը: Իսկ մեր Առաջնորդարանի գրադարանը իրմէ առաջ եւ իրմէ ետք չէ ունեցած իրեն պէս յաճախակի այցելող եւ գիրքեր օգտագործող հոգեւորական մը: Ցաւերու մէջ իսկ Վեհափառին կողքէն միշտ անպակաս եղաւ գիրքը, գրիչը եւ թուղթը եւ մանաւանդ հայ գիրքը, որուն գլխաւոր սատարողներէն եւ մեկենասներէն մէկը եղաւ ինք: Իրեն կը պարտինք հրատարակութիւնը եւ կամ վերահրատարակումը հարիւրաւոր գրքերու, որոնք այսօր հայկական գրադարաններու զարդը կը կազմեն: Անոնց մէջ կարելի է յիշել մեր արդի դասական գրականութեան գլուխգործոցները եւ բազմաթիւ կրօնական հատորներ: Մեսրոպատառ գրականութեան գլխաւոր ջատագովը հանդիսացաւ ան եւ տարածեց զայն սփիւռքահայութեան լայն զանգուածներուն մէջ:

Արտակարգ կամքի տէր անձնաւորութիւն մըն էր հանգուցեալ Վեհափառը: Մինչ իր հիւանդութեամբ տկարացողներ անտրամադիր կ'ըլլան ու յաճախ ենթակայ՝ հոգեկան փլուզման, Գարեգին Կաթողիկոս Նիւ Եորք կեցութեան օրերուն երբեք չընկրկեցաւ հոգեպէս եւ չկորսնցուց իր հոգեկան անդորրը, նոյնիսկ երբ անհռելի ցաւերու մէջ էր: Մինչեւ իր երկրորդ վիրաբուժական գործողութիւնը, ան ամէն օր կու գար Առաջնորդարան, ուր կը մնար ժամերով եւ ցաւը վրան՝ կ'ունենար տեսակցութիւններ հայ եւ օտար կարեւոր դէմքերու հետ, կոնդակներ եւ նամակներ կը գրէր եւ կամ գրական աշխատանքներ կը կատարէր: Նոյնը կը շարունակէր կատարել իր բնակարանին մէջ եւս, ուր կը ջանար ամոքել իր ցաւերը ապաւինելով գրչի աշխատանքին: Անդուլ աշխատող մըն էր, որ տիւ ու գիշեր չէր գիտեր: Հիւանդագին ծանր վիճակին մէջ է, որ լոյս ընծայեց իր էջմիածնիք յօդուածներու հաւաքածոն՝ խմբագրական բովէ անցնելով զանոնք: Այս տեսակէտէ իրապէս օրինակելի նկարագիր ունէր Վեհափառը: Օրինակելի ոչ միայն բարձաստիճան հոգեւորականներու, այլ մանաւանդ պատանի ժառանգաւորներու եւ երիտասարդ վանականներու համար, որպէսզի անոնք գիտնան եւ գնահատեն արագաթռիչ ժամանակին արժէքը եւ լցնեն զայն օգտակար ազգաշէն աշխատանքներով:

Վեհափառը ճիշդ է, որ տաղանդաւոր էր ի ծնէ, բայց իր յամառ աշխատանքին շնորհիւ է, որ կրցած էր տարիներու ընթացքին ամբարել բազմապիսի նիւթեր իր մտքին մէջ եւ, հակառակ իր բազմազբաղ վիճակին, ունենալ մտքի արթնութիւնը՝ ակնթարթի մը մէջ անցնելու ամենամակերեսային հարցերէն ամենաբարդ խնդիրներու լուծման եւ կամ սովորական խօսակցութենէ շեղելով՝ մտնել մտաւորական մարզերէ ներս եւ բոլոր պարագաներուն ցուցաբերել իր հմտութիւնը եւ լայն ծանօթութիւնները:

Հայ մտաւորականներու հանդէպ ունէր ան մասնաւոր խանդաղատանք ու սէր: Անոնք ալ իրենց կարգին յարգանք ունէին հանդուցեալին հանդէպ: Իր հիւանդութեան առթիւ շատեր անձամբ եկան զինք տեսնելու եւ կամ հեռաձայնային կապով հետաքրքրուեցան իրմով: Իր կորուստը ծանր էր հայ մտաւորականութեան համար, որովհետեւ այդ շրջանակի ծոցէն պոկուեցաւ ան, իբրեւ հայ մտաւորականը եւ հայ մտաւորականութեան մեծագոյն բարեկամը:

Մարդկային յարաբերութեանց մէջ քաղցր վերաբերմունք ունէր Վեհափառ Գարեգին Ա.: Տեսած ենք զինք բազմաթիւ առիթներով օտար բարձրաստիճան հոգեւորականներու հետ: Երբեք չէր զիջէր անոնց Հայց. եկեղեցւոյ հոգեւոր պետի իր համգամանքի վեհութիւնը, յարգանք կը պարտադրէր, բայց գիտէր նաեւ ցուցաբերել սքանչելի եղբայրական ոգի, մարդկային համեստութիւն, հասկացողութիւն եւ պատրաստակամութիւն բացատրելու եւ ծանօթացնելու անոնց մեր եկեղեցւոյ աւանդութիւններն ու սովորութիւնները: Օտարներ մեծապէս կը գնահատէին Վեհին մէջ երեւան եկող այլասիրութիւնը եւ փափկանկատութիւնը: Գարեգին Կաթողիկոսի եւ իր նախորդներուն մշակած էքումէնիք յարաբերութեանց արդիւնքը այն եղաւ, որ Հայց. եկեղեցին չդատապարտուեցաւ մնալու լճացած վիճակի մը մէջ եւ այսօր աշխարհի առաջադէմ եկեղեցիներէն մէկը կը նկատուի:

Վեհափառին ընկերային բնաւորութիւնը զինք սիրելի դարձուցած էր ի մասնաւորի իր հօտի զաւակներուն, որոնք որպէս հոգեւոր հայր արդէն կը յարգէին զինք: Քիչ թիւով բարձրաստիճան հոգեւորականներ յաջողած են անցեալին իրենց շուրջ հաւաքել ծանօթ ազգայիններ եւ անոնց ընտանեկան պարագաները եւ իրենց ստեղծած կապերը օգտագործել ազգային նպատակներու համար այնքան, որքան որ Գարեգին Կաթողիկոս: Վեհափառը այդ բացառիկ հոգեւորականներէն էր, որ ունէր իր շուրջ զինք յարգող, սիրող եւ նոյնիսկ փոխաբերական իմաստով «պաշտող» կարեւոր ազգայիններ, որոնք հարկ եղած պարագային չէին տատամսեր նիւթապէս օժանդակելու Մայր Աթոռին եւ Վեհին հովանաւորած ազգային նպատակներուն: Այսպիսի կապեր անտարակոյս կարեւոր են հանրային կեանքէ ներս գործող անձերու համար, որովհետեւ այլապէս կարելի չըլլար առաջադրանքներ եւ նպատակակէտեր հետապնդել:

Նուազ սիրելի չէր Վեհափառը մեր երիտասարդութեան, որուն հետ ան առիթ ունեցաւ հանդիպելու մէկէ աւելի անգամներ: Անշուշտ բազմաթիւ լեզուներու տեղեակ մտաւորական դաստիարակի մը ներկայութիւնը որոշ ակնածանք պիտի պատճառէր երիտասարդներուն, բայց Վեհափառի պարագային այդ յարգանքը կ'անցնէր ակնածանքի սահմաններէն անդին միշտ փոխուելով սիրոյ, անկեղծութեան եւ մարդկային այնպիսի զգացական ոլորտի մը, որ անհատ երիտասարդը աւելի կը մտերմնէր եկեղեցիին եւ Հայրենիքին: Երիտասարդական հաւաքներուն, որոնց ընթացքին եւս կ'ունենար Վեհափառը փոխանցելու համար իր հայրական պատգամները, կ'ուզէր, որ ներկայ եղողներ առիթ ունենան հարցումները ուղղելու իրեն:

Վեհափառը հաճութեամբ կը պատասխանէր անոնց՝ թողլով լաւ տպաւորութիւն իր պատրաստաբանութեամբ եւ գիտութեամբ:

Վեհափառ Հայրապետը, որպէս Հայց. Եկեղեցւոյ վարչական կառոյցին գլխաւոր վերատեսուչը, մօտէն դիտելու առիթը ունեցած ենք թէ՛ իր կեանքի վերջին շրջանին՝ Ամերիկա, եւ թէ՛ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի ժողովներուն՝ ի Ս. Էջմիածին: Քաջածանօթ է պարագան անցեալի մեր կարգ մը մտաւորական բարձրաստիճան հոգեւորականներուն, որոնք վարչական ժողովներէ եւ գործերէ ընդհանրապէս խորշած են: Կրնանք վկայակոչել Եղիշէ Պատրիարք Դուրեանի օրինակը, որ առակի կարգ անցած է: Այդպէս չէր Գարեգին Կաթողիկոս, որովհետեւ իրեն համար գիտութիւնը նպատակ չէր, այլ ժողովուրդին համար օգտագործելու միջոց: Ան ամենայն ուշադրութեամբ եւ լրջութեամբ կը հետեւէր ժողովներու, մտիկ կ'ընէր բոլորին ըսածները եւ ապա կը ներկայացնէր իր տեսակէտը այս կամ այն հարցի մասին: Ժողովի գալէ առաջ սերտած կ'ըլլար բոլոր հարցերը եւ քաղած՝ անոնց մասին հարկ եղած տեղեկութիւնները: Վերջին խօսքը միշտ իրն էր, ինչպէս որ վայել է Հայրապետաց:

Վեհափառը բառին իսկական առումով հոգեւորական էր՝ ամբողջութեամբ թրծուած Հայց. Եկեղեցւոյ աւանդութեամբ, վարդապետութեամբ եւ աստուածաբանութեամբ: Իր բոլոր ըսածները եւ տուած պատգամները պարզ տրամաբանական կրօնաշունչ արտայայտութիւններ ըլլալէ աւելին կը պարունակէին. անոր կենդանի խօսքերը կը բխէին ազգային աւանդութենէն, Աստուածաշունչէն եւ Հայց. Եկեղեցւոյ հայրերու գործերէն: Իր իւրաքանչիւր նախադասութիւնը եկեղեցական հարցերու մասին աստուածաբանական հիմք ունէր: Ոչ միայն քաջ տեղեակ էր ան Հայց. Եկեղեցւոյ աստուածաբանութեան եւ պատմութեան, այլեւ ապրող աստուածաբան մըն էր, որ լաւ սերտած էր նաեւ արդի արեւմտեան հեղինակներուն գործերը:

Ամէն ինչէ աւելի Վեհափառը հովուապետ էր եւ հովիւ քաջ իր բանաւոր հօտին: Ան ընտրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս, որովհետեւ արդէն փաստած էր, որ հովուապետ ըլլալու կարողութիւնը ունի: Անցեալի իր փորձառութիւնները այլեւայլ գաղութներէ ներս տուած էին իրեն հիմնական գիտելիքներ ժողովուրդ կառավարելու վերաբերեալ: Իր գլխաւոր նպատակը պիտի բերէր իր ժողովուրդին եւ եկեղեցւոյն կեանքի հասուն շրջանին եւ արդէն պատրաստակամութիւնը ցոյց տուած էր հասնելու իր հօտի անմիջական կարիքներուն: Այդ ուղղութեամբ սկսած էր հիմնական աշխատանքներ կատարել, երբ վրայ հասաւ անողոք հիւանդութիւնը, որ ամիսներով Նիւ Եորք պահեց զինք եւ ապա փութացուց վախճանը: Վստահ ենք, որ շատ գործեր զարգացման տարբեր մակարդակի վրայ պիտի ըլլային այսօր, եթէ Վեհափառը ողջ եւ առողջ մնացած ըլլար: Նոր անկախութիւն ձեռք բերած մեր ազգը շատ մեծ ակնկալութիւններ ունէր իրմէ: Ունէր, որովհետեւ գիտէր, որ Աստուած լայնօրէն բաշխած էր իրեն երկնային ձիրքեր, եւ միայն ինք կրնար տալ ազգին զաւակներու պահանջածին չափով:

Գարեգին Ա. Կաթողիկոս պատմութեան մէջ պիտի յիշուի որպէս ապագայի

տեսլականը ունեցող Հայրապետ: Իր ցանած սերմերը վաղը արդիւնք պիտի տան՝ առաւել եւս արժեւորելով իր դերը: Ս. Մովսէս Կաթողիկոս Տաթեւացւոյ նման կարճատեւ եղաւ իր գահակալութիւնը, բայց վստահ ենք, որ ապագան պիտի փաստէ, թէ որքան արդիւնաւոր եղան անցնող չորս տարիները: Այսօր այդ գնահատութիւնը ի վիճակի չենք տալու, բայց յիսուն տարի ետք յստակ պիտի ըլլայ այդ: Թող Աստուած անթառամ պահէ իր յիշատակը Մայր Աթոռի, Հայրենիքի եւ Սփիւռքի հայութեան մէջ:

Կ՚աղօթենք առ Բարձրեալն, որ հանգուցեալ Հայրապետին հոգին իր արքայութեան լոյսերուն արժանացնէ եւ մեզի ալ երկնային մխիթարութիւն պարգեւէ:



*Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Հայ ազգի ամրութեան ու ստեղծագործական կենսընթացին մայր աղբիւրը մեր դարաւոր սուրբ աւանդութիւնն է, Քրիստոսէն ժառանգուած եւ Հայութեան կեանքով կերպարուած, մեկնաբանուած ու գործադրուած: Այդ աւանդութիւնը պէտք է ամուր եւ անխախտ պահել Պօղոս Առաքեալի այնքան յստակ եւ պարտաւորիչ ցուցմունքներուն համաձայն* /Բ. ԹԵՍ. Բ 14, Ա. ԿՈՐՆԹ. ԺԲ 11, Բ. ՏԻՄ. Բ. 2/:

*Բնականօրէն աւանդութիւնը քարացած սովորութիւններու ընդարմացած ձեւականութիւններու գումարը չէ, այլ վառ ապրումով մշտանորոգ եւ կենսունակ ընդառաջումը Աստուծոյ կամքին եւ Քրիստոսի պատգամին, որ մեր Հայրերու շունչով է կենսաւորուած եւ պատմութեան մէջէն է անցած, բայց պատմութեամբ չէ սահմանափակուած: Մեր եկեղեցւոյ եւ ազգի տոկունութեան անքակտ խարիսխ եւ մշտաբուխ աւիշ ընծայող ենթահողն է ան, որ կը կազմէ մեր ինքնութեան պահպանման գրաւականը, մանաւանդ այս ժամանակներուն երբ մարդկային ընդհանուր կեանքին մէջ կը տեսնենք այնքան անմարդկայնացող, մեքենայնացող, ապակրօնականացող եւ ապազգայնացող քայլեր ու կենցաղակերպեր, որոնք ստուեր կը բերեն մեր քրիստոնէական հաւատքով եւ հայկական հոգիով թրծուած ազգային ինքնութեան ջինջ ու պայծառ պատկերին վրայ:*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

*«Էջմիածին»,* 1995, Զ-Է, էջ 9-10:

*ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ*
*Առաջնորդ Կանադայի Հայոց թեմի*

# ՍՐՏԻ ԽՕՍՔ ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՈՒՐԲ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Տակաւին երէկ էր կարծէք, որ մեր բոլորին սիրելի Վեհափառը հովուապետական այցելութիւններով կը շրջէր Հայաստանի ու Արտասահմանի թեմերը եւ կը խանդավառէր Հայց. Եկեղեցւոյ զաւակները Ս. Էջմիածնի ու Հայրենիքի տեսիլքով: Շուտով ան պիտի բոլորէր քահանայական իր ձեռնադրութեան ու օծման յիսնամեակը, հինգ տասնամեակներ, որոնք եղած են բոլորանուէր ծառայութեան տարիներ: Հանգուցեալ Հայրապետը, որ Հայց. Եկեղեցին տեսած էր իր ծառայական կերպին մէջ, ինք իր կեանքն արդէն այլ կերպ էր արժեւորած՝ իր կեանքի տարիները դարձնելով ծառայութեան ու նուիրումի տարիներ ոչ միայն ժողովուրդի զաւակներուն համար, այլեւ դուրս գալով Հայ Եկեղեցւոյ անդաստանէն, դարձած էր Աստուծոյ խօսքին քարոզիչն ու ակնառու էքումենիստը քոյր Եկեղեցիներու ոլորտներէն ներս: .

Ո՞վ էր Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Այս հարցումին կրնան պատասխանել միայն անոնք, որոնք մօտէն ճանչցան Վեհափառը եւ մանաւանդ անոր հետ սերտ գործակցութեան պատեհութիւնը ունեցան:

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը այն մեծ հոգեւորականն էր, որ իր մանկութենէն խորապէս ըմբռնեց ինքզինք աստուածգիտութեան ճանապարհին վրայ հաստատելու հրամայականը եւ կեանքին մինչեւ վերջին շունչը ապրեցաւ Աստուծոյ հետ, իր Հայրենիքի սրտին մէջ եւ իր հոգիին մէջ պահեց Ս. Էջմիածնի խորհուրդը:

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր մէջ ունեցաւ իր Եկեղեցին սիրելու տեսիլքի այն տարողութիւնը, որն ունեցած էր Գարեգին Յովսէփեանց, որպէս Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը, պատմութիւնը, մատենագիտութիւնը, աւանդութիւններն ու ոգին իր մէջ թթխմորած այն քիչերէն, որ անթիւ սերունդներ ներշնչեց ու անոնց կեանքը կապեց Հայց. Եկեղեցիին: Իր խօսքը՝ կեանք էր: Իր անձը՝ ներշնչումի աղբիւր էր ու հոգեւոր նորոգութեան ուժականութեան հրաւիրող ներկայութիւն մը:

Վեհափառ Հայրապետը, որուն ես անձնապէս ճանչնալու պատեհութիւնը ունեցած եմ շուրջ 30-35 տարիներէ ի վեր, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ անդաստանէն ներս իր կեանքը բոլորանուէր ծառայութեան վերածած այն արժանաւորագոյն եկեղեցականներէն մէկն էր, որ ամբողջապէս կրցած էր ըմբռնել Հայ Եկեղեցւոյ ոգին, լիիրաւ իմաստով իր գրութիւններուն եւ իր խօսքերուն մէջէն դրսեւորած էր Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը, պատմութիւնը, աւանդութիւնները, եւ իր բովանդակ կեանքը արժեւորած էր՝ ըլլայ Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն ներս, ըլլայ արտասահմանի տարբեր

թեմերէն ներս եւ, մանաւանդ վերջին չորս տարիներուն ընթացքին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ծաւալած իր բեղուն գործունէութեամբ:

Վեհափառ Հայրապետը աւելի քան 40 տարիներ շարունակ իր խօսքով, իր ոգեղէն ներկայութեամբ խանդավառած էր մեր Եկեղեցւոյ հաւատացեալները, անոնց կեանքը սերտօրէն կապած էր մեր Մայր Սուրբ Եկեղեցիին:

Այսօր, երբ կը բաժնուի Վեհափառ Հայրապետը մեր կեանքէն, իւրաքանչիւր եկեղեցականի համար խորհումի եւ մտածումի պահ մըն է, որ պէտք է ըլլայ տեսնելու, թէ ինչպիսի կեանք մը ապրեցաւ անիկա, եւ անոր կեանքը դարձնելու մեզի բոլորիս համար բարի եւ օրինակելի կեանք:

Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը այսօր մահէն անդին կ'անցնի իր արժեւորած ու իմաստաւորած կեանքով: Անոր յոգնաբեկ ոսկորները կը հանգչին այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նուիրագործուած հողին մէջ, որուն ընդերքին են խառնուած մեր սուրբ նախահայրերու աճիւնները:

Վեհափառը կորսնցուցինք, բայց անոր պատգամները պիտի բաշխուին Պատարագի նշխարի պէս գալիք սերունդներուն, որպէսզի սիրենք Ս. Էջմիածինն ու Մայր Հայրենիքը եւ մեր աստուածապարգեւ կեանքը դարձնենք՝ «Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

*Խաչը մեռաղից, քարից դուրս բերեք, այն ձեր Հոգու մեջ զետեղեցէ՛ք, ձեր կյանքի մեջ արտահայտեցեք: Խաչը զարդ չի, խաչը ոսկի չի, խաչը մարմար չի, խաչը կյանք է, կյանք: Եվ այդ կյանքն է, որ բաշխվում է մեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Շատ անգամներ մեզ համար խաչը եղավ ոչ թե նշան հավատքի, այլ խաչելության, մենք խաչին վրա բարձրացանք, Քրիստոսի խաչելությունը բաժանեցինք, կիսեցինք մեր կյանքով եւ այսօր այդ խաչը պիտի ապրենք ստեղծագործականորեն, այսինքն՝ պիտի նվիրաբերենք մեր ունեցածից, մեր եղածից Աստծուն եւ Հայրենիքին ու Եկեղեցուն, մշակույթին պիտի բաժին հանենք, որպեսզի մեր խաչը արտահայտենք, ինչպես Քրիստոս Իր սերը արտահայտեց՝ մեր մեղքերի համար խաչ բարձրանալով: Հետեւաբար, ողջունում եմ ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, դուք, որ աշխարհի չորս կողմերից եք եկել, եւ իմ Հարազատ Հայաստանցի եղբայրների եւ քույրերի հետ ողջագուրվենք, եւ խաչը թող լինի մեզ միացնող, մեզ իրար զուգող, շաղկապող Հոգեւոր ուժը մեր Եկեղեցու կնիքովը դրոշմված, մեր Հայրերի սուրբ արյունովը նվիրագործված, եւ մենք քայլենք այդ խաչելության ճանապարհով:*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Էջմիածին», 1997, Ը-Թ, էջ 32:

*ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ*

# ՀԱՅՐԸ

*«Որ մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող»:*
*(ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ. Գիրք Գ. ԿԷ)*

Չգիտեմ, մի պարզ զուգադիպություն էր, թե նախախնամության սահմանում, որ Ձերդ Սրբության սնարի մոտ, Ձեր այս աշխարհից մեկնումի նախորդ գիշերը, բազմաթիվ Նարեկների, ժամագրքերի և Ավետարանների կողքին դրված էր նաև Ձեր պաշտելի Ս. Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն»-ը: Վեհարանից գիշերային խորհրդավոր լռության մեջ հետզհետե նվաղող Հայրապետից առողջության համար Աստուծո բարեհաճությունը հայցող, Նարեկա Սուրբի բառերով և արտասուքով աղոթք մրմնջացող միաբան եղբայրներիս հետ միասին, ես էլ ծնրադիր վերցրեցի Խորոնքի Սուրբի մեր հայրերի պատմության վկայականը, և այս տողերն էին, որ դուրս էին գալիս գրքի էջերից, թևածում Վեհատանդ պատերի մեջ և ուրվագծում Ձեր ամբողջ ծառայական կյանքի պատկերը, ապա մարմնավորված անդրադարձով եղանակավորում ստանում էությանս, խոհերիս ու աղոթքներիս մեջ. «Որ մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող»:

Այսօր, Վեհափառ Տեր, գրույցի եմ ուզում բռնվել Ձեզ հետ, բայց ցավոք ոչ այն երանելի օրերի նմանությամբ, երբ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի և Արարատի խաչաձևվող հայացքների ներքո, աշխարհից առանձնացած, Վեհարանից պատշգամբում հայրական հորդորներով, խրախուսյով, ուղեցույցով, սաստումով և անուշ ժպիտով համեմված պատգամներով սնում էիք մեզ Ձեր իմաստության աղբյուրից:

Այսօր զրույցի եմ նստում այսուհետ սրբերի հաղորդության մեջ բնակվելու ճանապարհը բռնած հոգեղինացած Հայրապետից և Հոգևոր ծնողիս հետ արցունքոտ աչքերով, դողդոջուն ձեռքերով, կարկամյալ խոսքով և պակասավոր բառերով: Սակայն պիտի խոսեմ ամբողջ ազատությամբ և սրտիս ու հոգուս ամբողջական փոթորկումով, քանի որ չպիտի լինի այլևս Ձեր սահմանակետ դնող համեստության կիսամանկական ժպիտի ծաղկումը և թե «Տղաս, չե՞ս կարծեր, որ քիչ մը շատ է»-ն: Կրկին Մովսես Խորենացու, ում հետ քերևս այսօր իսկ երես առ երես խոսակցում եք, վիշտն է, որ իմ անարժան միջնորդությամբ ուզում եմ պատկերացրել և հասցեագրել Ձեզ՝ զգացումներիս և հուզումիս գագաթացումն ամբողջականորեն արտահայտելու համար. «Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում: Ո՞ւր է այն քաղցր

աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը չարերի համար. ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտների հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացկամ սիրտը, որ արքանյակներ էր գրավում. ո՞ւր է երկայն ճանապարհներ հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացնողը-կորա՞վ ժողովուրդը, ծածկվե՞ց նավահանգիստը, լքե՞ց օգնականը, լռե՞ց խրախուսիչ ձայնը»:

Այսօր ուզում եմ զրույցի նստել Ձեզ հետ որպես զավակը՝ հոր, աշակերտը՝ ուսուցչի հետ, բայց ոչ բանակռվի և համաձայնվելու կամ չհամաձայնվելու այնքան իրական և բնական խոսակցությամբ, այլ պարզապես մի մենախոսությամբ, որին Դուք միայն ունկնդիր եք այժմ:

Այնքան բազմառատ են Ձեր շնորհներն ու հատկությունները, որ պարզապես առանձին-առանձին դրանք նկարագրելն ու դրանց մասին խոսելը էջեր և էջերի են կարոտում, և կարծում եմ, ամբողջապես չպիտի արտահայտեն Վեհափառությանդ վեհ պատկերը: Այդ առաքինությունները խտացած են մեկ անհուն բառի, որակի և անունի մեջ, որ աղբյուրացած ժայթքում է՝ անդրանցնելով նկարագրական և հատկանշային բոլոր սահմանները - ՀԱ՞ՅԸ:

Հայրապետությանդ առաջին իսկ օրը հայտարարեցիք, որ Դուք Կաթողիկոս չեք եղել միայն գրասենյակում նստելու, այլ ժողովրդի մեջ և հետ լինելու համար, որպես Հայր շրջելու, հասկանալու և Ձեր երակների մեջ զգալու Ձեր սեփական ժողովրդի երակներում հոսող արյան տրոփյունը: Նույնը ուսուցանեցիք մեզ՝ Ձեր ծեռնասուններին, մշտապես գտնվելու կյանքի փոթորկոտ ճանապարհի ոչ թե լուսանցքում, այլ պողոտայում, ոչ թե փորձել դադարեցնել ծովի ալեկոծումները, այլ ուղղություն տալ և ապահով կերպով նավը հասցնել նավահանգիստ: Երբևէ խտրություն չդրեցիք Ձեր հոգևոր զավակների միջև, այլ մշտապես պահեցիք «քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը չարերի համար»: Հոգևորականների նոր սերունդ ունենալու տեսլականով էիք ապրում՝ սնված Սուրբ Գրքի հավերժական բխող կենդանի ջրերից, համաքրիստոնեական արժեքներից և հարազատ հայկական պարզկա աղբյուրներից: Երբեմն հպարտացաք, նոր սերունդի՝ Ձեր սերունդի հաջողությամբ և առաջխաղաղացումով ժողովրդիդ կյանքի անդաստանում, երբեմն տրտմեցիք և վշտացաք տկարացումներով և թերացումներով, բայց Ձեր հայրական մշտակա անտակ ու անհագ բարությամբ երբեք էլ չկոտրեցիք նորնոր պատասխանատվության մեծ աշխարհի առջև բացվող հոգիներն ու մտքերը, բայց հորդորեցիք, խրախուսեցիք, քաջալերեցիք՝ անդադար շեշտելով, որ իրականը ծգտումն է, մղումը, ապրումը: Խորքային մի նշանաքան ունեիք, թե «հազար պատճառ կա մի բան չանելու համար, սակայն կարող է մեկ պատճառ լինել՝ հազար նպատակ իրագործելու համար»: Ձեր հայրությունը պայմանավորված էր որդիության կատարյալ գիտակցությամբ, այսինքն՝ հայր կարող է լինել նա, ով գիտակցությունն ու ըմբռնումն ունի որդի լինելու: Եվ Դուք հավատարիմ որդին եղաք Մայր Եկեղեցու, որն էլ ծնունդ տվեց այդ սքանչելի հայրությանը: Որպես Հայրը «փոքրիկ ածուի»՝ համարձակ քայլեցիք

և Հայ Եկեղեցու շքերթն ապահովեցիք հեղինակությամբ և ծավալով ավելի մեծ եկեղեցիների հրապարակներում՝ որդու գիտակցությամբ և հոր պատասխանատվությամբ:

ՀԱՅԸ եղաք Ձեր այնքան փայփայած և գուրգուրած Ազգային Պետականության համար: Ձեզ համար նշանակություն չուներ, թե ով էր այդ պետության ղեկին և ինչ չափանիշներն էին առաջնորդողը: Մեկ բան հստակ էր Ձեզ համար, դարերի երազը իրականություն էր դարձել և անհրաժեշտ էր ոչ թե տևականորեն քննադատել, պախարակել և բացասական որակումներով արժեզրկել պետականությունն ու պետականության զգացումը, այլ հարատև և տքնաջան աշխատանքով, դրական մոտեցմամբ փոփոխել Հայաստանի Հանրապետության պարզ քաղաքացուց մինչև երկրի նախագահը: Ամենուր շեշտեցիք, որ սոցիալական և տնտեսական պայմանները չեն, որ պիտի փոխել, այլ մարդուն. մարդն է, որ պիտի շուռ տա այդ դժվարության անիվը, մարդն է՝ հարազատ հայկյան և վավերական քրիստոնյա մարդը, որ պիտի կերտի իր կյանքի պայմանները՝ միևնույն ժամանակ մարդուն իսկ կեռելով այդ դժվարությունների միջից: Տառապում էիք այն մտքից, որ չլինի թե որևէ անզգույշ խոսք, վերաբերմունք և մտածում վնաս պատճառի պետականությանը, նրա գաղափարին:

Ցավոք դարերի փորձ ունեցող եկեղեցու և պատմության դասերին կատարելապես տիրապետող պետական մտածողիդ ցանկացան տեսնել ամբոխավարի և փողոցային խոսքամաճառ դերակատարի տարազների մեջ, որն էլ պատճառ դարձավ Վեհիդ չընկալվելուն, քանզի Դուք մի քայլ առաջ էիք անցել ժամանակից: Գիտեիք, որ ամենաճոխ և ամենահարուստ պետությունը կարող է ամենամռայլ քարանձավներից ավելի սարսափելի լինել իր բնակիչների հոգևոր սնանկության պատճառով, որով լծվել էիք մարդակերտության սրբազան գործին: Այն պարզ մի գաղափար չէր Ձեզ համար, այլ ամենօրյա մտածում, ապրում, հոգու տվայտանք:

Ձեր ողջ գործունեության ընթացքում մնացիք հայ մարդուն, նրա կարողությունների, վերելքի, հրաշք գործելու հնարավորությունների որակի երդվյալ հավատացողը: Ամենաբարձր հանգամանքով Հայոց Պետությունը ներկայացրիք աշխարհի զանազան ատյաններում, որպես նրա հովանավոր և ջերմեռանդ պաշտպան հայրը, ինչով բազմաթիվ պետությունների ղեկավարների ու դիվանագետների համակրանքը, հարգանքն ու հետաքրքրությունը շարժեցիք Հայաստան աշխարհի ու նրա անբաժանելի մաս հանդիսացող Արցախական աշխարհի նկատմամբ: Այո՛, Արցախ աշխարհն իր հերոսական ժողովրդի ազատագրական պայքարով Ձեր բոլոր հանդիպումների օրակարգի հարցն էր, որ քննարկեցիք դիվանագիտական ամենատարբեր շրջանակներում՝ մնալով այդ ժողովրդի արթուն հսկող աչքը աշխարհի առջև:

Բազմաթիվ պետությունների ղեկավարների և պետական-պաշտոնական անձանց հետ հանդիպումների ժամանակ Ձեր անձնական հեղինակությամբ և հմայքով, որին կնախանձեին մերօրյա քաղաքական գործիչները, Դուք լավագույնս ներկայացրիք Մայր Հայաստանի և ողջ հայության շահերը՝ երբեմն

նույնիսկ դուրս գալով «քաղաքակիրթ աշխարհի» որդեգրած դիվանագիտական ընդունված **կանոնների սկզբունքներից**: Սփյուռքի զանազան գաղթօջախներ այցելելիս Ձեր հրավերն էր մեր ողջ ժողովրդին՝ տեր կանգնել սեփական Հայրենիքին, որն այսօր կարիքն ունի բոլորի համատեղ գործակցության՝ անկախ կուսակցական պատկանելությունից, գաղափարական տարաձայնություններից և մանր ու մեծ հաշիվներից, որովհետև **«Հայաստանն այսօր հայության պատասխանատվությունն է, ուրեմն պետք է ծառան լինենք նրա»**:

Հայրության տիրական զգացումով, հայ գրին ու գրականության, արվեստին, մշակույթին ամբողջական և էութենական ծառայությամբ դարձաք, Ձեր իսկ սիրած բնորոշմամբ, Հայ Գրի «Անլռելի զանգակատան» ժամհարն ու զանգակը միաժամանակ: Հայ Գիրը Ձեզ համար չմնաց սոսկական, ինքն իրենով արժևորված կամ թղթի վրա թանաքավորված մի երևույթ, այլ կենդանի, քայլող, ճախրող, դարերն ու ժամանակները, հոգիներն ու մտքերը անքակտելիորեն իրար շաղկապող շքեղագնաց շքերթ: Հայ Գիրը շալակած, առաքելացած մուտք գործեցիք Մեսրոպյան արարման անանց Տաճար՝ բուրվառողն ու կնդրուկաբույրը լինելով այդ հոյակերտի: Խոնարհվեցիք անհագորեն խմելու անսպառ աղբյուրից՝ «Գիրքը աղբյուր և Դուք սափոր», երկյուղով և գուրգուրանքով մոտեցաք Հայոց դպրության հավերժաբաշխ հաղորդությանը՝ հանգերգելով. «Գի՞րքն է մշակույթի պատարագին ճշխարը, Սուրբ Մեսրոպը՝ պատարագն ու պատարագողը համաժամանակ», իսկ Դուք Վեհափառ Տեր Հաղորդվողն ու Հաղորդողը: Ամենայն նախանձախնդրությամբ Հայ Գիրքը վերածեցիք Հայրենիքի, հողի, ջրի, հաց ու աղի, և որքա՜ն ջերմություն կար Ձեր վերլուծումների, խոհերի, մտածումների մեջ, որքա՜ն ճշմարիտ և վավերական էին ու են Ձեր ինքնարտահայտումները: Դուք ինքներդ սպունգացումը եղաք, տարրալուծվեցիք Հայ Գրի ու Գրականության՝ Ձեր էությունը թաթախելով եռամեծ ու բազմաքանքար հայրերիդ ավիշի մեջ: Չհանդուրժեցիք հայ տունը տեսնել առանց Հայ Գրի՝ բնորոշելով, թե «առանց Հայ Գիրքին ցուրտ կմնա հայկական տունը, որքան ալ պերճորեն, շքեղորեն կահավորված ու հարդարված ըլլա այն»: Ձեզ համար չկար հայ մարդ առանց հայ գրքի, համապատասխանաբար՝ չկա հայ գիրք առանց հայ մարդու, որովհետև նրա «բուն վախճանական տեղը գրատունը չէ, ոչ ալ մատենադարանը...Գիրքին իրական տերը հայ մարդն է, հայ ընտանիքը, որուն համար կյանքի կկոչվի գիրքը որպես աղբյուր ապրումներու, գաղափարներու, ձգտումներու, ծանոթություններու»:

Անսպառ է ասելիքս, սակայն այս վայրկյանին այն տկարանում է, թուլանում Ձեր հայրական պատկերի ամբողջական ուրվագծման, Ձեր մեծության և իմ անկարողունակության համադրմամբ: Դեռ կգան ժամանակներ, որոնք ի հարկին հիացումով և ճշմարտագիտությամբ իրենց գնահատականն ու արժեքը կտան Ձեր հրայրքի: Պատմությունն ու ժամանակը իրենց կանոններն ու թելադրանքը ունեն: Այսօր ապրողներիս համար այժմ երկնայնացյալ Հայրապետիդ՝ գործի սկզբունքին հավատացող Առաջնորդիդ խոհերն ու մտածումներն են մնացել որպես կենդանի ու կենդանախոս պատգամ: Ինչպես

բնորոշել էիք Ձեր մեծ անվանակցին՝ Գարեգին Հովսեփյան Կաթողիկոսին, կարծես Ձեր մասին խոսելով. պիտի մնաք եկեղեցվո մարդ, Հայրենիքի մարդ, Մշակույթի մարդ: Պիտի չմնաք միայն Ձեր անձի հմայքով ու վեհությամբ գնահատված, սակայն առավել կոսկեփայլվի Ձեր վաստակն ու անունը Ձեր իսկ թողած հոգևորականների ժառանգության՝ Ձեր սերունդի եկեղեցու ջրտուքի և պտղաբերության արդյունքով:

Մահկանացու ծնվեցիք. անմահ հիշատակ թողնելով:

*Որդիական խոնարհումով՝*
*Հավերժ Ձեր հոգեզավակ ու աշակերտ*

***ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ***

*Եղբայրնե՛ր. եկէք լինե՛նք հաւատարիմ մեր եկեղեցականի իսկատիպ ինքնութեանը: Ի՜նչ գեղեցիկ բառ է **Հոգեւորական** բառը, այսինքն՝ Հոգիի մարդ, Աստծու Ս. Հոգիին ճառագայթները ցոլացնող մարդ: Մեր երկնաւոր Վարդապետի սրբախօս շրթներից արտասանուած բառերով լինենք «աղ», որպէսզի մեր կեանք-խօսքը կարողանայ համ տալ մեր հաւատացեալների կեանքին, լինենք «լոյս», որպէսզի կարողանանք լուսաւորել մարդկանց կեանքի ճանապարհը* (Տե՛ս ՄԱՏԹ. Ե 14-16)*: Թող վերանորոգութեան շունչը մեզնից սկսի:*

*«Էջմիածին»,* 1996. Ա. էջ 14

*Ահա այսպէս Աստուածամօր խորանին ընծայուած խաչքարին պէս վաղը պիտի ընծայուիք մեր Մօր՝ Ս. Եկեղեցւոյ խորանին: Պիտի պատարագուիք Աստուծոյ: Պիտի երթաք ժողովուրդին: Խորանը հանգոյցն է Աստուծոյ եւ մարդուն, հանդիպման կէտը՝ աստուածային շնորհին եւ մարդկային ծառայութեան: Դպրեվանքը ձեզ հիւսեց, կազմեց տարի առ տարի, Աւետարանի, աղօթքի, շարականի, գրաբարի, աշխարհաբարի, գիրքի ու մանաւանդ անոնց մէջէն արտահոսող ոգիի, գաղափարի եւ իտէալի թելերով, հաւատքի, յոյսի, սիրոյ եւ նուիրումի հիւսկէններով:*

*Պիտի այժմ բացուիք քակուելով առանց քակուելու, ճառագայթելով առանց լոյսէն մարելու, ծառայելով առանց սպառելու: Յոգնութիւնը մե՛րն է. խա՛չն է ան, մեր հարազատ աւետարանական լեզուով: Խաչը յաղթանակ է, երբ սիրով կը տարուի. տառապա՛նք կը դառնայ այն ատեն, երբ սէրն անոր մէջ ցամքի, ինչպէս ծառը փայտ կը դառնայ, երբ աւիշն անոր մէջ սպառի կամ չորնայ: Խաչն այն ատեն կը վերադառնայ իր նախնական տիպին, նախաքրիստոնէական իմաստին, որպէս չարչարանքի գործիք:*

*«Խորհէ եւ մտիր» գրքից*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

***ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ***

# «ՏՈՒՐ ԶՕՐՈՒԹԻՒՆ ԾԱՌԱՅԻ ՔՈՅ»

Դարեր առաջ սաղմոսերգուի հայացքը երկնքին դիպավ ու շրթներն անձկագին բարբառեցին այս խոսքերը. «Տուր զօրութիւն ծառայի քոյ, կեցո զորդի աղախնոյ քոյ, և արա առ իս նշան բարութեան»: Անցան բյուրավոր տարիներ, և սաղմոսերգուի նույն խոսքերը ծաղկեցին Ամենայն Հայոց Հայրապետի, այժմ արդեն հանգուցյալ Գարեգին Ա Վեհափառի շրթներին, երբ 1995 թվականին մեր սիրեցյալ Վեհափառը, Աստծու տեսչությամբ ու ազգիս ընտրությամբ, կոչվեց ծառայության Հայոց Եկեղեցու բարձրագույն աստիճանին, իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց: Այսօր նույն խոսքերով եմ բարբառում առ Բարձրյալն Աստված:

«Տուր զօրութիւն ծառայի քոյ», Աստված, որ Հայոց Հայրապետի անշնչացյալ մարմնի առջև զսպեմ սրտիս փղձուկն ու աչքերիս արտասուքները, և Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի գործին ու առաքելությանը արժանի խոսքերով ու մտքերով դիմեմ սգացող մեր ողջ ժողովրդին:

Չորս տարիներ են անցել այն օրից, երբ Լուսավորչի Աթոռի սգո շղարշները, Վազգեն Ա երջանկահիշատակ Հայրապետի վախճանումից հետո, վերցվեցին, և Գարեգին Ա նորընտիր Հայրապետը, հովվապետական գավազանն ի ձեռին, բազմեց մեր հավատո հոր գահին:

Չորս տարիներ, բայց և բազում ճանապարհներ, ինչպես սիրում էր ասել մեր հանգուցյալ լուսահոգի Հայրապետը Հայոց, գործունեության ընդարձակ ոլորտներ և ասպարեզներ, անհուն տքնություն, անվերջ հոգնություն, ինքնազոհություն ու ինքնընծայում:

Հարգանք ու ամբողջական խոնարհում Քեզ, հանգուցյալ Հայրապետ Հայոց:

Հարգանք խոսքիդ:

Հարգանք գործիդ ու վեհ անձիդ:

Քո իսկ խոսքերով՝ տկար էին ուսերդ, Վեհափառ, կրելու համար Հայոց Եկեղեցու ամբողջ ծանրությունը, բայց Աստված կորով և ուժ տվեց իր «Աղախնու Որդուն»՝ ընտրյալ Հայրապետիդ, և գահակալության չորս տարիներիդ բազում ճամփաներում ու քառուղիներում Աստուծո անունը փառաբանող բազում հուշարձաններ կանգնեցրիր:

**«Հայր սիրէ զորդիս իւր»**

Հայր եղար Քո որդվոց, Մայր Աթոռիս միաբանության ու հարազատ ժողովրդիդ զավակների համար: Երկար ու ձիգ ճանապարհներ անցար, Հայրապետ Հայոց, և «օտար ու ամայի ճամփեքին» հայրենաքաղց հայու հոգիներ ու սրտեր ջերմացրիր էջմիածնաշունչ քո հորդորներով ու հայրական խոսքերով:

Ամերիկայից մինչև Ավստրալիա, Ռուսաստանից մինչ Եգիպտոս հաղթահարեցին արդար ճանապարհներ ընթանալու վարժված ու առաջագնաց

ոտքերդ՝ ամենուր հասցնելու, ամենուր ոգևորելու, ամենուր հայությանը ծառուցելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ակունքներից բխող անարատ ու կենդանարար ջուրը:

Հայաստանից ներս հետևողական տքնությամբ ու լուսափյուռ տեսիլներով այցելեցիր «փոքու հոտիդ Հայաստանեայց գարմի»: Խոսքով մխիթարեցիր, գործով գոտեպնդեցիր, կյանքովդ քաջալերեցիր:

Հայր եղար Մայրավանքիս միաբաններին, հոգու նոր մշակներ հասակ առան, Հայրապետ Հայոց, մաքուր շնչիդ ներքո, որոնց առատորեն բաշխեցիր հոգուդ ու մտքիդ ամենանվիրական ու թանկարժեք նշխարները:

Լույս հագնի հոգիդ, Հայրապետ Հայոց:

**«Մի անցուսցես աւուր մի եթէ ոչ ընթերցցես գգիր մի»**

Գիշերը ցերեկին խառնած՝ ժամանակի զգացողությունն ու տևողությունը կարծես կորցրած, անվերջ ընթերցում, գրում ու գրում էիր, Հայրապետ Հայոց:

Վարչական հսկա աշխատանք, միջեկեղեցական ու ներեկեղեցական բազում ու լեցուն խնդիրներ, որոնք լուծում էին առնում դժվարին ճիգերով, բայց և նույնն էիր, Հայրապետ Հայոց, գրասեղանիդ մատենագիրներ, սրտիդ մեջ՝ «Առաւօտ լուսոյ»-ն ու «Էջ Միածին»-ը, հոգումդ՝ ծարավ գիր ու գրքերի: Հոգիդ այդտեղ էր, մագաղաթներում, Ավետարանի լուսե խոսքերում: «Ուր սիրտք ձեր են, անդ և գանձք ձեր եղիցին»: Գանձերդ այսօր, Հայրապետ Հայոց, մեզ են ժառանգվել, մտքիցդ ելած ու ձեռքովդ թղթին հանձնված խավարասիրությունը փարատող մտքերդ ամփոփող գրքերը մեզ են փոխանցվել: «Հայ մարդը իր հայ գիրին» առջևն է, հայ գիրդ հայ մարդուն ուսուցիչ է:

Լույս հագնի հոգիդ, Հայրապետ Հայոց:

**«Գիտութիւն հպարտացուցանէ, այլ սէր շինէ»** (Ա ԿՈՐՆԹ. Ը 1)

Այս սիրով կառուցեցիր ու բարեկարգեցիր այն բոլոր եկեղեցիներն ու վանքերը, Հայրապետ Հայոց, որոնք խնամատար ձեռքի ու «ավերակասերին ոճրահարող» կամքի ու կորովի կարոտն ունեին:

Ընդհամենը չորս տարիներ, բայց եկեղեցիների ու վանքերի կառուցման ու բարեկարգման ինչպիսի ծավալ ու ընդգրկում:

Հայաստանի բոլոր թեմերում սկսված ու շարունակվող հսկայածավալ աշխատանք, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նորոգվող շենք, կառուցվող հանրակացարան, ուր դրոշմված է Գարեգին Ա հանգուցյալ Հայրապետի լուսեղեն կնիքը, այս բոլորը վկայությունն էր Վեհափառ Հոր անմնացորդ նվիրումի: Հայրապետ Հայոց, երբ ժամանեցիր Մայր Աթոռ, հանգուցյալ Վազգեն Կաթողիկոսի անշնչացյալ մարմնի առջև ակնածանքով բարբառեցիր. «Երանի քեզ, եկեղեցաշեն Կաթողիկոս»:

Այսօր «Ձերոյ ի քոյոց քեզ մատուցանեմք»՝ այս նույն խոսքերը արժանիորեն Քեզ ենք ընծայում, որ այսքան կարճ ժամանակահատվածում սիրտդ ու հոգիդ միախառնեցիր հայրենի երկրիդ նորակառույց ու նորոգվող սրբավայրերի ամուր շաղախին: Երանի նաև Քեզ, որ քարից անդին եկեղեցու հոգին տեսար և շաղախից անդին այդ շաղախին խառնված ուժ ու ամրություն տվող հայ շինարարի արյուն-քրտինքն ու նվիրումը ճանաչեցիր:

Կառուցեցիր ու նախաձեռնեցիր գիտությամբ, բայց ոչ հպարտացնող, այլ սիրուց սերված մի գիտությամբ, որ մեկ իմաստ ու անքագնահատելի մի նշանակություն ունի՝ Աստվածգիտություն:

Լու՜յս հագնի հոգիդ, Հայրապետ Հայոց:

**«Խաղաղութիւն զիմ փամ ձեզ, խաղաղութիւն զիմ թողում ձեզ»**

Երբեմն-երբեմն արտահայտվող կրակոտ ու արդար բարկության ժամանակ նույնիսկ անսահման խաղաղասիրության վճիտ մի շող կար նայվածքիդ մեջ, Հայրապետ Հայոց:

Նայեք աշխարհին, մարդկային բազմության անցուդարձին, դեպքերի ու իրադարձությունների թավալգլոր ու սրընթաց զարգացմանը, որքան ոճիր ու քանսարկություն, խարդավանք ու իշխանասիրություն և որքան կարելի է՛ քի՛չ, քի՜չ ու քի՜չ խաղաղություն ու խաղաղասիրություն:

Խաղաղասիրության իշխանն էր, սակայն, Քո տեսիլքը, Հայրապետ Հայոց, ներողամտությունն ու հանդուրժողությունը մեղավորի հանդեպ, բայց ոչ երբեք՝ մեղքի:

Քրիստոնեական կյանքը խաղաղասիրության արտափայլումն է աշխարհի կյանքի մեջ, և այդ կյանքը լավագույնս առարկայացրիր Կաթողիկոսությանդ ընթացքում: Սրբիկներով զատված քրիստոնեական ո՛ր եկեղեցին էլ որ մուտք գործեցիր, համեղքայրության ու խաղաղասիրության փայլում կեցվածքով ու դիմացինիդ աչքերի մեջ սեփական եղբորը փնտրող ազնիվ նայվածքով ներկայացար՝ առանց օտարամոլության, առանց այլապաշտության:

Լույս հագնի հոգիդ, Հայրապետ Հայոց:

Հիմա վախճանումիդ հաջորդող տխուր թոթովանքներիս մեջ սրտի ցավով, բայց և սքանչացումով ու պատկառանքով եմ հիշում, Հայրապետ Հայոց, մարտդ, ահեղ մարտդ դաժան հիվանդությանդ դեմ:

Փնտրեցեք մարդ, ով չի երկնչում մահվանից, գտեք մահվան սոսկումով ապրող հողեղեն մի արարած, ով Հիսուսի նման Աստծուց չի խնդրելու՝ **«Տէր անցո զբաժակս զայս յինէն»**: Ամենքիս բաղձանքն էր, Վեհափառ, որ այդ բաժակը երկա՜ր ժամանակ հեռու լիներ Քեզանից, բայց ... Հայրապետ Հայոց, հիվանդության այդ դառը բաժակը ցմրուր դատարկեցիր, ու չլքեց Քեզ հույսը՝ Հարուցյալ Փրկչին փարվելու հույսդ:

Տոկացիր և երկրավոր կյանքից դեպի ուրիշ մի կյանք տանող մահվանդ խորհրդավոր այն մահճում Մայրավանքիդ միաբաններին անմեկնելի հանդարտությամբ ու համոզչականությամբ պատգամեցիր. **«Անպանելիորեն պկար եմ, դուք զօրաւոր բլյաք: Սիրեցէք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը»**: Խոսքերդ են, Վեհափառ, ստեղծարար խոսքերդ:

Վերջին մի պատգամ էլ ունես մեզ, Վեհափառ Տեր, չեմ կարող անշնչացյալ շրթներիցդ չքաղել այս խոսքերը, չթարգմանել այդ մտքերը:

**«Ես գնամ ճանապարհ ամենայն երկրի, և դուք զօրասջիք և արք զօրաւորք լիջիք»**

Այո, Վեհափառ, մեկնում ու բաժանվում ես մեզանից՝ հոգիդ քնանցուկ

դառձնելով լուսեղեն հորիզոններում ճեմող մեր սրբազան նախահարց հոգիներին:Բաժանման տագնապով են լցված սրտերը մեր, բայց և հույսով, որ «ոչ երբեք ամաչեցուցանէ», որ մի օր «ամենայն երկիր ընթանալու» ճանապարհին կրկին հանդիպելու և հաղորդակցվելու ենք Ձերդ Սրբության հետ:



Մենք բոլորս ենթակայ ենք փորձութեանը նիւթական հացի տիրապետութեան: Յաճախ զուտ աշխարհային եւ աշխարհահաճոյապաշտ, մարմնապաշտ ու հաճոյապաշտ ձգտումները եւ շարժումները արդիական, նոյնիսկ ըստ ոմանց, յետ-արդիական կամ գերարդիական կեանքի, խոր տպաւորութիւն կը գործեն եւ լայն ու տիրական տեղ կը գրաւեն մեր այսօրուան կեանքին մէջ: Մեր Հայաստանի, մեր ժողովուրդի ներկայի կեանքին մէջ դրսեւորուող հոգեւոր վերարթնութեան այս շրջանին մենք պարտաւոր ենք գտնել միջոցը ~~ներդաշնակելու~~ նիւթական հացը հոգեւոր հացին հետ: Եթէ այսօր թերանանք այդ խիստ էական պարտաւորութեան մէջ, ապագային աւելի դժուար կը դառնայ մեր գործը: Պարտաւոր ենք գործել ուժգնաբար, շարժիլ արագաբար: Մեր Հայց. Եկեղեցին տեսակ մը հացթուխ է հոգեւոր այդ հացին, մեր հայրերու դարաւոր աւանդութեան փորձով եւ ոգւով օժտուած: Այսօր Բեթղեհէմին հացին թարմացման առաքելութիւնն է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջնահերթ պարտաւորութիւնը:

«Էջմիածին», 1998, Ա. Ի 6:

Բարձրիմաստ բառ մը ունի մեր ժողովուրդը մեռնողին համար, դասական հայերէնի յատուկ, դարաւոր աւանդութեամբ կենդանի բառ մը - «ննջեցեալ»: Մեռնող մարդուն համար, քրիստոնէական մեր հաւատքին որպէս արտայայտութիւն մեր հայրերը կ'ըսէին «ննջեցեալ», որովհետեւ մեռնողը չի փճանար քրիստոնեայ հայուն համար, այլ յարութենականութեան քունի մէջ կը մտնէ: Այո՛, կ'արթննայ ան. եւ ո՛չ միայն երբ «փողն հնչէ», այլ ամէ՛ն անգամ երբ մեր Հոգւոյ կանչը դէպի երկինք ուղղուի: Կ'արթննայ ան երբ մենք արթուն մնանք. եւ երբ արթննայ՝ մեզ աւելի արթնաթարմ կ'ընէ յարութենէն ցօղ մը կաթեցնելով մեր աշխարհապաշտ գոյութեանը մէջ:

«Հող, մարդ եւ գիր» գրքից

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

*ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ*

# ԽՈՍՔ ՑԱՎԻ ՈՒ ԱՓՍՈՍԱՆՔԻ

Առաջին անգամ երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոսի անվանը հանդիպեցի սրանից 25 տարի առաջ, երբ գտնվում էի Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Կիլիկյան Կաթողիկոսության միջև եղած հակասությունները դեռ բավական ուժեղ էին և այդ իսկ պատճառով գաղութում տիրող խռովքներն ու իրարամերժությունները՝ զգալի: Եվ չնայած դրան, նկատում էի, որ նույնիսկ էջմիածնական շրջանակներում հարգանքով էր հնչում տեղի կիլիկյան թեմի առաջնորդ Գարեգին եպիսկոպոս Սարգսյանի անունը:

Անցան տարիներ, միջկաթողիկոսական վեճերն անհամեմատ մեղմացել էին, Գարեգին Սրբազանը հաճախ էր այցելում Մայր Աթոռ, հետևաբար հաճախ էր առիթ ընծայվում հանդիպելու հեռուներից ժամանած հյուրին: Պատահում էր, Վեհարանի սրահներում զրույցի էինք բռնվում գրականության, բանաստեղծության շուրջ: Խորապես գիտեր հայ գրականությունը, պոեզիան ու նաև հայաստանյան գրողներին: Ունեինք ոչ միայն զրուցելու ընդհանուր նյութեր, այլև ընդհանուր բարեկամներ՝ Անդրանիկ Ծառուկյան, Մուշեղ Իշխան, Վահրամ Մավյան: Լայն մտահորիզոնի տեր անձնավորություն էր, խորացած էր ոչ միայն աստվածաբանության, այլև ժամանակակից աշխարհի բարդությունների, գիտական ու քաղաքական նորամուծությունների մեջ: Միևնույն ժամանակ պարզ ու անմիջական էր, մարդամոտ, նույնիսկ այն տարիներին, երբ արդեն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն էր: Ահա թե ինչու ես խորին գոհունակությամբ ընդունեցի Գարեգին Բ Կաթողիկոսի՝ Ս. Էջմիածնի գահին բարձրանալու իրողությունը:

Սակայն կարծում եմ, ինքը՝ նորընտիր Կաթողիկոսն էլ գիտակցում էր, որ իրեն վիճակվել է բավական դժվար մի կացություն: Հայաշխարհը կորցրել էր Վազգեն Առաջինին, այնպիսի մի Կաթողիկոսի, որ դեռ խորհրդային կյանքի ընդհանուր «անաստվածության» պայմաններում իր տեսքով, խոսքով ու խորքով, անհնար պահերին հնարը գտնելու իր իմաստնությամբ շահել էր ժողովրդի անսահման սերն ու մեծարանքը, դեռ իր կենդանության օրոք՝ սրբացվել: Ժողովրդի 1700 տարի տևող հավատալու, ապավինելու արդեն բնազդական դարձած պահանջը կարծես գոհացում էր գտնում Վազգեն Վեհափառի մեջ, տարածվում նրա անձի վրա: Եվ, ինչ խոսք, անասելի դժվար էր փոխարինել այդպիսի մի նախորդի: Գարեգին Բ Կաթողիկոսին վիճակվեց այդ դժվարին փորձությունը: Կար նաև մի այլ կարգի հանգամանք: Նորընտիր Կաթողիկոսն իր գահակալական պարտականությունը ստանձնեց հայաստանյան կյանքի շատ բարդ մի հանգուցակետում: Նրա՝ սփյուռքահայ մարդու հոգում տարիներ շարունակ սնված ու փայփայված երազանքը՝ ազատ ու

անկախ Հայաստանի ստեղծումը, վերջապես մարմին էր առել, պարուրել նրան անսահման բերկրանքով ու խանդավառությամբ: Մինչդեռ երկրաշարժ, 1992-1993 թթ. ծմեռներ տեսած, կարիքի մեջ տառապող, իշխանավորների ապիկար վարքուբարքից հիասթափված և դառնությամբ ու զայրույթով լցված հայրենի ժողովուրդն ի վիճակի չէր հասկանալու իր հոգևոր առաջնորդի այդ խանդավառությունը, լիասիրտ գնահատելու նրա մտավոր ու հոգևոր փայլուն կարողությունները, արժևորելու նրա ձգտումը՝ իր խոսքը Պատարագի նշխարի պես բաժանելու ժողովրդին: Կասկած չկա, եթե փոքր-ինչ բարելավվեր Հայաստանի վիճակը, ավելի երկար ու տևական հաղորդակցություն ստեղծվեր Ամենայն Հայոց Հայրապետի և նրա հայաստանաբնակ հոտի միջև, կստեղծվեր այդ փոխներթափանցումը, և էջմիածնի նոր գահակալը ըստ արժանվույն կգնահատվեր ու կօրհնաբանվեր:

Ափսոս, հազար ափսոս, որ Հայոց 131-րդ Կաթողիկոսն այդքան վաղաժամ հեռացավ մեզանից, և այդքան ողբերգականորեն ընդհատվեց նրա խոսքը, որ շքեղորեն հնչում էր նրա շուրթերի վրա՝ ցուցադրելով հայ լեզվի և հայ մտքի մեծազանձ կարողությունները: Բարեբախտություն է, որ մնացին նրա ազգաշահ գործերը, բազում ու բազմազան աշխատությունները, նրա արտասովոր մտքի ու հայության բաբախող հոգու գրավոր վկայությունները, որոնք շատ անելիք ունեն մեր այս նյութապաշտ, օրեցօր հայաթափվող ու ոգեթափվող ժամանակներում:

*Վերածնունդեան եւ վերազարթօնքի Համազգական շարժումի այս օրերուն, մեր աղօթքին ու մտածումին սլաքը կ՚ուղղենք ու կը սեւեռենք մեր Հայրենիքին վրայ, որ ահա չորս տարիներէ ի վեր Աստուծոյ օրհնութեամբ եւ Հայ ժողովուրդի տքնաթաթաւ, տաժանագին եւ հերոսական ջանքերովը մտած է նոր ճամբու մէջ, որ ազատութեան եւ անկախութեա՛ն ճամբան է ժողովուրդի ինքնիշխան կամքով որոշելի եւ ընթանալի: Երջանիկ ենք որ կաթողիկոս ընտրուեցանք մեր ազատ ու անկախ Հայաստանի նոր Հանրապետութեան օրով: Անհուն սիրով եւ անսահման նուիրումի եւ ինքնընծայական զոհաբերութեամբ ու խոր յարգանքի զգացումներով կ՚ողջունենք մեր այս նոր ու պայծառ թուականն Հայոց արդի պատմութեան եւ կը մնանք ամբողջականօրէն զօրավիգ անոր ամրացման եւ զարգացման:*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Էջմիածին», 1995· Զ Ե Ք 10·

*ՊՐՈՖ. ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ*
*Անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի*

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՎԻՇՏ ՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Դեռ ուշքի չեկած երջանկահիշատակ Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետի կորստյան վշտից՝ Հայաստանյայց Եկեղեցուն և ազգին բաժին ընկավ ծանր ու անդառնալի նոր կորուստ. ծանր ու անդարմանելի հիվանդությունից հետո կյանքից հեռացավ Լուսավորչի Աթոռի հաջորդ գահակալը՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Կաթողիկոսը: Խիստ կարճ տևեց նրա հովվապետությունը՝ հազիվ չորս տարի, այն էլ վերջին մեկ տարին անբուժելի հիվանդության դեմ մաքառումների մեջ՝ ի վիճակի չլինելով իր ստեղծագործական ուժերը լիակատար ձևով դրսևորել, աչքերը փակելուց առաջ իր նվիրական ցանկություններն ու իղձերը մերձավորներին ու միլիոնավոր հայ հավատացյալներին հայտնել: Եվ այս է, որ նրա անձն ու կերպարը դարձնում է առանձնապես ողբերգական:

Ընդունված էր Գարեգին Առաջինին երջանիկ Հովվապետ անվանել՝ միայն այն պատճառով, որ նա վերջին տասը դարերի Հայաստանյայց Եկեղեցու պատմության մեջ գահ էր բարձրացել Հայկական ազատ ու անկախ պետականության պայմաններում: Այս երջանկությունը, սակայն, երևութական էր, իսկ երանելի Հայրապետի կացությունը՝ ո՛չ նախանձելի:

Իբրև ազգի Գերագույն Հոգևոր Պետ՝ իր գրավոր ու բանավոր ելույթներում, իր հորդորների ու քարոզների ժամանակ, ի սփյուռս աշխարհի հայ հավատացյալների հետ ունեցած բազմապիսի հանդիպումների և հովվապետական այցելությունների ընթացքում նա ջանում էր հույս ու հավատ ներշնչել և քրիստոնեական ոգին վերարթնացնել ունկնդիրների մեջ՝ մշտապես պատգամելով բարձր գնահատել անկախության գինը, համախմբվել հայրենի պետականության շուրջ, ամեն ինչ նվիրաբերել սիրելի հայրենիքի ազատության ու անկախության համար, ամենուր և ամեն ինչում չմոռանալ պետական հավատարմությունը: Եվ մարդիկ լսում էին Նորին Սրբությանը զարմացած ու երբեմն էլ՝ տարակուսած...

Սեր ժողովրդի գիտակցության մեջ Կաթողիկոսը բարձրագույն հեղինակություն է՝ ամենատես, ամենահաս, ամենակարող: Նա խրատող հայր է, թշվառների ու փիտվածների հույս և ապավեն, երկրում կարգ և օրինականություն հաստատող: Ժողովուրդն այդպիսի Կաթողիկոս էր ուզում տեսնել Նորին Սրբության գահակալության հենց առաջին օրերից: Անասելի էր առաջին ունկնդիրների խանդավառությունը և չուշացած հուսախաբությունը: Օրավուր ավելի էր խորանում ժողովրդի տնտեսական թշվառությունը, ավելի ու ավելի ակնհայտ դառնում Անկախ պետականության իշխանավորների անճարակությունը, նաև ոմանց դատապարտելի ընթացքը: Նման պայմաններում

միանգամայն հասկանալի էին և՝ երկիրը լքող ու օտար ափերում փրկություն որոնող հարյուր հազարների արտագաղթը, և՝ աղանդավորների սանձարձակությունները, և բացահայտ մարդորսությունը՝ ձեռնարկված այլ դավանությունների կողմից: Վտանգվում էր Հայաստանյայց եկեղեցու հեղինակությունը: Վեհափառը քայլեր էր անում առաջն առնելու, բայց վերջը չէր երևում:

Շատերին էր օգնության ձեռք մեկնում երջանկահիշատակ Հայրապետը՝ տասին, հարյուրին, հազարին, բայց թշվառներն ու փիտվածներն անասելի շատ էին, հարյուր հազարավորներ, որ Նորին Սրբությանը դնում էր անելանելի վիճակում: Վատթարացող առողջական վիճակի հետ միասին այս ամենը նս ծվատում էին Նրա հոգեկան աշխարհը, մինչև որ հնչեց ծրիասական ժամը: Սա արդեն համազգային ողբերգություն էր...

Շատ բան, այնուամենայնիվ, հասցրեց անել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինը. նա բարեկարգեց Գևորգյան Հոգևոր ճեմարանը, հիմնեց նոր թեմեր՝ առավել ճկուն դարձնելով Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական կառույցը, սկիզբ դրեց եկեղեցաշինական մեծ շարժման՝ անձամբ օծելով վերաբացված կամ նորից-նոր կառուցված բազմաթիվ եկեղեցիներ հայրենիքում և Սփյուռքում: Ոչ պակաս կարևոր նախաձեռնումներ էլ մնացին կիսակատար, և առաջին հերթին՝ Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու շինարարությունը՝ ավանդ մնացած դեռևս երջանկահիշատակ Վազգեն Առաջին Կաթողիկոսից, որի բարեհաջող ավարտը մնում է հետնորդներին:

Երջանկահիշատակ Գարեգին Առաջինը բացառիկ անհատականություն էր՝ մաքրակենցաղ հոգևորական, հմուտ աստվածաբան, բազմագիտակ հետազոտող ու գրչի մշակ, անձանձիր ուսուցիչ, միջազգային ճանաչման արժանացած հոգևոր գործիչ, փայլուն հռետոր, առատ ու շռայլ Մարդ, որ բաց ճակատով իր ազգն ու հայրենիքը ներկայացնում էր օտարներին: Այսպիսի Անհատների Տերն է առաքում աշխարհ, այն էլ ո՛չ հաճախ ու ո՛չ ամեն ժողովրդի: Ինչպես հներն էին ասում՝ ափսո՜ս, որ նա անժամանակ թառամեց մեր ազգի համար...

*Ճանաչել ի՞նչ է նշանակում: Թղթով կարող եմ ճանաչել՝ անուն, մականուն, թվական, տեղ: Այդ ճանաչել չէ: Չինաստանն էլ կարող եմ ճանաչել այդպես: Ճանաչել, նշանակում է հաղորդվել, զգալ ժողովրդի ապրումները քո մեջ, զգալ, թե ժողովուրդը ինչ է ակնկալում Եկեղեցուց, զգալ, թե ժողովուրդը ինչպես է կապված եկեղեցուն, զգալ, թե ինչու է հեռու մնում, մեկ խոսքով՝ այդ կենդանի հաղորդությունն է, որ հոգեւորականի կոչումն ու պարտականությունն է: Մենք ուղարկված ենք, մենք մեզ չենք քահանա դարձրել, այլ Աստված: Ժողովուրդն է կանչել մեզ, եւ մենք պիտի այդ ժողովրդի մեջ լինենք:*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Էջմիածին», 1995, Ժ-ԺԲ, էջ 15.

***ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ***
***Բանասիրական գիտությունների դոկտոր***

# ԱՓՍՈ՜Ս...

Գրքի մեծ բարեկամ էր ու մեկենաս: Լիբանանյան պատերազմի տարիներին Անթիլիասում գրքի ցուցահանդեսներ էր կազմակերպում պարբերաբար: Սատար էր լինում հեղինակներին, մեր «անկախության» դժվար տարիներին հայրենաբնակ տասնյակ հեղինակների գործեր հրատարակեց /տողերիս հեղինակի «Ներսես Լամբրոնացին հրապարակախոս» մենագրությունը ևս/: Նման վերաբերմունքը գրքի հանդեպ ներարկում էր նաև իր շրջապատին: Հիշում եմ, համալսարանում աստվածաբանության ֆակուլտետի բացման հանդիսության վերջում, երբ ֆակուլտետի դեկան Շահե արքեպս. Աճեմյանը բացված գիրք-տորթը հանդիսավորաբար մատուցեց Վեհափառին՝ այն կտրելու պատիվը նրան վերապահելով՝

-Ամբողջ կյանքում գիրք եմ արարել, հիմա ինչպե՞ս փչացնեմ այս գիրքը. -ասաց:

Իրավունք ուներ:

Իր գրքերից մեկում կենսագրության մի դրվագ է պատմել Վեհափառը: Ծննդավայրի՝ Քեսաբի դպրոցի աշակերտ Նշան Սարգսյանը /սա աշխարհիկ անուն-ազգանունն է/ հրաժարվում է... դպրոց հաճախել: Իզուր են անցնում հոր հորդորները: Փոքրիկը հազար պատճառ էր բերում՝ խնամքով թաքցնելով հազարմեկերորդը: Հայրն էլ խուսափում էր այդ մասին խոսելուց: Իսկ պատճառը՝ հազարմեկերորդը, այն էր, որ հոր գործերը վատ էին ընթանում, և որդին որոշել էր թողնել ուսումը, դերձակություն սովորել, օգնել հորը: Հայտնի չէ, ինչով կավարտվեր երկու համառների վեճը, եթե չխառնվեր նախախնամությունը: Այդ պահին տան մոտով անցնող քահանային հայրը տուն է հրավիրում՝ «գավաթ մը սուրճի»: Տեր Հոր միջամտությունն էլ ապարդյուն է անցնում: Բայց, ահա, քահանայի առաջարկությունը՝ ուսումը շարունակել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի Դպրատանը, հետաքրքրում է նրան, և փոքրիկը դառնում է Դպրատան սան՝ հետագայում դառնալու համար Ամենայն Հայոց Կաթողիկոս: Նախախնամությունը վճռել էր, որ նա միայն իր հորը չպետք է օգներ, այլ ազգի բոլոր հայրերին, ավելին՝ պետք է դառնար ազգի հայրը, հոգևոր հայրը:

Ի՜նչ եռանդով ու ոգևորությամբ նվիրվեց հայրենիքում Եկեղեցու և հավատքի խաթարված պատկերը վերականգնելու նվիրական գործին: Նրա ծեռնարկումներից շատերը իրականանում են իր անժամանակ մահից հետո...

Ափսո՜ս, կարծես թե շատերը չհասկացան, չհասկանալով՝ չգնահատեցին նրա գործունեությունը:

Կարծում եմ, երկու հանգամանք վճռական եղան այս դեպքում:

Նախորդ հասարակարգի տասնամյակները որոշակիորեն կաղապարել էին մեր պատկերացումները Եկեղեցու և եկեղեցականի մասին: Երկուսն էլ

հեռու էին /հեռացված էին/ ժողովրդի կյանքից, եթե չասենք՝ մեկուսացված: Վեհափառը դեպքից դեպք էր հանդիպում ժողովրդին, ու կարծես դա էր ընդունվում հանրության կողմից: Վերափոխված ժամանակները նոր պահանջներ էին առաջադրում, և Գարեգին Առաջինը անմնացորդ նվիրումով լծվեց այդ պահանջների իրագործմանը: Ահսկայական գործ կար անելու. Վեհափառն ամենուր էր, ժողովրդի մեջ էր, ժողովրդի հետ, ժողովրդի համար: Գիտնականի հետ գիտնական էր, վարիչների հետ՝ վարիչ, մանուկների կողքին՝ մանուկ...

Իսկական հոգևորականի այս պահվածքը անսովոր էր շատերի համար, նաև՝ անհասկանալի...

Երկրորդ հանգամանքն էլ կար. հակառակ հայրենաքնակների ծանր հիասթափության, Սփյուռքն անհամեմատ երկար վայելեց ընձեռված անկախության ոգևորությունը: Վեհափառը Սփյուռքում էր ծնվել ու ձևավորվել: Եվ, ահա, նրա ելույթներում հնչող գովեստի խոսքերը պետական այրերի հասցեին /Հայ Եկեղեցին միշտ էլ սատար է կանգնել հայոց պետականությանը/ սառնություն էին մտցնում Վեհափառի նկատմամբ վերաբերմունքի մեջ...

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի անժամանակ մահը ազգային մեծ կորուստ է:

*Ես, այսպէս ասած, Սփիւռքի զաւակ եմ: Ես Հայրենիքի մէջ չեմ ծնած: Բայց Հայրենիքը իմ մէջս է ծնած: Ծնած է այն օրէն երբ Հայոց լեզուն հնչած է ականջներուս մօրս օրօրոցի երգերով, երբ Ա. Բ. Գ.-ը բացուած է աչքերուս դիմաց դպրոցական գրատախտակներուն վրայէն, երբ Հայոց մատեանները դարձած են յարաբուխ կենսաւիչ ու մտքերուս հետ խառնուած միացան...: Ահա այսօր եկած եմ Հայրենիք որպէս Հարազատ տուն, ուր կը զգամ այնպէս որ կարծես երբեք անկէ բաժնուած չէի...:*

«Էջմիածին», 1995, Դ, էջ 75:

*Մենք, որ այժմ գտնվում ենք մեր Հայրենիքի շրջադարձային մեկ շրջանում, անկախություն ունենալը չի բավեր, անկախություն պահելն է կարևորը, անկախ Հայրենիքը ծաղկեցնելն է կարևորը, բարգավաճելն է կարևորը, զարգանալն է կարևորը և ոչ թե ունենալն է: Անկախությունը չի տրվում, եթե մի ուրիշ պետություն, ուրիշ ազգ մեզի տար անկախությունը՝ ես նրա մեջ մի մեծ արժանիք չէի գտնի: Մենք է, որ պետք է հաշակենք իբրև Հայ, մենք է, որ պիտի լինենք նրա կնքահայրը և մենք է, որ պետք է լինենք նրա շինարարը, ճարտարապետը՝ իբրև ամբողջ ժողովուրդ միասնությամբ: Այլևս պիտի շրջադարձ ունենանք մենք ներքնապես, հոգեպես: Ինձնից մինչև ամենեն պարզ Հայը եթե երբեք հոգեփոխության միջից չանցնի անկախության ստեղծումից հետո, կնշանակի մենք ազգ չենք, այլ ամբոխ ենք:*

«Էջմիածին», 1995, Ե, էջ 57:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

*ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ*
*Արվեստագիտության թեկնածու*

# «ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՀԱՅՈՒՆ, ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ԲԱԼԱՍԱՆԸ ՀԱՅՈՒՆ»

Կյանքիս հիսունհինգ տարիներն անցկացրի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Զբաղվեցի հայ միջնադարյան մանրանկարչության ուսումնասիրությամբ: Սովորեցի նաև մանրանկարների ընդօրինակման արվեստը և նկարում էի ոչ միայն թղթի, մագաղաթի, այլև քարերի ու տերևների, իսկ առավել՝ խխունջների վրա, որոնց բնական փայլը չքեղ տեսք էր տալիս ոսկյա լուսապսակով զարդարված սրբապատկերներին:

Ունենալով ձեռագրերից օգտվելու լայն հնարավորություն, աշխատանքիս բուն նպատակն էր՝ ուսումնասիրել և ներկայացնել հայ միջնադարյան ծաղկողներին ու նրանց թողած հոգևոր մատյանների պատկերազարդումները:

Հրատարակության էի հանձնել իմ կազմած «Կենդանագրեր» ալբոմը: Տպարանում կատարել էին գունաբաժանումը, մակետավորել և արդեն պատրաստ էր հրատարակման, երբ նորանկախ Հայաստանն սկսեց ծանր օրեր ապրել: Դադարեց տպարանի աշխատանքը, և հինգ տարի գիրքս մնաց տպարանի ներքնահարկում: Հիշեցի Վեհափառ Հայրապետի գրքերի իմաստուն խորագրերը. «Հող, մարդ եւ գիր», «Հայ մարդը հայ գրքին դիմաց»: Ներշնչված, կիսատիպ ալբոմը վերցնելով, մեկնեցի Էջմիածին՝ հույս ունենալով, որ Վեհափառը հայրաբար իր թանկ ժամանակից կտրամադրի ծանոթանալու իմ գրքին, որի բովանդակությունը մեծ մասամբ վերաբերում էր ավետարանական խորհրդանշաններին, իսկ ալբոմը նվիրված էր Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակին:

Նախօրոք ձեռք.բերված պայմանավորվածության համաձայն, Վեհափառն ինձ ընդունեց: Հուզված հետևում էի, թե ինչպես Մեծ Րաբունին հետաքրքրությամբ դիտում էր յուրաքանչյուր պատկեր և երբեմն հարցնում՝ սա ի՞նչ նկար է: Իսկ ինչպե՞ս կպատասխաներ ուսանողը, երբ ներկայանում է քննության և մտածում. արդյո՞ք պատասխանից գոհ կմնա պրոֆեսորը: Բայց նրա անկեղծ հետաքրքրությունը և մեղմ հարցադրումը հանգստացնում էր ինձ: Համբերությամբ մինչև վերջ թերթելուց հետո, հարցրեց. «Որքա՞ն է պետք 1000 օրինակ տպաքանակ տպագրելու համար»: Հաջորդ անգամ հրատարակչության տնօրենի հետ միասին եկանք: Վեհափառը մեզ սուրճով հյուրասիրելուց հետո, սեղանին դրեց անհրաժեշտ գումարը և հաջողություն մաղթեց: Վեհարանից մենք դուրս եկանք և մինչև Երևան հուզմունքից խոսք չգտանք փոխանակելու:

Հոգիս հանգիստ չէր: Ես իմ շնորհակալությունը պետք է հայտնեի Վեհափառին: Հաջորդ անգամ նրան այցելեցի՝ ինձ հետ տանելով մարմարի վրա նկարածս Քրիստոսի հրաշագործության պատկերը: Երկար զննումից հետո, նա կամաց շշնջաց. «Ի՞նչ նուրբ աշխատանք է»:

1996 թվականի սեպտեմբերի 8-ին Ս. Էջմիածնում կատարվելու էր մյուռոն-

օրհնություն: Վեհափառի հանձնարարությամբ պետք է նկարեի մի խորան, կենտրոնում Ս. Մյուռոնի պատմական կաթսան: Սիրով կատարեցի նրա ցանկությունը, և այս նկարը ծառայեց որպես տեղի ունեցած օրհնության խորհրդանշան (էմբլեմա):

Որքան միամիտ էի: Վեհարանի պարտեզում միասին սուրճ խմելիս, ոգևորված պատմում էի իմ «հայտնագործած» «Սբ. Վարդ պապ» պատկերի մասին: Մեր խոսակցությունը շարունակվեց մեքենայի մեջ՝ Երևան վերադառնալիս, և Րաբունապետ Հայրապետը որքա՜ն նոր տեղեկություններ հաղորդեց ինձ այդ սրբի՝ Քրիստափորի մասին*:

Ղարաբաղյան շարժումը դեռ չէր սկսվել: Մատենադարանի մի խումբ աշխատակիցներով այցելեցինք Արցախ: Ստեփանակերտ հասնելուն պես, մենք մեկնեցինք Շուշի: Ղազանչոց եկեղեցին վերանորոգման պատճառով փակ էր: Խնդրեցինք, որ թույլ տան ներս մտնել: Միջին տարիքի մի կին (երևի պահակի կինն էր) բաց արեց դուռը, և մենք ներս մտանք: Դիտելու համար երկար ժամանակ պետք չէր, ցանկացանք «Տէր ողորմեան» երգել: Պահակի կինը, ձեռքերը կրծքին դրած ու գլուխը թեքած, լուռ լսում էր մեզ: Շրջվելով նրա կողմը, կամաց հարցրեցի. «Հայր մերը» գիտե՞ս»: Նա մեղավորի նման ժպտալով՝ ասաց. «Չէ, չգիտեմ, էդ որտե՞ղ է»: Ես ցավ զգացի նրա այդքան միամիտ լինելու համար և երկար ժամանակ չէի կարողանում մոռանալ:

Այդ մտորումներից ինձ փրկեց դարձյալ երազը՝ ինձ մատուցվեց մի գիրք, որի էջերը դատարկ, սպիտակ թղթեր էին, և ես հայտնեցի, որ այդ գրքում Ավետարան եմ գրելու: Արթնացա: Դա հոգու պարտք էր, պետք է գրեի Ավետարան: Նախ զբաղվեցի Տերունական նկարների ընտրությամբ ու որոշակի ստեղծագործական մոտեցմամբ պատրաստեցի ավանդական մանրանկարների գծապատկերները, ավելացրեցի նաև Քրիստոսի հրաշագործություններին վերաբերող պատկերներ և, նախքան Ավետարանի ընդօրինակությունը, որոշեցի դիմել Վեհափառին, լսել նրա կարծիքն ու խորհուրդները: Ասացի, որ բովանդակության համար ծաղկաքաղ եմ անելու չորս ավետարանիչներից: Գծապատկերներն ուշադիր զննելուց հետո, խորհուրդ տվեց առայժմ բավարարվել «Ավետումից» մինչև «Հոգեգալուստը» ներկայացնելով: Այդպես էլ արեցի:

Տիրոջ կամքով և իմ կարողության համեմատ, ավարտեցի «Ծաղկաքաղ Ավետարանը»: Ինչպե՜ս կցանկանայի ներկայացնել Վեհափառին, բայց չստացվեց:

Դարձյալ կանխազուշակ մի երազ. Վեհափառը հիվանդ էր: Ավետարանիս սկզբում, որպես աղոթք, ավելացրեցի. «Աստուած երկար կեանք պարգևի Տ. Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Հայրապետին»: Ավա՜ղ, մեղավորիս ձայնը Տիրոջը չհասավ:

Երախտապարտ եմ Գերաշնորհ Մեսրոպ արքեպս. Աշճյանին, որ հրատարակության հանձնեց «Ծաղկաքաղ Ավետարանը»: Շնորհակալ եմ Լիբանանի «Յակոբ Տոնիկեան» տպարանից: Ինձ որքան երջանիկ կզգայի, եթե լուսահոգի Վեհափառը տեսած լիներ ու իր օրհնությանն արժանացներ:

---

* *Հոդվածս հրատարակվեց Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի «Խոսք» պաշտոնաթերթում, 1996 թ., Բ տարի, թիվ 2:*

Իր ժողովրդի կյանքով ու հոգսերով և գիտա-մշակութային նվաճումներով ապրող Հայրապետին կարելի էր տեսնել ամենուր: Աշխատանքիս բերումով էլ ես նրան տեսնում էի Ակադեմիայում, Համալսարանում, իհարկե՝ նաև Մատենադարանում, և որքան էլ անհարմար զգալով խուսափում էի երևալուց, միևնույն է, նա նկատում էր ու ժպտադեմ նշան անում, որ մոտենամ, ու մի նոր հանձնարարություն էր տալիս:

Վերջին անգամ Վեհափառին հանդիպեցի նախորդ սեպտեմբերին Գիտությունների Ազգային Ակադեմիայում: «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը» գիտական նստաշրջանի բացումն էր: Բացման խոսքով ելույթ ունենալուց հետո, զգացվեց, որ նա վատ է զգում: Ընդմիջմանը ինձ կանչեց իր մոտ: Նստեցի կողքին, և տվեց նոր հանձնարարություն. պետք է գրեի Հայոց Այբուբենը՝ երկաթագիր, բոլորգիր և նոտրգիր տառերով: Ասաց, որ բուժման համար պետք է մեկնի Ամերիկա:

Վերանորոգված Նորավանքի օծման արարողության առթիվ եղեգնաձորում տեղի ունեցավ գիտական նստաշրջան: Նորավանքի օծումը կատարվեց Վեհափառի կողմից, բայց նա այլևս չէր խոսում: Հավաքված ժողովուրդը նրան դիմավորեց մեծ հարգանքով: Մոտենում և խոնարհվում էին նրա առջև, համբուրում Աջը: Ես նստած էի քիչ հեռու և մեծ ցանկություն ունեի մոտենալ ու խոնարհվել, բայց համարձակություն չունեցա, չկամեցա, որ նա տեսներ իմ խոնավ աչքերը:

Վերջին հրաժեշտը տվեցի Սուրբ Սարգիս եկեղեցում...



*Արվեստի հետ հաղորդվելը նշանակում է հաղորդվել Աստուծո հետ, որովհետեւ արվեստը ծնվել է կրօնի միջից: Արվեստը հոգու հաղթանակն է նյութի վրա: Ժայռից պոկված քարը մի սովորական քար է, բայց երբ այդ քարին մի քանդակագործ իր մտքի, սրտի, զգացմունքների թելադրանքով, զորութեամբ ձեւ ու պատկեր է տալիս, այն դադարում է այլեւս քար լինելուց: Վերածննդյան մեծագույն դեմքերից Միքելանջելոն Մովսեսի հոյակապ արձանը քանդակել ավարտելուց հետո, մի փայտով հարվածում է արձանին ասելով. **«Խօսի՛ր Մովսէս»:** Եվ այդ արձանացյալ Մովսեսը խօսում է մինչեւ այսօր:*

*«Էջմիածին»* 1997, Զ-Է, էջ 81:

*Գիրը, գրիչը, մագաղաթը, թանաքը եղել են եկեղեցու բուրվառին եւ խունկին, Պատարագի սկիհին, նշխարքին եւ գինու, Խաչի ու Աւետարանի, Մաշտոցի եւ Միւռոնի չափ նուիրական առարկաներ Հայ Հոգեւորականի համար:*

*«Հայաստանեայց Եկեղեցին իր*
*«Ծառայական կերպարին մէջ» գրքից*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

*Հայկանուշ ՄԵՍՐՈՊՅԱՆ*
*ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտի գիտաշխատող*

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

*«Մեր լեզուն ճանապարհ է դէպի յաւերժու-թիւն, գրաւական՝ մեր ինքնութեան, Նոյեան տապան՝ մեր փրկութեան, լուսաստղ՝ մեր լինելութեան»:*

*ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ*

«Մեր լինելութեան լուսաստղը» ուրույն փայլատակումներով է դրսևորված Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինի գրական ստեղծա-գործություններում, որոնք դրասանգում են հայ հրապարակախոսական արծակը: Մեր քաղցրահունչ հայոց լեզուն առանձնահատուկ փայլով ու իմայքով է ներկայանում մեզ: Հայերենի բառապաշարի կատարյալ դրսևորումը և գեղարվեստական պատկերավոր մտածողությունը մեծ բավականություն ու հիացմունք են պատճառում ամեն մի ընթերցողի:

Բառը, մեսրոպյան աստվածատուր կապերով շաղկապված բառը հորդում է ամենուր, զանազան ձևեր ու տարազներ հագնում՝ զորեղացնելով և ուժգնացնելով խոսքի ներքին իմաստն ու բովանդակությունը: Գարեգին Առաջին բառակերտ հանճարի բանավոր խոսքում ու գրչի տակ բառերը ծնվում էին սահուն, դյուրին և, ինչպես անվրեպ մի նետ, ուղղվում անհրաժեշտ բառի նրբիմաստի թիրախին: Դա աստվածային առանձնահատուկ մի շնորհ է, ոչ ամեն մահկանացուի համար երջանկորեն նախասահմանված, որ անցնելով նրա զորեղ մտահորիզոնով՝ դառնում է անթերի ու կատարյալ մի խոսք, որի յուրաքանչյուր բառ տվյալ իմաստային դաշտում այլ տարբերակով անհնարին է փոխարինել: Այդ խոսքի ուժն իր ենթախորշերում բնականաբար ունի Վեհա-փառի հարազատ բնաշխարհի արծագանքները: Այդ իմաստությունը գարա-տուրանցի մի ազնվամիտ գեղջուկ տղա դպրոցական տարիներին ռռոգեց Ավետարանի ջրով, պատանեկան տարիներին՝ հայրենի ժողովրդի դասական մատենագիրների ոսկեղենիկ լեզվով, որ հորդանալով, ահագնանալով իր հործանքի մեջ առավ «շարականի գետին մոտ» ծաղկող շուշաններն ու Նարեկյան մրմունջներն «ի խորոց սրտի»: Ավելի հասուն տարիքում այն իր մեջ ամբարեց համաշխարհային ողջ գրականության, փիլիսոփայության ու պատմության գանձերը:

Իմաստնության այդ գանձերը որպես նշխարներ Վեհափառը անմնացորդ բաժանեց իր ժողովրդին: Եվ եթե որևէ մեկը անտարբեր ու անմասն մնաց այդ հաղորդությանը, ապա անվերադարձ կորցրեց նրան լսելու, նրան ընկալելու, նրան հասկանալու երջանկությունը:

Սակայն նրանք, ովքեր զգացին ու ապրեցին այդ խոսքի համը, ճաշակեցին իմաստնության այդ անսպառ ավազանից, դարձան այդ գանձարանի ժառանգորդը: Այդ գանձարանի յուրաքանչյուր բառ հնչում է Քեսապի լեռների պես վեհ, առվակների պես ղողանջուն, երկնքի «խաղաղաթույր կապույտի» պես ջինջ: Միջերկրականի վետվետուն ջրերի անդրադարձն ունեն դրանք իրենց մեջ, որոնցից հյուսվում է Վեհափառ Հայրապետի պատկերավոր լեզվամտածողությունն ու գրական ստեղծագործությունների սահուն ու հարթ լեզուն:

Վեհափառ Հայրապետի ստեղծագործությունների լեզուն գրական արևմտահայերենն է: Վերջին տարիներին արևելահայ միջավայրն իր կնիքը թողեց նաև Վեհափառի լեզվարտահայտչական ձևերի վրա: Դա արտահայտվեց հատկապես բանավոր խոսքում: Նա ժողովրդի հետ հաղորդակցվում էր լեզվական մի յուրահատուկ որակով՝ ստեղծելով արևմտահայերենի և արևելահայերենի մի անթերի համադրություն: Նա անգամ արևելահայերենի փոխադրեց իր «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպին մէջ» գիրքը:

Ժամանակակից գրական արևմտահայերենը, իր հիմքում ունենալով Պոլսի բարբառը, ավելի մոտ է գրաբարյան ակունքներին: Դրանով է պայմանավորվում գրաբարաբանությունների՝ գրաբարյան բազմաթիվ բառերի, դարձվածքների ու քերականական ձևերի կիրառությունները (**զհամախառաջեալս յայսմ պեղւոջ, ի չորիս կողմանս աշխարհիս այսորիկ, վասն պահպանութեան աւանդութեանց հարցն մերոց, վերամկրտեալ ի հաւատս և ի հայութիւնս մեր** և այլն), որոնք հեղինակի խոսքին հաղորդում են պատմականության և քնարականության երանգ :

Այդպես և խոսքին ուրույն հմայք են հաղորդում գրաբարյան անցյալ դերբայի ձևերը, որոնք հաճախակի կիրառվում են որպես խոսում և պատկերավոր մակդիրներ, օրինակ՝ **գրախնկեալ բակ, գօսացեալ պարտէզ, բանացեալ հոգի, անձնացեալ զօրութիւն, մարդեղացեալ Փրկիչ, մեքենականացեալ վիճակ, մատնքացեալ աւերակ, պրկեալ վճռակամութիւն, ասփոսածաշնչեալ խօսք, մանրանկարեալ կոնդակ, անձրևացեալ արցունք, մշակացեալ ձեռք, ասփուածանկարեալ պատկեր, միայնացեալ հոգի, երեկոյացեալ պահ, շիրմացեալ գերին, արփացեալ հոգի, ջրդեղեալ զօրութիւն** և այլն, և այլն:

Ընդգծված բառաձևերը ասելիքին հաղորդում են հանդիսավորության զգացողություն՝ բանաստեղծորեն վերարտադրելով բովանդակային նրբերանգները:

Գրաբարյան ակունքներին մոտ լինելով է բացատրվում նաև հնաբանությունների (արխաիկ բառերի) նպատակային կիրառությունները: Դրանք ոճավորում են հեղինակի խոսքը՝ հաղորդելով պատմականության երանգ: Այդպիսի հնաբանություններից են՝ **ճշմարտող, վերառաքող, խանդալից, հանդիսադրել, անգայտ** (նոսր), **անձնադրոշմ, հոգեխառնութիւն, լուսափեսիլ, կենդանագործ, լրութիւն** (լրիվություն), **ճշմարտելի, ընկլուզել** (կուլ տալ), **խրախճանութիւն, մարդկաբար, յանկուցիչ, արդիւնագործ, կաղկողագին, փրամախտել, դէպ, փապասփ, հրիփակել** (կտակել), **նշմար, հրաշփութիւն, վերնական, կարշնել, ասուփիւն** և այլն, և այլն:

Վեհափառ Հայրապետի խոսքը ոճավորող միջոցներից են նաև բառարաններում իբրև բանաստեղծական, ինչպես նաև հազվադեպ գործածությամբ

նշվող բառերը: Օրինակ **սկզբնատիպեղծ, բուխ, փորձանատր, պաշտանք, անդրանցնել, անձնադրոշմ, ժայթք, յաճախանք, զվարթախոհ, վեհավայր, դրասանգել, պերճաբարբառ, պատարագել, փեսլահար, դիւցազնաշունչ, կայլակել** և այլն:

Վեհափառ Հայրապետը, քաջածանոթ լինելով մեսրոպյան բառագանձի բոլոր շերտերին, նկարագրվածներից զատ ոճական նկատառումներով կիրառել է նաև բարբառային, ժողովրդախոսակցական (**պճլպուն, խանձողուած, հունար, ղայիմ** և այլն), մասնագիտական (**արժեչափ՝** քաղաքատնտեսական, **զօրաշարժ՝** ռազմական, **համագրաւել՝** տնտեսագիտական և այլն), հնացած (**ծնուցիչ, բարեխնամող, դառնաճաշակ, դալարիք, բնազանցական**) և այլ շերտի բառեր:

Վեհափառն իր գրվածքներում հաճախ փակագծերում նշում է տվյալ խոսքի իմաստային կիզակետում գտնվող բառի օտար՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լատիներեն համարժեքը: Այսպես՝ **բարձր կեանք (high-life), աշխարհայնամտութեան հոսանք (secularism), վանքի պատկերը (image), եօթնոր տարածք (dimension), ի տեսութիւն (en theoria), խորհրդանիշ (symbol)** և այլն: Այսպիսի լրացուցիչ բացատրությունները դիպուկ կերպով ամփոփում են միտքը՝ գրվածքին հաղորդելով գիտական ոճի առանձնահատկություն:

Վեհափառի խոսքում հանդիպում են նաև օտարաբանությունների տեղին կիրառություններ, ինչպես՝ **երեկոյին մեծ պտամ** (դրամա), **փիպով ու իրէալով ամուր, մասնաւոր ժեստ, ոսկումի մանրանկարչական ոճային իւրայատուկ մոթիֆներով ընկերացած, մարդեղական աքթ, մանրանկարը ազգերուն մօզայիքին** և այլն:

Վեհափառի լեզվական աշխարհի զարդն են կազմում ոչ միայն բառային նորակազմությունները, այլև բառերի իմաստային նոր կիրառությունները: Բառային նորակերտումները ծնվում են իմաստային նրբերանգների ճշգրիտ ու անշեղ արտահայտմամբ, և ամեն մի բառ պաշտպանում է իր դիպուկությամբ: Դրանք մասնագետ-հետազոտողի համար լեզվական զարմանահրաշ նշխարներ են՝ իրենց քրիստոնեատիպ դրոշմով: Նոր բառերը կազմված են հայերենի բառակազմական ներքին բազմապիսի միջոցներով ու զանազան եղանակներով: Բառային նորակազմությունների մի զգալի մասի ավազանը Աստվածաշունչն է: Նորակազմությունները հատկանշվում են ոչ միայն իրենց բաղադրիչ տարրերով, այլև ոճական-իմաստային առանձնահատկություններով:

Բառային նորակազմության բոլորովին նոր որակ կարելի է համարել, այսպես կոչված, անջատագրությունը: Բառակազմական այդ նորույթը իմաստային և ոճական յուրահատկությամբ է օժտված: Այսպես՝ **ան-ժամանակ, ան-այսօր, ան-երէկ, ան-վաղ, մարդ-եղութիւն, մարդ-ութիւն, գեր-անձնական, անդր-անհատական, յետ-միջօրէ, հոգե-զօրացում, հոգե-կալում, հոգե-սնուցում, լոյս-ու-մութ, նոր-ութիւն, բան-ա-խօս, փոխ-յարաբերական, ան-բան, ան-ստուն, ով-ութիւն** և այլն:

Ինչպես ցույց են տալիս օրինակները, բառերի՝ ըստ բառակազմական մասնիկների և արմատի այսպիսի նպատակային տրոհումը ընդգծում է բաղադրիչներից հատկապես մեկի՝ բառամիջուկի իմաստը՝ ստեղծելով լեզվարտահայտչական մի նոր որակ: Բառիմաստային հետաքրքիր համա-

դրություն են ստեղծում նաև յուրօրինակ հարադիր կազմությունները. ինչպես՝ **բանալի-բառ, սէր-Աստուած, աչք-Աստուած, Յիսուս-Խորհուրդ, հոգի-մասր, լոյս-իմաստ, մեղր-բարիք, պտուղ-արդիւնք, կեանք-հաստատութիւն, մարդ-կարողութիւն, անէծք-օրհնանք, հոգի-կաղապար, արև-պահ, գրիչ-փետուր, ընծիւղ-բարգի, ցայգաղբիւր-աշխարհ** և այսպես շարունակ:

Թվով հազարից անցնող հեղինակային նորաբանությունների հանգամանալից քննության արդյունքում նկատեցինք բազմաթիվ հետաքրքիր իրողություններ: Դրանց գերակշռող մասի բաղադրիչներից մեկը **Աստուած, Յիսուս, Քրիստոս, Մեսրոպ, լոյս, հայ, ոսկի, հոգի, աւետարան, աղօթք, սուրբ, առաջեալ, ինքն** և այլն բառերն են: Այսպես՝ **աստուածաձեռն, աստուածագիծ, աստուածակոխ, աստուածագիր, աստուածամաղ, յիսուսանուէր, յիսուսափիպ, քրիստոնէափիպ, քրիստոսահաւատ, քրիստոսապտուղ, քրիստոսաբեր, հայաշեշտ, անհայախօս, հայավառ, հայանուագ, հայալոյս, հայատեսիլ, հայարիւն, յուսեղինութիւն, լուսայցուփ, լուսածնունդ, նորալոյս, լուսաջան, լուսութիւն, լուսերգակ, լուսածորան, լուսատրչակնիք, լուսագծել, մեսրոպահեղ, մեսրոպահունչ, մեսրոպագիծ, մեսրոպաբարբառ, մեսրոպաստեղծ, հոգեկառուցել, հոգեքանդ, հոգեկրթիչ, հոգեփոխ, հոգեկերտել, հոգիարնակ, ինքնաշեշտ, ինքնաբարբառ, ինքնաքիւրեղացում, ինքնընծայում, ինքնապրկում, ինքնախորհողական, աղօթաճաճանչ, աւետարանագիծ, առաքելաժառանգ, սրբական, սրբահոգի** և այլն, և այլն:

Մեծ թիվ են կազմում **գոյն** վերջածանցով բաղադրված նորաբանությունները, որոնցում բառի բովանդակությունը սաստկացվում և գերադրականության իմաստ է ստանում. **ընդարձակագոյն, անկեղծագոյն, լիագոյն, նուիրականագոյն, առաջագոյն, իմաստնագոյն, գլխատրագոյն, զօրատրագոյն** և այլն:

Բառապաշարային այս յուրահատկություններից զատ Վեհափառի ստեղծագործություններին արտասովոր հմայք են հաղորդում գեղարվեստական պատկերավորման միջոցները:

Գեղարվեստական խոսքին բնորոշ պատկերավորության բազմազան միջոցներով, բառային պատկերների պատշաճ համադրումով, երբեմն էլ հակադրումով տպավորիչ ու հուզական է դառնում Վեհափառ Հայրապետի ասելիքը: Արժակ բանաստեղծություններով, քնարերգական սրտահույզ հատվածներով, որոնց շարքը կարելի է անվերջ թվարկել, Վեհափառի խոսքը հասնում է կատարելության գագաթնակետին: Գեղեցիկ մակդիրներ ու աներևակայելի համեմատություններ, շրջասություններ, դիպուկ անձնավորումներ և գեղարվեստական խոսքի ոճավորման զանազան միջոցներ...

Լեզվի պատկերավորության ամենագործուն միջոցներից մեկը՝ մակդիրը, Վեհափառի երկերի գեղահյուս հենքի հիմնական տարրն է: Ինչպես գիտենք, ի տարբերություն տրամաբանական բնորոշման, գեղարվեստական առդիրն օժտված է պատկերավորությամբ, տալիս է առարկայի կամ երևույթի գեղարվեստական բնորոշումը և ունի զգացմունքային երանգ:

Բավականին մեծաթիվ են մակդիրներն ու բառերի փոխաբերական կիրառությունները. այսպես՝ **մեսրոպաբոյր ու յաւերժաբարբառ շիրիմ, աւետարանագիծ ճամբայ, ոգիարնակ քաղաք, հայադրոշմ ձայն, աղօթաճաճանչ**

**կամար, լուսածորան գրիչ, լուսաղբիւր հոգի, աստուածիմաստ վարդապետ, անդրանցնող աղբիւր, հայավկայ հրովարտակ, լուսահեղեղ դէմք, հայանուագ շարական, ծաղկած եկեղեցի, մեղահալած սպիտակութիւն, սրբաշունչ բառ. խորհրդասքօղ մատեան, ինքնարդարութեան փետուր, բնաթոյր զովութիւն, աղօթասույզ խուց, գրչագրածին աշխատանոց, աղօթահայց մրմունջ, երկնաձայն փայլակ, խնկեղէն աղօթք, խորհրդաբոյր կամար, լուսատրչեան հիւսկէն, կրօնաբոյր մթնոլորտ, մեծապէնչ փափաքներու կարկին, Անի քաղաքին փառախօս աւերակ, մտքի փեթակ, շնորհաբուխ բերան, բորբ իմաստ, թշնամիների գլուխների քամի, աղօթասույզ քար, հոգեխօս դէմք, արևեան ոճ, կոյրիմաստ բազալդ, կեանքի ոսկեթել, աննունախօս որմնանկար, բազմագունեան ամբոխ, քարերի բիւրեղ սրբապաշտութիւն, փաբիներու պրկուած իղձի զսպանակ, սուրբ թռչոն, աստուածային ջրտուք** և այլն, և այլն:

Խոսքի պատկերավորման հետաքրքիր միջոցներից են նաև բառակապակցության ներսում հակադրված բառիմաստները, ինչպես նաև առձայնույթով՝ նման բաղաձայնների կուտակումով, բառերի կրկնությամբ և բառախաղերով ստեղծված արտահայտությունները, շրջասությունները, երբ առարկայի կամ անձնավորության անվանումն ուղղակի տալու փոխարեն նշվում է նրանց այս կամ այն էական կողմը, հատկանիշը: Այսպես՝ **ողբերգական կատակերգութիւն, աւերակներու անաւերակելի լեզու, հոյակապ աւերակ, անցեալը անցեալութենէն փոխադրել ներկայի, շնորհալոյս Շնորհալի, լուսաջան լուսաբար, խորասույզ խորհուրդի խորհրդագործում, լոյսին լուսութիւնը, քաղաքացած և քաղաքայնացած կեանք, պառապանք չունենալու պառապանքէն պառապիլ** և այլն:

Վեհափառի խոսքը շատ հարուստ է առածներով, ասացվածքներով, թևավոր խոսքերով, պատգամներով և այլ իմաստային միավորներով:

Համեմատությունը Վեհափառի երկերի ստեպ-ստեպ կիրառված պատկերավորման միջոցն է: Շատ հաճախ այդ համեմատությունները հանդես են գալիս բառերի փոխաբերական իմաստների հետ և ստեղծում համեմատություն-փոխաբերությունների մի զարմանահրաշ պատկեր: Բազմաթիվ հրաշալի օրինակներից թվարկենք ընդամենը մի քանիսը: Այսպես՝ **Սպառսպռտ ցրուածն մեր ժողովուրդին ծառին բունէն մասնահատուած փաշեղներու պէս, Աչքերը, արցունքէն միգացած, կը ծաւալին երկրի չորս ծագերուն, ինչպէս արևը այգաբացի մշուշի ցնցոտի սաւանին մէջ, Մեռան, ինչպէս մեռնում են ճիւղերը ծառին, երբ խզւում են ու բաժանւում են իրենց բներից, Մեռան, ինչպէս քարերը, երբ պոկւում և դուրս են ընկնում իրենց պատերից, Խօսքս պատարագի նշխարին պէս բաժներ եմ իմ ժողովուրդին, Քրիստոսի կեանքը աշխարհին վրայ միախառնումն է աստուածայինին և մարդկայինին, ... ինչպէս երկինքին էջքը երկրի վրայ ու երկրին երկնայնացումը հոգեկան կեանքի ուժեղ թափանցումովը անոր մէջ, ինչպէս արեգակի շողին թափանցումը խոր մթութեան մէջ, Մարդու ինքնութիւնը բազմաշերտ հողին նման հարստութիւն մըն է, Աւանդութիւնները կը նմանին մարդու մարմնին ողնայարին, Ցաւը կը նահանջէ հիւանդին դէմքին վրայ, ինչպէս խաւարը՝ լոյսէն, Պատերազմն ու խաղաղութիւնը հիւսքի սև ու ճերմակ թելերուն պէս իրարու հետ միշտ պար բռնեցին, Դաշտի ծաղիկներուն նման գիրքեր, աղջիկներ ընծիտ-քարփիներուն պէս**

կանգնած և այլն, և այլն: Ինչպես երևում է բերված օրինակներից, անձնավորումը ևս, որպես գեղարվեստական պատկերավորման միջոց, հանդես է եկել համեմատությունների հետ:

Գեղարվեստական խոսքի արտահայտչական կարևոր միջոցներից են նաև հռետորական, ճարտասանական հարցը, բացականչությունը, դիմումը, կոչը, որոնք առատորեն կիրառում էր Հայրապետը՝ խոսքի իմաստային այս կամ այն երանգն ընդգծելու համար: Նպատակ ունենալով ուժեղացնել խոսքի հուզական շեշտը՝ հռետորական-ճարտասանական հարցումներով նա հաճախ տալիս է պահանջվող պատասխանը: Վեհափառ Հայրապետը զարգացման գագաթնակետին հասցրեց դեռևս հին Հունաստանում բարձր ծաղկման հասած հռետորական արվեստը, որը հետագայում տարածվելով Հռոմում և այլուր, Հայաստանում ևս խոր արմատներ տարածեց:

Վեհափառի բառապաշարի և գեղարվեստական պատկերավորման կիրառված միջոցների քննության այս շարադրանքով ընդամենը մասամբ է լուսաբանվում Վեհափառ Հայրապետի գրչի գործությունը: Աստվածապարգև այդ շնորհի մասին կարելի է խոսել անվերջ:

Ի տրիտուր այս մեծ ժառանգության՝ այսօր ազգովի կրկին վառելով «հայոց աշխարհի կերոնները մեծ, ծաղկունք բուրենք, բուրմունք խնկենք» և ավաղանքի ու ապաշավանքի հոգեհանգիստ կարդալով՝ վառ պահենք մեր հարազատ Վեհափառի հիշատակը՝ այն հույսով ու հավատով, որ «մահը չի կրնար մօտենալ հոն, ուր անմահական սկզբունքներու, գաղափարներու, արժէքներու, գործերու թագաւորութիւնը կը տիրէ»:

*Աչքի բիբին պէս պահպանենք այն ինչ որ Հայը Հա՛յ կ'ընէ մեր մէջ: Որովհետեւ, մենք կը Հաւատանք որ Հայութեան մէջ ոչինչ կայ որ մարդկութեան վնաս բերէ: Հայութիւնը իր պատմական ամբողջ տարողութեամբը եւ իր ստեղծագործական շարունակական վկայութեամբը բարիք մըն է մարդկութեան Համար:*

*«Հող, մարդ եւ գիր» գրքից*

*Այսօր տանդ մէջ ձայնասփիւռ ունիս, ունկնդրէ՛* ***երբեմն:*** *Պատկերասփիւռ ունիս, նայէ՛* ***երբեմն:*** *Տեսագրիչ ունիս, դիտէ՛* ***երբեմն:*** *Բայց չըլլայ որ ականջներդ ու աչքերդ* ***գամուած*** *մնան եւ միտքդ ու Հոգիդ* ***գերի*** *դառնան անոնց: Աչքերդ կը ցաւին: Հոգիդ կ'աղօտանայ: Միտքդ կը գունաթափի: Կեանքդ կը մակերեսայնանայ: Աչքերդ կապուած պահէ այն գիրքին, որուն Համար երբ թուղթ պակսեցաւ՝ Հայ մայրը աւազը թուղթի վերածեց..., երբ դպրոց պակսեցաւ՝ անապատը դպրոցի վերածեց՝ Տէրզօրի* ***իր*** *Հոգեւարքին մէջ* ***Հայուն գիրքին*** *Հոգեւարքը չտեսնելու Համար...:*

*«Հայ մարդը Հայ գիրքին դիմաց» գրքից*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

*ՀԵՐՄԱՆ ԳՈԼՑ*
*Հալլե-Վիտտենբերգի Աստվածաբանական*
*ֆակուլտետի վարիչ. Հալլեի Ս. Մեսրոպ*
*կենտրոնի տնօրեն*

# ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

1999 թ. հունիսի 29-ին Էջմիածնում, մեկ տարվա ծանր հիվանդությունից հետո, աչքերը փակեց Ամենայն Հայոց հոգևոր առաջնորդ Գարեգին Ա-ը, որի բարի ու կենսախինդ հայացքը կհիշեն բոլոր նրանք, ովքեր առիթ են ունեցել հանդիպելու նրան:

Հատկապես Գերմանիայի հայերն ու գերմանացի հայասերները ցավագին կերպով ընդունեցին այդ բոթը, քանզի միայն մեկ տարի էր անցել (1998 թ. հունվար-փետրվար ամիսներն էին), ինչ Նորին Սրբություն Գարեգին Ա-ը մի անմոռանալի այցելություն կատարեց Գերմանիա: Հայկական աշխարհասփյուռ համայնքի հետ միասին նրա կորուստը սգում են ոչ միայն Գերմանիայի հայկական համայնքը, այլև Գերմանա-Հայկական կազմակերպության բոլոր անդամները, վերջապես նրա կորուստը սգում է նաև Հալլե-Վիտենբերգի Մարտին Լութերի անվան համալսարանի ակադեմիական կազմը, որը նրա մահվամբ իրենց մի կտսեր, սակայն աշխարհառչակ, նշանավորագույն, պատվավոր դոկտորներից մեկին կորցրեց: Աստվածաբանության պատվավոր դոկտորի տիտղոսը Կաթողիկոսին շնորհվել էր 1998 թ. հունվարին, Հալլեում, մի պատիվ, որը հայ-գերմանական գիտական սերտ հարաբերությունների վրա հիմնված լինելով, իր հոգևոր հոր՝ Գարեգին Կաթողիկոսի (Հովսեփյան) համար առանձնապես սիրելի և թանկարժեք էր: Նրա հոգևոր հոր գահակալության շրջանում, որը հարուստ և լիառատ հոգևոր կյանքից հետո վախճանվեց Անթիլիասում, 1952 թ., երիտասարդ աստվածաբանը և ապագա Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեռևս Անթիլիասի ճեմարանում իր կրթական առաջին աստիճանում էր, որը մնայուն մի դրոշմ թողեց Դպրեվանքի ապագա տեսչի, եպիսկոպոսի և Կաթողիկոսի վրա, և որը Հովսեփյան Կաթողիկոսի կենդանության օրոք նաև Գեմանիայի հետ հոգևոր մի կապ էր հանդիսացել:

* *Հոդվածում տեղ են գտել Հայոց Եկեղեցու պատմության վերջին տասնամյակներին վերաբերող մի շարք անճշտություններ, որոնք հեղինակի՝ հայ իրականությանը քաջատեղյակ չլինելու հետևանք են (խմբ.):*

### ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ

Նշան Սարգիսյանը ծնվել է 1932 թ. Քեսաբում (Սիրիա): Նա հաճախել է Անթիլիասի աստվածաբանական դպրեվանքը 1946-1953 թթ.: 1952 թ. ստանում է քահանայական օծում: 1957-1959 թթ. աստվածաբանություն է ուսանում Օքսֆորդում: 1960-1971 թթ. պաշտոնավարում է որպես Անթիլիասի աստվածաբանական Դպրեվանքի տեսուչ, 1964 թ. օծվում է եպիսկոպոս: 1971-1973 թթ. եպիսկոպոսի պաշտոն է վարում Իրանում, 1973-1977 թթ.՝ Նյու Յորքում, 1977-1983 թթ.՝ Սիրիայում: Արդեն Կիլիկիայի աթոռակցի պաշտոնը զբաղեցնելուց հետո, հենց ինքն էլ 1983 թ. դարձավ Սսի արքեպիսկոպոս և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս (այսօրվա Նստավայրը՝ Անթիլիաս, Լիբանան): Հայաստանում տեղի ունեցած սարսափելի երկրաշարժից հետո հատկապես, նա իր հարաբերությունները ավելի սերտացրեց Էջմիածնի և Նորին Սրբություն Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ՝ սերտորեն նրա հետ համագործակցելով հայ ժողովրդի օգնությանն ի խնդիր: Երբ Վազգեն Ա Կաթողիկոսը 1994 թ. մահացավ, նա 1995 թ. Էջմիածին Նստավայրում զբաղեցրեց հայկական եկեղեցական բարձրագույն պաշտոնը, որպես Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս:

### ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Կարելի է շարունակել ներկայացնել Կաթողիկոսի ունեցած մեծ վաստակը որպես քարոզիչ և շնորհաշատ հռետոր, որպես հստակամիտ աստվածաբան ու բանաստեղծական արտահայտիչ գրող: Նրա մեծածավալ մատենագրությունն ընդգրկում է հայերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, հունարեն, արաբերեն ու պարսկերեն լեզվով գործեր՝ հրատարակված Բեյրութում, Երուսաղեմում, Թեհրանում, Ժնևում, Լոնդոնում, Բոստոնում և այլուր: Ուշագրավ է նաև, որ երիտասարդ աստվածաբանի վարդապետական թեզը հայկական շարականների աստվածաբանության մասին մի գործ է, մինչև այժմ ոչ ամբողջությամբ հրատարակված, որի վրա նա մտովին մինչև իր կյանքի վերջին տարիները աշխատեց, որի մասին ինքն իր անձնական խոսակցություններում միշտ ասում էր:

Այստեղ համառոտ թվարկվենք միայն նրա հայերեն և համապատասխանաբար անգլերեն գործը: Իր հեղինակած դասական աստվածաբանական ուսումնասիրությունը դարձավ նրա օքսֆորդյան աշխատությունը. «Քաղկեդոնի ժողովը և Հայ Եկեղեցին», Լոնդոն S.P.C.K. 1965 (վերահրատարակված Նյու Յորքում, 1979, հետագա հրատարակությունները ծանուցված են), «Արևելյան Ուղղափառ եկեղեցիների վկայությունը», Անթիլիաս 1968 (3 հրատարակություն), «Հայ եկեղեցին այժմ», Նյու Յորք 1970 ( վերահրատարակված որպես «Կրոնը Միջին Ասիայում», խմբագիր Ա. Ջ. Արբերի), «Իրանը և հայերը», Թեհրան, 1971, «Հայկական քրիստոնեական ավանդույթը Իրանում»,

Նոր Ջուղա (Իրան), 1974, «Հովվական Աստվածաբանություն», Անթիլիաս 1979, «Անցյալը անցած չէ...», Անթիլիաս 1985՝ գրված Լիբանանում քաղաքացիական պատերազմի ժամանակ իրետակոծության ներքո, «Հայ մարդը հայ գրքի դիմաց», Անթիլիաս 1990, «Հոգևոր կյանքի փնտրտուքի մեջ», Անթիլիաս 1991, «Վասն հայրենյաց», Անթիլիաս 1992, «Հարություն և հայություն», Անթիլիաս 1993, «Հայ Առաքելական եկեղեցու 1700-ամյակը (301-2001)», «Նոր Հոգեզալուստ», Անթիլիաս 1994, և բազում այլ գործեր:

Անթիլիասում իր գործունեության ընթացքում Գարեգին Կաթողիկոսը հիմնեց *Հասկ* գիտա-աստվածաբանական տարեգիրքը, որը 1998 թվականից սկսած անընդմեջ կերպով լույս տեսավ և աստիճանաբար դարձավ համաշխարհային աստվածաբանության, փիլիսոփայության, գրականության, պատմագիտության կարևոր մի օրգան: Էջմիածնում նա գործում էր որպես արդեն իր կողմից հրատարակվող «Էջմիածին» ամսագրի հրատարակիչ և որպես հեղինակ մեծաթիվ այլ հրատարակությունների:

### ԱՎԱՆԴԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Քիչ հիշատակված, բայց աստվածաբանական-գրական գործերի նման առնվազն նույնչափ հեղինակավոր են Կաթողիկոսի գիտական և կրթակազմակերպական վաստակները: Անթիլիասի աստվածաբանական ճեմարանը (այժմ Անթիլիասից ավելի վեր, Բեյրութից հյուսիս, Լիբանանի լեռներում, Բիկֆայայում) Գարեգին Կաթողիկոսի երկարատև ղեկավարության շնորհիվ դարձավ Հայ Եկեղեցու որակյալ աստվածաբանական մի կրթօջախ: Այստեղ, ինչպես նաև ավելի ուշ Էջմիածնում, Կաթողիկոսը սոսկ ղեկավար անձ չէր, այլ հենց ինքը դասավանդում էր մեծ հաջողությամբ: Նրա տաղանդը որպես ուսուցիչ և հռետոր իրավամբ հայտնի է հեռուներում:

Կաթողիկոսի անգնահատելի կրթական ներդրումը եղավ Գևորգյան ճեմարանի շենքի վերաբացումը Էջմիածնում, 1995 թվականից այն ավանդաշատ եկեղեցական ընդհանուր կրթական բնույթի բարձրագույն մի դպրոց է, որի բուն շենքը խորհրդային տարիներին հարկադիր կերպով փակվել էր և որտեղից մինչխորհրդային տարիներին դուրս են եկել հայ ժողովրդի խոշորագույն գիտնականներ, որոնք մեծավ մասամբ գիտական Գերմանիայի հետ սերտ կապի մեջ էին և Հայաստանում մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը և դրանից հետո ևս որոշ ժամանակ ներկայացնում էին գերմանական ու հայկական գիտությունների մի *սիմբիոզ*: Գևորգյան բարձրագույն դպրոցի վերաբացման կրթաքաղաքական սխրագործությամբ Գարեգին Կաթողիկոսը էական հիմքերը դրեց Էջմիածնի հետ միջազգային ապագա հոգևոր-գիտական համագործակցության:

Այստեղ համառոտակի թվարկենք Կաթողիկոսի եկեղեցական և քաղաքա-

կան ծառայությունները: Նա ծանր ու դժվարին ժամանակներում հոգում էր Իրանի ու Լիբանանի հայկական համայնքների հոգսերը: Նա արտասովոր կերպով պահպանեց ու արգասավոր դարձրեց հայի ինքնությունը Սփյուռքում: Նախ և առաջ նա իր եկեղեցական գործունեության շնորհիվ զարմանալի կերպով նպաստեց աշխարհասփյուռ հայերի միավորելուն, մասնավորապես 1988-89 թթ. իր սկսած օգնություններով ծանր երկրաշարժից ցնցված Հայաստանին, և իր եռանդուն գործունեությամբ, հաղթահարելով սառը պատերազմի պատճառով արևմտահայության ու արևելահայության միջև եղած անջրպետը: Ինքը՝ Գարեգին Կաթողիկոսը այդ կամրջի կենդանի խորհրդանիշն է, քանի որ նա որպես Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո (Անթիլիաս), որը քաղաքական շրջանակներում որպես էջմիածնի Մայր Եկեղեցուն հակաթոռ եկեղեցի էր (նախկին խորհրդային Հայաստան) հիմնադրել, անխոնջ կերպով էջմիածնի հետ բնականոն հարաբերություններ հաստատեց և ի վերջո (1995) բազմեց նույնիսկ էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Աթոռին, այն է՝ «հակադիր եկեղեցու» պետ ընտրվեց: Այս բարձրագույն պաշտոնը ստանձնելով Գարեգին Կաթողիկոսը առանձնահատուկ մի ավանդ ներդրեց հայ ժողովրդի պառակտումը կասեցնելու գործում:

## *ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*

Կաթողիկոսի միջազգային էկումենիկ գործունեությունը նույնպես արժանի է հատուկ ուշադրության: Միայն այստեղի հետևյալ նշումները ցույց են տալիս, որ նա ինչպես տեղի, այնպես էլ միջազգային էկումենիզմի առաջատար էր և գործում էր ազդեցիկ կերպով: 1963-1965 թթ. նա Վատիկանի երկրորդ ժողովին մասնակցում է որպես Արևելյան Ուղղափառ եկեղեցիների պաշտոնական դիտորդ, նույնը և 1968-ի Լամբեթի կոնֆերանսում, 1968-ից դառնում է եկեղեցիների Համաշխարհային խորհրդի (ԺԵԽ) կենտրոնական և գործադիր հանձնաժողովի անդամ, 1975 թ. եկեղեցիների Համաշխարհային խորհրդի՝ Նայրոբիի պլենար նիստից հետո մինչև 1983 թ. աշխատում է որպես եկեղեցիների Համաշխարհայի խորհրդի կենտրոնական և գործադիր հանձնաժողովի փոխարինող նախագահ:

Գարեգին Կաթողիկոսն ակնառու դեր է խաղացել «ոչ քաղկեդոնական» (մոնոֆիզիտ) և քաղկեդոնական (դիոֆիզիտ) եկեղեցիների 1500-ամյա պառակտումը հարթելու մեջ: Երեք տասնյակ տարիներ առաջ Ադիս Աբեբայում սկսված երկխոսությունից ի վեր նա իր կարևոր մասնակցությունն է բերել միությանն ուղղված այս ջանքերին: Դրանով նա օժանդակել է 20-րդ դարի աստվածաբանական նշանակալի երկխոսություններից մեկին, որը նա վարել է 1990 թ. սեպտեմբերին ԺԵԽ-ի մոտ գտնվող Շամբեզիում, բյուզանդական և հին արևելյան քրիստոնեական ավանդույթի եկեղեցիների միջև (ղպտիներ, եթովպացիներ, սիրիացիներ, հայեր, հնդիկներ) քրիստոսաբանական փոխ-

ընբռնողության վերաբերյալ: Էկումենիկ այս առաջընթացը, որին մասնակից էր Կաթողիկոսը, ի վերջո շոշափում է նաև արևմտյան (բողոքական և կաթոլիկ) քրիստոնեության հարաբերակցությունը ոչ քաղկեդոնիկ եկեղեցիների հետ, քանի որ «արևմտյան» երկու դավանանքներն էլ, ըստ բյուզանդացիների հետ իրենց ունեցած ընդհանուր ավանդույթի, քաղկեդոնական են: «Դիոֆիզիտների» և «մոնոֆիզիտների» միջև եղած քրիստոսաբանական ներհակության մեղմացումով հնարավոր է կամրջել նաև բողոքականների ու կաթոլիկների միջև հոգևոր-աստվածաբանական վիհը մի կողմից և հայերի միջև՝ մյուս կողմից :

Հենց վերջերս Գարեգին Ա Կաթողիկոսը նաև աչքի ընկավ որպես եվրոպական չափանիշի աստվածաբան: Նա ամենից շատ ուշադրություն գրավող «համբավաշատ խոսնակն» էր եվրոպական եկեղեցիների (բողոքական, հռոմեա-կաթոլիկ, ուղղափառ) Գրացի 1997 թ. հունիսի եվրոպական երկրորդ խորհրդաժողովում: Համաշխարհային քաղաքական շրջադարձից հետո բողոքականների կողմից այն ժամանակ խիստ սրված դավանաբանական լարվածությունների պայմաններում Կաթողիկոսի առանձնակի էկումենիկ անկեղծությունը արևմտյան քրիստոնեական դավանությունների նկատմամբ ուղղակի արժանի է գնահատանքի: Այս կեցվածքն այսօր խիստ գովելի է (հմմտ. օր.՝ ORK-ից և KEK-ից Վրացական Ուղղափառ Եկեղեցու հեռանալը), ինչպես նաև այն քննադատությունները, որոնք Կաթողիկոսը իր սեփական եկեղեցու կողմից իր վրա պետք է հրավիրեր այն բանից հետո, երբ նա Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ 1996 թ. էկումենիկ երկխոսություն վարեց:

Նորին Սրբություն Գարեգին Ա-ի ներկայացվող մահախոսականը «Հայ-գերմանական թղթակցություն» այս ամսագրում ամբողջական չէր լինի, եթե այստեղ չհիշատակվեին նրա կյանքի հոգևոր կապվածությունը գերմանահայկական հոգևոր ժառանգության հետ, շնորհիվ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի, և նրա մանկության ժամանակների կապը դր. Յոհաննես Լեփսիուսի կողմից հիմնադրված «Օգնություն Հայաստանին» գերմանահայկական ընկերության հետ: Արդեն 80-ականների սկզբում Կաթողիկոսը, այն ժամանակ արքեպիսկոպոս, տողերիս հեղինակին Դրեզդենում պատմեց, որ իր հայրը Քեսաբում՝ Կաթողիկոսի ծննդավայրում, Սիրիա, գործակցում էր Լեփսիուսի անվան օգնությունների արդեն ազդեցիկ կազմակեպության հետ: Եվ Կաթողիկոսն իր ողջ կյանքի ընթացքում չմոռացավ այն ժամանակվա բերկրանքը, երբ կանոնավոր կերպով Ծննդյան տոներին երեխաների համար հագուստ էր ստանում: Այսպիսով Գարեգին Կաթողիկոսի համար գերմանացի մեծ հայասեր Լեփսիուսի հետ կապվածությունը ոչ միայն կարդացած գրքերով էր պայմանավորված, այլև մանկությունից եկող քաղցր մի հուշ էր:

Այս խորին ու ներքին կապվածությունը շատ պարզորոշ կերպով էր զգացվում, երբ Նորին Սրբությունը 1998 թ. փետրվարի սկզբին այցելեց Պոտսդամում գտնվող Յոհաննես Լեփսիուսի անվան տուն-թանգարանը, որի վերակառուցման համար նա արդեն 1996 թ. բարեգործության կոչ էր հղել

գերմանացիներին ու հայերին: Նաև միևնույն օրը Պոտսդամում տեղի ունեցած Յոհաննես Լեփսիուսի անվան փողոցի հանդիսավոր բացման արարողությունը, Կաթողիկոսի խոսքերի համաձայն, իր կյանքի ամենահուզիչ պահերից մեկն էր: Դր. Յոհաննես Լեփսիուսի գործերը հիշելիս նա այն ժամանակ հաստատուն հավատով այն համոզմունքն էր արտահայտում, որ հավատն ու սերը հաղթահարում են նաև ցեղասպանությունը, և որ չարիքն ու մահը դեռ վերջին խոսքը չեն: Սա է Գարեգին Կաթողիկոսի թողած կտակը հայ, ինչպես նաև գերման ժողովրդին:

*Թարգմանված «ARMENISCH – DEUTSCHE KORRESPONDENZ»*
*ամսագրից 1999 թ. հուլիս 2*

*Այսօր մենք մի նոր իրադրության առջեւ ենք գտնվում համաշխարհային քրիստոնեության մեջ եւ՛ այստեղ՝ Գերմանիայում, եւ՛ իմ մայրենի երկիր Հայաստանում: Եթե ես ճիշտ եմ կարդում «ժամանակի նշանները»՝ Աստվածաշնչի խոսքերով ասած, աստվածաբանական մտածողության ու հոգեւոր կյանքի նոր հոսանքներ կան: Էկումենիկ շարժումն անցնում է ամենադժվարին ու պատասխանատու ժամանակահատվածի միջով: Մերօրյա գիտական, արդյունաբերական, տեխնոլոգիական գյուտերն ու հայտնագործությունները ոչ միայն ազդել են մեր հասարակությունների ֆիզիկական կամ նյութական կողմերի, այլեւ մեր մարդկային կյանքի հոգեւոր, բարոյական ու ընկերային տիրույթների վրա: Բարոյական վարքի նոր օրենքներ, հոգեւոր որոնումների նոր շարժումներ, ծայրահեղ աշխարհայնական կողմնորոշման նոր մտածելակերպեր են ի հայտ եկել, որոնք մեզ դնում են մի նոր օրակարգի առջեւ եւ՛ մեր Եկեղեցիներում, եւ՛ մեր էկումենիկ հանդիպումներում: Եկեղեցիները մեկ անգամ եւս մարտահրավերի առջեւ են. նրանք դարձյալ կոչված են մեկ անգամ եւս հայացք նետելու իրենց սեփական ինքնահասկացողության վրա՝ Ավետարանի եւ Եկեղեցու վավերական Ավանդության, ինչպես նաեւ մարդկության կյանքի ժամանակակից հոսանքների լույսի տակ:*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

(*«Էկումենիկ հոսանքները Հայ Եկեղեցում. Հալլե-Վիտտենբերգի համալսարանում Վեհափառի կարդացած դասախոսությունից. «Էջմիածին»*, 1998, Բ-Գ, էջ 108-109)

***ԿԱՐԴԻՍ ԳՈՐՅԱՆ***
***Փիլիսոփայության դոկտոր***
***Քեմբրիջի համալսարանի***
***փիլիսոփայության ամբիոնի վարիչ***

# Ի ՆՇԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԳԱՆՔԻ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի վախճանը մեծ վիշտ պատճառեց ողջ հայոց ազգին, քանի որ մեզ լքեց մի բացառիկ անձնավորություն: Թե՛ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եւ թե՛ ողջ հայ ժողովուրդը կորցրեցին իրենց հոգևոր առաջնորդին, սակայն այսօր վշտի մեջ է նաև ողջ քրիստոնյա աշխարհը, քանզի այն կորցրեց մարդու, որը երկար ժամանակից ի վեր մարմնավորում էր խոհուն և արդյունավետ երկխոսությունը քրիստոնեության երկու տարբեր հատվածների միջև՝ տարբերության մեջ լինելով հանդերձ պահպանելով փոխադարձ հարգանքի և հանդուրժողության սահմանները: Այս գիտակցությունը մեր Կաթողիկոսն ավելի քան մեկ անգամ իր անընդմիջելի երկխոսության մեջ հավասարապես դրսևորեց երկու այլ մեծ կրոնների՝ իսլամի և հուդայականության նկատմամբ:

Իր ժողովրդի ողբերգական փորձից ելնելով նա խորը վշտի և իրական մտահոգության ուժն էր հանդես բերում այն բոլոր տառապանքների և ոճրագործությունների հանդեպ, որ կրել էր մարդկությունը 20-րդ դարում: Լինելով 1915 թ. ցեղասպանությունից հետո վերապրող ընտանիքի զավակ, ծնված Սիրիայում, հայաբնակ Քեսաբ փոքրիկ գյուղում, որտեղ ահավոր աղքատության պատճառով երեխաները բոկոտն էին դպրոց գնում, շատ վաղ տարիքում նա ընդունվում է Լիբանան տեղափոխված Կիլիկիայի Կաթողիկոսության Դպրանոցը: Լինելով շնորհաշատ՝ նա կարճ ժամանակում բարձրանում է Հայոց Եկեղեցու նվիրապետական աստիճաններով, միևնույն ժամանակ միջազգային ատյաններում ձեռք բերելով գիտական և քաղաքական մեծ պատասխանատվություն:

Նրա վերելքը անբաժանելի է այն խորը համոզումից և գաղափարից, որը միշտ կենդանացրել և ղեկավարել է նրա ամեն մի գործողությունը՝ լինեն դրանք ազգային կամ միջազգային մակարդակի: Իրականում Գարեգին Ա-ն միշտ ցանկացավ Հայոց Եկեղեցին դուրս բերել իր առանձնությունից, իր ներպարփակվածությունից՝ այն ներկայացնելու համար աշխարհին, որպեսզի Հայոց Եկեղեցին բոլորի կողմից ճանաչված և ընդունված լինի իր իրական արժեքով, իր հոգևոր ու մշակութային պատմությամբ, ինչպես նաև այն հատուկ և խորհրդանշական դերով, որն ունեցել է դարեր ի վեր պետականությունից ու քաղաքական անկախությունից զրկված իր ժողովրդի համար:

Այս հեռանկարով է, որ Գարեգին Ա-ն Օքսֆորդում իբրև իր դոկտորական աստիճանի թեզի թեմա ընտրեց 451 թվականին տեղի ունեցած Քաղկեդոնի ժողովը, որը պատճառ դարձավ քրիստոնեության առաջին մեծ բաժանման:

քննության առնելով նման բաժանման աստվածաբանական ու քաղաքական շարժառիթները՝ նա ջանում էր խորությամբ հասկանալ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դիրքի պատճառներն ու հետևանքները, և թե ինչպե՞ս վերացնել մի շարք թյուրըմբռնումներ:

Ունենալով ազգային այս դիրքորոշումը աստվածաբանական և փիլիսոփայական լայն պաստառի վրա՝ նա ցանկանում էր, որ նկատի առնված լինեն հայկական մտածողության յուրահատկությունները: Եվ հենց նրա՝ ժամանակակից էկումենիկ վեճերի ակտիվ և նկատելի մասնակցություն բերողի շնորհիվ է, որ Հայոց Եկեղեցին իրական ներկայություն ունի այսօր: Նա սերունդներին է թողնում ավելի քան երեսուն տարվա իր աշխատանքի պտուղը՝ վկայելով, որ իր առանձնությունից դուրս գալը Հայոց Եկեղեցու համար չի նշանակում իր ինքնության կորուստ, այլ ընդհակառակը, նշանակում է իր ինքնության և բարձրացման հարստացում, որը թույլ է տալիս նրան հավասար տեղ զբաղեցնել մյուսների կողքին:

Այսպես է, որ Գարեգին Ա-ը և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Պապի, Անգլիկան Եկեղեցու Ներկայացուցիչ Քենթրբերի Արքեպիսկոպոսի, ինչպես նաև տարբեր բողոքական եկեղեցիների բարձրագույն ատյանների համար դիտվեց որպես դինամիկ ու անընկճելի անձնավորություն, որը ժամանակակից էկումենիկ երխոսությունների մեջ մեծ կշիռ ունի: Բացի դրանից մարդու իրավունքների արդարադատության և արդարության արժեքի նրա անընկճելի պաշտպանությունը նրա ձայնը լսելի դարձրեց միջազգային ատյաններում: Գարեգին Ա-ը ունենալով յուրահատուկ մտածողության և գործողության ձև, միջազգային մեծ հեղինակություն, կարողացավ վերանորոգել Հայոց Եկեղեցու մեծ առաջնորդների ավանդույթը, ովքեր իրենց անձի մեջ իմաստուն կերպով համատեղեցին անհրաժեշտ մտավոր, հոգևոր, քաղաքական և դիվանագիտական հատկությունները՝ մատուցելով իրենց առաքինի պարտականության և ծանր պատասխանատվության պատկառազդու ծառայությունը:

1995 թ. ապրիլին, դառնալով Ամենայն Հայոց Կաթողիկոս և ընտրելով «ապրել ու մեռնել՝ վերանկախացյալ Հայաստանի Հանրապետությունում» կարգախոսը, Վեհափառ Հայրապետը օրինակելի ձևով ցույց տվեց, որ յուրաքանչյուր հայ, աշխարհում որտեղ էլ որ նա լինի, չի կարող անտարբեր լինել ժողովրդի ճակատագրի հանդեպ: Գաղափարների այս հետևողականությամբ Գարեգին Ա-ն օգտագործեց միջազգային իր մեծ հեղինակությունը Հայաստանի երիտասարդ Հանրապետության միջազգային ճանաչման ամրապնդման համար և ողջ աշխարհի ուշադրությունը հրավիրեց այն իրողության վրա, որ այս դարի առաջին ցեղասպանության զոհ դարձած այս ժողովուրդը չի կարող նորից մեկ անգամ, որպես կեր, նետված լինել շների առջև:

Առանց թաղման երկու անգամ չեն մեռնում: Նա մարմնավորեց հայ ժողովրդի՝ իր գոյության իրավունքն այլոց կողմից հարգված լինելու ցանկությունը, հատկապես պետական շրջանակներում, թե Հայաստանը կարող է բնականոն հարաբերություններ ունենալ ողջ աշխարհի հետ (մասնավորապես իր բոլոր հարևանների հետ, նույնիսկ նրանց հետ, որոնք, դժբախտաբար, այսօր նույնպես մտածում են միայն նրան խեղդելու և ոչնչացնելու մասին), որպեսզի Հայաստանը կարողանա այնպիսի դեր խաղալ,

որը նրան կվերադարձնի միջազգային ասպարեզ: Գուցե Պապի այցելությունը Հայաստան, որը չկայացավ, փոխադարձ հարգանքի մեջ իր մակարդակի վրա ներկայացներ խաղաղության սկիզբը, փոքրիկ լույսը, որին ձգտում է համայն հայությունը: Համենայն դեպս, Հայաստանի քրիստոնեացման 1700-ամյակը տոնելու Հայաստանի, Ղարաբաղի և Սփյուռքի հայերի այս պատմական առաջին հանդիպման նախօրյակին, որը կնպաստի հայոց պետության ամրապնդման համար ուժերը միացնելու, ողջ աշխարհում հայերի իրավունքների անվտանգությանն ու պաշտպանությանը հետևելու և հետագա սերունդների համար ավելի լավ ապագա կառուցելու, անկասկած Վեհափառի բացակայությունը խորապես կզգացվի: Բայց պետք է հուսալ, որ մեր ազգի մեջ ի հայտ կգան հոգևոր զավակներ՝ շարունակելու անգթորեն ընդհատված այդ առաքելությունը:

Սիրելի՛ Վեհափառ, Դու, որ խոսելով բազմաթիվ լեզուներով երբեք չմոռացար քո հարազատ գյուղի բարբառը, թո՛ւյլ տուր մեզ քեսաբի խոսվածքով ասել այն, ինչ որ ասում ենք, երբ մեզնից հեռանում է մի թանկագին էակ, որին միշտ ցանկանում ենք կենդանի տեսնել. «Դու չպետք է մեռնեիր»: Բայցևայնպես դու մեզ լքեցիր: Սիրելի՛ Վեհափառ, sit tibi terra levis: Թո՛ղ որ քեզ իր գիրկն ընդունած Հայաստանի հողը քեզ համար թեթև լինի:

*(Թարգմանված «NOUVELLES ARMENIE» ամսագրից, N45, հուլիս-օգոստոս, 1999)*

*Ներքին Հոգևոր Հայրենիք կկոչեմ ես այն կապվածության զգացումը, որ մենք ունինք մեր Մայր Հայրենիքի եւ մեր Մայր Եկեղեցիի հանդեպ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ: Այդ Հայրենիքը, Հոգևոր այդ Հայրենիքը աշխարհագրական սահման չի ճանչնար: Քաղաքական ուժերը սահմաններ կդնեն կամ զինվորական գործողությունները: Երկիրները կչափվին կիլոմետրերով, բայց Հայության այն Հայրենիքը, որուն կպատկանին բոլոր անոնք, որոնք ունին իրենց մեջ գիտակցությունը իրենց Հայ ըլլալուն, արյունը՝ ժառանգված իրենց Հայրերեն, Հավատքը իրենց փոխանցված Լուսավորչի Սուրբ կտակով, ունի իր մշակույթի զգացումը իր մեջ, ոչ մեկ աշխարհագրական սահման չի ճանչնար: Եվ դուք այդ Հայրենիքին քաղաքացիներն եք, այդ Հայության հարազատ զավակներն եք, նույնիսկ եթե երբեք անձնագրով Հայաստանին Հանրապետության քաղաքացիները չըլլաք, դուք չեք դադրի Հայության քաղաքացիները ըլլալեն:*

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Էջմիածին», 1997, Բ-Գ, էջ 49:


ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է
ՎԵՀԱՓԱՌԸ

# ՎԵՀԱՓԱՌԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԳԱՄԸ

1999 թ. հունիսի 18-ին վերջին անգամ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի շուրջը բոլորվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը: Իր երկրային կյանքի ամենավերջին հանգրվանին հասած պերճաբան ու քաղցրախոս Հայրապետը իր հոգևոր կրտսեր եղբայրներին ու զավակներին կանչել էր փոխանցելու հրաժեշտի հայրապետական պատգամը: Հավաքված միաբանների կողմից նախ Վեհափառին դիմեց Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

*Վեհափառ Տեր, շնորհակալ ենք և փառք ենք տալիս Աստծուն, որ Ձերդ Սրբությունը նաև անկողնուց մեզ է բաշխում իր Հայրական օրհնությունները: Այս երիտասարդ սերունդը Ձեր շնչով, Ձեր ոգով կրթված և սնված սերունդ է և հավատում ենք, որ պիտի հետևեն Ձեր քայլերին և նույն նախանձախնդրությամբ, նույն նվիրումով, նույն հավատքով, նույն անդադրում աշխատասիրությամբ իրենց ծառայությունը պիտի մատուցեն մեր Եկեղեցուն և Եկեղեցու միջոցով՝ մեր ազգին ու հայրենիքին: Ուրեմն, Վեհափառ Տեր, Ձեր թույլտվությամբ կուզեմ ընթերցել Ձերդ Սրբության խոսքը և պատգամը մեր միաբաններին:*

Անողոք հիվանդությունը, որ նախ կապանք դրեց Նորին Սրբության շքեղ խոսքի ձայնային ելևէջումներին, թողնելով միայն գիրը, այնուհետև արագաքայլ առաջանալով շաբաթե շաբաթ՝ կրճատեց նաև թղթին հանձնվող տողերը, հոգեմտավոր վերջին ցոլացումները՝ հայրապետական վերջին կոնդակները, օրհնության գրերը, գնահատանքի խոսքերը և մտածումները:

Վեհափառը միշտ շեշտում էր, որ թեև ինքը Հայրենիքում չի ծնվել, սակայն Հայրենիքն է ծնվել իր մեջ և թե՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս դառնալով իր կյանքը միաշաղախեց Ս. Էջմիածնի կյանքին: Եվ հիմա Ս. Էջմիածնի հովանու ներքո հայրենի հողին միաշաղախվելուց առաջ դիմելով այդ հողի, ժողովրդի ու եկեղեցու հոգևոր սպասավորներին, հոգևոր-կրոնականի ու ազգային-եկեղեցականի զարմանալի մի ներդաշնակությամբ տասնամյակներ շարունակ հնչեցրած իր խոսքը նույն ներդաշնակությամբ խտացնելու էր հայրապետական վերջին պատգամում:

# ՎԵՐՋԻՆ ՊԱՏԳԱՄԸ
# ԵՎ
# ԳՐՎԱԾ ՎԵՐՋԻՆ ՏՈՂԵՐԸ



18 Յունիս 1999
Ս. Էջմիածին

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՄԻԱԲԱՆՆԵՐԻՆ

*Սիրելի միաբաններ, Հոգեկան խորը հուզումով կբաժանվիմ ձեզմե, կմիանամ Աստծո՝ Հարուցյալ Տիրոջը: Փափագս է, որ դուք երկար ժամանակ մնաք Աստծո հետ, քաջ ըլլաք եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սիրեք եւ անոր սուրբ, կրոնական եւ ազգային ծառայությունը չեն սպահեք: Անսասանելիորեն սկսար եմ. դուք մնաք զորավոր:*

*Աղոթարար սիրով*

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**18-06-1999**
*Ս. Էջմիածին*

### ԳԱՐԵԳԻՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ ԽՈՍՔԸ

Ձեր ոգով և Ձեր երազներով՝ չեն, հաստատուն ու անսասան պիտի պահենք, Վեհափառ Տեր, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ձեզ հետ միասին:

# ՀԱՅՐԸ*

Երանաշնորհ Գարեգին Հայրապետի անձնաւորութեան ամբողջական արժևորման և հարազատ պատկերացման մէջ չի կարելի անտեսել - ի շարս այնքան գեղեցիկ ու ներդաշնակ գիծերու - Անոր վրայ փայլող՝ **Տիպար Հայրութեան** լուսապսակը՝ տեսանելի մանաւանդ Իրեն մօտիկ ապրող նորահաս, երիտասարդ հոգիներու համար: Ու Անոր մահը ամէն մտածումէ, ամէն գիտակցական անդրադարձումէ առաջ Իր գիտական-բանասիրական, վարչական-կազմակերպչական թանկագին ու բազմավաստակ գործունէութեան դադարումին վրայ, յառաջ բերաւ այդ հոգիներուն մէջ խորունկ վիշտ մը, դառն ու անամոքելի կսկիծ մը՝ պարպելով իրենց կեանքի շրջանակը Անոր անձնաւորութեան գրաւիչ ներկայութենէն, մարելով իրենց հոգեկան երկինքի վրայ շողացող ուղեցոյց-աստղը:

Անոր դեռ թարմ ու յաւէտ անթառամ յիշատակով տոգորուն՝ չեն մտածեր անոնք հայ գիտութեան ու արուեստի անդաստանին մէջ բացուած վիհին խորութեանը մասին, չեն անդրադառնար անոնք հայ ազգային հաստատ կառուցման ու ընդմիշտ գոյատևման համար յղացած և Իրմով միայն իրագործելի տեսիլքներուն խորտակման ահաւորութեանը. չեն կրնար անոնք հասնիլ մտածումի այս հեռաւորութեան, երբ իրենց մօտիկ կը գտնեն Մեծ Բացակայ մը, որուն մասին չէին մտածած երբեք:

Հակառակ Իր ալեւոր հասակին ու հողեղէն վատոյժ մարմինին, Ան միշտ ապրեցաւ մօտիկը երիտասարդ հոգիներու, զգալով անոնց առաջնորդի կարիքը ու բերելով գոհացումը այդ կարիքին - խոնարհելով դէպի անոնք - որովհետև անոնք անկարող էին Իրեն բարձրանալու - զանոնք վեր առնելու և միշտ ուղիղ պահելու համար:

**Ընդհանրական** հայրն էր Ան բոլոր հայրական սիրոյ կարօտ հոգիներուն: Բայց **առաջնորդ** հայրն էր Ան մանաւանդ Դպրեվանքի ուսանողներուն և եկեղեցականութեան նոր բացուած դեռատի ու անփորձ հոգիներուն: Երկար տարիներու հոլովոյթով ճոխացած բազմաճիւղ ու լայնատարած ծառ մը, որուն հովանիին տակ կրնային ապահով ու ինքնավստահ ծնունդ առնել ու հասակ նետել մարդկային ծիլեր, իրենց սնունդը առնելով Անոր հարուստ, բազմահիւթ արմատներէն, դառնալու համար, ի վերջոյ, իրենց կարգին, հաստարմատ ու պտղառատ ծառեր Հայ Եկեղեցւոյ մրգաստանին մէջ:

Պատկերը քիչ մը բռնազբօսիկ ըլլայ թերևս, բայց իմաստը բացայայտ -

---

* *Սույն հոդվածը երջանկահիշատակ Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետի սարկավագության շրջանում գրված խոսքն է՝ նվիրված Մեծի Տանն Կիլիկիո Երանաշնորհ Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսի հիշատակին:*

հայ դարերու հոգեկան լեցունութեամբը ծոխացած, հայ ժողովուրդի բազմադարեան կեանքի փորձառութեամբը հարուստ, մէկ խօսքով՝ հայ անցեալին՝ քաղաքական, մշակութային, կրօնական անցեալին՝ հարազատ ու լայնագոյն պատկերը Իր մտքի հորիզոնին վրայ ունեցող իբրև փարոս: Ան կարողագոյն անձն էր իբրև առաջնորդ հայր ոչ միայն հանրութեան առհասարակ, այլ և հայ անհատին, բայց մանաւանդ հայ եկեղեցականին՝ մասնաւորաբար: **Իմաստուն հայր** մը, դարերու իմաստութեամբը առլցուն, խորհրդաւոր, բայց առինքնող ներքին զօրութեամբ մը օժտուած, Իր անձին անօրինակ, քաղցր հմայքովը գրավիչ:

Ի՜նչ դիւթական ժպիտ՝ Իր լուսաւոր դէմքին վրայ, զուարթ կենդանութեան մը ցուցանիշ. անբաժան՝ Իր դէմքէն, նոյնիսկ Իր տխրական տրամադրութեան պահերուն: Խորհրդաւոր քաշողութեամբ այդ ժպիտը կը դառնար խանդավառիչ բոց, կը ներշնչէր կորով երբեմն յուսահատութեամբ, երբեմն թերահաւատութեամբ երերացող ու յաճախ ընկրկող պատանի հոգիներուն, երբ Իր գորովալից, անյիշաչար, հայրական քաղցրութեամբ օծուն նայուածքը ուղղուէր անոնց աչքերուն: Պատգամ ունէր այդ ատեն Իր ժպիտը, խրախոյս և հաւատք ներշնչող: Խօսուն էր Իր նայուածքը՝ ա՜յնքան հարուստ հայ մագաղաթներու, hինադարեան յուշարձաններու համայնապատկերը Իր մէջ պարփակող, հայրենի մեր բնավայրի տեսարանները ընդգրկող ու իրենց առջև բացող:

Յապա Իր խօ՜սքը, ա՜յնքան կենդանի ու հրաշունչ, որ Իր մէջ կը բարձրացնէր ու կը միաձուլէր ունկնդիրները գաղտնի զօրութեամբ մը. ա՜յնքան ընտանի ու մտերմիկ՝ հայրական իմաստուն յորդորներով լեցուն, տափակ ու սնամէջ խրատաբանութեան օտար Իր խօսքը՝ ուղղուած Իր սաներուն՝ նշանաբան կը դառնար յաճախ անոնց, բանալով բարձրագոյն կեանքի ուղի մը անոնց տատանող ու անվստահ քայլերուն առջև: Ոռոգիչ ջուրի նման կեանքի թափ կու տար Ան մատղաշ հոգիներուն, դառնալով խթան՝ անոնց կեանքի ապագրէզին վրայ կախուած՝ իբրև հասանելի բարձունք: Որովհետև ճշմարտութեան խօսքն էր Իրը, ու մանաւանդ **ապրուած** ճշմարտութեան: Միտքի յղացում չէր ան զուտ տեսական բնութեամբ, այլ կեանքի իրականութենէն, Իր հարուստ փորձառութենէն հանուած եզրակացութիւններ, գործնական առողջ բնութեամբ: Ազդու էր Իր խօսքը **«քանզի բան ճշմարիտ՝ արդար և օրինաւոր ի խրատաբանութիւն ժողովրդոց՝ ծածկեալ պտղաբերէ զոգիս լսողացն երկնաւոր լուսովն»** (Փարպեցի): Եւ իրը ըլլալով այդ, դարձեալ պատմագիրին բառերով՝ **«ծածկեալք լինէին հոգիք լսողացն ի շնորհացն, որ ելանէին ի բերանոյ նորա. և ի մէջ հայրապետացն և եպիսկոպոսացն իբրև զարուսեակ պայծառացեալ երևէր բանական գիտութեամբն»**:

Էջմիածին կամ Անթիլիաս և կամ այլուր, իբրև հայր մօտեցաւ Իր աշակերտներուն ու անոնց գիտութիւն տալով հանդերձ, աւելի՛ ներշնչեց հաւատք ու խանդավառութիւն հանդէպ Յայ Մշակոյթի անսասանելի թագաւորութեան, և ոգի՛ այդ անկործելի, յաւերժական թագաւորութեան տալու նոր ու ծոխ գանձեր ինքնատիպ ստեղծագործութիւններով: **Գիտութեան, ուսման**

հայր մը՝ փարթամ հարստութեամբ՝ մեծաթիւ և մեծածաւալ և տակաւ աճող հատորներու մէջ սեղմուած: Առատաձեռն հայր մը՝ Իր ունեցածը ծրիօրէն և առատապէս բաշխող ուսման Իր որդիներուն:

Բայց այս բոլորէն վեր՝ **Իր կեանքը**. Իր ապրած լեցուն այն ժամանակը, որ շատ աւելի մեծ դասեր ունի Իր որդիներուն համար քան Իր գրական վաստակը կամ Իր կենդանի խօսքը: Հայրեր կան, որոնք չեն խօսիր, չեն խրատեր, չեն գրեր միայն, այլ մանաւանդ կ'ապրին այն բարձրորակ կեանքը, որ ճշմարիտ մարդուն է յատուկ, և զոր կը փափաքին աւանդել իրենց զաւակներուն առանց քարոզութեան, այլ իրենց կեանքի արուեստին իբրև նմոյշ, տիպար՝ գաղտնի բայց ներզօր ազդեցութեամբը անոնց մանկական կամ պատանեկան ջինջ հոգիներուն վրայ: Եւ Գարեգին Վեհափառը բարձրագոյն ներկայացուցիչներէն էր անոնց: Ակնարկ մը միայն, հարևանցի նայուածք մը Անոր կեանքին վրայ - կամ այդ կեանքի ունէ դրուագին - շատ աւելի դաստիարակիչ դեր կրնայ կատարել երիտասարդի մը համար քան ունէ բարոյախօսական չքեղ բանախօսութիւն, **անպայման** պարզելով անոր աչքին առջև առաքինութեան մը գեղեցկութիւնը, բարոյական ազնուագոյն իտէալի մը իրագործումը: Մտաբերել հերոսի Իր պատկերը Սարդարապատի ճակատամարտին մէջ. հայրենասիրութեան և ինքնազոհութեան մեծագոյն դաս մը, հայրենիքէն հեռու, օտար ափերու մէջ, օտար տարրերով կազմուած հոգիի մը համար: Երևակայել զինք մագաղաթներու վրայ հակած, կամ հինադարեան յուշարձաններու փոշիներուն մէջ թաքաւուն. հայ արժէքներու հանդէպ պաշտամունքի, այդ արժէքներու ի յայտ բերման ու պայծառացման աշխատանքի մղիչ ուժեղ ներշնչում մը՝ օտար արժէքներով սնած, ու հայկականին հանդէպ արհամարհոտ երիտասարդ հայ ուսումնականին, գիտութեան ու արուեստի նորընծային համար:

Ու այս բոլոր խորհրդածութիւններէն վերջ մտածել որ ոչ ևս է կեանքի նաւապետ այս հայրը ... Դառնագոյն ու անդարմանելի կորուստ: Որբութեան ի՜նչ ճնշող վիճակ, ի՜նչ խեղդող զգացում, «կեանքի ամենախորունկ թախիծը»: Զգալ յանկարծ ինքզինքդ մինակ կեանքի դժուարամատոյց բարձունքի կողին, շրջապատուած բազմապիսի վտանգներով, բարձունքի մարած փարոսին առջև շուարած:

Բայց միտքի ցնցում մը՝ տեսնելու համար թէ մարա՞ծ է այդ փարոսը **առյաւէտ**, թէ ոչ պատահական խաւարում մը խափանած է անոր լոյսը. Վեհափառի անձնաւորութիւնը անհետացա՞ծ է այլևս. խաբուսիկ զգացում մը չէ՞ արդեօք որբութեան անմիջական ու տրտմաթախիծ այդ զգացումը:

Մարդիկ կրնան կորսնցնել իրենց հողեղէն գոյութիւնը ու կորսուիլ իրենք՝ երբ իրենց կեանքը չի բարձրանար սովորական պարզ գոյութենէն: Մարդեր ալ կան, սակայն, որոնք այդ գոյութենէն վեր տեսնելով իրենց կեանքի իմաստը, հոգեկան անանց աշխարհին մէջ իրագործելով արժէքներ, իրենց մարմնի քայքայումէն ետք կ'ապրին ոգեղէն կեանքով՝ անմահութեան ոլորտին մէջ

դառնալով մարդկային հոգիի երկինքին լուսաւոր աստղերէն մին: Ու թող Ներուի ըսել Վեհափառ Հայրապետին համար, փոխ առնելով բառերը բանաստեղծին. «աստղ մ'ալ Ինք գնաց յաւելուլ երկնից աստղերն», որովհետև կրցաւ տեսնել ու իրագործել Իր իսկ բառերով **«անցաւորի մէջ յաւիտենականը և մեքենականի մէջ կենդանի հոգին»**:

Այդ երկինքէն այժմ Ան կրնայ առաջնորդել «որբ» մնացած Իր զաւակները, ոգեկան այդ աշխարհէն խօսելով անոնց անձայն, բայց իմանալի, ընտանի լեզուով մը՝ Իր թողած յաւերժական յիշատակներով, Իր աւանդ ձգած ոսկեղէն ստեղծագործութիւններով: իր **«դէպի լոյս և կեանք»** տանող խօսքը - յաւերժացած այլևս - չի դադրիր տալէ Իր որդիներուն բարոյական իտէալ կեանքը, որ կ'իրագործուի կիրարկումովը այն սկզբունքներուն, որոնք նիւթը կը կազմեն Իր այդ խօսքին: Ու Իր գրական վաստակը կը բաւէ սնուցանելու սերունդներ ամբողջ, բանալով անոնց առջև նոր ու ընդարձակ հորիզոններ, պարզելով անոնց աչքին անմշակ, բայց արգաւանդ դաշտեր, ընդերկրեայ գանձերով հարուստ և մշակութեան կարօտ:

Հայր մը, որ Իր մահուընէ ետք չի դադրիր հայր ըլլալէ ոչ միայն անուանապէս, այլ մանաւանդ գործնապէս:

**ՆՇԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ**

*«Հասկ», 1952, Է-Թ, էջ 297-299:*

*Հետեւեր էի իրեն դպրեվանքեան ամբողջ ուսանողութեանս ընթացքին: Պաշտանքի զգացումով հետեւեր էի իրեն, կուռքի մը յատուկ գրաւչութեամբ, աշակերտեր՝ իր ոգեշնչող «դաս»երուն: Վեց տարիներ վանքն ամբողջ կարծես իրմով էր շնչէր, իր անձին յորդուն, արտագեղող հարստութեամբն ու ճառագայթուն ներկայութեամբն էր ապրեր: Պարտէզին բոլոր ակօսները իրմէ ջուր կը խմէին...: Խորանին բոլոր մոմերը իրմէ լոյս կ'առնէին...: Մեծղի ու մշտափարթամ կաղնիի նման իր շուքը կը տարածէր քաղցր զովութեամբ մը ողջ վանական շրջափակին մէջ, ուր այդ շուքը կը վերածուէր ստեղծարար ներշնչումի Դպրեվանքի դասարաններուն մէջ, կամ Մայր Տաճարի խորանին ու Կաթողիկոսական գահին առջեւ, կամ տպարանի գրաշարոցներուն դիմաց եւ կամ Վեհարանի դահլիճին մէջ...:*

**ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ**

*«Հայ «Ստեղծագործ ոգու» անմահ վկան», 1967 թ.,*
*«Հող, մարդ եւ գիր» գրքից:*



# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԻՑ

***«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ «ԾԱՌԱՅԱԿԱՆ ԿԵՐՊ»-ԻՆ ՄԷՋ» գրքից***

Սկզբնական իր օրերին մանաւանդ, հետագայ դարերին եւ մինչեւ այսօր ընդհանրապէս, Հայաստանեայց Եկեղեցին հաւատարիմ է մնացել եւ շարունակում է մնալ Աւետարանի ակնաղբիւրից ցայտող իր կոչումին եւ քրիստոսապարգեւ պարտաւորութեան: Առանց այդ հաւատարմութեան՝ Նա ապահովաբար պիտի դադարէր եկեղեցի լինելու իր բնատիպ նկարագրից, դառնալու համար լոկ ազգային յատուկ մի հաստատութիւն, մի օրգան, կորցնելով իր աստուածային տիպը, երկնային դրոշմը, պարպուելով Աստծու Հոգու «կենդանի ջնչից», Քրիստոսի հրաշակերպող զօրութիւնից:

*
* *

Հայ ժողովուրդը քրիստոնեական կրօնի մէջ գտաւ **յոյսի՛** վարդապետութիւնը, որ ինքնին լոյս է կեանքի, երբ մանաւանդ լոյսը ինքը խաւարել է կեանքում...: Աւետարանը յոյսի խօսքն էր, որ բերեց մանաւանդ այն մարդկանց եւ ազգերին, որոնք ճնշուել էին կամ արհամարհուել իրենց մարդկային իրաւունքների արդար եւ ազատ կիրարկմանը մէջ:

*
* *

Ժողովուրդներն ապրում են, անշուշտ, հացով: Բայց ոչ **միայն** հացով: Հացից վեր՝ կայ հոգու կեանքը, առանց որի **մարդկային կեանք** բացատրութիւնը դատարկ, անիմաստ խօսք պիտի լինէր, պարզապէս ջրթնային արտայայտութիւն: Մարմնի գոյութեան համար մարդիկ ունեն իրենց համար հողեղէն միջոցներ՝ երկիր, հաց, հագուստ եւ զգայական վայելքներ: Որպէս հաւաքականութիւն ապրելու համար մարդիկ պէտք ունեն առանձնայատուկ, սեպհական հողի, երկրի, հայրենիքի, որոնք կենսական կարեւորութիւն ունեն ժողովուրդի մէջ համայնական, միասնական կեանքի որպէս նախապայմանական կարելիութիւններ: Հոգեկան կեանքի համար եւս անհրաժեշտ է հայրենիք, եւ երբ նիւթեղէն հայրենիքը այս կամ այն պատճառով զլացուի մի ժողովրդի, այդ հայրենիքը դառնում է մի **հոգեւոր հայրենիք**, առանց որի մարդիկ չեն կարող ապրել որպէս ազգ, այլ կ'ապրեն պարզապէս որպէս իրարից անջատ, անհատ անձանց գումար:

Հայ ժողովրդի համար հոգեւոր ճշմարտութիւնների, բարոյական սկզբունքների, ազգային առողջ գիտակցութեան, ներշնչարան-վառարան եղող **«հոգեւոր հայրենիք»**ը Հայաստանեայց Եկեղեցին է, բազում անգամ ասուած, բազում անգամ ասելի:

*
* *

Մի հաստատութիւն, որ կորցնում է իր իւրայատուկ նկարագիրը, չի կարող արդիւնաւորապէս ծառայել ուրիշ նպատակների: Դա կը լինի գեղծումը, այլասերումն իր առաքելութեան, որ ինքնին չարիք կը դառնայ: Իր բնութեանը եւ ինքնութեանը հաւատարիմ չեղող անհատ կամ հաւաքականութիւն եւ կամ հաստատութիւն, վերջին հաշուով չի կարող նաեւ հաւատարմօրէն ծառայել ուրիշ նպատակների, եթէ դրանք

հարազատ ցինեն իր սեփական կոչումին, եւ կամ նորիրագործուած ցինեն պատմական պարագաների բերումով ու անհրաժեշտութիւն ցինեն ներկայ կեանքի պայմաններին: Եկեղեցին ինք, որպէս եկեղեցի, կենսունակ եւ ուժեղ պէտք է լինի, որպէսզի կարողանայ ազգին ծառայել դրական արդիւնաւորութեամբ շօշափելի գործերով: Կեանքից, վառ կենսունակութիւնից պարպուած մի եկեղեցի ազգի մարմնի վրայ դրուած մի հագուստ է, ուշ կամ կանուխ պատառելի եւ փտելու սահմանուած: Կարկտելու արուեստն անգամ նրան չի փրկի:

*

* *

Միածինը մէկ անգամ ծնաւ ի Բեթղեհեմ եւ մէկ անգամ իջաւ ի Հայաստան աշխարհ: Բայց ամէն անգամ, որ մէկը այցելէ ի Բեթղեհեմ եւ ի Ս. Էջմիածին, Միածինը վերստին կը ծնի ու կ՛իջնէ անոր մէջ, եթէ ան իր հոգին չէ բանտարկած ու կղպած իր մարմնին ու մարմնեղինութեան պարունակին մէջ, իր հոգեղէն զգայնութիւնը չէ ենթարկած աշխարհայինին հեղձուցիչ, ցլատիչ եւ այլասերիչ չարագործութեանը, որուն անունն է վատ հաղորդութիւն կամ պարզապէս՝ անհաղորդութիւն:

***«ԱՆՑԵԱԼԸ ԱՆՑԱԾ ՉԷ» գրքից***

Դիւանագիտութիւն եւ ճշմարտութիւն առհասարակ եղբայր չեն իրարու: Լաւ գիտենք այդ: Բայց գիտենք նաեւ, որ ճշմարտութիւնը, ի վերջոյ, կը յաղթէ: Դիւանագիտութեան յաղթանակը ժամանակաւոր է, ճշմարտութեանը՝ յաւիտենական: Առաջինը յարաբերական է, երկրորդը՝ տոկուն եւ տեւական: 1915-ի Տէր Զօրի օրերուն ոչ ոք կրնար մտածել, որ 1918-ի Սարդարապատով կրնար փրկուիլ Հայաստանի մէկ կարեւոր մասը...: Դիւանագիտական խաղի օրէնքներուն մէջ չէր նախատեսուած այդ: Բայց եղաւ. ճշմարտութիւնը եւ արդարութիւնը յաղթեցին «մեր քաջ որդւոց սուրբ արիւնով»: Ճշմարտութիւնը, երբ հաւատքով սնանի, յոյսով ճրագուի եւ սէրով ճառագայթէ՝ անպայման կը յաղթանակէ: Այս է աստուածային իմաստութիւնը՝ մարդկութեան եւ հայութեան կեանքին մէջ ճշմարտուած եւ մի՛շտ ճշմարտելի:

*

* *

ՈՂՋՈՅՆ ձեզ, երկնաբնակ հայորդիք, **նահատակք պանծալիք**, դուք, որ երկրի վրայ գերեզման չունեցաք, բայց աւազաններէն, ջուրերու



ԷՋՄԻԱԾԻՆԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՉԷ, ԷՋՄԻԱԾԻՆԸ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ Է



ՊԱՅԻՄ ԲՌՆԵՔ ՁԵՐ ՀԱՅՐԵՐՈՒ ՀԱՒԱՏՔԷՆ



«ԼԻՑ ԵՒ ՁՄԵԶ ՀՈԳԻՈՎԴ ՔՈՎ ՍՐԲՈՎ»

խորքերէն, ժայռերու ժանիքներէն, քարայրներու մթութիւններէն ճամբան գտաք դէպի երկինք վերթեւելու՝ Աստուծոյ ամենատես եւ ուղեցոյց հայեացքին զօրութեամբը: Ձեր արեամբ **մկրտութիւնը** Տէր Զօրի աւազաններուն մէջ՝ առաւ **յարութիւն** անուն եւ եղաւ նախադուռը ձեր երանական կեանքի կայքերուն: Իսկ երկրաբնակ ապրողներուս սրտերուն մէջ հաստատեցիք սուրբ եւ սրբացնող բնակութիւն: Եւ կու գայ օրը, երբ այլեւս բնականօրէն ճանչցուած ձեր սրբութիւնը կը դառնայ կանոնականացեալ սրբադասում, որուն արժանի էք մեր բոլորի խիղճերուն, քրիստոնէական հաւատքի անկեղծագոյն վկայութեամբը:

Կը զգամ, որ այժմ կը դիտէք մեզ՝ աշխարհի չորս ծագերուն, ձեր երկնայնացեալ տեսողութիւնը աշխարհագրական հեռաւորութիւններն ու բաժանումները կ'արհամարհէ: Դուք մեզ կը տեսնէք ՄԷԿ՝ ՄԷԿ անուամբ դրոշմուած, ՄԷԿ լեզուով բարբառող, ՄԷԿ անցեալի արմատներով սնանող, ՄԷԿ ապագայի հայեացքովը լուսավառուած: Հողեղէն մարդ ենք մենք դեռ, սակայն, աշխարհի վրայ ապրող եւ փորձանատր այս աշխարհէն փորձուող էակներ: Կը սխալինք երբեմն՝ նեղհայեաց մտածման եւ գործելակերպի ճամբաներուն մէջ սայթաքելով: Կ'աղաչեմ ձեզ, կրակէն անցած եւ մաքրափայլօրէն ոսկիացեալ հոգիներով յստակատես նահատակներ, ջամբ թափեցէք մեր գլուխներուն, եթէ թուլնանք մեր միութեան ամենազօր եւ ամենայաղթ հանգոյցներէն, ձեր աստուածացուլք ցասումը կայծակեցէ՛ք մեր գլուխներուն, երբ անտարբերութեան եւ հոգելքումի կամ սրտաթափումի թմբիրը այցելէ մեզի այս **օտար ափայի ճամբէքի վրայ**: Եղէք մեր խիղճը, մեր միութեան յարաբարբառ յուշարարը, հայութեան ջինջ հայելին, որուն յստակութիւնը, հարազատութիւնը, մաքրութիւնը արեամբ զոհողութեան փայլովն է ջահուած: Ձեր նայուածքը մի՛ հեռացնէք մեզմէ, ձեր այդ նայուածքին մէջ մենք ունինք սլաքը մեր ուղղութեան եւ խթանը մեր արթնութեան, գաղտնիքը մեր յաղթութեան:

***«ՀՈՂ, ՄԱՐԴ ԵՒ ԳԻՐ» գրքից***

Զանգը՝ մեր գիւղին սի՛րտն էր: Խօսնակը, որուն «խօսք»ը կը հասնէր գիւղի բոլո՛ր մարդոց: Կոչնակն էր ան, որ կը հանդիպէր ամէն մէկ գիւղացիին, ուր ալ ըլլար ան՝ դաշտին թէ այգիին մէջ կամ տան երդիքին տակ, դպրոցի շրջափակին թէ նեղլիկ կրպակի մը մէջ, փողոցներու մէկ անկիւնը կամ տանիքներու վրայ: Երբ կը հնչէր՝ բոլորն իր ձայնին մէջ կը միացնէր, գիւղը իրմո՛վ կը միազանգէր: Իր ղօղանջով գիւղը գի՛նդ կ'ըլլար: Գիւղացիք իրմո՛վ իրար կը հանդիպէին, իր մէջէն զիրար կը զգային եւ իրենց համայնութիւնը իրմո՛վ կ'ապրէին: Զանգը ժամացոյցն էր մեր գիւղին և իր ղօղանջը՝ ժամադրավայր մեր գիւղացիներուն:

*
* *

Ձէթն ու ծաղիկը կը պայծառակերպուէին՝ դառնալու համար անուշաբոյր եւ շնորհածիր միւռոն: Միւռոնը կ'եռար հայ հաւատքի եւ ազգային ըմբռնումի կրակով: Եւ ծաղիկին ու ձէթին միազանգումին հանգոյն՝ վանքի բակին մէջ կ'եռար հայոց ժողովուրդը եւ կը միածուէր հեղ մը եւս հաւատքի եւ հայութեան դարատր կաթսային մէջ...:

*
* *

Միւռոնը ձէ՛թ է ու ծաղիկ՝ իբրեւ նիւթեղէն գոյութիւն: Բայց մեզի համար կը փոխակերպուի խորհուրդի՛, իմաստի՛ ու կեանքի՛, երբ կը հանդիպի մեր հաւատքի հրաշակերպող հոսանքին եւ ազգային գիտակցութեան ներգօր կրակին:

*
* *

Հայց. Եկեղեցւոյ միւռոնը հայութեան կնի՛քն է դարձած՝ ըլլալէ ետք կնիքը Ս. Հոգւոյն: Միւռոնով պայծառացած ճակատին համար կ'ըսենք. **«հայո՛ւ ճակատ»**. Միւռոնուած մանուկին համար կ'ըսենք. **«հայո՛ւ որդի»**. երբ մանկութենէն անմիջապէս ետք երեխան դրոշմի օծումն ընդունի իր ճակտին՝ կ'ըսենք. **«ահա հիմա հայացաւ»**:

***«ԾԱՆԻՐ ՋՔԵՋ» գրքից***

Քրիստոս աշխարհ եկաւ Աստուծմէ հեռացած եւ իրարու օտարացած մարդերը մօտեցնելու իրենց Արարչին եւ միացնելու իրարու՝ եղբայրական կապով: Մեր ազգը եղաւ **առաջի՛նը** աշխարհի բոլոր ազգերուն մէջ, Քրիստոսի միազօղից, եղբայրացուցից եւ ազնուացուցից կրօնքը հռչակելու ազգային կրօնք:

*
* *

Աւանդութիւնները ազգերու ինքնութեան շաղախից տարրերն են, որոնք երբ անտեսուին, մոռցուին, արհամարհուին՝ ցունատութիւն եւ

կերպախաթարում յառաջ կը բերեն այդ ազգերու դիմագծութեանց վրայ եւ, ի վերջոյ, դէպի նսեմացում եւ աղօտութիւն, թուլացում եւ անէացում կ'երթան անոնք։

*
* *

Աւանդութիւնները խարիսխներ են ամրութեան եւ տոկունութեան։ Յանեցէք զանոնք ժողովուրդներու կեանքէն, ազգերը կը տատանին անարմատ եղէգներու պէս եւ կը թափին ճիւղերէն փրթած տերեւներու նման։

*
* *

Աստուածածնի անձին պանծացումը մեր մէջ կը վերապրեցնէ մաքրամաքուր հոգեկան ապրումներու եւ առաքինութիւններու եւ մայրական կոչումի պատուականագոյն եւ հայաշեշտ գաղափարը, որուն այսօրուան աստիճանական գունաթափումը աղէտ է մեր ժողովուրդի ընտանեկան կեանքի սրբութեան եւ փրկարար ազգային դերին վրայ բերած իր մթացող ստուերով։

*
* *

Եթէ ողկոյզ մը խաղող ուտես Ս. Աստուածածնի վերափոխման տօնէն առաջ՝ մահացու մեղք մը գործած չես ըլլար եւ դժոխք չես երթար...։ Եթէ չուտես մինչեւ այն օրն երբ եկեղեցին կ'օրհնէ այդ խաղողը, աշխարհին հետ քայլ պահելէ մազաչափ միսկ ետ չես մնար։ Բայց եթէ **որոշես** չուտել՝ եւ, աւելին, բարեկամիդ, դրացիիդ ըսելուն մէջ պզտիկութիւն չզգաս թէ՝ ազգային աւանդութեանդ սիրոյն է որ չես ուտեր, ազգդ է որ քու մէջդ կ'արծագանգէ ազգային գիտակցութեանդ եւ աւանդութեան պահպանութեանդ թելադրականութեամբ։ Չես արհամարհուիր ուրիշներէն, կրնաս միայն յարգուիլ բանիմաց եւ գիտակից անձերու շրջանակէն։

Եղիր ու մնացիր **ուխտի՛ ժողովուրդ։ Ուխտ՝** կը նշանակէ **հաւատարմութիւն** հանդէպ Աստուծոյ եւ հանդէպ ազգիդ։ Ուխտ ընել գիտցող եւ ուխտը կատարել կրցող ժողովուրդը չի՛ մեռնիր։ Ուխտ ընել գիտցող եւ ուխտը կատարել կրցող անհատը՝ Աստուծոյ եւ ազգի հաղորդութենէն ափիշ կը քաղէ եւ կը մնայ առողջ ու տոկուն, կանաչ ու պտղաբեր։ Ուխտը կը բարձրացնէ մարդը դէպի Աստուած եւ կը շաղկապէ ազգին։

*

* *

Խաչի տառապանքը յանցանքի, խղճի խայթի դառն զգացումը չէ: Սիրոյն պտղատրումն է Յոմանիշ սիրոյ, գրաւականը՝ անոր ճշմարտութեան, փորձանիշը անոր իրատութեան: Ի սէր կեանքին, յանուն Աստուծոյ, յօգուտ մարդկան, վասն եկեղեցւոյ, հայրենիքի՛, ազգի՛ յանձն առնուած տառապանքը մարդուն ինքնաբիւրեղացումին գաղտնի ոյժն ունի իր մէջ, ինչպէս հուրը՝ ոսկիին համար...:

*

* *

Աշխատութիւնը այն է երկրին ու կեանքին համար ինչ որ է հոգին՝ մարմնին: Յանեցէ՛ք հոգին մարդուն՝ մահ է այնտեղ: Յանեցէ՛ք աշխատութիւնը կեանքէն՝ մեռելութիւն է այնտեղ...:

***«ԱՆԺԱՄԱՆԱԿԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԷՋ» գրքից***

Ս. Միւռոնը խորհրդանիշն է աստուածայինին ներկայութեան մեր մէջ, Ս. Յոգւոյն ներգործութեամբը: Սուրբ է Միւռոնը եւ՝ սրբարար: Յայ մանուկը անով կը կնքուի, Յայ Եկեղեցւոյ պաշտօնեան - քահանայ, եպիսկոպոս թէ կաթողիկոս - անով կ'օծուի եւ անոր դրոշմով հրաժեշտ կ'առնէ այս աշխարհէն: Յայաստանեայց բոլոր եկեղեցիները իրենց նիւթեղէն շինուածքին վրայ կը կրեն անոր սուրբ իւղին պայծառափայլ շողը: Ս. Միւռոնը Աստուծոյ շնորհին ճառագայթումն է մեր հաւատացեալներու կեանքին մէջ: Օիածան՝ ընդ մէջ երկնի եւ երկրի, Աստուծոյ եւ հայ մարդուն:

*

* *

Բարոյական առողջ սկզբունքներէ հեռացած ազգ մը՝ ոչ հողով կը փրկուի եւ ոչ ալ բանակով: Բարոյական անկումն է նախադուռը մարդոց եւ ազգերու կործանման, պատճառը՝ խռովութեան ու պատերազմի, քանդումի եւ աւերածութեան:

*

* *

Մենք երէկ ապրեցանք, եւ՝ ապրեցանք քրիստոնէաբար եւ հայօրէն, քրիստոնէական հաւատքն ու ազգային ինքնութիւնը իրար հետ

ջաղախելով անքակտելի միազանգումով: Մենք այսօր կ'ապրինք պայքարելով. մաքառելով. տագնապելով: Բայց մենք չապրեցանք երէկին համար. պատմութեան հաշւոյն: Ո՛չ ալ կ'ապրինք այսօրուան համար. պարզապէս մեր ինքնութիւնը արտայայտելու համար աշխարհի ազգերու շարքին: Մենք կ'ապրինք վաղուան համար. ըլլալիքի՛ մը տեսիլքով:

*

* *

Հայց. Առաքելական Եկեղեցին որպէս Բեթղեհէմեան մսուր եւ հայավառ ճրագ՝ քեզի կը յիշեցնէ այսօր, որ Քրիստոսի ծնունդը քու մէջդ պէտք է դառնայ վերածնունդը այն կեանքին, զոր ծնող Փրկիչը բերաւ որպէս Նորագործ շունչ կեանքիդ մէջ. բայց՝ ազգիդ մէջէն՝ մարդկութեան եւ Աստուծոյ համար, **«որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ»**, որպէսզի մենք աստուածայինով վերակերտուինք եւ դառնանք աստուածատիպ մարդ՝ հայադրոշմ կնիքով:

***«ՀԱՅ ՄԱՐԴԸ ՀԱՅ ԳԻՐՔԻՆ ԴԻՄԱՑ» գրքից***

Զգո՛յշ եղիր, հայ մարդ, երբ կը նայիս Հայ Գիրին ու Հայ Գիրքին: Մաքրէ՛ ձեռքերդ, երբ կը մօտենաս անոնց եւ երբ գրիչ կը շարժես: Սրբէ աչքերդ, երբ կը նայիս ու կը կարդաս զանոնք: Ընտրէ՛ ցորենը որոմէն եւ գիտցիր այնպիսի հայ գիրքի հետ բարեկամանալ, մտերմանալ, որ քեզ կը բարձրացնէ, կը մօտեցնէ Աստուծոյ, կը շաղախէ հայրերուդ ոգիին հետ, կը լուսաւորէ ճամբադ եւ քեզ կ'առաջնորդէ դէպի պայծառ հորիզոններ:

## ՊԱՏԳԱՄՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ



# ՄՏԱԾՈՒՄՆԵՐ՝ ԾՆՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

*Ահա* քառասունեւրեք տարիներ շարունակ, աբեղայական ձեռնադրութենէս ասդին կրեցի Քու լուծը, առի խաչդ ուսերուս եւ քալեցի քու ետեւէդ: Լուծդ ծանր եղաւ իմ կեանքիս մէջ. ուսերս տկար էին, բայց խաչիդ զօրութիւնը, որ երկու անուն ունի սէր եւ զոհողութիւն, թեթեւացուց բեռը, զայն դարձնելով «քաղցր» եւ «փոքրոգի» /ՄԱՏԹ. ԺԱ 30/: Եթէ մնացած ըլլայի առանձին՝ պիտի փարուէի ըսելու Քու Միածին Որդւոյդ բառերով. «Տէր, անցո յինէն զբաժակս զայս»: Բայց պիտի չվարանէի անմիջապէս աւելցնելու. «բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու կամիս» /ՄԱՐԿ. ԺԴ*

---

* *Ներկայացվող այս և հաջորդ հատվածները վերցված են Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի կոնդակներից, քարոզներից և Հայրապետական խոսքերից, որոնք տպագրվել են «Էջմիածին» ամսագրում:*

*36/: Քու կամքդ կամքիս առաջնորդ՝ անցայ աբեղայութեան, վարդապետութեան, եպիսկոպոսութեան հանգրուաններէն. հասցուցիր զիս մինչեւ Կաթողիկոսութեան լիազօրեայն եւ գերագոյն աստիճանը: Տասնութ տարիներ Կաթողիկոսութեան այդ լուծը շալկեցի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահին վրայ. եւ այժմ առաւել բարձր պատասխանատուութեամբ զայն պիտի կրեմ Լուսաւորչակառոյց այս սրբազնագոյն Գահին վրայ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռին ի Ս. Էջմիածին:*

*Հոգեւոր ապաաւորութեան այս ճանապարհորդութեանս ծայրագոյն այս հանգրուանին, այս սրբազնասուրբ խորանին վրայ կը հայցեմ ի քէն Տէր Աստուած իմ. **«տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո եւ արա առ իս նշան բարութեան»** /ՍԱՂՄ. ԺԵ 16/: Քու զօրութիւնդ իմ մէջս հեղ մը եւս զգալով Գահակալութեան այս նուիրական պահուն, կը կրկնեմ բառերը Սաղմոսերգու արքային. **«Տէր հովուեսցէ զիս եւ ինձ ինչ ոչ պակասեսցի»** /ՍԱՂՄ. ԻԳ 1/:*

(Կաթողիկոսական գահակալության քարոզից
«Էջմիածին», Դ, 1995, էջ 72-73)

*Դուք ջեր զենքերի առաջինը եւ բարձրագույնը նկատեք հոգեկան, բարոյական, ազգային, հայրենասիրական ոգին: Դա՛ է, որ ջեր մյուս զենքերին արժեք կտա, դա՛ է, այդ հոգեկան արիությունը, ազգային գիտակցությունը, Հայրենիքի պաշտպանությունը, որ ջեր զենքերին իմաստ կտա, այլապես ջեր զենքերը մեծ նշանակություն չունեն եւ չեն կարող այն նվիրականությամբ գործածվել, ինչ որ բանակի մեջ կգործածվեն վասն հայրենյաց, վասն հավատո եւ վասն հավերժության մեր ազգի:*

(Գյումրիի զորամասերից մեկի զինվորներին ուղղված խոսքից,
«Էջմիածին», Ե, 1995, էջ 54)

*Աղետը, որ պատահեց՝ աղետ չի մնա, եթե երբեք մենք աղետից դաս սովորել գիտենանք: Աղետը աղետ է այն ատեն, երբ մենք աղետից ոչինչ ենք հասկանում, ոչինչ ենք սովորում եւ այնպես ենք ապրում, որ կարծեք թե աղետ եղած չլինի մեր կյանքում: Վիշտը, տառապանքը, նեղությունը մի դպրոց են մեզ համար եւ այդ դպրոցի առաջին դասը, որ ես սովորեցի իմ այս Հայրապետական այցելության ընթացքում, այն է, որ մենք բոլորս՝ հայաստանցի հայերս ամենից առաջ, մենք պետք է, որ մեր վերքերը մե՛ր ձեռքերով դարմանենք: Այլեւս թողնենք այն լաց ու կոծի հոգեբանությունը,*

*ճնշված մարդի, զրկված ազգի այն հոգեբանությունը, որ կկաշկանդի մեզ: Մենք տերն ենք մեր անցյալին, լինե՛նք տերը մեր կյանքին, այսինքն՝ մենք աշխատենք մեր վիճքը մեր ձեռքերով դարմանելու:*

(Շիրակի թեմին տրված հովվապետական անդրանիկ այցելությունից վերադառնալուց հետո Մայր Տաճարում խոսված քարոզից, «Էջմիածին», Ե, 1995, էջ 86)

*Բարեկամներ, քաջ զինվորներ, եկեք, բոլորդ էլ միասին արդարացրեք այն սքանչելի անունը, որ համկարծարուխ ձեւով մեր ժողովուրդը տվեց ձեզ: Մեր ժողովուրդը ձեզ չի կոչում զինվորներ, այլ՝ քաջամարտիկներ, քաջությամբ մարտը առաջ տանողներ: Մեր Սուրբ Գրքի՝ Աստվածաշունչ Մատյանի ամենից խորունկ ճշմարտություններից մեզ փոխանցող Պողոս առաքյալն ասում է. «Կյանքը մի սպարեզ է պատերազմի, բարվոք պատերազմը պատերազմեցի այժմ, ինչ մնում է Աստծու կողմից տրվելիք երկնքի պսակը»: Մենք ունենք ներքին թշնամին, որ մեզ սայթաքեցնում է եւ պարտավոր ենք բարվոք պատերազմը պատերազմել նրա դեմ, առողջ, արթուն պիտի լինենք, որ այդ ներքին բարվոք պատերազմը շահենք, որպեսզի շահենք նաեւ մեր հայրենապաշտպանության այն գոյամարտը, որ մեր բոլորիս համարակաց, ընդհանրական առաքելությունն է:*

(Խոջալուի ուսումնական զորամասում ասված խոսքից, «Էջմիածին», Ե, 1995, էջ 105)

*Հայրենիքը աշխարհագրական սահման չէ միայն: Հայրենիքը ապրում է, կյանքի հասկացողություն է, ինքնության ճանաչում է, արժանապատվության գիտակցություն եւ ստեղծագործություն է: Եթե Սպեսիանակերպից եւ մի ուրիշ երկրից մի բուռ հող վերցնենք, տանենք մի գիտական կենտրոն եւ փորձենք այդ հողերի տեղային տարբերությունները գտնել, պատասխանը չենք կարող իմանալ: Բայց երբ Հայաստանի հողին մեր կյանքը շաղախենք, այն ժամանակ հողը կդադարի հող լինելուց, այլ կդառնա Հայրենիք: Այսպես է եղել մեզ համար: Արցախը կերպարանափոխեց մեր ողջ հայությունը: Այլեւս հայը չէ այն Ամերիկայում, կա՛մ Լիբանանում, կա՛մ Ծայրագույն Արեւելքում, կա՛մ Հարավային Ամերիկայում եւ կա՛մ մեր Մայր Հայաստանում, ինչ որ էր սրանից յոթ կամ տասը տարիներ առաջ: Մի հրաշագործություն կատարվեց, հայկանություն եղավ Արցախը: Արցախը*

*անընդհատ ճնշվել էր. բայց չէր խամրել, չէր խեղդվել եւ սիհավատր. փյունիկի նման նա վեր հառնեց եւ այսօր խմոր է դարձել Հայոց աշխարհի զանգվածում։*

(Ստեփանակերտի մարզադաշտում ասված խոսքից,
«Էջմիածին», Ե, 1995, էջ 123-124)

*Ահա, կանգնած երկրորդ հազարամեակի վերջալոյսի եւ երրորդ հազարամեակի արշալոյսի միախառնման հանգրուանին, Հայրապետական այսու Կոնդակաւ կը հրաւիրենք ջեզ բոլորդ անխտիր, հայ ժողովուրդի զաւակներ, որ պատրաստէք ձեր անձերը որպէս ընդունարան շնորհաց Հոգւոյն Սրբոյ: Վերստին ու մշտանորոգ ծննդեան պէտք ունինք բոլորս: Այդ վերածնունդը Սուրբ Հոգւոյն ներգործութեամբ տեղի կ'ունենայ: «Պարտ է ձեզ ծնանել վերստին: Ջի հողմ ուր կամի շնչէ. եւ զձայն նորա լսես. այլ ո՛չ գիտես ուստի՞ գայ կամ յո՞ երթայ. սոյնպէս եւ ամենայն ծնեալն ի Հոգւոյն» /ՅՈՎՀ. Գ 8/: Այո, մենք չենք գիտեր, չենք կրնար գիտնալ ու՞ր կ'երթանք որպէս վերածնեալ մարդ: Դա Աստուծոյ գործն է: Մերինը՝ ընդառաջման պարտքն է: Բայց քաջ գիտենք, որ Աստուծոյ գիտցածը եւ ըրածը մեր բարիքն է միայն, թէ՛ անհատական եւ թէ՛ հաւաքական մեր գոյութեան բարօրութիւնը, որ երկնքի արքայութիւնն է «ի ներքս ի մեզ», գերագոյն եւ անգերազանցելի երջանկութեան սկզբնաղբիւրը:*

(Հայրապետական անդրանիկ կոնդակից,
«Էջմիածին», Ձ-Է, 1995, էջ 11-12)

*Մենք մեր ձեռքերովը, մեր քրտինքովը պիտի վերակերտենք, պիտի յարակերտենք մեր հայրենիքը: Դա՛ է իրական հայրենիքը՝ այսինքն «մեր հայրենիքը»: Դրսից, թէ՛ արտասահմանի մեր եղբայրներից եւ քոյրերից եւ թէ՛ մեզի բարեկամ ազգերից, պետութիւններից, Եկեղեցիներից, միջազգային տարբեր օգնութեան կազմակերպութիւններից զալիք օժանդակութիւնը չի կարող մեր ձեռքերին եւ քրտինքին փոխարինել, կարող է մեր ձեռքերին ոյժը եւ մեր քրտինքին հուքը առատացնել: Այս է հայրենաշինութեան իսկական փիլիսոփայութիւնը: Թող մեր կեանքը լինի այդ փիլիսոփայութեան գործնական արտայայտութիւնը:*

(«Խօսք նոր տարուայ առթիւ Հայաստանի եւ Արցախի հայութեան»,
«Էջմիածին», Ա, 1996, էջ 18)

*Երկիր պագանելը խորհրդանշական այն արարքն է, որ խոնարհութեան մէջ կը մեծացնէ մարդ էակը: Երբեք պէտք չէ մոռանալ, որ առաջին սայթաքումը մարդուն՝ ինքնամեծութեան, ամբարտաւանութեան փորձութիւնէն եկաւ, եւ՝ մի՛շտ կուգայ: Կարելի չէ չանդրադառնալ, որ իբրեւ մարդ էակ՝ մեր մէջ ունինք չարին հակուելու, շեղումի ենթարկուելու, խոտորելու կարողականութիւնը, մեր ազատ կամք ունենալու յատկութիւնը միշտ ի բարին չգործածելու փորձութիւնը: Ըսուած է, որ սայթաքիլը, մեղանչելը մարդկային է, բայց անմարդկային է սայթաքումի մէջ մնալը, մեղքին գերի դառնալը: Աւելի մարդկային է սայթաքումէն վերականգնիլը, մեղքին յաղթելը եւ ոչ թէ անոր զոհ դառնալը:*

*Աստուածայայտնութեան տօնը սքանչելի առիթ մըն է, որ քրիստոնէական Եկեղեցին կ՚ընծայէ իր հաւատացեալներուն մանկանալու, պարզանալու, խոնարհելու խոնարհուող Աստուծոյ մարդեղութեան դրուագին վերապրումովը մեր կեանքին մէջ:*

(«Բեթղեհէմի աստղին լոյսը՝ Ս. Էջմիածնի պրիսմակէն»,
«Էջմիածին», Ա, 1996, էջ 22)

*Մեծի պահոց քառասնօրյա շրջանը ես կոչում եմ մի հոգևոր ճանապարհագնացություն: Որտեղի՞ց որտեղ: Ոչ թե աշխարհագրական մի վայրից մի ուրիշ աշխարհագրական վայր: Ճանապարհորդությունը այս պարագայում տեղափոխություն չէ: Սա հոգևո՛ր ճանապարհորդություն է, մեր անձից դեպի Աստված գնալն է և ապա Աստծուց վերադառնալը մեզ՝ յուրաքանչյուրիս: Այս ճանապարհորդությունը մեր անձին բացումն է Աստուծո լույսին առաջ, ներթափանցումը Աստուծո լույսով և հայտնաբերումը մեր մեղավորությանը և այդ մեղավորության խորտակումը բարձրացումով առ Աստված: Աստծուց երբ մենք վերադառնանք մեզ, կերպարանափոխված կլինենք: Կլինենք այն, ինչ որ Աստված մեզ ստեղծել է, որ լինենք, և ոչ թե այն, ինչ որ աշխարհային կյանքի սայթաքումները մեզ հաճախ մոլորեցրել են, և մենք օտարացել ենք մեր հանդեպ:*

(«Դարձ դեպի մեր հոգևոր ավանդույթները» քարոզից,
«Էջմիածին», Բ-Գ, 1996, էջ 151)

*Բոլորս ալ գիտակից ենք այն հոգեւոր պայծառ իրողութեան, որ Միւռոնը ոչ միայն աստուածային կնիք է Ս. Հոգւոյն, այլեւ «ճակտի գիր»ին պէս ազգային դրոշմը հայ մարդու իւրայատուկ կերպարին եւ ինքնուրոյն դիմագծութեանը: Միւռոնը մեր քրիստոնէական հայկականութեան*



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՇՈՒՆՉՆ ԵՄ ԲԵՐԵԼ ՁԵԶ



«ԾԱՂԿԵՑՈ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ»



«ՄԱՐԴ Է ՈՐ ԳՈՐԾԷ ՁԵՐԿԻՐ»



«ՓԱՌՔ ՔԵԶ ԱՍՏՈՒԱԾ, ՅԱՂԱԳՍ ԱՄԵՆԱՅՆԻ ՓԱՌՔ»

*խորհրդանիշն է. մեր ինքնութեան եւ արժանապատուութեան ցուցանիշը. մեր միութեան սրբազան շաղախը. մեր հոգեկան կեանքի ափշը. որ մեր հոգեւոր ծառի՝ Հայոց Առաքելական Եկեղեցու արմատներից արտաքինում է որպէս կենսայնութեան եւ պտղաբերութեան աղբիւր: Հին Միտոնն այսօր սիա խառնուեց նորին մէջ եւ մեր Եկեղեցու դարաւոր կեանքի անբեկանելի շարունակականութեան զօրութիւնը լցրեց մեր հոգիների մէջ մեր նոր կեանքին որպէս մղիչ ոյժ եւ մեր ազգային ամբողջականութեան որպէս կապ մայրենի եւ հաց կենդանի:*

(«Միտոն վերածննդեան», Մյուռոնօրհնության ժամանակ
ասված խոսքից, «Էջմիածին», Թ, 1996, էջ 36)

*Ծեսը եկեղեցու արարողություն չէ այնպես ջեւապաշտական, ինչպես այժմ մենք երեւակայում ենք եւ երբեմն ալ հանցավոր ենք մենք՝ հոգեւորականներս, որ չենք կարողանում այդ ծեսը կենդանի իբրեւ ապրում ժողովրդի կյանքում արտահայտել. բայց դա ուրիշ հարց է: Բայց ծեսի արժեքը չի նվազի նրա գործածման մեջ մեր կամ ուրիշների թերացումով. ինչպես օրինակի համար լույսը իր լույսից բան չի կորցնի, եթե երբեք մեր աչքերի մեջ սեւ ակնոց դնենք կամ կեղտը մեր թիթերին վրա հավաքված լինի:*

«Էջմիածին», Ժ-ԺԱ, 1996, էջ 170)

*Քրիստոնէութիւնը Քրիստոսի անձն՛վ է կեանքի կոչուած եւ այդ անձին ներկայութիւնը ունի իր մէջ որպէս իր բուն էութիւնը կազմող զօրութիւն: Գաղափարաբանութիւն չէ քրիստոնէութիւնը, ոչ ալ սոսկ բարոյական ուսուցումներու համակարգ մը, եւ ոչ ալ իշխանութեան մը փիրապետութիւնը: Անձի մը ճառագայթումն է ան: Ատոր համար «արեգակ»ի է նմանցուած Յիսուս: Արեգակը արեգակ է, որովհետեւ կը ճառագայթէ եւ երբեք չի դադրիր ճառագայթելէ եւ չսպառիր ճառագայթելով: Քրիստոս կ՚ապրի եւ չի դադրիր երբեք կեանք ճառագայթելէ: Ո՛չ խաչը կրցավ զԱյն զանուած անշարժութեան դատապարտել եւ ո՛չ ալ հողը կրցաւ զԱյն պարփակել: Ասրուած էր, եղաւ մարդ. Ասրուած է. եւ չի դադրիր մարմին ըլլալէ, նիւթեղէն մարմինը փոխարինելով «խորհրդական մարմնով», այսինքն՝ եկեղեցիով: Ատոր համար է որ եկեղեցին մեր ծննդավայրն է. Իր մարմնին հետ մեր հաղորդութիւնը:*

(«Աստուած ընդ մեզ եւ մենք՝ ընդ Աստուծոյ»,
Քարոզ Ծննդեան տօնի առթիւ, «Էջմիածին», Ա, 1997, էջ 3-4)

*Ճոխակեցութիւնը բարեկեցութիւն չէ անպայման: Շուայլօրէն սպառողական կեանքը ունի իր մէջ նաեւ փորձութիւնը հեռանալու ոչ միայն հոգեկան մաքուր կեանքէն, այլ նաեւ հայութեան ազգային կեանքի շրջագիծէն: Զոհ մի՛ երթաք մարդը մարդուն մէջ եւ հայը մարդուն մէջ փճացնելու ոյժ ունեցող փորձութիւններուն: Մի՛ փարուիք մակերեսային կեանքի փաղանցուկ եւ փցուն երեւոյթներէն, որոնք հովի պէս կու գան եւ հովի պէս կ՚երթան: Կառչեցէ՛ք ձեր դարաւոր ազգի փոկուն առաքինութիւններուն, աւանդոյթներուն եւ արժէքներուն: Հայոց Ս. Եկեղեցւոյ սրբաշունչ ոգին, Հայոց մշակոյթը անցեալին եւ ներկային, հայոց լեզուն մեր բոլոր դարերը կամրջող եւ մեր ազգի միութեան ոսկի թելը կազմող, հայրենիքի սէրն ու անոր նոր անկախութեան զօրացման գիտակցութիւնը թող դառնան ձեր կեանքին մէջ առանցքային դեր եւ գործօն ազդեցութիւն ունեցող ոյժեր եւ ազդակներ:*

***«Հող բռնէք՝ դառնայ ոսկի»***
***«Ոսկի բռնէք՝ դառնայ հողի»:***

(Ֆրանսահայությանն ուղղված հայրապետական օրհնության գրից,
«Էջմիածին», 1997, Բ-Գ, էջ 61)

*Ես մտքով այժմ սաւառնում եմ դէպի մօտիկ այս ապագան եւ երեւակայում եմ, որ այս երկինքն ու այս շրջապատը չպիտի լինեն այնպէս, ինչպէս են այսօր: Մեր աչքերը պիտի լցուեն մի Հայոց Կաթողիկէով, շքեղակերտ մի Մայր եկեղեցու կառոյցով, որ ինձ համար երկնքից պոկուած Աստուծոյ ներկայութեան մի շունչ է մեր երկրի վրայ, մեր երկրից դէպի Աստուած բարձրացող խունկ է՝ Նարեկացու բառերով՝ մեր սրտերի կրակի վրայ ծնեներող եւ դէպի Աստուած անուշաբոյր բարձրացող:*

(Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու
հիմնօրեններին ասված խոսքից. «Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 38)

*Այսօր մեր նահատակների կոչը այն է, որ մենք գիտնանք՝ կեանքով յարգենք այն, ինչ որ նրանք արիւնով եւ մահով յարգեցին: Եւ դա պէտք է լինի ամէն մէկ հայի համար մի նոր մղում, պէտք է փոխուենք, առողջ գիտակցութեամբ եւ հայրենաշինութեան կամքով եւ գաղափարականով ու գործելակերպով զինուենք: Պէտք է գիտենանք, թէ մեզնից վեր է մեր հողը, մեզնից վեր է մեր **հայրենիքը**, մեզնից վեր է մեր **Եկեղեցին**: Եւ այդ գիտակցութիւնն է, որ պէտք է փրկի Հայաստանը: Ո՛չ դրամը եւ ո՛չ զէնքը առանձինն կը փրկեն, եթէ երբէք այս կապուածութիւնը հողին, այս կապուածութիւնը հաւատքին չլինեն մղիչ ոյժը:*

«Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 44)

*Մարդի գերագոյն ձգտումն է մեղքի փուշից զերծ մնալ, որովհետեւ մեղքի խիթը բուժում չունի առանց խոստովանութեան եւ առանց Աստծու թողութեան: Նա խոցոտում է մեր խիղճը: Կարող ենք մի անգամ, նոյնիսկ մէկից աւելի անգամներ, այս կամ այն ձեւով պարտկել այն, մենք զմեզ ցոյց տալ անմեղ: Բայց ցոյց տալ մի բան է, լինելը՝ ուրիշ: Օրերից մի օր այդ փուշը մեզ կ՚անհանգստացնի, կը տառապեցնի անպայման, որովհետեւ նա խրուած է մեր խղճում եւ ոչ թէ մնում է սոսկ մեր յիշողութեան եւ կամ բանականութեան մէջ, ներքակայ մեր բնահանոյքին կամ ցանկութեան:*

(«Խոհեր եւ յորդորներ մեծի պահոց շրջանի»,
«Էջմիածին», 1998, Բ-Գ, էջ 154)

*Հավատացեք, երբ հիվանդանոցում տեսա ուրիշ հիվանդների, երբ իմացա ուրիշ հիվանդների մասին, ավելի շատ նրանց համար աղոթեցի, քան ինչ համար եւ անդրադարձա, որ կյանքը Աստծու այն գեղեցիկ տուրքն է, գերագույն տուրքը, որ մենք պետք է արժեւորենք: Աստծուն հաշիվ տալու կոչված ենք այն բարիքին համար, այն տուրքի համար, որ Ինք տվել է մեզ, եւ այդ բարիքը արժեցնելու համար կենսական անհրաժեշտ պայմաններից մեկը առողջությունն է: Հոգ տարեք ձեր առողջությանը, որովհետեւ առանց դրա չէք կարող մեծ գործեր կատարել ձեր կյանքում:*

«Էջմիածին», 1998, Ը-Թ, էջ 86)

*Ես կյանքի մասին փիլիսոփայություն անելու կարիքը չեմ զգում: Բայց այս վերջերս, չորս ամիսների իմ առողջականին մեջ ունեցած ներությունները ինձ համար մի առիթ եղան՝ անդրադառնալու, մտածելու կյանքի եւ կյանքի իմաստի ու արժեքի մասին: Հեւք եղել է կյանքս վաթսունվեց տարիների ընթացքին, հեւք, վազք, չեմ ասում զնացք: Ինչ ծանոթ բոլոր փոքր եղբայրները գիտեն այդ մասին: Բայց այս չորս ամիսների ընթացքում մտածելու շատ առիթներ ունեցա, եւ Հակոբ Օշականի մեկ խոսքը մեծ նշանակություն ունեցավ ինձի համար: Նա ասում է՝ կյանքը ուրիշ իմաստ կառնի, երբ մահվան մագնիսը նրա մոտեն կանցնի: Չտանի նրան, բայց վախը, վտանգը նրան կարթնացնի կյանքի իմաստի մասին մտածելու:*

(Ծննդյան 66-րդ տարեդարձին Վեհարանում ասված խոսքից,
«Էջմիածին», 1998, Ը-Թ, էջ 131)

*«Ահավասիկ ես, առաքեա զիս», այս հոգին է, որ պիտի արժեցնի մի անձի: Ո՛չ ձեր գիտությունը, ո՛չ ձեր հմտությունը, ո՛չ ձեր դրամը, ո՛չ դիրքը, ո՛չ*

*անունը, ո՛չ պաշտոնը որևէ առավելություն չեն բերի: Ձեզ սաեմ. ո՞վ է այսօր հիշում Բրքիշո, Սուրմակ, Շմավոն Կաթողիկոսներին, նրանք Կաթողիկոսներ էին և Պարսից իշխանությունը նրանց էր ճանաչում, երբ Սահակ Պարթև Հայրապետը աքսորվել էր: Ո՞վ է հիշում, ի՞նչ են արել: Տիտղոսը մարդը չի փրկե, մարդն է, որ տիտղոսը կարժեցնի:*

(Ճեմարանի բացման ժամանակ ասված խոսքից,
«Էջմիածին», 1998, Ը-Թ, էջ 219)

*Երկու հազար տարիներու քրիստոնէական կեանքը յարութեան լոյսին մէջ գտաւ իր զօրութեան ներքին աղբիւրը: Ինչպէս Պօղոս Առաքեալ կը յիշեցնէ մեզի, **«Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ՝ ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են եւ հաւատքը ձեր»*** *(Ա Կորնթ. ԺԵ. 14): Այո՛, եթէ Յիսուս յարութիւն առած չըլլար՝ դատարկութիւն պիտի ըլլար քրիստոնէական կրօնի քարոզութիւնը, եւ, ինչ որ աւելի ծանր է, դատարկութիւն պիտի ըլլար եւ քրիստոնեաներու հաւատքը: Եւ ինչպէ՞ս կրօնք մը կրնար յաղթականօրէն անցնիլ եւ ներգործել այնպէս ստեղծագործականօրէն ողջ մարդկութեան կեանքին մէջ եւ այսքան դարեր, եթէ հիմնուած ըլլար դատարկութեան վրայ...:*

«Էջմիածին», 1999, Դ, էջ 5)

*Վերադառնանք դէպի մեր ինքնութեան հարազատ աղբիւրները: Վերագտնենք մեր քրիստոնէական իսկատիպ պատկերը: Մաքրենք օտարներէ եւ կամ մեզմէ աւելցուած անհարազատ, վտահաղորդ տարրերը, որոնք կը քանդեն մեր կեանքը բարոյական ապականութեամբ: Ազգի մը թշնամին միայն երկրի սահմաններէն անդին չի գտնուիր: Այդ թշնամին կրնայ գործել - եւ յաճախ կը գործէ - մեր ներքին աշխարհին ու կեանքին մէջ: **«Աներեւոյթ թշնամին»** է այդ, որուն դէմ պէտք է պայքարիլ: Վերջ տալ շահագործումներուն, վերջ դնել զեղծումներուն, խափան հեռացնել եղբայրասպան արարքները: Քրիստոնեայ հայու կերպարին յատուկ պատիւով պէտք է ապրիլ Աստուծոյ տուած կեանքը, որպէսզի ան դառնայ երջանկութեան աղբիւր մեր նոր հայրենիքին նոր կեանքին մէջ:*

(«Յարութեան իմաստը այսօրուան մեր կեանքին մէջ»,
1999 թ. Զատկական պատգամից, «Էջմիածին», 1999, Դ, էջ 6)

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎՍԷՓԵԱՆ*

# ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՂՈՒՄ

Մեր մատենագրութեան մէջ պրպտել և հանել այս նիւթի վերաբերեալ նոյն իսկ կցկտուր տեղեկութիւնները՝ արժանի է հետաքրքրութեան նաև ազգագրական տեսակէտով, բայց ժամանակի սղութիւնը չի ներում հեռաւոր անցեալով զբաղուելու. մենք կբաւականանք միայն այն աւանդութեան նկարագրութեամբ, ինչ որ գործածական է այժմ էջմիածնում:

Կաթուղիկոսի հոգեվարքին, եթէ յանկարծամահ չի եղել, ներկայ են լինում Սինոդի բոլոր անդամները և միաբաններից աւագագոյնները: Հոգին աւանդելուց յետոյ՝ աւագագոյն անդամը «հոգւոց» է ասում և անմիջապէս բժշկի և Սինոդի պրոկուրորի ներկայութեամբ արձանագրութիւն է կազմում ու ստորագրում մահուան մասին: Ապա հանգուցեալի մարմինը հանում են հանգստեան ներքին սենեակներից և մահճակալով դնում Վեհարանի արտաքին դահլիճներից մէկում. միւս բոլոր սենեակների դռները կնքւում են Սինոդի անդամների և պրոկուրորի ներկայութեամբ, որպէսզի Հայրապետի գոյքը, կտակը, եթէ ունի, անվնաս պահուին:

Այնուհետև Ս. Տաճարի լուսարարապետի կարգադրութեամբ երեք անգամ, ծանր հնչեցնում են մեծ զանգը, որով միաբանութեան և ժողովրդին յայտարարւում է Կաթողիկոսի մահուան մասին:

Սինոդի անդամներն անմիջապէս խորհրդի են հաւաքւում. նախ օրագրութեամբ նախանդամին տեղակալ են նշանակում, եթէ հանգուցեալ Կաթուղիկոսը իւր կենդանութեան ժամանակ յատուկ կոնդակով չէ հոգացել այդ մասին և կայսերական հաստատութիւն ստացել: Ապա օրագրութիւն են կազմում հեռագրով յայտնելու կառավարութեան և ազգին՝ կատարուած իրողութիւնը: Հեռագրւում է Կովկասի փոխարքային, Սսոյ Կաթուղիկոսին, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքներին, Ռուսաստանի, Պարսկաստանի, Եւրոպայի և Ամերիկայի բոլոր առաջնորդներին, որպէսզի սրանք էլ հաղորդեն իրենց ստորադրեալ վարչութիւններին: Կարգադրւում է ամենայն օր հոգեհանգիստ կատարել Հայոց բոլոր եկեղեցիներում, ուր որ կան. իսկ թաղման օրը նաև հանդիսաւոր Պատարագ մատուցանել հանգուցեալ Կաթուղիկոսի հոգու փրկութեան համար: Մայր Աթոռում ևս ամենայն օր երեկոյեան ժամերգութիւնից յետոյ՝ ամբողջ միաբանութեամբ հոգեհանգստեան կարգ է կատարւում հանգուցեալի երկրաւոր նշխարների վերայ, իսկ մի վարդապետ նշանակւում է

---

* Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա Յովսեփյանի սույն հոդվածը, որը գիտնական հոգևորականը գրել է վարդապետ եղած ժամանակ Ս. Էջմիածնում, արտատպում ենք «Ազգագրական հանդէս»-ից (1907 թ., Գիրք XVI):

հսկող մինչև եկեղեցի բերելը: Իւրաքանչիւր օր երկու հոգի էլ սաղմոս են քաղում մինչև հետզհետէ լրանայ ութ կանոնը:

Եկեղեցի իջեցնելու օրը երկու վարդապետ և մի եպիսկոպոս լուանում են հանգուցեալին և պատանում ներսում, իսկ դուրսը միաբանութիւնը լուացման կարգն է կատարում: Լուանալուց յետոյ մարմինը դնում են կրկին իր մահճի մէջ, երեսը դէպի արևելք: Նախ հագցնում են շապիկ և անդրավարտիկ, ապա դրանց վրայ մաքուր, նոր քաթանից սպիտակ պարեգօտ, թևնոցներ, գլխին կնգուղ, ուսերին փակեղ, մէջքին գօտի են կապում, ոտքերին մաշիկներ նոյն կտորից, և ապա սպիտակ քաթանից շուրջառ: Այս բոլորը ներքին պատանն է: Այնուհետև զգեստաւորում են նրան հայրապետական զգեստով, ինչպէս պատարագելիս: Հագցնում են փորուրար յարմարութեան համար, փոխանակ եմիփորոնի, բազպաններ, գօտի, հայրապետական կոնքեռ (մախաղ), շուրջառ, պարանոցին վակաս, գլխին թագ, ձեռքին մատանի, ոտներին գուլպայ և ոսկեթել հողաթափներ: Հայրապետական այն քօղը, որ ձգել է օծման ժամանակ, ձգւում է դարձեալ երեսին: Ափի մէջ թղթի վրայ գրուած՝ դրւում է Աւետարանից հետևեալ հատուածը. «Ելի ի Հօրէ և եկի յաշխարհ, դարձեալ թողում զաշխարհ և երթամ առ Հայր», դորա հետ նաև մի նշխար, իսկ ծոցում փոքր ինչ խունկ կամ կնտրուկ: Ապա դնում են դագաղի մէջ:

Ամէն ինչ այսպէս պատրաստելուց յետոյ՝ միաբանութիւնը խմբւում է դագաղի շուրջը և դրան կարգը կատարում: Այնուհետև սկսւում է յուղարկաւորութեան թափօրը դէպի այն եկեղեցին, ուր պիտի ամփոփուի հանգուցեալի նշխարները: Մեր հայրապետները միշտ ունեցել են իրենց դամբարան վանքերը, մանաւանդ հնագոյն ժամանակները, աստանդական շրջաններում, բնականաբար այդ կարգը պահուել չէր կարող: Բայց ԺԸ և մասամբ ԺԹ դարերում կաթողիկոսական դամբարան էր Ս. Գայիանէի վանքը, եթէ անհատներ յատուկ ցանկութիւն չեն յայտնել իրենց ձեռակերտ կամ նորոգած վանքերում թաղուելու, ինչպէս Փիլիպպոս Աղբակեցին Ս. Հռիփսիմէում և Նահապետ Ուռհայեցին Շողակաթում: Միայն վերջին ժամանակներս՝ ԺԹ դարում սովորութիւն է դարձել Ս. Տաճարի զանգակատան կողքերին թաղել հանգուցեալ Կաթողիկոսներին:

Յուղարկաւորութեան թափօրի կարգաւորութիւնն այս է: Դագաղը կրում են լիակատար զգեստաւորութեամբ քահանաներ կամ երիտասարդ վարդապետներ: Զգեստաւորւում է նոյնպէս հանդիսապետ եպիսկոպոսը մի քանի եպիսկոպոսներով, որոնց թիւը կարող է մինչև 12 լինել, ինչպէս հայրապետական օծման ժամանակ: Սովորաբար զգեստաւորւում են միայն թաղման օրը: Դագաղը շրջապատում են նախ եպիսկոպոսները ըստ աւագութեան, հանդիսապետը գլխի կողմը, կեդրոն կազմելով ամբողջ հոգևորականութեան: Եպիսկոպոսների առաջ դարձեալ ըստ աւագութեան, հանդիսապետը գլխի կողմը, կեդրոն կազմելով ամբողջ հոգևորականութեան: Եպիսկոպոսների առաջ դարձեալ ըստ աւագութեան շուրջառ ձգած՝ շարւում են միւս միաբանները: Չորս հոգի դագաղի վրայ ամպհովանի են բռնում, չորս քշոցակակիր առանց քշոցները շարժելու հետևում են դագաղին: Երկու վարդապետ դագաղի առաջից տանում են հայրապետական սնաքօղ խաչն ու գաւազանը, իսկ գաւազանակիրը դագաղի յետևից՝ հանդիսապետին մօտ՝

կրում է հայրապետական սևաքօղ ցուպը: Դագաղի առաջից չորս հոգի խնկարկում են յետ յետ գնալով, երեսները դէպի դագաղը: Նրանցից յետոյ շարուած են խաչ ու խաչվառ, կերոններ և լապտերներ կրողները, ապա երգիչների դասերը: Թափորն առաջնորդում են երկու սևազգեստ շաքիրներ, արծաթի գնդագլուխ գաւազանները ձեռքներին: Նրանց առաջից երկկարգ շարւում են Մ. Աթոռի ժառանգաւորները՝ ներկայ դէպքում ճեմարանի աշակերտներն ու ուսանողները՝ սև վերարկուներ հագած: Իսկ դագաղի և հոգևորականութեան յետևից երկկարգ շարւում են հայ հասարակութիւնների և հաստատութիւնների պատգամաւորներն ու կառավարութեան ներկայացուցիչը:

Յուղարկաւորութեան ընթացքում չորս անգամ հանգիստ է կատարւում Մաշտոցի ցուցման համաձայն, հինգերորդը կատարւում է եկեղեցու սրահում, վեցերորդը ժամատանը կամ գաւթում (այս մասը հայոց եկեղ. ճարտարապետութեան վերայ աւելացել է ԺԳ դարում), իսկ եօթերորդը բուն տաճարի դրան առաջ: «Բացէք ինձ զդրունս» սաղմոսից յետոյ՝ բացւում է դուռը և թափորը մտնում է տաճարի մէջ: Դագաղը դրւում է Իջման սեղանի և զանգակատան մէջտեղ նախօրօք պատրաստուած, աստիճանաւոր, բարձր, սև թաւշապատ սեղանի վերայ, ամպհովանին էլ յարմարեցնում են գլխին: Երկու կողմից դրւում են արծաթի մեծ և բարձր աշտանակներ կերոններով, որոնք վառ են մնում, իսկ կրծքին Աւետարան են դնում:

Նոյն երեկոյեան ժամերգութիւնից յետոյ՝ կրկին հոգեհանգիստ է կատարւում և չորս վարդապետ կարդում են չորս Աւետարանները, որ պէտք է աւարտուած լինին մինչև թաղման օրը:

Գերեզմանի պատրաստութիւնն ևս ունի իւր՝ որոշ արարողութիւնը Մաշտոցի համաձայն: Միաբաններից մէկը, սովորաբար լուսարարապետը, կարդում է որոշեալ աղօթքները և ապա բրիչն առնելով՝ խաչաձև դրոշմում է այն տեղը, ուր պիտի փորուի գերեզմանը: Գերեզմանը լինում է կամարակապ, նախօրօք պատրաստում են պատերը, որպէսզի դագաղը մէջն ամփոփելուց յետոյ՝ կարելի լինի անմիջապէս կամարը կապել և ծածկել:

Թաղման օրը դին թաւշապատ սեղանի հետ փոխադրւում է Իջման սեղանի առաջ: Հանդիսաւոր Պատարագ է մատուցանւում տեղակալի կամ աւագագոյն արքեպիսկոպոսի ձեռքով աւագ սեղանի վերայ: Ժողովրդի ու հաստատութեանց ներկայացուցիչներն իրենց պսակներով կանգնում են պատշաճ տեղերում, իսկ զգեստաւորուած եպիսկոպոսները՝ մինչև 12 հոգի՝ շարւում են դագաղի շուրջը: Ողջունից առաջ պատարագիչ արքեպիսկոպոսը գալիս է Իջման սեղանն է բարձրանում և միւս եպիսկոպոսների հետ կատարում է օծման կարգը: Ամբողջ միաբանութիւնը շուրջառ առած և ձեռքերին մոմեր բռնած շարւում են Իջման սեղանի առաջ: Խաչ, խաչվառ և կերոնակիրները կանգնում են սեղանի երկու կողմից: Ընդհատւում է Պատարագը և պատարագիչ արքեպիսկոպոսը միւս եպիսկոպոսների աջակցութեամբ օծում է ճակատը և աջ ձեռքը: Ապա սկսւում է հանգուցեալի հրաժարականը: Շատ սրտաշարժ է այս տեսարանը: Ննջեցեալին զգեստաւորուած քահանաները ուսերին դրած շրջեցնում են Իջման սեղանի շուրջը երեք անգամ, իսկ դպիրները ողբաձայն հանգուցեալի բերանից վերջին ողջոյնն են երգում, ուղղուած Եկեղեցուն, հոգևորականութեան և ժողովրդին:

«Ողջոյն քեզ, սուրբ եկեղեցի: Ողջոյն քեզ, սեղան սրբութեան: Ողջոյն ձեզ, դասք քահանայութեան. ես ճանապարհորդեցի առ Արարիչն իմ»:

«Ողջոյն ձեզ, մանկունք եկեղեցւոյ: Ողջոյն ձեզ, հաւատացեալ եղբարք իմ ի Քրիստոս: Ողջոյն ձեզ, համօրէն ժողովրդականք. ես ճանապարհորդեցի առ Քրիստոս յոյսն ամենեցուն»:

«Ահա հրաժարիմ ի քէն, սուրբ եկեղեցի: Ահա մեկնիմ ի ձէնջ, սիրելի եղբարք, ի կոչումն վերանորոգողին Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:

«Աղօթս արարէք վասն իմ, հարք իմ, եղբարք և որդիք. և օրհնեսցէ զձեզ Քրիստոս փրկիչ մեր, պահեսցէ հաստատուն ի հաւատս իւր, մինչև ի սահմանեալ կէտ կոչմանս այսորիկ. և խաղաղութիւն Տեառն եղիցի ընդ ձեզ յաւիտենից յաւիտեանս ամէն»:

Այնուհետև դագաղը բազմեցնում են դարձեալ դիասեղանի վրայ և «ողջոյն» են տալիս: Հոգևորականութիւնը մի առ մի համբուրում է աջը կամ Աւետարանը, նոյնպէս և ժողովուրդը: Իսկ Պատարագը շարունակւում է մինչև վերջ:

Պատարագից յետոյ սկսւում է ժամատան կարգը, բայց որովհետև Մայր Տաճարը ժամատուն չունի և կաթողիկոսական թաղման պատճառով մեծ բազմութիւն է լինում և անկարելի է դագաղը յետին դասի չորս կողմերը պտտեցնել, ուստի նոյն կարգը կատարւում է տեղն ու տեղը տաճարի մէջ, միայն ննջեցեալի երեսը դէպի արևմուտք, արևելք, հիւսիս և հարաւ դարձնելով:

Ապա սկսւում է յուղարկաւորութիւնը դէպի գերեզմանը, թափորն ընթանում է ճիշդ նոյն կարգով, ինչպէս եկեղեցի իջեցնելիս նկարագրեցինք: Ճանապարհին չորս անգամ հանգիստ է լինում. Էջմիածնում թաղելիս եկեղեցու չորս կողմը: Գերեզմանի ափին կատարւում է թաղման կարգը: Դագաղը դամբարանի մէջ իջեցնելուց առաջ՝ երեք անգամ հանդիսապետը հող է օրհնում, որ ձգւում է խաչաձև գերեզմանի մէջ, իսկ ներսը դնելուց յետոյ՝ կարդում է Յովհաննէս առաքեալի Հանգիստը՝ «Էր ընդ եղբարս»... Ապա նորից երեք անգամ հող է օրհնում և խաչաձև ձգւում է ննջեցեալի մարմնի վերայ, որից յետոյ փակւում է դագաղը: Մինչ հոգևորականութիւնը շարունակում է թաղման կարգը, որմնադիր վարպետները փակում են դամբարանի կամարը և ապա հող լցնում: Գերեզմանի թումբը կապելուց յետոյ՝ հանդիսապետը երեք անգամ օրհնում և խաչի նշանով կնքում է գերեզմանը:

Փոքր ինչ հանգստանալուց յետոյ՝ միաբանութիւնը, պատգամաւորները, հիւրերը հաւաքւում են. սեղանատուն՝ ճաշ վայելելու, որը վերջանում է հանգստեան շարականով և «հոգւոցով»: Թաղումից անմիջապէս յետոյ՝ հայրապետական աթոռը ծածկւում է սև նափորտով, ինչպէս թագը, խաչն ու գաւազանը սևասքօղ, դրւում է աւագ սեղանի՝ բեմի վերայ, ի նշան աթոռի թափուր լինելուն:

Թաղման օրից սկսած երեք օր ժամը 11-ին իւրաքանչիւր օր Մաշտոցի ցուցման համաձայն որոշ կարգ է կատարւում, հող են լցնում գերեզմանի վերայ և խաչաձև կնքում: Իսկ երեկոյեան ժամերգութիւնից յետոյ՝ հանգստեան կարգ է կատարւում եկեղեցում: Գերեզմանի վերայ կարգ է կատարւում նոյնպէս տասն և հինգերորդ և քառասուն օրերը և տարելիցին, որից յետոյ և քար են դնում գերեզմանի վերայ:

# *ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ*

## *Քաղվածքներ Գարեգին Ա Վեհափառի վախճանման առիթով ստացված ցավակցություններից եւ տպագրված հիշատակի խոսքերից*

Նորին Սրբություն Տեր Տեր Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման բոթը խորը վիշտ պատճառեց ողջ քրիստոնյա աշխարհին: Վեհափառ Հայրապետի վախճանումից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ստացավ ցավակցական հարյուրավոր հեռագրեր և նամակներ: Գարեգին Ա Կաթողիկոսը միջեկեղեցական, էկումենիկ և պետական բարձր շրջանակներում մեծապես հայտնի էր որպես ճանաչված աստվածաբան, հրապարակախոս, իմաստուն առաջնորդ, իր հոտի արթուն հովիվ, հոգատար հայր և նվիրյալ եկեղեցական:

Պաշտոնական ցավակցություններից զատ ստացվել են նաև բազում գրություններ Վեհափառ Հայրապետին անձնապես ծանոթ և բարեկամ եկեղեցականներից:

Ստորև քաղվածաբար ներկայացնում ենք ցավակցական հեռագրերից մի քանիսը:

### *ԱՍՄԱՐԱ*

«Մեծագույն վշտով և տխրությամբ տեղեկացա մեր սիրեցյալ եղբոր ի Քրիստոս՝ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Ա-ի վախճանման մասին ....

Մտադրություն ունեի մասնակցել հուղարկավորության արարողությանը, սակայն դժբախտաբար առողջական վիճակս չի ներում: Այդուամենայնիվ, ես Ձեզ հետ եմ հոգեպես և աղոթում եմ առ Ամենակալն Աստված, որպեսզի Նա Եկեղեցուն պարգևի Աստծո ծառայությանը նվիրված առաջնորդ: Ձեզ հետ միասին հեռավոր Աֆրիկայից աղոթում և ցանկանում եմ, որ Աստված Իր փառքով բազմեցնի Նորին Սուրբություն Գարեգին Ա-ին Իր «երկինքների» գահի վրա»:

*Էրիթրեայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք ԱԲՈՒՆԵ ՓԻԼԻՊՈՍ Ա*

### *ԼԵՀԱՍՏԱՆ*

«Հանուն Լեհաստանի Ավտոկեֆալ Ուղղափառ Եկեղեցու Սինոդի, մեր ցավակցությունները ենք հղում Հայաստանյայց Եկեղեցուն՝ Իր առաջնորդ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի վախճանման կապակցությամբ: Աղոթում ենք Նրա հոգու համար»:

*Համայն Լեհաստանի ուղղափառ միտրոպոլիտ ՍԱՎՎԱ*

***ԲՈՒԼՂԱՐԻԱ***

«Մենք ափսոսանքով իմացանք Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի վախճանման մասին: Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդի անունից արտահայտում ենք մեր խորին ցավակցությունները ու աղոթում, որ Աստված Իր Ծառայի հոգին բնակեցնի արդարների դասում»:

*Սուրբ Սինոդի նախագահ՝ Բուլղարիայի Պատրիարք ՄԱՔՍԻՄ*

***ԱԼԲԱՆԻԱ***

«Խորը վշտով ստացանք Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ի՝ իմաստուն, արդար և պայծառ անձնավորության, խորապես հավատացյալ և ճանաչված աստվածաբանության վախճանման լուրը:

Եղբայրաբար վշտակցելով այդ մեծ ցավին, մենք աղոթում ենք, որ Աստված, Որին Գարեգին Կաթողիկոսը խորապես սիրում և հավատարմորեն ծառայում էր դժվարին ժամանակներում, բնակեցնի նրա հոգին Իր սրբերի մեջ»:

*Համայն Ալբանիայի և Տիրանիայի Արքեպիսկոպոս ԱՆԱՍՏԱՍԻՈՍ*

***ՖԻՆԼԱՆԴԻԱ***

«Աղոթելով վախճանված Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի հոգու համար, բարեխոսում ենք Ձեզ և Ձեր Սուրբ Եկեղեցու համար: Ես Ձեզ հետ եմ սրտով և աղոթքներով»:

*Համայն Ֆինլանդիայի և Կարելիայի Արքեպիսկոպոս ՀՈՎՀԱՆՆԵՍ*

***ՌՈՒՍԱՍՏԱՆ***

«Խորապես վշտացած լինելով Հայաստանյայց Եկեղեցու Առաջնորդ Նորին Սրբություն Գարեգին Ա-ի վախճանումով, ի սրտե խնդրում ենք ընդունել մեր խորը և սրտագին ցավակցությունները: Աղոթում ենք կյանքի և մահվան Տիրոջը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որպեսզի Նա ընդունի Հայոց Եկեղեցու հավատարիմ սպասավորին ու առաջնորդին իր երկնային կայաններում»:

*Ռուս Ուղղափառ Եկեղեցու Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ,*
*Սմոլենսկի և Կալինինգրադի միտրոպոլիտ ԿԻՐԻԼ*

«Մայկոպի և Արմավիրի թեմը Հայ Եկեղեցու հետ եղբայրաբար կիսում է վիշտը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի վախճանման»:

*Մայկոպի և Արմավիրի Եպիսկոպոս ՖԻԼԱՐԵՏ*

«Հայտնում եմ իմ խորին ցավակցությունները Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի մահվան կապակցությամբ»:

*Սամարայի և Սիզրանի Արքեպիսկոպոս ՍԵՐԳԻՅ*

«Ցակուտիայի Ուղղափառ թեմն ու Ցակուտիայի Սախա Հանրապետության հայկական համայնքը Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցուն և հայ ժողովրդին հայտնում են իրենց խորին ցավակցությունները Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մահվան կապակցությամբ»:

*Ցակուտիայի և Լենսկի Եպիսկոպոս ԳԵՐՄԱՆ*

### *ՀՈՒՆԱՍՏԱՆ*

«Իմ սրտագին ցավակցություններն եմ հղում բոլոր առաջնորդներին, հոգևորականներին ու Հայ ժողովրդին՝ իմ սիրեցյալ եղբոր և բարեկամի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ի վախճանման և այս աշխարհից դեպի Աստծո Արքայությունը փոխադրվելու կապակցությամբ»:

*Հունաստանի Ուղղափառ Ավտոկեֆալ*
*Եկեղեցու Ամերիկայի թեմի առաջնորդ՝*
*ՀԱԿՈԲՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ*

### *ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ*

«Նորին Սրբությունը կմնա մեր հիշողության մեջ իբրև Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքության թանկագին բարեկամ և բոլոր մարդկանց կրոնական ազատության նվիրյալ ջատագով: Նա հավերժ կճանաչվի և կգնահատվի իբրև քրիստոնեական միության անխոնջ մշակ: Քրիստոնեական Եկեղեցիների ընտանիքից ներս ծագած վերքն ապաքինելու Նրա հայրապետական մեծ ցանկությունը դարձրեցին Նրան միջեկեղեցական տրամախոսության գործընթացի այս դարի առաջավոր եկեղեցականը»:

*Տիեզերական Պատրիարքության*
*Ամերիկայի թեմի առաջնորդ*
*ՍՊԻՐԻԴՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ*

### *ՀՌՈՄ*

«Նորին Գերապայծառություն Քարտուղար Արքեպիսկոպոսի, նրա տեղակալի և Արևելյան Եկեղեցիների Համաժողովի հետ ես իմ խորը ցավակցություններով միանում եմ Հայաստանյայց Եկեղեցու առաջնորդներին, հոգևորա-

կաններին, հավատացյալներին և ողջ ժողովրդին՝ Նորին Սրբություն Գարեգին Ա-ի մահվան առիթով: Աղերսելով Հարուցյալ Տիրոջ Սուրբ Երուսաղեմի խաղաղությունը իր հոգու համար, միշտ շնորհակալությամբ եմ հիշում նրա պարզ վկայությունը՝ իբրև Հովիվ ու Առաջնորդ և քրիստոնեական միությանը նվիրված և բացառիկ մտավոր ճարտասանությամբ օժտված անհատականություն»:

*Կարդինալ ԱՔԻԼԼԵ ՍԻԼՎԵՍՏՐԻՆԻ*

«Միանալով Հայաստանյայց Սուրբ Եկեղեցուն և Հիսուս Քրիստոսի ողջ Եկեղեցուն՝ ես հիշատակում եմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ի՝ Տիրոջ փառքի մեջ փոխադրվելը:

Իր ավետարանական, առաքելական կյանքը, իր հետևողականությունը, հաշտության անկեղծ որոնումները, Եկեղեցիների միությանն ուղղված իր սրտատենչ մղումը, իմ սրտում և Ամբրոսիոսի Եկեղեցու քրիստոնյաների սրտերում գոհություն և փառք բարձրացրեցին Աստծուն՝ իր կաթողիկոսության կարճ, բայց և լեցուն տարիների գործունեության համար:

Տակավին հիշողությանս մեջ են այն պահերը, երբ առիթ եմ ունեցել Նորին Սրբությանը տեսնելու, և հատկապես՝ 1996 թ. դեկտեմբերի 16-ը, երբ Տեր Սարգիս Սարգսյանի հետ նա մտավ մեր Մայր Տաճար՝ միասնաբար մեր քույր Եկեղեցիների համար աղոթելու...»:

*Միլանի Արքեպիսկոպոս*
*Կարդինալ ԿԱՌԼՈ ՄԱՐԻԱ ՄԱՐՏԻՆԻ*

«Ցանկանում եմ արտահայտել իմ խորը վիշտը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի այս աշխարհից հեռանալու կապակցությամբ:

Ինձ համար նա Առաջնորդ և Ուսուցիչ էր ոչ միայն հայ ժողովրդի մշակույթի, այլև էկումենիկ մարտահրավերների հաղթահարման համարձակության մեջ»:

*Եպիսկոպոս ԿԼԱՈՒԴԻՈ ԳՈՒՋԵՐՈՏՏԻ*

***ՈՒԿՐԱԻՆԱ***

«Բեկված սրտով Հայ Առաքելական Եկեղեցու հավատացյալների հետ աղոթում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի օրհնյալ հիշատակի համար:

Թող Բարին Աստված Իր Արքայության մեջ հատուցի՝ հանուն Աստծո և հավատացյալների բարօրության նվիրված երկրավոր ծառայության և ամբողջանվեր գոհողության համար»:

*Լվովի Հռոմեա-Կաթոլիկ Մետրոպոլիտ, Արքեպիսկոպոս*
*ՄԱՐՑԱՆ ՅԱՎՈՐՍԿԻ*

### ԱՆԳԼԻԱ

«Աստծո ժողովուրդը կորցրեց գործունյա և տեսիլք ունեցող Առաջնորդի, որի հոգևոր և աստվածաբանական ազդեցությունը տարածվում է Հայ Առաքելական Եկեղեցուց շատ ավելի այն կողմ: Իր ներդրումը էկումենիկ շարժման մեջ ակնառու էր....

Հայ Առաքելական Եկեղեցու և Անգլիկան Համայնքի միջև գոյություն ունեցող վստահության և բարեկամության կապն ավելի խորացավ՝ շնորհիվ ձևավորված հարաբերությունների իր հետևողությանը»:

*Անգլիկան Համայնքի Գլխավոր Քարտուղար*
*ՀԱՅՐ ՋՈՆ Լ. ՊԵՏԵՐՍՈՆ*

### ԱՄՆ

«Մեծագույն տխրությամբ սգում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ի մահը, որն աշխարհասփյուռ անգլիկանների կողմից, ներառյալ ԱՄՆ-ի Եպիսկոպոսական Եկեղեցին, այդքան սիրված և հարգված էր: Ինչպես մենք ասացինք մեր ողջույնի խոսքում, 1998 թ. մայիսին Նյու Յորք տված իր այցելության ժամանակ, իր հոգևոր հատկությունները, գիտականությունն ու էկումենիկ առաջնորդությունը, իբրև պարգև, շնորհվել են ամբողջ եկեղեցական աշխարհին»:

*Եպիսկոպոսական Եկեղեցու Կենտրոնի Նախագահ Եպիսկոպոս*
*ՖՐԱՆԿ Տ. ԳՐԻՍՎՈԼԴ*

### ՄԱԼԹԱ

«Արտակարգ և լիազոր դեսպանը Մալթայի Ինքնավար Ռազմական Միաբանության անունից ներկայացնում է իր ցավակցությունները Կաթողիկոսարանին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ի վախճանման վշտալից առիթով»:

*Հայաստանում Մալթայի Ինքնավար Ռազմական*
*Միաբանության արտակարգ և լիազոր դեսպան*
*Ա. ԳՈՒՏՋՎԻԼԼԵՌ*

• • •

Վեհափառ Հայրապետի վախճանմանն անմիջապես արձագանքեցին աշխարհի զանգվածային լրատվության միջոցները, որն արտացոլվեց և տեղ գտավ նաև «Internet» համակարգչային ցանցում: Արդ, ստորև հատվածաբար ներկայացնում ենք օտար պարբերականներից, ամսագրերից և օրաթերթերից քաղված նյութերից մի քանիսը:

***«L'OSSERVATORE ROMANO»***, (27(1599)7 JULY, 1999)

«Սրբազան Քահանայապետի ցավակցությունները»

Հունիսի 30-ին, չորեքշաբթի օրվա Ընդհանուր Ընդունելության ժամանակ, Սրբազան Քահանայապետն արտահայտեց իր վիշտը՝ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբություն Գարեգին Ա Սարգսյանի մահվան կապակցությամբ, որ վախճանվել էր նախորդ օրը: Իտալերենով ասված իր խոսքի մեջ Պապը հավատացյալներին հրավիրել էր աղոթել վախճանված եկեղեցականի համար:

*«Ես մեծապես վշտացա՝ լսելով Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ի մահվան լուրը: Մենք միացած էինք մտերմության խորը կապերով: Վերջին տարիներին ինձ տված իր երկու այցելությունները հնարավորություն ընձեռեցին ինձ անձնապես մոտիկ լինելու իրեն: Ես հիանում էի իր հոգևոր մեծությամբ, Եկեղեցու հանդեպ ունեցած իր եռանդուն սիրով և համայն քրիստոնյաներին՝ Քրիստոսի ոչխարների մեկ փարախում միավորվելու իր մտահոգությամբ: Շատ կցանկանայի եղբայրական բարեկամությամբ այցելել իրեն, սակայն հանգամանքները չեն թույլատրում:*

*Երեկ Վատիկանի Բազիլիկայում՝ Սուրբ Պետրոսի և Սուրբ Պողոսի տոնին մատուցված հանդիսավոր Պատարագի ընթացքում, մենք նույնպես աղոթեցինք իր համար: Այժմ ես համախմբում եմ ձեզ բոլորիդ՝ միանալու այս նշանավոր Հովվի ընտրյալ հոգու համար առ Աստված ուղղած իմ աղոթքներին: Թող Աստված ընդունի իրեն երկնային սրբերի համայնքում: Միաժամանակ ես արտահայտում եմ իմ անկեղծ ցավակցությունները Էջմիածնի Մայր Եկեղեցուն, Հայ Առաքելական Եկեղեցուն և հայ ժողովրդին՝ այդպիսի նշանավոր Կաթողիկոսի կորստյան կապակցությամբ»:*

***«THE TIMES»***, (WEDNESDAY JULY 14, 1999)

«Կաթողիկոս Գարեգին Ա»

«Գարեգին Ա Կաթողիկոսն Առաջնորդն էր աշխարհի ամենահին Եկեղեցու, որը 2001 թ. կտոնակատարի իր 1700-ամյակը: Իր մահը, չորս տարի Էջմիածնի կաթողիկոս լինելուց հետո, մեծ կորուստ է ոչ միայն Հայաստանյայց Եկեղեցու, այլև բոլոր Եկեղեցիների համար: Մարդ՝ զգալի ինտելեկտով, ջերմ անհատականությամբ, հումորի հմայիչ զգացումով, Գարեգին Սարգսյանը նշանակալից ներդրում ունեցավ էկումենիկ շարժման մեջ: .... Հիվանդությունը խանգարեց նրան իրականացնել իր հետ Էջմիածին բերված բոլոր այն տեսիլքները, որոնք նա կցանկանար:

Հայ ժողովրդի՝ Եղեռնի և հուսահատության շրջաններից անցած տոկունության կրողը լինելով, նա խոսեց Աստծո պարզև քրիստոնեական հավատքի մասին, որպեսզի զորացնի իր ժողովրդին՝ հաղթահարելու անցյալի և ներկայի փորձությունները: Այս նույն հավատքը նեցուկ եղավ նրան՝ իր կյանքի վերջին երկու տարիների ընթացքում»:

*«THE DAILY TELEGRAPH»*, (FRIDAY JULY 9, 1999)
**«Կաթողիկոս Գարեգին Ա»**

«Սովետական օրենքների 70 տարիներով և Լեռնային Ղարաբաղի աղետալի պատերազմով անցած Հայաստանում Գարեգինն ուներ ճնշված հոգևորականության ոգեշնչման և վերակազմավորման անհետաձգելի խնդիրը: Չնայած ավելի գիտնական, քան կառավարիչ, նա քանասիրաբար աշխատեց վերակենդանացնել թեմերը Հայաստանից ներս և, ամենակարևորը, մեծապես ավելացրեց երիտասարդ հոգևորականների թիվը ճեմարաններում, որը կոմունիստների օրոք սահմանափակվել էր ընդամենը 40-ով:

Նա շատ էր ջանում հաշտեցնել իր Եկեղեցու ներսի տարբեր տարաձայնությունները, հատկապես նրանք, որոնք հակադրվում էին իր էկումենիկ միտումներին, և փորձում էր նվազեցնել Էջմիածնի և սփյուռքյան այլ Աթոռների միջև գոյություն ունեցող լարվածությունը»:

*«THE WEDNESDAY PEVIEW»*, (THE INDEPENDENT 30 JUNE, 1999)
**«Կաթողիկոս Գարեգին Ա»**

«Հակառակ բարձրաստիճան այլ կղերականների, Գարեգինը հավատում էր, որ կրոնական նոր շարժումների սպառնալիքը պետք է հակազդվի ոչ թե պետության կողմից հովանավորվող հալածանքով, այլ Եկեղեցու առավել լավ ուսուցմամբ»: «Մեր երկիրը tabula rasa չէ, մաքուր տախտակ՝ կրոնական փորձարկումների համար»,-հայտարարեց նա 1994 թվականին: «Եկեղեցին պետք է մի կողմ թողնի նոր աղանդներին ու պաշտամունքներին հակադրվելն ու դատապարտելը: Այն պետք է մշակի դաշտը: Մենք պետք է դուրս գանք՝ տեսակցենք մարդկանց իրենց տներում, իրենց աշխատավայրերում, գյուղերում և քաղաքներում»:

*«WORLD COUNCIL OF CHURCHES»*, (OFFICE OF COMMUNICATION. PRESS RELEASE 30 JUNE, 1999)
**«Նվիրյալ էկումենիստը»**

«Հայր Գարեգին Սարգսյանն էկումենիկ շարժման նորագույն ժամանակների» կարևոր ճարտարապետներից մեկն էր: 1955 թ. Բեյրութում նա մասնակցեց Միջին Արևելքի Երիտասարդական Համաժողովին: Իր նախաձեռնությունների արդյունքում և Նորին Սրբություն Զարեհ Ա-ի օժանդակությամբ Կիլիկիո Կաթողիկոսությունը միանում է էկումենիկ շարժմանը և 1962 թ. դառնում ԵՀԽ-ի անդամ: Հայր Գարեգինը դիտորդ էր Վատիկանի Բ (1962) և 1968 թ. Լամբեթի ժողովներին: 1963 թ. նա անդամակցեց «Հավատք և Կարգ» Համաշխարհային Կոնֆերանսին՝ միաժամանակ շարունակելով մնալ Մշտական Կոմիտեի անդամ: Կիլիկիո Կաթողիկոսության էկումենիկ կապերը զորացնելու համար 80-ականներին նա կազմակերպեց Նորին Սրբություն Խորեն Ա-ի այցելությունները Հունաստանի Արքեպիսկոպոսին, Հովհաննես-Պողոս Բ Պապին, Քենթրբերիի Արքեպիսկոպոսին և ԵՀԽ:

Տարիներ շարունակ Հայր Գարեգինը, ապա եպիսկոպոս և արքեպիսկոպոս

Գարեգինը մասնակցել է ԵՀԽ-ի Համաժողովներին՝ սկսած Նյու Դելիից (1961), վերջացրած Վանկուվերով (1983), կամ դիտորդի և կամ Կիլիկիո Կաթողիկոսության պատգամավորության ղեկավարի կարգավիճակով: 1968 թ. Ուփսալայի համաժողովում նա ընտրվում է ԵՀԽ-ի Կենտրոնական և Գործադիր Կոմիտեների անդամ:

1975 թ. Նայրոբիում գումարված ԵՀԽ-ի 5-րդ Համաժողովում Գարեգինն Աթոռակից Կաթողիկոսն ընտրվում է որպես ԵՀԽ-ի Կենտրոնական և Գործադիր Կոմիտեների փոխատենապետ:

Նորին Սրբություն Գարեգին Ա-ն օժանդակեց Եկեղեցիների Միջինարևելյան Խորհրդի (ԵՄԽ) հիմնադրմանը: Երբ ԵՄԽ-ում նախագահական իր լիազորությունները ավարտվեցին, իրեն շնորհվեց «Պատվավոր Նախագահի» պատիվ:

Սկսած ԵՄԽ-ի հիմնադրումից և Նայրոբիի Համաժողովից, Նորին Սրբություն Գարեգին Ա-ն, իր աշակերտ Հայր Արամի հետ (Անթիլիասի Արամ Ա Կիլիկիո Կաթողիկոս), ամրապնդեց և խորացրեց Հայ Առաքելական Եկեղեցու Էկումենիկ հարաբերությունները աշխարհի հետ, ինչպես նաև տարածաշրջանային և ազգային մակարդակների վրա:

Կան մի շարք գրքեր՝ կապված Նորին Սրբություն Գարեգին Ա-ի Էկումենիկ ճանապարհորդության հետ, որոնցից ամենանշանավորն իր դոկտորական թեզն է՝ «Հայ Եկեղեցին և Քաղկեդոնի ժողովը»: Իր կյանքում, գործերում և գրվածքներում նա կրեց՝ Եկեղեցու միությունը վերանորոգելու և իր՝ Հայ ժողովրդի, ինչպես նաև համայն մարդկության հոգևոր հարստացման «Դեսպան» լինելու իր քրիստոնեական կոչումը:

### *«LE FIGARO»*

**«Հայ Կաթողիկոսի մահը»**

«Կաթոլիկ Եկեղեցու Պետի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումը էլ տեղի չի ունենա: 66 տարեկան Գարեգին Ա-ն մահացավ Երևանից 16 կիլոմետր հեռու գտնվող Էջմիածնի կաթողիկոսարանում: Նա, իբրև իր անձնական հյուր, հրավիրել էր Հովհաննես-Պողոս Բ-ին, և այցելությունը ծրագրված էր հուլիսի 2-4_ը: Լեհաստան իր այցելությունից հետո նախատեսված հանդիպումը ձախողված էր: Տակավին երեկ առավոտ, Սուրբ Պետրոս եկեղեցում Հռոմի հովվանավորի տոնի առիթով մատուցված Պատարագի ընթացքում, հավատացյալներն աղոթել էին ցավի մեջ ապրող Կաթողիկոսի համար»:

### *«LE MONDE»*

**«Գարեգին Ա-ն՝ Հայերի «Պապը»»**

«Նա, որին հայերը սիրում էին կոչել իրենց «պապը» և իր հմայքի պատճառով համեմատում էին Հովհաննես-Պողոս Բ-ի հետ, երկար ամիսներ ի վեր տառապում էր կոկորդի քաղցկեղով: .... Բազմաթիվ լեզուներով, ընդ որում նաև ֆրանսերեն սահուն խոսող արևմտյան մշակույթի մեջ դաստիարակված այս մարդն ինքն իրեն

առաջին գծի վրա է գտնում 1991 թ. անկախացած նախկին սովետական մի երկրում, որին քնավ չէր ճանաչում....: Ինքն իրեն ներկայացնելով որպես «հայ, լիբանանցի, սիրիացի», ընտրությունից հետո նա խոստովանեց. «Ես սփյուռքի զավակ եմ: Ես ծնած չեմ հայրենիքին մեջ, սակայն հայրենիքը ծնած է իմ մէջս»: Գարեգին Ա-ն լավ հարմարվեց իր նոր հայրենիքի պայմաններին՝ այցելելով առաջնորդություններ, իր ճիգերը կենտրոնացնելով եկեղեցականների և աշխարհականների կրթության վրա, մասնակցելով ազգային հարցերին այն աստիճան, որ իր մասին ասվեց. «Նա Հայաստանի միակ իրական դիվանագէտն է»:

## *«LA CROIX»*

«Միություն կառուցող Գարեգին Ա-ն»

«1995 թվականին Սփյուռքի մեջ ծնված այս մարդու ընտրությունն իբրև Կաթողիկոս եղավ պատմական, որով բացվում էր ապագայի ուղի մի ժողովրդի առջև, որն աշխարհից կտրված էր երկար տասնամյակների ընթացքում:

Գարեգին Ա-ի գործը եղավ մոտեցնել Հայաստանի և Սփյուռքի հայությունը, ճանապարհ հարթել Եկեղեցու համար, որը պետք է լիներ «ընկերային կեանքին մէջ գործող ոյժ»: Նա համաձայն էր Եկեղեցու և Պետության բաժանմանը, միևնույն ժամանակ արժևորելով Մայր Եկեղեցու դերը հայ ազգի կյանքում»:

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ԲԵՐՎԱԾ ԾԱՂԿԵՊՍԱԿՆԵՐԻ

1. ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանից
2. ՀՀ վարչապետի կողմից
3. ՀՀ Ազգային ժողովից
4. ԼՂՀ նախագահից
6 ԼՂՀ Ազգային ժողովից
7. ՀՀ Սահմանադրական Դատարանից
8. ՀՀ կառավարությունից
9. ՀՀ Ազգային անվտանգության նախարարությունից
10. ՀՀ Պաշտպանության նախարարությունից
11. ՀՀ Արտգործնախարարությունից
12. ՀՀ Էներգետիկայի նախարարությունից
13. ՀՀ Առողջապահության նախարարությունից
14. ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից
15. ՀՀ Գլխավոր դատախազությունից
16. ՀՀ Վճռաբեկ դատարանից
17. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից
18. Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունից
19. Կ. Պոլսո Հայոց Պատրիարքությունից
20. Մայր Աթոռի եպիսկոպոսաց դասից և միաբանությունից
21. Գևորգյան Հոգևոր ճեմարանից
22. Մայր Աթոռի պաշտոնեությունից
23. Սյունիքի մարզպետարանից
24. Արագածոտնի մարզպետարանից
25. Արագածոտնի մարզային դատարանից
26. Արմավիրի մարզպետարանից
27. Արմավիրի քաղաքապետարանից
28. Էջմիածնի քաղաքապետարանից
29.Գյումրիի քաղաքապետարանից
30. Աշտարակի քաղաքապետարանից
31. Էջմիածնի հարկային տեսչությունից
32. Էջմիածնի առաջին ատյանի դատարանի կոլեկտիվից
33. Արագածոտնի դատախազության կողմից
34. Արագածոտնի հարկային տեսչությունից
35. Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեից
36. Վրաստանի խորհրդարանից
37. Հայաստանում Վրաստանի դեսպանատնից

38. Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատնից
39. Իրանի հայ ճարտարապետների և ճարտարագետների միությունից
40. Էջմիածնի երկրապահ կամավորականների միությունից
41. Հայներարտբանկի կոլեկտիվից
42. Միավորված բանկի կողմից
43. Հայ գործարարների ընկերությունից
44. Հայ-Կազակական ընկերությունից
45. Միգրացիայի միջազգային կազմակերպությունից
46. Չինիշյան հիշատակի հիմնադրամից
47. ՍԻՄ-ից
48. Սբ. Ներսես բարեսիրական հաստատությունից
49. «Մագլուգ» ֆիրմայից
50. Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունից (Սիրիա)
51. «Ազապե»-ի կողմից
52. «ՇԵՆ» միությունից
53. «Հույս» ՍՊԸ կոլեկտիվից (Սպիտակ)
54. Հայաստան Համահայկական Հիմնադրամից
55. Էջմիածնի «ԲՈՒԼՏ» ՊՓԲԸ կողմից
56. Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցու Միությունից
57. Լոռու մարզից
58. Շիրակի մարզի Ամասիայի շրջանի բնակիչներից
59. Արարատյան թեմից
60. Արմավիրի թեմից
61. Արցախի թեմից
62. Ջավախքից
63. Գեղարքունիքի մարզի բնակիչներից
64. Տավուշի մարզի բնակիչներից
65. Վայոց ձորի բնակիչներից
66. Արմավիր և Մեծամոր քաղաքների կիրակնօրյա դպրոցներից
67. Էջմիածնի կիրակնօրյա վարժարանների ուսուցիչներից
68. Եվրոպայի եկեղեցիների համաժողովից
69. Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան գրասենյակից
70. Unitid Nations
71. World Vision Armenia կազմակերպությունից
72. From the Society of Georgia, From the baptist Churoh of Georgia կազմակերպությունից
73. Ամերիկայի Հայկական Համագումարից
74. Կաթոլիկ Օգնության Ծառայության գրասենյակից
75. Կուրգանի Ս. Նիկոլայ եկեղեցուց
76. Հանսթման ընտանիքից
77. Ալմելոյի Հայոց Առաքելական եկեղեցու վերակազմավորման առժամյա հանձնախմբից (Հոլանդիա)
78. «Արմենիա» հյուրանոցի կոլեկտիվից

79. ՀԱԷԿ տնօրենից և կոլեկտիվից
80. Գյումրիի լոկոմոտիվային դեպոյի կոլեկտիվից
81. Լևոն և Բելլա Սիարոնյաններից (Իրան)
82. Էջմիածնի էլցանցի տնօրեն Գ. Այվազյանից
83. Քեսաբցիներից
84. Հարազատներից
85. Հարությունից և Շաքեից
86. Բոբից և Լինդայից
87. Արմեն Դարբինյանի ընտանիքից
88. Րաֆֆիից և Շողակից
89. Վարդան Ավանեսյանից (Հոլանդիա)
90. ՄՀՀ նախագահ Սերժ Ջիլավյանից
91. Վահեից և Նորայից
92. Սեդա և Հենրի Սահակյան ընտանիքից
93. Առաջին բանակային կորպուսի հրամանատար գեներալ Մանվել Գրիգորյանից
94. «Քուրդիստան» կոմիտեից
95. Հայաստանի Ավետարանական Աստվածաբանական ճեմարանից
96. Երևանի Ռոտարի ակումբից
97. Կենտրոնական էլցանցի ՊՓԲԸ տնօրեն Մ. Գաբրիելյանից

## «ЭЧМИАДЗИН»
## ОФИЦАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
## (ИЮЛЬ 1999)

1. Покой Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I-го - (Сообщение Канцелярии Первопрестольного Св. Эчмиадзина), 29 июня 1999 г. (стр. 3-4).
2. Архиепископ Нерсес Позапалян избран Местоблюстителем Католикоса, 4 июля 1999 г. (стр. 5).
3. Сообщение (Профессиональное заключение медицинской комиссии министерства здравохранения Республики Армения о кончине Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I-го), 30 июня 1999 г. (стр. 6).
4. Сообщение (Канцелярии Первопрестольного Св. Эчмиадзина о программе погребения Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I-го), 30 июня 1999 г. (стр. 7).
5. Приказ Президента Республики Армения о государственных мироприятиях погребения Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I-го, 29 июня 1999 г. (стр. 8-9).
6. Решение Премьер-министра Республики Армения об организовании похоронных мироприятий Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I-го, 30 июня 1999 г. (стр. 10).
7. Его Святейшество Католикос Всех Армян Гарегин I: Жизнь и деятельность (Представленная Канцелярией Первопрестольного Св. Эчмиадзина) - (стр. 11-15).
8. Надгробная речь Местоблюстителя Католикоса Нерсеса Позапаляна произнесенная в Кафедральном Соборе в память почившего Католикоса Всех Армян Гарегина I-го, 8 июля 1999 г. (стр. 16-20).
9. Надгробная речь Католикоса Киликийского Домна Его Святейшества Арама I-го, произнесенная в Кафедральном Соборе в память почившего Католикоса Всех Армян Гарегина I-го, 8 июля 1999 г. (стр. 21-23).
10. Надгробная речь Армянского Патриарха Иерусалима Блаженнейщего Архиепископа Торгома Манукяна, произнесенная в Кафедральном Соборе в память почившего Католикоса Всех Армян Гарегина I-го, 8 июля 1999 г. (стр. 24-26).
11. Надгробная речь Армянского Патриарха Константинополя Блаженнейщего Архиепископа Месропа Мутафяна, произнесенная в Кафедральном Соборе в память почившего Католикоса Всех Армян Гарегина I-го, 8 июля 1999 г. (стр. 27-28).

## ПОСЛАНИЯ СОБОЛЕЗНОВАНИЯ ПРЕДВОДИТЕЛЕЙ ИЕРАРХИЧЕСКИХ ПРЕСТОЛОВ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ

12. Послание соболезнования Католикоса Киликийского Домна Его Святейшества Арама I-го (стр. 29).
13. Послание соболезнования Армянского Патриарха Иерусалима Архиепископа Торгома Манукяна (стр. 29).
14. Сообщение Канцелярии Константинопольского Патриархата Армянской Церкви (стр. 29-30).

## ТЕЛЕГРАММЫ СОБОЛЕЗНОВАНИЯ РУКОВОДСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

15. Послание соболезнования Президента Республики Армения Роберта Кочаряна по поводу кончины Католикоса Всех Армян (стр. 31).
16. Послание соболезнования Председателя Национального Собрания Республики Армения Карена Демирчяна по поводу кончины Католикоса Всех Армян (стр. 32).
17. Послание соболезнования Премьер-министра Республики Армения Вазгена Саркисяна по поводу кончины Католикоса Всех Армян (стр. 33).
18. Послание соболезнования Президента Нагорно-Карабахской Республики Аркадия Гукасяна по поводу кончины Католикоса Всех Армян (стр. 34).
19. Послания соболезнования, полученные от Духовных Глав и Церковных Предвадителей, по поводу кончины Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I-го (стр. 35-46).
20. Послания соболезнования, полученные от государственных руководителей, официальных лиц и от руководителей армянских и международных различных организаций (стр. 47-56).
21. ЧТЕЦ АРТУР КАРАПЕТЯН - Его Святейшество Католикос Всех Армян Гарегин I почил во Господе. (Описания погребения и последнего помазания) - (стр. 57-76).

## СЛОВА ПАМЯТИ ПО ПОВОДУ КОНЧИНЫ КАТОЛИКОСА ГАРЕГИНА I-ГО

22. ЕГО СВЯТЕЙШЕСТВО ВСЕЛЕНСКИЙ ПАТРИАРХ ВАРФОЛОМЕЙ I- Слово памяти (Произнесенное в Гумгапе (Стамбул) в церкви Св. Богородицы Армянского Патриархата), 1 июля 1999 г. (стр. 78-79).
23. АРХИЕПИСКОП МЕСРОП ГРИГОРЯН- В память Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I-го (стр. 80-83).

24. АРХИЕПИСКОП МЕСРОП АШЧЯН - В память Католикоса Гарегина (стр. 84-95).
25. АРХИЕПИСКОП ХАЖАК ПАРСАМЯН - Католикос Всех Армян Гарегин I (стр. 96-101).
26. АРХИЕПИСКОП ОВНАН ТЕРТЕРЯН - Слово сердца в светлую память Его Святейшества Блаженного Католикоса Всех Армян Гарегина I-го (стр. 102-103).
27. ИЕРОМАНАХ БАГРАТ ГАЛСТЯН - Отец (стр. 104-108).
28. ИЕРОМАНАХ АРШАК ХАЧАТРЯН - «Дай силу рабам твоим» (стр. 109-112).
29. СИЛЬВА КАПУТИКЯН - Слово скорби и сожаления (стр. 113-114).
30. ПРОФ. ПИОН АКОПЯН - Всенародное горе и трагедия (стр. 115-116).
31. ГАРНИК АНАНЯН - Жаль.... (стр. 117-118).
32. АСТХИК ГЕВОРКЯН - «Армянская книга-путь армянина, армянская книга-лекарство армянина» (стр. 119-121).
33. АЙКАНУШ МЕСРОПЯН-В словесном мире Католикоса (стр. 122-127).
34. ГЕРМАН ГОЛЬЦ - По поводу кончины Верховного Патриарха и Католикоса Всех Армян Гарегина I-го (стр. 128-133).
35. КАРПИС ГОРДЯН-В знак дружбы и уважения (стр. 134-136).

ИЗ СЛОВ КАТОЛИКОСА

36. Последний Завет (стр. 137-139
37. Диакон Ншан (Католикос Гарегин I)-Отец (стр. 140-143).
38. Отрывки из работ Католикоса Гарегина I-го (стр. 144-151).
39. Размышления, рожденные на родине. (стр. 152-160).

ИСТОРИЧЕСКИЙ ОТДЕЛ

40. АРХИМАНДРИТ ГАРЕГИН ОВСЕПЯН - Патриаршее погребение и захоронение (Описание традиционного обряда погребения и захоронения) -(стр. 161-164).

МЕЖЦЕРКОВНЫЙ ОТДЕЛ

41. Выдержки из полученных соболезнований и из слов памяти, напечатанных в прессе по поводу кончины Католикоса Гарегина I-го. (стр. 165-173).
42. Именной список возложенных венков по случаю погребения Католикоса. (стр. 174-176).

# "ETCHMIADZIN"
# OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
# (JULY 1999)


1. Eternal rest to His Holiness KAREKIN I Catholicos of All Armenians, June 29, 1999 (pp. 3-4).
2. Archbishop Nerses Bozabalyan was elected Locum Tenens of the Catholicos, July 4, 1999 (p. 5).
3. Communiqué (medical conclusion of the experts from the Ministry of Health about the death of His Hollness KAREKIN I), June 30, 1999 (p. 6).
4. Communiqué (about the funeral of His Hollness KAREKIN I), June 30, 1999 (p. 7).
5. President's decree about the creation of a governmental body for the funeral of His Holiness KAREKIN I, June 29, 1999 (pp. 8-9).
6. Prime-Minister's resolution for the organization of His Holiness KAREKIN Is funeral, June 30, 1999 (p. 10).
7. His Holiness KAREKIN I Catholicos of All Armenians: life and work (pp. 11-15).
8. Funeral oration of the Catholicos KAREKIN I hy the Locum Tenens Archbishop Nerses Bozabalyan, July 8, 1999 (pp. 16-20).
9. Funeral oration of the Catholicos KAREKIN I by the Catholicos of Cilicia Aram I, July 8, 1999 (pp. 21-23).
10. Funeral oration of the Catholicos KAREKIN I by the Armenian Patriarch of Jerusalem Archbishop Torkom Manookyan, July 8, 1999 (pp. 24-26).
11. Funeral oration of the Catholicos KAREKIN I by the Armenian Patriarch of Constantinople Archbishop Mesrop Mutafyan, July 8, 1999 (pp. 27-28).


## LETTERS OF CONDOLENCE FROM THE HIERARCHICAL SEES OF THE ARMENIAN CHURCH


12. Letter of condolence from the Catholicos of Cilicia Aram I (p. 29).
13. Letter of condolence from the Armenian Patriarcb of Jerusalem Archbishop Torkom Manookyan (p. 29).
14. Communiqué by the Armenian Patriarchate of Constantinople (pp. 29-30).

## TELEGRAMS OF CONDOLENCE FROM THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

15. Letter of condolence from the President of the Republic of Armenia Robert Kocharyan (p. 31).
16. Letter of condolence from the Speaker of the Parliament of the Republic of Armenia Karen Demirjyan (p. 32).
17. Letter of condolence from the Prime-Minister of the Republic of Armenia Vasken Sarkissyan (p. 33).
18. Letter of condolence from the President of the Republic of Nagorno-Karabakh Arkadiy Ghookassyan (p. 34).
19. Letters of condolence from the heads and leaders of Sister Churches (pp. 35-46).
20. Letters of condolence from the heads of states and leaders of Armenian and International organizations (pp. 47-56).
21. Eternal rest to His Holiness KAREKIN I Catholicos of All Armenians (description of extreme unction and funeral) - (pp. 57-76).

## TO THE MEMORY OF HIS HOLINESS KAREKIN I

22. HIS ALL-HOLINESS BARTHOLOMEW I ŒCUMENICAL PATRIARCH OF CONSTANTINOPLE - Memorial speech (delivered in the Armenian Cathedral of Constantinople), July 1, 1999 (pp. 78-79).
23. ARCHBISHOP MESROP KRIKORYAN - To the memory of His Holiness KAREKIN I (pp. 80-83).
24. ARCHBISHOP MESROP ASHJYAN - To the memory of His Holiness KAREKIN I (pp. 84-95).
25. ARCHBISHOP KHAJAK PARSAMYAN - His Holiness KAREKIN I Catholicos of All Armenians (pp. 96-101).
26. ARCHBISHOP HOVNAN DERDEBYAN - Heartfelt word to the blessed memory of His Holiness KAREKIN I Catholicos of All Armenians (pp. 102-103).
27. HIEROMONK BAGRAT GALSTYAN - The Father (pp. 104-108).
28. HIEROMONK ARSHAK KHACHATURYAN - "Give strength to Thy servant" (pp. 109-112).
29. SILVA KAPUTIKYAN - Word of pain and regret (pp. 113-114).
30. PROF. PION HAGOPYAN - National sorrow and tragedy (pp. 115-116).
31. GARNIK ANANYAN - Alas... (pp. 117-118)

32. ASTGHIK GEVORGYAN - "Armenian book- the way of the Armenian, Armenian book- the balsam of the Armenian" (pp. 119-121).
33. HAYKANUSH MESROPYAN - In the linguistic world of His Holiness (pp. 122-127).
34. HERMAN GOLTS - On the occasion of the passing away of His Holiness KAREKIN I Catholicos of All Armenians (pp. 128-133).
35. KARPIS GORDYAN - As a sign of friendship and respect (pp. 134-136).

FROM THE SPEECHES OF HIS HOLINESS

36. The last message (pp. 137-139).
37. DEACON NSHAN (CATHOLICOS KAREKIN I) - The Father (pp. 140-143).
38. Excerpts from the works of His Holiness KAREKIN I (pp. 144-151).
39. Reflections born in the Motherland (pp. 152-160).

HISTORICAL

40. ARCHIMANDRITE KAREKIN HOVSEPYAN - Funeral of a Catholicos (pp. 161-164).
41. Excerpts from the received letters of condolence and published articles (pp. 165-173).
42. The list of the persons and organizations sending garlands to the memory of His Holiness KAREKIN I (pp. 174-176).

## "ETCHMIADZINE"
## ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
## (JUILLET 1999)

1. Décès de Sa Sainteté Karékine Ier, Catholicos de tous les Arméniens (Communiqué du 29 juin 1999 de la chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine) - (pp. 3-4).
2. L'archevêque Nersès Bozabalian a été élu Locum Tenens du Catholicossat de Saint Etchmiadzine (4 juillet 1999) - (p. 5).
3. Communiqué: le verdict de la commission de médecins près le ministère de la santé de la République d'Arménie concernant le décès de Sa Sainteté Karékine Ier (30 juin 1999) - (p. 6).
4. Communiqué du 30 juin 1999 de la chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant le programme de la cérémonie des obsèques de Sa Sainteté Karékine Ier (p. 7).
5. Décret du président de la République d'Arménie concernant la participation du gouvernment à la cérémonie des obsèques de Sa Sainteté Karékine Ier (29 juin 1999) - (pp. 8-9).
6. Décision du premier ministre de la République d'Arménie concernant l'organisation des funérailles de Sa Sainteté Karékine Ier (30 juin 1999) - (p. 10).
7. La vie et l'activité religeuse du Catholicos de tous les Arméniens Karékine Ier (présentées de la part de la chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine) - (pp. 11-15).
8. L'oraison funèbre de l'archevêque Nersès Bozaballan prononcée le 8 juillet 1999 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à la mémoire de Sa Sainteté Karékine Ier (pp. 16-20).
9. L'oraison funébre de Sa Sainteté Aram Ier, Catholicos de la Grande Maison de Cilicie prononcée le 8 juillet 1999 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à la mémoire du feu Catholicos Karékine Ier (pp. 21-23).
10. L'oraison funèbre de Sa Béatitude Torgom Manoukian, Patriarche des Arméniens de Jérusalem, prononcée le 8 juillet 1999 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à la mémoire du Catholicos de tous les Arméniens Karékine Ier (pp. 24-26).
11. L'oraison funèbre de Sa Béatitude Mesrop Moutafian, Patriarche des Arméniens de Jérusalem, prononcée le 8 juillet 1999 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à la mémoire du Catholicos de tous les Arméniens Karékine Ier (pp. 27-28).

## LETTRES DE CONDOLEANCES DES CHEFS SPIRITUELS DE LA HIERARCHIE DE L'EGLISE APOSTOLIQUE ARMENIENNE

12. Lettre de condoléances de Sa Sainteté Aram I$^{er}$, Catholicos de la Grande Maison de Cilicie (p. 29).

13. Lettre de condoléances de l'archevêque Torgom Manoukian, Patriarche des Arméniens de Jérusalem (p. 29).

14. Communiqué de la chancellerie du patriarcat des Arméniens de Constantinople (pp. 29-30).

## TELEGRAMMES DE CONDOLEANCES DES DIRIGEANTS DE LA REPUBLIQUE D'ARMENIE

15. Télégramme de condoléances du Président de la République d'Arménie Robert Kotcharian à l'occasion du décès du Catholicos de tous les Arméniens (p. 31).

16. Télégramme de condoléances du Président de l'Assemblée Nationale de la République d'Arménie Karène Démirtchian à l'occasion du décès du Catholicos de tous les Arméniens (p. 32).

17. Télégramme de condoléances du Premier Ministre de la République d'Arménie Vazguène Sarksian à l'occasion du décès du Catholicos Karékine I$^{er}$ (p. 33).

18. Télégramme de condoléances du Président de la République du Haut Karabagh Arcady Ghoukassian à l'occasion du décès de Sa Sainteté Karékine I$^{er}$ (p. 34).

19. Télégrammes de condoléances des chefs spirituels et des prélats des Eglises sœurs adressés au catholicossat du Saint-Siège d'Etchmiadzine à l'occasion du décès de Sa Sainteté Karékine I$^{er}$ (pp. 35-46).

20. Télégrammes et lettres de condoléances des directeurs de diffirentes organisations arméniennes et étrangères adressés au catholicossat de Saint Etchmiadzine à l'occasion du décès de Sa Sainteté Karékine I$^{er}$ (pp. 47-56).

21. ARTHUR KARAPETIAN. Description de la cérémonie des funérailles et de l'extrême onction du Catholicos de tous les Arméniens Karékine I$^{er}$ (pp. 57-76).

## DISCOURS PRONONCES A LA MEMOIRE DE SA SAINTETE KAREKINE I$^{er}$

22. Discours de Sa Sainteté Bartholomée I$^{er}$, Patriarche Œcuménique de Constantinople, prononcé le 1$^{er}$ juillet 1999 dans l'église arménienne de Koumkapou (Istanbul) à la mémoire de Sa Sainteté Karékine I$^{er}$ (pp. 78-79).

23. ARCHEVEQUE MESROP G. GRIGORIAN. "A la mémoire de Sa Sainteté Karékine Ier" (pp. 80-83).
24. ARCHEVEQUE MESROP ACHDJIAN. "A la mémoire du Catholicos Karékine Ier" (pp. 84-95).
25. ARCHEVEQUE KHAJAK PARSAMIAN. "Karékine Ier, Catholicos de tous les Arméniens" (pp. 96-101).
26. ARCHEVEQUE HOVNAN TERTERIAN. "A la mémoire du bienheureux Catholicos Karékine Ier" (pp. 102-103).
27. PERE BAGRATE GALSTIAN. "Le Saint Père" (pp. 104-108).
28. PERE ARCHAK KHATCHATRIAN. "Fortifie ton serviteur!" (pp. 109-112).
29. SILVA KAPOUTIKIAN. "Paroles de douleur et de regret" (pp. 113-114).
30. PROF. PION HAKOBIAN. "Douleur et tragédie nationales" (pp. 115-116).
31. GARNIK ANANIAN. "Hélas!..." (pp. 117-118).
32. ASTGHIK GUEVORKIAN. "Le livre arménien, c'est la voie de l'Arménien, le livre arménien, c'est le baume de l'Arménien" (pp. 119-121).
33. HAIKANOUCHE MESROPIAN. "Dans le monde linguistique de notre Véhapar" (pp. 122-127).
34. HERMANN GOLTZ. "A l'occasion du décès du Patriarche Suprême et Catholicos de tous les Arméniens Karékine Ier" (pp. 128-133).
35. KARPIS GORDIAN. "En signe d'amitié et de vénération" (pp. 134-136).

**EXTRAITS DES OUVRAGES DE
SA SAINTETE KAREKINE Ier**

36. Dernier message du Catholicos Karékine Ier (pp. 137-139).
37. "Le Père" (pp. 140-143).
38. Fragments de ses ouvrages littéraires et religieux (pp. 144-151).
39. Pensées conçues en Arménie (pp. 152-160).
40. Reproduction de l'article du Père Karékine Hovsépian (feu catholicos de la Grande Maison de Cilicie) intitulé "Funérailles et enterrement des catholicos selon la tradition de l'Eglise arménienne" (pp. 161-164).
41. Extraits des lettres de condoléances et des articles publiés dans la presse à l'occasion du décès de Sa Sainteté Karékine Ier (pp. 165-173).
42. Liste des noms de personnes qui ont déposé des couronnes mortuaires à l'occasion des obsèques du Catholicos Karékine Ier (pp. 174-176).